Հայաստանի Հանրապետության
Կադաստրի կոմիտե

Ասիայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան

ԵՐԵՎԱՆ

Ասիայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան

Տեղեկատու-բառարանն ընդգրկում է Ասիայի խոշոր ֆիզ-աշխարհագրական օբյեկտների ընդհանուր բնութագրերը: Տեղեկատու-բառարանը նախատեսված է գիտական և կրթական համակարգի, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի ընթերցող, Ձեզ ենք ներկայացնում Ասիայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը:

Ներկայացված տեղեկատու-բառարանում փորձ է արվել ի մի բերել Ասիա մայրցամաքի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների անվանումների հայեցի գրելաձևը, ինչպես նաև տրվել են նրանց մասին կարևոր տեղեկություններ, որոնք առավելապես բնութագրում են իրենց:

Տեղեկատու-բառարանն ընդգրկում է Ասիայի 433 խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների ընդհանուր բնութագրերը, այդ թվում՝

- ֆիզաշխարհագրական օբյեկտի անվանումը հայերեն և պաշտոնական լեզվով (լեզուներով)
- ֆիզաշխարհագրական օբյեկտի բնութագրումը

Ֆիզաշխարհագրական օբյեկտների անվանումների տեղեկատու-բառարանը ներկայացված է այբբենական կարգով:

Նյութը մշակվել է ՀՀ Կադաստրի կոմիտեի Գեոմատիկայի կենտրոնի աշխարհագրական անվանումների խմբի աշխատակիցների կողմից:

ՏԵՂԵԿԱՏՈՒ-ԲԱՌԱՐԱՆՈՒՄ
ԳՈՐԾԱԾՎՈՂ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ

մ	-	մետր
մ / կմ	-	մետր / կիլոմետր
$մ^3$/ վ	-	խորանարդ մետր /վայրկյան
կմ	-	կիլոմետր
$կմ^2$	-	քառակուսի կիլոմետր
$կմ^3$	-	խորանարդ կիլոմետր

Ա

ԱԳՈՒՆԳ - ինդոնեզերեն Gunung Agung.գործող ստրատոհրաբուխ Ինդոնեզիայում, **Բալի** կղզու հյուսիսարևելյան մասում: Խոշոր ժայթքում է սկսվել 2017 թ-ի օգոստոսի 13-ին ու տևել մինչև նույն թվականի նոյեմբերի 25-ը: Վերջին ժայթքումը տեղի է ունեցել 2018 թ հունիսի 28-ին: Բարձրությունը ծովի մակարդակից 3 031 մ: Խառնարանի տրամագիծը՝ 520x375 մ: Խորությունը՝ 200 մ:
Հրաբխի ինդոնզերեն Gunung Agung անվանումը կազմված է gunung *լեռ* և agung *մեծ* բառերից՝*Մեծ լեռ*:

ԱԴԵՆԻ ԾՈՑ - արաբերեն خليج عدن Խալիջ Ադնա, սոմալիերեն Gacanka Cadmeed, անգլերեն Gulf of Aden, ֆրանսերեն Golfe d'Aden. ծոց Հնդկական օվկիանոսում, **Արաբական** ծովի ծայր արևմտյան մասը: Հյուսիսից եզերված է **Արաբական** թերակղզով (Եմեն), հարավից և արևմուտքից՝ Աֆրիկա մայրցամաքով (Սոմալի և Ջիբութի): **Բաբ էլ Մանդեբ** նեղուցով հաղորդակցվում է **Կարմիր** ծովի հետ: Ծոցի արևելյան սահման է հանդիսանում Գվարդաֆույ (Սոմալի) և Ֆարթաք (Եմեն) հրվանդանների միջև երևակայական գիծը: Մակերեսը՝ 530 000 կմ^2: Երկարությունը՝ 1 480 կմ, լայնությունը՝ 460 կմ: Ծավալը՝ 265 000 կմ^3: Միջին խորությունը՝ 500 մ, առավելագույնը՝ 3 680 մ (արևելյան մասում):
Անվանումը ստացել է *Ադեն* քաղաքից:

ԱԼԱԿՈԼ - ղազախերեն Алакөл. անհոսք, դառնաղի լիճ Ղազախստանում, Բալխաշ-Ալակոլի ցածրավայրի արևելյան մասում: Խոշոր կղզիներն են՝ Պիսկին, Ուլկենը, Կիշկեմեն: Լիճն են թափվում Էմել, Ուրժար, Կատինսու, Ժամանոտկյոլ, Ըրգայտը, Ժամանտը և այլ գետեր: Ալակոլ և ծանծաղ Կոշկարկոլ, Սասիկկոլ և Ժալանաշկոլ լճերը կազմում են մեկ ընդհանուր լճային համակարգ մինչև 55 000 կմ^2 ջրահավաք ավազանով: Լճի հյուսիսարևելյան ափամերձ շրջանում է գտնվում Բարմակկում ավազե պարապուրտը, որի ծայրամասերում կան մի շարք հանքային աղբյուրներ: Մակերեսը՝ 2 696 կմ^2: Երկարությունը՝ 104 կմ, լայնությունը՝ 52 կմ: Ծավալը՝ 59,58 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 47 859 կմ^2:Լճափի երկարությունը՝ 348 կմ: Միջին խորությունը՝ 22,1 մ, առավելագույնը՝ 54 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 347.3 մ:
XII-XIX դդ. լիճն ուներ մի քանի անվանում՝ Տուրգե Նոր, Ալակտագյոլ, Ալատենիզ, Ալակտա:
Անվանումը ղազախերենից թարգմանաբար նշանակում է *խայտաբղետ լիճ*:

ԱԼԴԱՆ - ռուսերեն Алдан, յակուտերեն Алдан.գետ Ռուսաստանի Դաշնությունում, **Լենա** գետի խոշորագույն աջ վտակը: Սկիզբ է առնում **Ստանովոյ** լեռնաշղթայի հյուսիսային լանջից, Ձվերևի լեռներից, հոսում Ալդանի բարձրավանդակով և թափվում մայր գետը: Վտակներն են աջից՝ Մայա, Ուչուր, Տիմպտոն, ձախից՝ Ամգա, Նոտորա, Կուոլումա, Բիլիր, Ունգյուելե: Երկարությունը՝ 2 273 կմ: Ավազանը՝ 729

000կմ^2: Ջրի ծախսը՝ 5 060 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը մոտ՝ 1 400 մ, գետաբերանինը՝ 72 մ:
Ենթադրվում է, որ գետի անվանումն առաջացել է կամ թյուրք-մոնղոլերեն алтан, *ոսկյա, ոսկեբեր*, կամ յուկագիրերեն дан *գետ*, կամ էվենկերեն алдун *քարուտ* , կամ էվեներեն алдан *կող* , *կողային (գետ) վտակ* բառերից:

ԱԼԴԱՆԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - ռուսերեն Алданское нагорье, յակուտերեն Алдан үрдэлэ.լեռնաշխարհ Ռուսաստանի Դաշնությունում, Սախայում՝ Օլյոկմա և Ուչուր գետերի միջև: Լեռնագրության տեսակետից բարձրավանդակը ձգված է լայնակի ուղղությամբ և իր ամբողջ երկարությամբ կտրտված գետահովիտներով: Ռելիեֆում գերակշռում են մինչև 1 000 մ բարձրությամբ տափարակ միջագետքեր, որոնց վրա են խոյանում Արևմտյան Յանգի, Սուննանգին, Կետ Կապ և բազմաթիվ այլ լեռնաշղթաներ ու բլրաշարեր: Բարձրավանդակից են սկիզբ առնում՝ **Ալդան**, Անգա, Մայա, Կուոլումա, Նոտորա, Խամնա, Տիրի և այլ գետեր: Առավելագույն բարձրությունը 2 306 մ:
Անվանումը ստացել է ***Ալդան*** գետից:

ԱԼԹԱՅ - ալթայերեն Алтай туулар, մոնղոլերեն Алтайн нуруу, ղազախերեն Altay tawları / Алтай таулары, ռուսերեն Алтайские горы/Алтай, չինարեն 阿尔泰山脉 Աերթայ շանմայ, դունգաներեն Артэ Шанмэ, ույղուրերեն ئالتـــــاي تـــاغ نىزمىســـى Ալթայ Թաղլիրիսա. լեռնահամակարգ Կենտրոնական Ասիայում՝ Ռուսաստանի Դաշնությունում, Ղազախստանում, Չինաստանում և Մոնղոլիայում: Ալթայը բաժանվում է Մոնղոլական Ալթայի, Գոբիական Ալթայի և բուն Ալթայի: Կազմված է գետային խորը հովիտներով և միջլեռնային գոգավորություններով՝ իրարից անջատված, մի շարք լեռնաշղթաներից՝ Կատունի, Կուրայսկու, Չուի, Չիխաչյովի, Շապշալսկու, Սարեմսակտի, Սայլյուգեմ և այլն: Ձգվում է **Արևմտասիբիրական հարթավայրից** դեպի հարավ-արևելք մինչև **Գոբի** անապատը: Ալթայի լեռներից են սկիզբ առնում Կատուն, Բիա, Չույա, Արբուտ, Կոքսա և այլ գետեր: Մակերեսը՝ 741 569 կմ^2: Երկարությունը՝ 1 847 կմ, լայնությունը՝ 1 282 կմ: Բարձր գագաթը՝ Բելուխա լեռ (4 509 մ):
Հավանաբար Ալթայ անվանումն առաջացել է մոնղոլերեն алт *ոսկի* և тай, այսինքն Алттай *ոսկեբեր* անունից: Այս վարկածը հաստատվում է այն փաստով, որ չինացիները հնում Ալթայը կոչել են *Ցզինշան ոսկե լեռներ*:
Մեկ այլ վարկածի համաձայն Алтай անվանումը խոսակցական մոնղոլերենում բառացի նշանակում է *Ալայան մարգագետիններով լեռնաշխարհ*, *բարձր լեռնային քոչեր*, որը սակայն քիչ հավանական է:

ԱԿՋԱԳԱՅԱ - թուրքմեներեն Akjagaýa. անհոսք իջվածք Թուրքմենստանում՝ **Կարակումների** հյուսիսարևմտյան մասում: Երկարությունը՝ մոտ 50 կմ, լայնությունը՝ 6 կմ: Համեմատական խորությունը՝ մոտ 200 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ - 81 մ:
Անվանումը թուրքմեներենից թարգմանաբար նշանակում է *Ճերմակ լանջեր*:

ԱՄՈՒԴԱՐՅԱ - փուշտու سـيند آمو د դա Ամու Սինդ, տաջիկերեն Амударё, ուզբեկերեն **Amudaryo**, թուրքմեներեն Amyderϕa, պարսկերեն ای‌آمودر Ամուդարյա. գետ Աֆղանստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում: Կազմավորվում է Փյանջ և Վախշ գետերի միախառնումից (319 մ բարձրության վրա): Նախկինում **Ամուդարյան** կազմելով դելտա թափվում էր Արալյան ծովը, սակայն ջրի անխնա օգտագործման հետևանքով այժմ գետը չի հասնում մինչև Արալյան ծով: Վտակներն են՝ Կաֆիրնիգան, Սուրխանդարյա, Շերաբադ, Կունդուզ: Երկարությունը՝ 1 415 կմ: Ավազանը՝ 309 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 2 525 մ^3/վրկ (Աթամուրաթ քաղաքի մոտ): Ակունքի բարձրությունը՝ 319 մ, գետաբերանինը՝ 36 մ (այժմ Արալյան ծով չի հասնում):
Ամուդարյա անվանումը կազմված է հնագույն Ամուլ (այժմ Թուրքմենաբադ) քաղաքի անվան և պարսկերեն دریا դարյա *գետ* բառից՝ *Ամուլի գետ*:
Անտիկ շրջանի աշխարհագրագետներին հայտնի էր Օքսուս անվամբ, իսկ արաբներին՝ Ջեյհուն անունով:

ԱՄՈՒՐ - ռուսերեն Амур, մոնղոլերեն Амар мөрөн, էվենկերեն Тамур, չինարեն 黑龙江 / 黑龍江 Հեյլունցզյան, մանջուրերեն ᡥᡝᡳᡠᡵᡠᠯᡠᠩᡤᡳᠶᠠᠨ Սահալիյան Ուլա. գետ Հեռավոր Արևելքում, Արևելյան Ասիայում, կազմավորվում է Շիլկա ու **Արգուն** գետերի միացումից և հոսելով Ռուսաստանի Դաշնության ու Չինաստանի սահմանով, դուրս է գալիս Խաբարովսկի երկրամաս, ապա փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, Ամուրի Նիկոլաևսկ քաղաքի մոտ թափվում **Օխոտի** ծովի՝ Ամուրի ծովալճակը: Վտակներն են ձախից՝ Զեա, Բուրեա, Ամգուն, աջից՝ Սունգարի, Ուսուրի: Երկարությունը՝ 2 824 կմ: Ավազանը՝ 1 855 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 12 800 մ^3/վրկ (գետաբերանում): Ակունքի բարձրությունը՝ 303 մ:
Անվանումն առաջացել է Տունգուս-Մանջուրական լեզուների համար ընդհանուր амар тамур *մեծ գետ* հիմքից:
Գետի չինարեն 黑龙江 / 黑龍江 Հեյլունցզյան անվանումը բառացի նշանակում է *Սև վիշապի գետ*:

ԱՆԱԴԻՐԻ ԾՈՑ - ռուսերեն Анадырский залив. **Բերինգի** ծովի խոշորագույն ծոց, Չուկոտկա թերակղզու ափերի մոտ, Չուկոտյան և Նավարին հրվանդանների միջև: Իր մեջ է ներառում երկու մեծ ծոց՝ Խաչի ծոց ու Անադիրի ծովալճակ և բազմաթիվ ծովախորշեր: Այստեղ է գտնվում շուրջ 60 կմ երկարությամբ, աշխարհի ամենաերկար ցամաքալեզվակներից մեկը՝ Մեեչկինը: Ծոցն են թափվում **Անադիր**, Վելիկայա, Կանչալան, Տումանսկայա և այլ գետեր: Երկարությունը՝ 278 կմ, լայնությունը՝ 400 կմ: Առավելագույն խորությունը՝ 105 մ (հարավային մասում):
Անվանումը ստացել է *Անադիր* գետից:

ԱՆԳԱՐԱ - ռուսերեն Ангара, բուրյաթերեն Ангар. գետ Ռուսաստանի Դաշնությունում, Իրկուտսկի մարզում և Կրասնոյարսկի երկրամասում, **Ենիսեյի** ամենաջրառատ՝ աջ վտակը, արտահոսում է **Բայկալ** լճից: Դուրս գալով **Բայկալ** լճից և հոսե-

լով հյուսիսային ուղղությամբ, գետը կտրում անցնում է Լենա-Անգարայի սարահարթը, Անգարսկի բլրաշարը ու փոխելով իր ուղղությունը դեպի արևմուտք և հոսելով **Միջին Սիբիրական** սարահարթով, Ստրելկա բանավանի մոտ թափվում **Ենիսեյ** գետը: Վտակներն են ձախից՝ Իրկուտ, Կիտոյ, Բելայա, Օկա, Իյա, Կովա, Մուրա, աջից՝ Իլիմ, Չադոբեց, Իրկինեևա, Կամենկա, Կատա, Կուդա, Օսա, Իդա: Երկարությունը՝ 1 779 կմ: Ավազանը՝ 1 039 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 4 518 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 456 մ, գետաբերանինը՝ 76 մ:
Անվանման հիմքում ընկած է аиrар բառը, որը բուրյաթերենում նշանակում է *բերան*, էվենկերենում՝ *երախ*, իսկ փոխաբերական իմաստով՝ *կիրճ, ծերպ*:
Ստորին հոսանքում Անգարան անցյալում կոչվում էր Վերին Տունգուսկա:

ԱՆԴԱՄԱՆՅԱՆ ԾՈՎ - հինդի अंडमान सागर Անդեման սագր, բիրմայերեն မုတ်တမ Կապպալե պաինլաալայի, թայերեն ทะเลอันดามัน Թլեյ անդաման, մալայերեն Laut Andaman, ինդոնեզերեն Laut Andaman. կիսափակ ծով Հնդկական օվկիանոսի հյուսիսարևելյան մասում, արևելքում՝ Հնդկաչին և **Մալակկա** թերակղզիների, հարավում՝ **Սումատրա** կղզու, իսկ արևմուտքում՝ **Անդամանյան** և **Նիկոբարյան** կղզիների շղթայի միջև: Ողողում է Մյանմայի, Թայլանդի և Ինդոնեզիայի ափերը: Հյուսիս-արևմուտքում ծովը բազմաթիվ նեղուցներով հաղորդակցվում է **Բենգալյան** ծոցի հետ: Այստեղ է գտնվում Բառեն կղզին իր գործող հրաբխով, որի ստորջրյա ակտիվությունը պատճառ դարձավ 2004 թ. դեկտեմբերի 26-ին մահաբեր ցունամիի առաջացմանը: Ծովն են թափվում **Իրավադի**, **Սալուին**, Սիտաուն և այլ գետեր: Մակերեսը՝ 798 000 կմ^2: Երկարությունը՝ 1 200 կմ, լայնությունը՝ 645 կմ: Ծավալը՝ 874 608 կմ^3: Միջին խորությունը՝ 1 096 մ, առավելագույնը՝ 4 507 մ (**Նիկոբարյան** կղզիներից արևմուտք):
Անվանումը ստացել է *Անդամանյան կղզիներից*:

ԱՆԴԱՄԱՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - հինդի अंडमान Անդաման, անգլերեն Andaman Islands. կղզեխումբ Հնդկական օվկիանոսի հյուսիս-արևելքում, Հնդկաստանի և Մյանմայի միջև: **Նիկոբարյան** կղզիներից բաժանվում է **Տասներորդ աստիճանի** նեղուցով: Կազմում է Անդամանյան և Նիկոբարյան կղզիներ հնդկական դաշնային տարածքի մասը: Ընդգրկում է 204 կղզի: Կղզեխմբի կազմի մեջ է Բառեն կղզին իր համանուն գործող հրաբխով (միակը Հնդկաստանում): Հյուսիսային Անդաման կղզում է գտնվում միակ մշտահոս Կալպոնգ գետը: Մակերեսը՝ 6 408 կմ^2: Կղզեխմբի բարձր կետն է համարվում Սադլ Պիկ լեռը 738 մ (Հյուսիսային Անդաման կղզում):
Հավանաբար կղզեխումբն անվանումը ստացել է կապիկների հինդուական हनुमान् Հանուման աստվածության անվան մեկ այլ अंडमान *Անդման* ձևից:

ԱՆԻՎԱ - ռուսերեն Анива, ճապոներեն 亜庭湾 Անիվա վան. **Օխոտի** ծովի ծոց, **Սախալին** կղզու հարավային ափի մոտ: Ծոցի հարավային սահման է հանդիսա-

նում Կրիլյոն և Տոնինո-Անիվայի թերակղզիների միջև երևակայական գիծը: Ծոցն են թափվում Լյուտոգա, Սուսույա, Սիգովկա և այլ գետեր: Երկարությունը՝ 90 կմ, լայնությունը՝ 104 կմ: Ափի երկարությունը՝ 263 կմ: Առավելագույն խորությունը՝ 93 մ (հարավարևելյան մասում):
Անվանումը, հավանաբար, ունի այներեն ծագում և կազմված է ан ան *ունեցող*, *գտնվող* և ива իվա *լեռնաշղթա*, *ժայռ*, *գագաթ* բառերի միացումից՝ *Լեռներ ունեցող* կամ *Լեռնամիջում գտնվող*:

ԱՆՆԱՄԻ ԼԵՌՆԵՐ - լաոսերեն ᨾᨾᨷᨾᨷ Պհու Լուանգ, վիետնամերեն Dãy Trường Sơn Ձայ Չիոն Սոն, քմերեն նկար Սանգվակ ա նրեյ նի սի. լեռնաշղթա Արևելյան **Հնդկաչինում**,Վիետնամում,Լաոսում և Կամբոջայում:Ձգվում է **Հնդկաչինի** արևելյան ափին զուգահեռ: Աննամի լեռներից են սկիզբ առնում Բանֆայ,Կադին, Տհեուն, Լանգոն գետերը: Մակերեսը՝ 400 527 կմ^2: Երկարությունը՝ 1 264 կմ, լայնությունը՝ 862 կմ: Բարձր գագաթը՝ Բիա լեռ (2 819 մ):
Հավանական է, որ անվանման հիմքում ընկած է չինարեն 安ան, *անվտանգ* և վիետնամերենի nam-ը ձևափոխված չինարեն 南 նան-ի *հարավ* բառերի միացումից:

ԱՆՆԱՊՈՒՌՆԱ - նեպալերեն अन्नपूर्ण Աննապուռնա. 55 կմ երկարությամբ բազմագագաթ լեռնազանգված **Հիմալայներում**, Նեպալում: Լեռնազանգվածի գագաթներից երեքը բարձր են 8 000 մ-ից՝ Աննապուռնա I 8 091 մ, Աննապուռնա Կենտրոնական 8051 մ և Աննապուռնա Արևելյան 8 026 մ: Սառցադաշտերը հիմնականում տեղակայված են լեռնազանգվածի հյուսիսային կողմում: Աննապուռնան 8 000 մ-ից բարձր առաջին լեռնն է, որի գագաթը մարդ է բարձրացել: Լեռնազանգվածի հյուսիսային լանջերի երկայնությամբ է հոսում Մարսյանդի գետը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 091 մ, հարաբերականը՝ 2 984 մ: Առաջին անգամ 1950 թ. հունիսի 3-ին Աննապուռնայի գագաթն են բարձրացել ֆրանսիացի լեռնագնացներ՝ Մորիս Էրցոգը ու Լուի Լաշենալը:
Աննապուռնա անվանումը սանսկրիտերենից թարգմանաբար նշանակում է *Պտղաբերության* (*բերքատվության*) *աստվածուհի* :

ԱՆՆԱՊՈՒՌՆԱ II - նեպալերեն अन्नपूर्ण II Աննապուռնա դոսրո. լեռնագագաթ **Հիմալայներում**, **Աննապուռնա** լեռնազանգվածում, Նեպալում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 937 մ, հարաբերականը՝ 2 437 մ:
Աննապուռնա անվանումը սանսկրիտերենից թարգմանաբար նշանակում է *Պտղաբերության* (*բերքատվության*) *աստվածուհի* :

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ - արաբերեն الصحراء العربية ալ Սահրա աալ Արաբիյաթի. անապատ **Արաբական թերակղզում**, Սահարայից հետո իր մեծությամբ երկրորդն է աշխարհում: **Արաբական թերակղզում** են տեղակայված մի շարք անապատները, որոնց ընդհանրական անվանումն է Արաբական անապատ: Մեծ մասամբ զբաղեցնելով Սաուդյան Արաբիայի տարածքը, այն ընդգրկում է նաև Հորդանանի, Իրաքի,

Քուվեյթի, Օմանի, Կատարի, Միացյալ Արաբական Էմիրությունների ու Եմենի որոշ մասերը: Անապատի տարբեր մասերն ունեն իրենց անունները՝ Ռուբ-Էլ-Խալի (արաբ. ربع الخالي), Մեծ Նեֆուդ, Ադ Դահնա, Նեֆուդ-Դահի, Էլ-Հասա, Վահիբա, Ջաֆուրա, Տիհամա, Էլ Հիբեկ և այլն: Մակերեսը՝ մոտ 2 300 000 կմ^2: Երկարությունը՝ 2 100 կմ, լայնությունը՝ 1 100 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 760 մ (Էն Նաբի Շուայբ լեռ):
Անվանումը ստացել է *Արաբական թերակղզուց*:

ԱՐԱԲԱԿԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ - արաբերեն بەزیرة شبه الجزيرة العربية էշբ էլ ջազիրատ էլ արաբիե. թերակղզի Ասիայի հարավ-արևմուտքում: Արևելքից ողողվում է **Պարսից** և **Օմանի** ծոցերով, հարավից՝ **Արաբական** ծովով և **Ադենի** ծոցով, արևմուտքից՝ **Կարմիր** ծովով: Ափերը հիմնականում մեղմաթեք են, որով էլ բացատրվում է հարմարավետ ծովախորշերի սակավությունը: Թերակղզին համարյա ամբողջովին ծածկված է ավազե և քարե անապատներով: Գետերն են՝ Մասիլա, Մաուր և այլն: Մակերեսը՝ 3 237 500 կմ^2: Երկարությունը՝ 2 800 կմ, լայնությունը՝ 2 000 կմ: Բարձր կետը՝ Էն Նաբի Շուայբ լեռ (3 665 մ):
Անվանումը ստացել է *արաբ* ժողովրդից:

ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՎ - արաբերեն العرب بحر Բահր էլ Արաբա, պարսկերեն دریای عرب Բահար ալ Արաբ, սոմալիերեն Bada Carbeed, ուրդու بحر عرب Բահիր Արաբ, գուջարաթի અરબીસમુદ્ર Արաբի սամուդրա, մարատիի अरबी समुद्र Արաբե սամուդրա, մալայալամ അറബിക്കടൽ Արաբիկ կատալ, հինդի अरब सागर Արաբ սագր, դիվեհի ދިވެހި ؤسمڌ Արաբի քանդու, ֆրանսերեն Mer d'Arabie, անգլերեն Arabian Sea.ծով Հնդկական օվկիանոսի հյուսիսային մասում, արևմուտքում՝ **Արաբական**, իսկ արևելքում՝ **Հնդստան** թերակղզիների միջև: Ողողում է Ջիբութիի, Եմենի, Օմանի, Իրանի, Պակիստանի և Հնդկաստանի ափերը: Խոշոր կղզիներն են՝ Սոկոտրա, Մասիրա, Աստոլա և այլն: Խոշոր ծոցերն են՝ **Ադենի**, **Օմանի**, **Կաչ**, **Կամբեյի** և այլն: Ծովն են թափվում **Ինդոս**, Մետրավատիի, Շարավատիի, Նարմադա, Տապտի, Մահի գետերը: Մակերեսը՝ 3 862 000 կմ^2: Երկարությունը՝ 1 560 կմ,լայնությունը՝ 2 400 կմ:
Ծավալը՝ 11 609 172 կմ^3: Միջին խորությունը՝ 3 006 մ, առավելագույնը՝ 5 803 մ (հարավային մասում):
Անվանումը ստացել է *արաբ* ժողովրդից:

ԱՐԱԳԱԾ - քառագագաթ հրաբխային լեռնազանգված, ստրատոհրաբուխ **Հայկական** լեռնաշխարհում,Հայաստանի Հանրապետությունում՝ Արագածոտնի և Շիրակի մարզերում: Զբաղեցնում է Արարատյան դաշտի, Շիրակի սարահարթի, Ախուրյան և Քասաղ գետերի միջև ընկած տարածքը: Իր բարձրությամբ Հայաստանի Հանրապետության ամենաբարձր կետն է: Երեք կողմից նրան հարևան են՝ հյուսիսից Շարայի, արևելքից՝ Արայի, հարավարևմուտքից՝ Մեծ Արտենի լեռները: Խառնարանի քայքայված պատերի մնացորդները կազմում են լեռան չորս կատարները, որոնք դասավորված են կիսաշրջանաձև և կազմում են շուրջ 270 աստիճանի

աղեղ: Ամենաբարձրը՝ հյուսիսային կատարն է 4 090,1 մ, արևմտյանը՝ 3 995,3 մ, արևելյանը՝ 3 908,2 մ և հարավայինը՝ 3 887,8 մ: Գագաթային մասում, ժայռային կատարների միջև է ընկած 2 կմ երկարությամբ, 2,5 կմ լայնությամբ, 350 մ խորությամբ և 3 000 մ տրամագծով խառնարան-կրկեսը: Բազմաթիվ հովիտների և կրկեսների վերին մասերում պահպանված են մնացորդային սառցադաշտեր ու ֆիռնային բծեր: Լեռնազանգվածի մաս են կազմում Թալինի, Շամիրամի, Կարմրաշենի, Աշտարակի, Մարալիկի սարավանդները: Արագածի լանջերից են սկիզբ առնում՝ Գեղարոտ, Ամբերդ, Մանթաշ, Արուճաջուր, Ծաղկահովիտ, Գեղաձոր և այլ գետեր, որոնք ունենալով անմշակ հուն, տեղ տեղ առաջացնում են ջրվեժներ ու սահանքներ: Սառցադաշտերի կրկեսների և մորենային թմբերի միջև առաջացել են բազմաթիվ լճեր՝ Քարի, Ամբերդի, Լեսինգի և այլն: Լեռնազանգվածի ընդերքի ջրերով է սնվում նաև Մեծամոր լիճը:

Անվան ծագումը ավանդաբար կապվում է Հայ դիցաբանության մեջ մեռնող և հարություն առնող *Արա աստծո* անվան ու *գահ* բառից՝ *Արայի գահ*, որտեղ *գահ* բառը դարձել է *գած՝ Արագած*:

Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը կապվում է *Հայկազունի Արմանեակ* նահապետի անվան հետ:

ԱՐԱԾԱՆԻ - թուրքերեն Murat, քրդերեն Çemê Muradê. գետ **Հայկական լեռնաշխարհում**, **Եփրատի** ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Ծաղկանց լեռների հյուսիսային լանջերից՝ մոտ 3 060 մ բարձրությունից: Վերին հոսանքում անցնում է խոր կիրճով դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևմուտք, դուրս գալիս Ալաշկերտի դաշտ և հոսում հարավարևմտյան ուղղությամբ: Փոխելով ուղղությունը դեպի արևմուտք, ճեղքում է մի քանի լեռնաբազուկներ, համեմատաբար նեղ հունով մտնում Մշո դաշտ, որտեղից մինչև Բալու քաղաքը հոսելով խոր կիրճով, որպես լայնահուն ջրառատ գետ մտնում է Խարբերդի դաշտ, պահպանելով արևմտյան ուղղությունը մինչև **Եփրատին** միանալը: Վտակներն են աջից՝ Բագրևանդ, Խնուս, Բյուրակն, ձախից՝ Մանազկերտ, Մեղրագետ, Ճապաղջուր: Երկարությունը՝ 722 կմ: Ավազանը՝ 40 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 245 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը մոտ՝ 3 060 մ, գետաբերանինը՝ 821 մ:

Արածանին հայտնի է նաև Արևելյան Եփրատ անունով:

Արածանի անվանումն առաջացել է գետի ասորա-բաբելոներեն *Արշանիա* անվանումից, որի հնդեվրոպական արմատը նշանակում է *սպիտակ, փայլուն* :

Գետի թուրքերեն Մուրատ անվանումը ևս ունի հայկական ծագում և առաջացել է հին հայերեն մրաթա, մուրաթա *ցեխ, ճահիճ* բառից:

ԱՐԱՐԱՏ - պարսկերեն نوح کوه / آرارات کوه Կուհ է Նուհ / Կոհ է Արարատ, քրդերեն Çiyayê Agirî, թուրքերեն Ağrı Dağı, արաբերեն جبل أرارات Ջաբալ Արարատ. երկգագաթանի հանգած ստրատոհրաբուխ **Հայկական** լեռնաշխարհում, այժմյան Թուրքիայի արլ-ում՝ **Արաքս** գետի միջին հոսանքի աջափնյակում: Կազմված է հիմքերով միաձուլված երկու՝ Մեծ ու Փոքր Արարատ գագաթներից: **Հայկական լեռնաշխարհի** ամենաբարձր գագաթն է: Կատարները բաժանվում են իրարից 2 688 մ բարձրությամբ Սարդարբուլաղի թամքոցով: Արարատ լեռնազանգվածն ունի շուրջ 40 կմ

տրամագիծ, հիմքը՝ մոտ 130 կմ եզրագիծ և գրավում է շուրջ 1 200 կմ^2 տարածություն: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 5 137 մ: Հարաբերական բարձրությունը՝ 3 611մ:
Հայերը Մեծ Արարատը անվանում են Մասիս, Փոքր Արարատը՝ Սիս: Մասիս անվանումը ունի իրանական ծագում և նշանակում է *մեծ*, *հսկա*, քանի որ միջին պարսկերենում masist-ը թարգմանաբար նշանակում է *ամենամեծ* :
Ըստ հայկական ավանդության, որը բերում է Մովսես Խորենացին, Մասիս անվանումը լեռը ստացել է Հայկ նահապետի ծոռ՝ *Ամասիա* թագավորից:
Արարատ անվանումն առաջին անգամ գրավոր աղբյուրներում հիշատակվել է մ.թ.ա. 7-րդ դարում (Աստվածաշունչ) և ծագել Վանի թագավորության՝ հին եբրայերեն אֲרָרֵט անվանումից ու հետագայում ենթարկվել զանազան ստուգաբանությունների՝ *Արայի լեռ, Արայի արատ* , *Հուրարտա* , *Հարա-հարա* (Լերիք լերանց), *Արիա-վարդա* (Արիաց երկիր) և այլն:

ԱՐԱՔՍ (ԵՐԱՍԽ) - պարսկերեն ارس Էրես, թուրքերեն Aras, քրդերեն Erez, ադրբեջաներեն Araz, հունարեն Ἀράξης, արատտերեն 𐎠𐎡𐎢Մունա. գետ **Հայկական լեռնաշխարհում Կուր** գետի աջ վտակը: Սկիզբ է առնում Բյուրակնյան լեռների Սրմանց լեռան հյուսիսարևելյան լանջերի աղբյուրներից և հոսելով Թուրքիայով, Հայաստանով, Նախիջևանով, Իրանով, Արցախով, Ադրբեջանով և Սաբիրաբադ քաղաքի մոտ թափվում **Կուր** գետը: Վտակներն են՝ Սարիսու, Ղարասու, Մուրց, Աղավնո, Ախուրյան, Սևջուր, Հրազդան, Արփա, Ազատ, Կոտուր, Մակու և այլն: Երկարությունը՝ 1 072 կմ: Ավազանը՝ 102 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 285 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 2 990 մ, գետաբերանինը՝ -15 մ:
Արաքս անվանումն ունի ստուգաբանման մի քանի տարբերակներ՝ շումերերեն *քանդող գետ* բառից, զենդերեն **արվատ** *վազող* բառից, հունարեն **արասո** *աղմկում եմ* բառից, արաբերեն **ռուզ** *վազել* բառից, հեռավոր անցյալում Առաջավոր Ասիայում գոյություն ունեցած **արաս** հասարակ անունից և այլն:
Հայ մատենագրության մեջ Արաքսը հայտնի է նաև Երասխ անունով, որը Մովսես Խորենացին կապում է Արամայիս նահապետի թոռան՝ Երաստի անվան հետ: Հին Կտակարանում Արաքսը կոչվել է Գիհոն (երկրորդը դրախտի չորս գետերից), որը ենթադրվում է, որ այդ անվանումն առաջացել է եբրայերեն גיחון գիհոն *հարձակմամբ հոսել* բառից:

ԱՐԳՈՒՆ - ռուսերեն Аргунь, չինարեն 额尔古纳 Էերգունա, մոնղոլերեն Эргүнэ, էվենկերեն Ергэне, բուրյաթերեն Эргэнэ.գետ Չինաստանում և Ռուսաստանի Դաշնությունում, **Ամուր** գետը կազմավորող աջ օժանդակը: Սկիզբ է առնում **Մեծ Խինգանի** լեռներից՝ Չինաստանից, որտեղ կոչվում է Հայլար: Գետով է անցնում ռուս-չինական սահմանի մի մասը:Վտակներն են ձախից՝ Ուրով, Ուրյումկան, Գազիմուր, աջից՝ Գենխե, Նյուերխե, Ցզիլյուխե գետերը: Երկարությունը՝ 1 620 կմ: Ավազանը՝ 164 000 կմ^2: Ջրի միջին ծախսը՝ 340 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 961 մ, գետաբերանինը՝ 303 մ:

Գետի արդի անվանումն առաջացել է նրա էվենկերեն Эргэне *ոլորապտույտ գետ* անունից: Մոնղոլերեն Эргүнэ անվանումը նշանակում է *լայն*:

ԱՐԵՎԵԼԱԿՈՐԵԱԿԱՆ ԾՈՑ - կորեերեն 동조선만 թունձոսոնման. **Ճապոնական** ծովի ծոց, **Կորեական** թերակղզու հյուսիսարևելյան մասում: Ողողում է Հյուսիսային Կորեայի ափերը: Մակերեսը՝ 29 000 կմ^2: Երկարությունը՝ 150,1 կմ, լայնությունը՝ 69 կմ: Ծավալը՝ 2 479 5 կմ^3: Ափի երկարությունը՝ 583,3 կմ: Միջին խորությունը՝ 85,5 մ, առավելագույնը՝ 1 111 մ (արևմտյան մասում):

Այդպես է կոչվել, հաշվի առնելով իր դիրքը Կորեայի նկատմամբ:

ԱՐԵՎԵԼԱՉԻՆԱԿԱՆ ԾՈՎ - չինարեն 东海 /東海 Տոնհայ, կորեերեն 동중국해 թոնձյուն քուքիե, ճապոներեն 東シナ海 Հիգասիսինակայի. Խաղաղ օվկիանոսի կիսափակ ծով Չինաստանի և Ճապոնիայի (**Ռյուկյու** և **Կյուսյու** կղզիներ) միջև: Ողողում է Չինաստանի, Հարավային Կորեայի և Ճապոնիայի ափերը: Հարավում **Թայվանի** նեղուցով միանում է **Հարավչինական**, հյուսիսում՝ **Դեղին**, իսկ **Կորեական** նեղուցով՝ **Ճապոնական** ծովերին: Ծովն է թափվում **Յանցզի** գետը: Մակերեսը՝ 836 000 կմ^2: Երկարությունը՝ 960 կմ, լայնությունը՝ 710 կմ: Ծավալը՝ 259 160 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 1 972 550 կմ^2: Միջին խորությունը՝ 310 մ, առավելագույնը՝ 2 716.4 մ (հարավարևելյան մասում):

Այդպես է կոչվել, հաշվի առնելով իր դիրքը *Չինաստանի* նկատմամբ:

Չինարեն 东海 / 東海 Տոնհայ անվանումը բառացի նշանակում է *Արևելյան ծով*:

ԱՐԵՎԵԼԱՍԻԲԻՐԱԿԱՆ ԾՈՎ - ռուսերեն Восточно-Сибирское море, յակուտերեն Илин Сибиирдээҕи байҕал. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծայրամասային ծով, **Նորսիբիրական** կղզիների և **Վրանգելի** կղզու միջև: Ողողում է Ռուսաստանի Դաշնության՝ Սախայի և Չուկոտկայի ափերը: **Լոնգի** նեղուցով միացված է **Չուկոտյան**, Դմիտրի Լապտևի նեղուցով՝ **Լապտևների** ծովերին: Խոշոր կղզիներն են՝ **Նորսիբիրական** կղզիներ, Լյախովի կղզիներ, Դը Լոնգի կղզիներ և այլն: Խոշոր ծոցերն են՝ Չաունայի խորշ, Օմուլյախի խորշ, Խրոմայի խորշ, Կոլիմայի ծոց և այլն: Ծովն են թափվում **Ինդիգիրկա**, Ալազեյա, **Կոլիմա**, Մեծ Չուկոչյա գետերը: Մակերեսը՝ 944 600 կմ^2: Երկարությունը՝ 760 կմ, լայնությունը՝ 1 410,5 կմ: Ծավալը՝ 62 344 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 1 342 000 կմ^2: Միջին խորությունը՝ 66 մ, առավելագույնը՝ 915 մ (հյուսիսարևելյան մասում):

Մինչև XX դարի սկիզբը ծովը կրում էր տարբեր անուններ, այդ թվում Կոլիմայի, Ինդիգիրկայի ծով:

Այժմյան անվանումը ստացել է 1935 թ. հունիսի 27-ի ԽՍՀՄ Կենտգործկոմի որոշման հիման վրա:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲՈՍՖՈՐ - ռուսերեն Босфор Восточный. նեղուց **Ճապոնական** ծովի **Պետրոս Մեծի** ծոցում: Իրար է միացնում Ամուրի ու Ուսուրիի ծոցերը և անջատում Մուրավյով-Ամուրսկու թերակղզին Ռուսկի ու Ելենայի կղզիներից: Արևմտյան սահմանն անցնում է Տոկարևսկու ցամաքալեզվակի և Լարիոնովի հրվանդանի հետ

միացնող երևակայական գծով, իսկ արևելյանը՝ Բասարգինի հրվանդանով, Սկրիպլյովի կղզիով և Կարազինի հրվանդանով: Երկարությունը՝ 9 կմ, նվազագույն լայնությունը՝ 0.8 կմ: Առավելագույն խորությունը՝ 50 մ:
Անվանումը ստացել է Սև և Մարմարա ծովերը միացնող *Բոսֆոր* նեղուցից:
Այժմյան անվանումը ստացել է շնորհիվ իր աշխարհագրական դիրքի:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՀԱԹԵՐ - հինդի पूर्वी घाट Պուրվի Գհաթ, անգլերեն Eastern Ghats, թամիլերեն கிழக்குத் தொடர்ச்சி மலைகள் Կիլակկուտ տոտարկչի մալայկալ, տելուգու తూర్పు కనుమలు Տուրպու կանումալու, ուրդու مشرقی گھاٹ Մաշրեկի Գհաթա. լեռնահամակարգ Հնդկաստանում, **Դեկանի** սարահարթից արևելք: Ձգվում են Բենգալյան ծոցի արևմտյան ափին զուգահեռ: Կազմված են խոշոր գետերի հովիտներով, իրարից բաժանված մի շարք միջին ու ցածրադիր լեռնաշղթաներից՝ Նալլամալա, Վելիկոնդա, Պալկոնդա, Շեվարոյ և այլն: Արևելյան լանջերը զառիվեր են, արևմտյանը՝ մեղմաթեք: Լեռները ծածկված են անտառներով: Ծայր հարավում, Նիլգիրի լեռների շրջանում, միանում են Արևելյան Գհաթերի լեռներին: Լեռներից են սկիզբ առնում՝ Պոնաիվար, Պալար, Սաջիլերու, Նագավալի, Վամսադհարա և այլ գետեր: Մակերեսը՝ 262 673 կմ^2: Երկարությունը՝ 1 131 կմ, լայնությունը՝ 1 053 կմ: Բարձր գագաթը՝ Ձինդագաթա լեռ (1 690 մ):
Սանսկրիտերեն घाट գհաթի անվանումը թարգմանաբար նշանակում է *կիրճ, լեռնանցք*:

ԱՐԵՎՄՏԱԿՈՐԵԱԿԱՆ ԾՈՑ - կորեերեն 서조선만 ցոձոսոնման, չինարեն 西朝鲜 Սի չաոսիեն. Հյուսիսային Կորեայի և Չինաստանի ափերը ողողող **Դեղին** ծովի ծոց: Արևմուտքից **Լյաոդունի** թերակղզով անջատված է Լյաոդունի ծոցից: Խոշոր կղզիներն են՝ Չխո, Սիկ, Սինմի, Չանշան, Տաչանշան և այլն: Ծոցն են թափվում Յալուցգյան, Չինչժուն, Տեդոն և բազմաթիվ այլ գետեր: Մակերեսը՝ 41 000 կմ^2: Երկարությունը՝ 240 կմ, լայնությունը՝ 160 կմ: Ծավալը՝ 1 271 կմ^3: Միջին խորությունը՝ 31 մ, առավելագույնը՝ 50 մ (հարավարևմտյան մասում):
Այդպես է կոչվել, հաշվի առնելով իր դիրքը Կորեայի նկատմամբ:

ԱՐԵՎՄՏԱՍԻԲԻՐԱԿԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ - ռուսերեն **Западно-Сибирская равнина**, ղազախերեն Батыс Сібір жазығы. երկրագնդի առավել ընդարձակ կուտակումային հարթավայրերից մեկը Հյուսիսային Ասիայում՝ Ղազախստանում և Ռուսաստանի Դաշնությունում: Զբաղեցնում է Սիբիրի արևմտյան մասը, արևմուտքում՝ **Ուրալյան** լեռներից մինչև **Միջին Սիբիրական** սարահարթը արևելքում: Հյուսիսում եզերված է **Կարայի** ծովով, հարավում ձգվում է մինչև **Ղազախական մանրաբլուրները**, հարավարևելքում այն աստիճանաբար բարձրանալով, փոխարինվում է Ալթայի, Սալաիրի, Կուզնեցկի Ալաթաուի և Լեռնային Շորիայի նախալեռներով: Հարթավայրով են հոսում ավելի քան 2 000 գետ, որոնցից խոշորներն են՝ **Օբը**, **Իրտիշը**, **Ենիսեյն** իրենց բազմաթիվ վտակներով: Մակերեսը՝ ավելի քան 2 600 000 կմ^2: Երկարու-

թյունը՝ մոտ 1 900 կմ, լայնությունը՝ 2 500 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 50-300 մ:
Այդպես է կոչվել, հաշվի առնելով իր դիրքը *Սիբիրում*:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳՀԱԹԵՐ - հինդի पश्चिमी घाट Պաշչիմի Գհաթ, անգլերեն Western Ghats, գուջարաթի સહ્યાદ્રિ પર્વતમાળા Սահյեդրի, պարվատամելե, մարատիի सह्याद्री Սահյեդրը, կաննադա ಪಶ್ಚಿಮ ಘಟ್ಟಗಳು Պաշսիմա Գհատագալու, թամիլերեն மேற்குத் தொடர்ச்சி மலைத்தொடர் Մերկյուտ տոտարչի մալայտոթար, մալայալամ പശ്ചിമഘട്ടം Պաշսիմա,սանսկրիտ पश्चिमघट्टः Պշչիմագհատահ Գհատամ. լեռնահամակարգ Հնդկաստանում,**Դեկանի** սարահարթից արևմուտք: Սկիզբ է առնում Տապտի գետից հարավ, Գուջարաթ ու Մահարաշտրա նահանգների սահմանի Սատպուրա լեռներից՝ հյուսիսում և **Արաբական ծովին** զուգահեռաբար ձգվելով, կտրում անցնում են Մահարաշտրա, Գոա, Կառնատակա, Թամիլնադ և Կերալա նահանգներով ու ավարտվում է **Հնդստան** թերակղզու հարավային՝ Կանյա Կումարի ծայրակետում: Այստեղից են սկիզբ առնում՝ Կրիշնա, Գոդավարի, Կավերի, Կարամանա և այլ գետեր: Մակերեսը՝ 160 000 կմ^2: Երկարությունը՝ 1 600 կմ, լայնությունը՝ 100 կմ: Բարձր գագաթը՝ Անամուդի լեռ (2 695 մ):
Հայտնի են նաև सह्याद्रि Սահյադրի *Բարյացակամ լեռներ* անվամբ:

Սանսկրիտերեն घाट Գհաթի անվանումը թարգմանաբար նշանակում է *կիրճ*, *լեռնանցք*:

ԱՓՍԱՐԱՍԱՍ ՔԱՆԳՐԻ - հինդի अप्सरासस कांगरी Ապսարաասաս Կանգարի. բազմագագաթ լեռնազանգված **Կարակորումում**, Հնդկաստանի կողմից վերահսկվող **Սիաչեն** սառցադաշտի և Չինաստանի՝ Սինցզյան Ույղուրական ինքնավար շրջանի սահմանին: **Թերամ Քանգրի II** լեռնագագաթից 6,38 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Ափսարասաս Քանգրի 7 245 մ, Ափսարասաս Քանգրի Հարավային 7 117 մ, Ափսարասաս Քանգրի II 7 239 մ, Ափսարասաս Քանգրի III 7 236 մ, Ափսարասաս Քանգրի IV 7 221 մ, Ափսարասաս Քանգրի V 7 186 մ, Ափսարասաս Քանգրի VI 7 184 մ, Ափսարասաս Քանգրի VII 7 000 մ և այլն: Կան շատ սառցադաշտեր: Հարաբերական բարձրությունը՝ 625 մ:
Հայտնի է նաև Ափսարամաս Քանգրի I անվամբ:
Անվան հիմքում ընկած է սանսկրիտերեն अप्सरा Ապսարա *Հավերժահարս* և տիբեթերեն Քանգրի *սառցապիկ* բառերը:

ԱՔԱԲԱՅԻ ԾՈՑ - արաբերեն خليج العقبة խալիջ էլ Աքաբա, եբրայերեն מפרץ אילת Միֆրաց Էյլաթ. ծոց **Կարմիր** ծովի հյուսիսային մասում, Սինայի և **Արաբական** թերակղզիների միջև: **Տիրանի** նեղուցով հաղորդակցվում է **Կարմիր** ծովի հետ: Մակերեսը՝ 2 880 կմ^2: Երկարությունը՝ 175 կմ, լայնությունը՝ 29 կմ: Ծավալը՝ 2 615 կմ^3:

Ափի երկարությունը՝ 180 կմ: Միջին խորությունը՝ 908 մ, առավելագույնը՝ 1 828 մ (կենտրոնական մասում):
Անվանումը ստացել է *Աքաբա* քաղաքից:

Բ

ԲԱԲ ԷԼ ՄԱՆԴԵԲ - արաբերեն باب المندب Բաբ ալ Մունադաբ, ֆրանսերեն Bab-el-Mandeb, տիգրինյա **ማንደብ** Մանիդեբի, անգլերեն Bab-el-Mandeb. Կարմիր ծովն ու Ադենի ծոցն իրար միացնող նեղուց **Արաբական** թերակղզու հարավարևմտյան ծայրամասի և Աֆրիկայի (Ջիբութի, Էրիթրեա) հյուսիսարևելյան մասի միջև: Պերիմ կղզով նեղուցը բաժանվում է երկու անցուղու՝ Մեծ (Դակտ էլ Մայուն) և Փոքր (Բաբ Իսկանդեր՝ Ալեքսանդրի նեղուց): Աֆրիկյան ծովափի մոտ են գտնվում մի խումբ կղզիներ՝ Բարիմ, Յոթ եղբայրներ և այլն: Երկարությունը՝ 109 կմ, լայնությունը՝ 26-90 կմ: Առավելագույն խորությունը՝ 220 մ (հարավարևելյան մասում):
Անվանումն արաբերենից թարգմանաբար նշանակում է *Վշտի դարպաս* կամ *Արտասուքի դարպաս*:

ԲԱԼԻ - ինդոնեզերեն Selat Bali, ճավայերեն Selat Bali. միջկղզային նեղուց **Ճավա** և **Բալի** կղզիների միջև: Նեղուցի հարավային սահման է հանդիսանում Բլամբանգան (**Ճավա** կղզի) և Բուկիտ (**Բալի** կղզի) թերակղզիների միջև երևակայական գիծը: Երկարությունը՝ 120 կմ, լայնությունը՝ 2-50 կմ: Առավելագույն խորությունը՝ ավելի քան 800 մ (հարավային մասում):
Անվանումը ստացել է *Բալի* կղզուց:

ԲԱԼԻ - ինդոնեզերեն Pulau Bali. ամենաարևմտյան կղզին Փոքր Զոնդյան կղզիներից: Հարավից ողողվում է Հնդկական օվկիանոսով, հյուսիսից՝ **Բալի** ծովով և Խաղաղ օվկիանոսով: Արևմուտքից Բալի նեղուցով անջատված է **Ճավա**, արևելքից Լոմբոկի նեղուցով՝ **Լոմբոկ** կղզիներից: Կղզու հյուսիսարևելյան մասում են գտնվում Ագունգ, Բատուր, իսկ կենտրոնական մասում՝ Բատուկաու գործող հրաբուխները: Խոշոր գետերն են՝ Սինգարաջի, Սերիրիտա և այլն: Մակերեսը՝ 5 634,43 կմ^2: Երկարությունը՝ 153 կմ, լայնությունը՝ 112 կմ: Ափի երկարությունը՝ 593 կմ: Բարձր կետը՝ Ագունգ հրաբուխ (3 142 մ):
Անվանման հիմքում ընկած է հինդի լեզվի बाली բաալի *գինդ, ականջող* բառը:

ԲԱԼԻ - ինդոնեզերեն Laut Bali, ճավայերեն Segara Bali. Խաղաղ օվկիանոսի մայրցամաքային միջկղզային ծով, **Ճավա** կղզու արևելյան ծայրամասի և **Բալի**, **Լոմբոկ**, **Սումբավա**, **Սուլավեսի** և **Մադուրա** կղզիների միջև: Լոմբոկ և մի քանի այլ նեղուցներով միացված է Հնդկական օվկիանոսի և **Ֆլորես** ծովի հետ: Մակերեսը՝ 43 820 կմ^2: Երկարությունը՝ 150 կմ, լայնությունը՝ 320 կմ: Ծավալը՝ 18 010 կմ^3: Միջին խորությունը՝ 411 մ, առավելագույնը՝ 1 590 մ (Բալիի փողրակ):
Անվանումը ստացել է *Բալի* կղզուց:

ԲԱԼԽԱՇ - ղազախերեն Балқаш, ռուսերեն Балхаш. անհոսք լիճ Ղազախստանի հարավարևելյան մասում, Բալխաշ-Ալակոլի հովտափոսում: Սարիեսիկ թերակղզով լիճը բաժանվում է մոտավորապես հավասար մասերի, որի արևմտյան մասը համեմատաբար ծանծաղ է և ջուրը համարյա քաղցրահամ, իսկ արևելյանը՝ խորն ու աղի: 3.5 կմ լայնությամբ Ուզինարալ նեղուցով ջուրը լճի արևմտյան մասից հոսում է դեպի արևելյան մասը: Ափերը ցածրադիր են և մասնատված: Խոշոր թերակղզիներն են՝ Բայգաբիլ, Բալայ, Շաուկար, Կենտուբեկ, Կորժինտուբեկ և այլն: Խոշոր ծոցերն են՝ Սարիշագան, Կաշկանտենիզ, Կարակամիս, Շեմպեկ, Բալակաշկան, Ախմետսու, Գուզկոլ, Բալըկտիկոլ,Կուկուն, Կարաշիգան և այլն: Խոշոր կղզիներն են՝ Բասարալը, Տասարալը, Օրտաարալը, Այակարալը, Օլժաբեկարալը, Օզինարալը, Ուլտարակտին, Կորժինը, Ալգազին: Լիճն են թափվում Իլի, Կարատալ, Ակսու, Լեպսը, Այագուզ և այլ գետեր: Մակերեսը՝ 16 396 կմ^2: Երկարությունը՝ 605 կմ, լայնությունը՝ 9-74 կմ: Ծավալը՝ 95,1 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 413 000 կմ^2: Լճափի երկարությունը՝ 3 061 կմ, պարզությունը՝ 1-5,5 մ: Միջին խորությունը՝ 5.8 մ, առավելագույնը՝ 27 մ (արևելյան մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 341,4 մ:
Հավանաբար անվանումն առաջացել է հին թյուրքերեն balkas *ճիմաթմբեր* բառից:

ԲԱԼՏՈՐՈ - ուրդու بلتـــورو گـلیشیر, անգլերեն Baltoro Glacier, սառցադաշտերի համակարգ Կենտրոնական **Կարակորումում**, Քաշմիրի Պակիստանի կողմից հսկվող մասում: Հյուսիսից եզերված է Բալտորո Մուզտաղ, իսկ հարավից՝ Մաշերբրում լեռնաշղթաներով: Սկիզբ առնելով 7 200 մ բարձրությամբ բարձրավանդակից, սառցադաշտը իջնում է մինչև 3 400 մ, սկիզբ տալով Բիաֆո գետին, որը միջին հոսանքում հայտնի է Բրալդու, իսկ Սկարդու բնակավայրի մոտ, մինչև **Ինդոսին** միանալը Շիգար անվամբ: Սառցադաշտը իր ամբողջ ընթացքում ընդունում է ավելի քան 10 խոշոր վտակներ, որոնցից ամեն մեկն իր հերթին հանդիսանում է բարդ հովտային սառցադաշտ: Սառցադաշտերն են՝ Հարավային Գաշերբրումը, Գոդվին Օստենը, Աբրուցին, Վինը, Երմանդենդուն: Սառցահավաք մակերեսը՝ 750 կմ^2: Երկարությունը՝ 62 կմ: Սառցի հաստությունը՝ 225 մ:
Առաջին անգամ 1856 թ-ին եվրոպացիներից՝ գերմանացի ճանապարհորդ և հետազոտող Ադոլֆ Շլագինտվեյտն էր, ով հասավ այս վայրերը:

ԲԱԼՏՈՐՈ ՔԱՆԳՐԻ - ուրդու بلتـــورو کنگـــر. բազմագագաթ լեռնազանգված **Կարակորումում**, Գիլգիթ Բալտիստանում, Պակիստանում: **Սիա Քանգրի** լեռից 8,43 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Բալտորո Քանգրի 7 312 մ, Բալտորո Քանգրի I 7 274 մ, Բալտորո Քանգրի II 7 270 մ, Բալտորո Քանգրի IV 7 265 մ և Բալտորո Քանգրի V 7 275 մ: Մեկ այլ 6 501 մ բարձրությամբ գագաթ գտնվում է Փայոնիր Պիկից արևմուտք: Կան սառցադաշտեր՝ հյուսիսային մասում է գտնվում Աբրուցին, ինչպես նաև աշխարհի խոշոր սառցադաշտերից մեկը՝ **Բալտորոն**, որը սկիզբ է առնում լեռնազանգվածի ստորոտից: Հարաբերական բարձրությունը՝ 1 040 մ:
Լեռը հայտնի է նաև Բալտորո III ու Ոսկե Գահ անվամբ:

ԲԱԿԲՈ - վիետնամերեն Vịnh Bắc Bộ, չինարեն 北部 Պեյբու. Չինաստանի և Վիետնամի ափերը ողողող **Հարավչինական** ծովի ծոց: Արևելքից Լեյչժոու թերակղզով և **Հայնան** կղզիով անջատված է **Հարավչինական** ծովից, իսկ Հայնանի նեղուցով՝ մայրցամաքից: Խոշոր կղզիներն են՝ **Հայնան**, Բաի Լոնգ Վի, Կատ Բա, Վաու, Տա Դուոնգ և այլն: Ծոցն են թափվում Կա, Մա, Հոնգկա և այլ գետեր: Մակերեսը՝ 126 250 կմ^2: Երկարությունը՝ 470 կմ, լայնությունը՝ 241 կմ: Ծավալը՝ 7 196,2 կմ^3: Ափի երկարությունը՝ 1 458 կմ: Միջին խորությունը՝ 57 մ, առավելագույնը՝ 82 մ (հարավարևելյան մասում):
Նախկինում հայտնի էր որպես Տոնկինի ծոց, որի անունն առաջացել է Հանոյի հին Տոնկին՝ Ֆոng Kinh՝ Արևելյան մայրաքաղաք անունից:
Ծոցի վիետնամերեն Vịnh Bắc Bộ անվանումը բառացի նշանակում է *Հյուսիսային ծոց*:

ԲԱՅԿԱԼ - ռուսերեն Байкал, բուրյաթերեն Байгал, մոնղոլերեն Байгал нуур, յակուտերեն Баай күөл. քաղցրահամ լիճ Ռուսաստանի Դաշնությունում, Արևելյան Սիբիրի հարավում, ամենախորն աշխարհում: Արևմտյան ափերը ժայռոտ են և զառիթափ, արևելյանը՝ մեղմաթեք: Լճում կա 27 կղզի՝ Օլխոն, Յարկի, Ուշկանյի և այլն: Խոշոր թերակղզին է՝ Սվյատոյ Նոս: Լիճն են թափվում Սելենգա, Վերին Անգարա, Բարգուզին, Տուրկա, Սնեժնայա, Կիչերա, Տիյա, Գոլոուստնայա, Բուգուլդեյկա և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Անգարան: Մակերեսը՝ 31 722 կմ^2: Երկարությունը՝ 636 կմ, լայնությունը՝ 25-79,5 կմ: Ծավալը՝ 23 613,86 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 570 000 կմ^2: Լճափի երկարությունը՝ շուրջ 2 000 կմ: Միջին խորությունը՝ 744,4 մ, առավելագույնը՝ 1642 մ (կենտրոնական մասում, Օլխոն կղզուց արևելք): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 456 մ:
Ենթադրվում է, որ անվանման հիմքում ընկած է մոնղոլական լեզուներում байгал *մեծ ջրավազան* բառը, համեմատելով այլ լեզուներով լճին տրվող անունների հետ՝ հին բուրյաթերեն далай *ծով*, էվենկերեն лама *ծով*, չինարեն 北海 պեյհայ *հյուսիսային ծով* և այլն:
Ոմանք էլ կարծում են, որ անվանումն առաջացել է յակուտերեն баай *հարուստ* և күөл *լիճ* բառերի միացումից, որը քիչ հավանական է:

ԲԱՅՆԹՀԱ ԲՐԱՔ - ուրդու براک بائنتھا. լեռնագագաթ **Կարակորումի** կենտրոնական մասում, Փանմահ Մուզտաղ լեռներում, **Բիաֆո** սառցադաշտի հյուսիսային մասում,Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: **Քնջութ Սարից** 41,65 կմ հեռավորությամբ: Կան սառցադաշտեր՝ Ուզուն Բրաք և այլն: Լեռան առանձնահատկություններից է 5 380 մ բարձրությամբ Լուքփիլա Բրաք (Օգրեի հարավային մատ) ծերպի առկայությունը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 285, հարաբերականը՝ 1 891 մ:
Հայտնի է նաև The Ogre *Մարդակեր* անունով:
Անվանումը ուրդու լեզվից թարգմանաբար նշանակում է *Գորշուկի ոսկորներ:*

ԲԱՆԳԿԱ - ինդոնեզերեն Pulau Bangka, մալայերեն Pulau Bangka, չինարեն (հակկա) Bangka-tó / 邦加島 Բանցգյա տո. կղզի Մեծ Զոնդյան կղզիների կազմում, **Սումատրա** կղզուց արևելք: Հյուսիսից ողողվում է **Նատունա**, հարավից՝ **Ճավայի** ծովերով: Գասպար նեղուցով անջատվում է **Բելիտունգ** կղզուց: Մակերեսը ցածրադիր է և ճահճոտ: Խոշոր գետերն են՝ Մենդուկ, Կեպալի և այլն: Մակերեսը՝ 11 693,54 կմ^2: Երկարությունը՝ 220 կմ, լայնությունը՝ մինչև 110 կմ: Բարձր կետը՝ Մարաս լեռ (699 մ):
Bangka անվանումը տեղացիների բարբառում նշանակում է *հին կղզի*:
Մեկ այլ վարկածի համաձայն, անվան հիմքում ընկած է մալայերեն membengkak *ճահճուտ* բառը:

ԲԱՆԴԱ - ինդոնեզերեն Laut Banda, տետում Mar de Banda, պորտուգալերեն Mar de Banda. ծով Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում: Արևմուտքից եզերված է **Սուլավեսի**, հյուսիսից՝ **Բուրու**, Ամբոն, **Սերամ**, արևելքից՝ Կայ և Տանիմբար, հարավից՝ **Վետար, Թիմոր,** Մոա և Բաբար կղզիներով: Մակերեսը՝ 514 333.7 կմ^2: Երկարությունը՝ 433.125 կմ, լայնությունը՝ 1 383.75 կմ: Ծավալը՝ 1 923 608 կմ^3: Միջին խորությունը՝ 3 740 մ, առավելագույնը՝ մինչև 7 440 մ (Վերերի փողրակ):
Անվանումը, հավանաբար առաջացել է մալայերեն bandan *միացում*, *միացնել* բառից՝ տվյալ դեպքում բազմաթիվ կղզիներ միացնելու իմաստով:
Մեկ այլ վարկածի համաձայն անվան հիմքում ընկած են արաբերեն با բա տառը, որպես գաղտնի խորհրդանիշ, ن նուն (راهبة ռահիբա) *գանձ* և دا դա *պահապան* բառերը:

ԲԱՏՈՒՐԱ - ուրդու بتـــورا گـلـیشـیر, անգլերեն Batura Glacier. սառցադաշտ Պակիստանում, Գիլգիթ Բալտիստանում, բևեռային սահմաներից դուրս գտնվող խոշորագույն սառցադաշտերից մեկը: Գտնվում է Բատուրա (7 795 մ) և Պասսու (7 500 մ) լեռնազանգվածներից հյուսիս՝ Գոջալ շրջանում:Հոսում է արևմուտքից արևելք ուղղությամբ: Երկարությունը՝ 54 կմ:
Բատուրա անվանումը ստացել է Հնդկաստանում լայն տարածում ունեցող թթվեցված *բհատուրա* հացից:

ԲԱՏՈՒՐԱ ՍԱՐ - ուրդու بتـــورا سـر. լեռնագագաթ **Կարակորումի** հյուսիսարևմուտքում, Բատուրա Մուզտաղ լեռներում, Պակիստանում: **Դաստեգիիլ Սարից** 62,98 կմ հեռավորությամբ:Գտնվում է Գոջալ հովտի՝ Պասսու գյուղի և Հունզա հովտի միջև: Կան սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 795 մ, հարաբերականը՝ 3 118 մ:
Հայտնի է նաև Բատուրա, Բատուրա I, Բատուրա I Արևելք անուններով:
Հավանաբար անվան հիմքում ընկած է bator *հսկա*, *կուռք* բառը:

ԲԱՐԻՍԱՆ - ինդոնեզերեն Pegunungan Bukit Barisan. ջունգլիներով ծածկված լեռնաշղթա Ինդոնեզիայում,**Սումատրա** կղզում: Ձգվում է հյուսիս-հարավ ուղղությամբ Աչեհի շրջանից մինչև Լամպունգ շրջանը: Լեռնաշղթան կազմված է հրա-

բուխներից, որոնցից 35-ը գործող: Այս լեռներում են գտնվում **Տոբա** և Մանինջաու լճերը, ինչպես նաև բազմաթիվ ջրվեժներ, տաք աղբյուրներ և այլն: Այստեղից են սկիզբ առնում Բարումուն, Ռոկան, Կամպար, Ինդրագիրի, Բատանգհարի և այլ գետեր: Երկարությունը՝ 1 650 կմ: Բարձր գագաթը՝ Կերինչի լեռ (3 800 մ):
Բարիսան անվանումը ինդոնեզերենից թարգմանաբար նշանակում է *շղթա*, *շար*:

ԲԵԼԻՏՈՒՆԳ - ինդոնեզերեն Pulau Belitung / غبليتـــــو Փլետտո, չինարեն 勿里洞 վու լի դոն. կղզի Ինդոնեզիայում, **Նատունա** և **Ճավայի** ծովերի միջև: **Կարիմատա** նեղուցով անջատված է **Կալիմանտան**, իսկ Գասպար նեղուցով՝ **Բանգկա** կղզիներից: Շրջապատված է 135 մանր կղզիներով: Մակերեսը՝ 4 478 կմ^2: Բարձր կետը՝ Տաջեմ լեռ (499 մ):
Այստեղից էլ կղզու Բելիտունգ անվանումն է, որը հանդիսանում է Bali-potong *Բալիից կտրված* արտահայտության ձևափոխման արդյունք:
Ըստ ավանդույթի կղզին իր անվանը պարտական է ժամանակին Բալի կղզուց այստեղ եկած և բնակություն հաստատած մի հինդուականի:

ԲԵՆԳԱԼՅԱՆ ԾՈՑ - բենգալերեն বঙ্গোপসাগর բանգոպոշագոր, հինդի बंगाल की खाड़ी բանգաալ կի կհաարի, սինհալերեն බංගාල බොක්ක բենգալա բոքը, բիրմայերեն ဘင်္ဂလားပင်လယ်အော်բհայնգ լառ փայնլաալաավ, անգլերեն Bay of Bengal, թամիլերեն வங்காள விரிகுடா վանկալա վիրիկուտա, ինդոնեզերեն Teluk Benggala, օդիա ବଙ୍ଗୋପସାଗର բենգո պեսա գերե, տելուգու బంగాళాఖాతము բենգալակ հատեմու. ծոց Հնդկական օվկիանոսի հյուսիսարևելյան մասում: Եզերված է արևմուտքում **Հնդստան** թերակղզով, արևելքում՝ Մյանմայի ափամերձ շրջանով և **Անդամանյան** ու **Նիկոբարյան** կղզիներով: Համարվում է աշխարհի ամենամեծ ծոցը: Ողողում է Հնդկաստանի, Բանգլադեշի, Մյանմայի և Շրի Լանկայի ափերը: Ծոցն են թափվում **Գանգես**, **Բրահմապուտրա**, Մեգհնա, Կրիշնա, Գոդավարի, Կավերի, Մահանադի, **Իրավադի** և այլ գետեր: Ծոցի հյուսիսարևելյան մասում՝ Քոքս Բազար (Բանգլադեշ) քաղաքի մոտ է գտնվում աշխարհի խոշորագույն 120 կմ-ոց լողափը: Մակերեսը՝ 2 171 000 կմ^2: Երկարությունը՝ 1 610 կմ, լայնությունը՝ 2 090 կմ: Ծավալը՝ 5 644 600 կմ^3: Միջին խորությունը՝ 2 600 մ, առավելագույնը՝ 4 694 մ (հարավային մասում):
Ծոցը նախկինում կոչվում էր महोदधि Մահոդադհի, որը սանսկրիտերենից թարգմանաբար նշանակում է *Ջրի մեծ անոթ*:
Անվանումը ստացել է հյուսիսային ափին գտնվող *Բենգալիա* երկրամասից:

ԲԵՐԻՆԳԻ ԾՈՎ - ռուսերեն Берингово море, անգլերեն Bering Sea. Ծայրամասային ծով Խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասում: Հարավից Կոմանդորյան և Ալեուտյան կղզիներով առանձնացված է Խաղաղ օվկիանոսից: Բերինգի նեղուցով միացված է Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի **Չուկոտյան** ծովի հետ: Ողողում է Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի ափերը: Իրարից բաժանում է Եվրասիա և Հյուսիսային Ամերիկա մայրցամաքները: Ափերը կտրտված են ծոցերով՝ **Անադիրի**, Կարագինի, Օլյուտորայի, Կորֆայի, Խաչի, Նորտոն, Բրիստոլի, Կուսկոկվիմ և

այլն: Խոշոր կղզիներն են՝ Պրիբիլովի, Դիոմիդի, Սուրբ Լավրենտիոսի, Նունիվակ, Ռատմանովի և այլն: Ծովն են թափվում Յուկոն, Անադիր գետերը: Մակերեսը՝ 2 274 020 կմ^2: Երկարությունը՝ 1 680 կմ, լայնությունը՝ 2 100 կմ: Ծավալը՝ 3 390 564 կմ^3: Միջին խորությունը՝ 1 491 մ, առավելագույնը՝ 4 399 մ (**Կամչատկա** թերակղզու և Բերինգի կղզու միջև):
XVIII դ. քարտեզներում ծովը կոչվել է Կամչատկայի կամ Կուղբի ծով:
XIX դ. սկզբին ֆրանսիացի աշխարհագրագետ Շ. Պ. Ֆլյորյոն առաջարկեց այն անվանել դանիացի ծովագնաց *Վիտուս Բերինգի* պատվին:

ԲԻԱՖՈ - ուրդու گلیشیر افرا لبیو. սառցադաշտ Կենտրոնական **Կարակորումում**, Գիլգիթ-Բալտիստանում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: Հարավային Գաշերբրում անվամբ սկիզբ է առնում **Գաշերբրում IV** (7 932 մ) և **Գաշեբրում III** (7 946 մ) գագաթների միջև ընկած, 7 200 մ բարձրությամբ սարավանդից ու ձգվում մինչև 3 400 մ բարձրությունը: Հիսպար սառցադաշտի հետ կազմում է բևեռային շրջանների սահմաններից դուրս աշխարհի ամենաերկար սառցադաշտային համակարգը (ավելի քան 100 կմ): Սառցադաշտից է սկիզբ առնում համանուն գետը: Սառցահավաք մակերեսը՝ 115 կմ^2: Երկարությունը՝ 67 կմ:

ԲԻՎԱ ԼԻՃ - ճապոներեն 琵琶湖 Բիվա կո. ամենամեծ լիճը Ճապոնիայում, **Հոնսյու** կղզու կենտրոնական մասում՝ միջլեռնային գոգավորության մեջ: Խոշոր կղզիներն են՝ Տուկուբու, Օկի, Տակե և Օկինոսիրոիսի: Լիճն են թափվում Ադո, Հինո, Ուսո, Հեդա, Յասու, Սուդա և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Յոդոն: Մակերեսը՝ 669,26 կմ^2: Երկարությունը՝ 63,49 կմ, լայնությունը՝ 22,8 կմ: Ծավալը՝ 27,57 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 3 174 կմ^2: Լճափի երկարությունը՝ 241 կմ: Միջին խորությունը՝ 41,2 մ, առավելագույնը՝ 103,58 մ (հյուսիսային մասում): Ջրի պարզությունը՝ 6 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 84,371 մ:
Համարվում է, որ լիճն անվանվել է իր ձևի՝ ճապոնական *բիվա* կսմիթահար գործիքի տեսքին նմանվելու պատճառով:

ԲՀՈՋԹԱԼ - հինդի भोज ताल բհոջ թաալ, անգլերեն Bhojtal. լիճ Մադհյա Պրադեշ նահանգի Բհոպալ վարչական կենտրոնից արևմուտք: Լիճն են թափվում Բետվա, Կոլան, Բադա Թալաբա և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Կալիասոտեն: Մակերեսը՝ 36,09 կմ^2: Երկարությունը՝ 31,5 կմ, լայնությունը՝ 5 կմ: Ծավալը՝ 0.162 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 362,35 կմ^2: Լճափի երկարությունը՝ 42 կմ: Միջին խորությունը՝ 4,5 մ, առավելագույնը՝ 9,75 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 506,8 մ:
Նախկինում հայտնի էր Վերին լիճ կամ बड़ा तालाब Բադա թալաբ *Մեծ լճակ* անուններով:
Լիճն արհեստական է և կառուցվել է 1005-1055 թթ. Մալվա պետության տիրակալ *Ռաջա Բհոջի* կողմից, ումից էլ ստացել է իր անունը:

ԲՈ ՀԱՅ - չինարեն 渤海 Բո Հայ, արևելյան մին 渤海 / Buŏk-hāi. ծոց Չինաստանի ափերի մոտ, **Դեղին** ծովի հյուսիսարևմտյան մասում, որից անջատված է **Շանդունի** թերակղզով: Ծոցն են թափվում **Հուանհե**, Լիաո, Հայհե, Լուան և այլ գետեր: Մակերեսը՝ 78 000 կմ^2: Երկարությունը՝ 556 կմ, լայնությունը՝ 236 կմ: Ծավալը՝ 1 404 կմ^3: Միջին խորությունը՝ 18 մ, առավելագույնը՝ 70 մ (արևելյան մասում):
Անվանումը չինարեն 渤 Բո *հին չինական կոմություն* և 海 Հայ *ծով* բառերից:

ԲՈԼՇԵՎԻԿ - ռուսերեն Большевик. **Հյուսիսային երկիր** կղզեխմբում մեծությամբ 2-րդ կղզին: Մայրցամաքից անջատված է **Վիլկիցկու**, իսկ **Հոկտեմբերյան Հեղափոխության** կղզուց՝ Շակալսկու նեղուցներով: Ողողվում է **Կարայի** և **Լապտևների** ծովերով: Տարածքի 31 %-ը ծածկված է սառցադաշտերով՝ Լենինգրադի, Սեմյոնով-Տյան Շանսկու, Կրոպոտկինի, Մուշկետովի և այլն: Ափերը խիստ կտրտված են, հատկապես հյուսիսային մասում, որն առաջացրել է բազմաթիվ ծոցեր և ծովախորշեր՝ Ախմատովի, Միկոյանի, Թելմանի, Ժուրավլյովի և այլն: Լճերը սակավ են և փոքր, որոնցից խոշորագույններն են՝ Ստուդյոննոյե,Սպարտակովսկոյե: Ի տարբերություն լճերի, գետերը բազմաթիվ են՝ Ստուդյոնայա, Օբրիվիստայա, Սերայա, Կամենկա, Նորա, Լագեռնայա, Սկալիստայա, Գոլիշևի, Ռազյեզդնայա և այլն: Մակերեսը՝ 11 312 կմ^2: Բարձր կետը՝ Լենինգրադի սառցադաշտ (874 մ):
Կղզին 1913 թ.սեպտեմբերի 4-ին հայտնագործել է Բ. Ա. Վիլկիցկու ռուսական ջրագրական արշավախումբը:
Այժմյան անվանումը 1932 թ-ին տվել են Գ. Ա.Ուշակովի և Ն. Ն. Ուրվանցևի գլխավորած բևեռային արշավախմբի մասնակիցները:

ԲՈՀՈԼ - վարայերեն Bohol, տագալերեն Bohol, անգլերեն **Bohol**. կղզի **Վիսայան** կղզեխմբում: Արևմուտքից Բոհոլ նեղուցով անջատված է **Սեբու**, հյուսիս-արևելքից Կանիգաո նեղուցով՝ **Լեյտե**, հարավից **Բոհոլ** ծովով՝ **Մինդանաո** կղզիներից: Կղզու մակերեսը բլրաշատ է: Այստեղ է գտնվում գեղատեսիլ Կոլինաս դե Չոկոլատե բլրաշարը (Շոկոլադե բլուրներ): Խոշոր գետերն են՝ Լոբոկ, Ինաբանգա, Աբատան, Իպիլ և այլն: Մակերեսը՝ 3 269 կմ^2: Ափի երկարությունը՝ 261 կմ: Բարձր կետը՝ Մայանա լեռ (870 մ):
Անվանումն առաջացել է Տագբիլարան քաղաքի մոտ գտնվող Bo'ol վայրի անունից, որտեղ 1565 թ. իսպանացի ծովագնաց Միգել Լոպես դե Լեգասպին արյան երդում տվեց տեղաբնիկների առաջնորդներ Սիկատունայի և Սիգալայի հետ: Սակայն որոշ այլ վկայությունների համաձայն, անվան հիմքում ընկած է վիսայերեն boho *անցք* բառը, հաշվի առնելով կղզում բազմաթիվ քարանձավների և քարայրների առկայությունը:
Ավելի հավանական է թվում «Բոհոլի պատմություն» աշխատությունում Լումինա Բ. Տիրոլի կողմից այն պնդումը, որ կղզու անվանումն առաջացել է այստեղ աճող փշոտ ծառատեսակի տեղական bo'ol անունից:

ԲՈՀՈԼ - տագալերեն Dagat Bohol, կենտրոնական բիկոլերեն Dagat Bohol, իլոկաներեն Baybay Bohol, վարայերեն Dagat Bohol. Խաղաղ օվկիանոսի միջկղզային ծով

Ֆիլիպինյան կղզեխմբի հարավային մասում, Սիկիհոր, **Բոհոլ**, **Լեյտե** և **Մինդանաո** կղզիների միջև: Հյուսիսարևելքում Սուրիգաո նեղուցով միանում է Խաղաղ օվկիանոսին, արևմուտքում՝ **Սուլու** ծովին: Խոշոր կղզիներն են՝ Կամիգին, Սիկիխոր և այլն: Խոշոր ծոցերն են՝ Իլիգան, Մակախալար, Խինգոոգ, Բուտուան և այլն: Ծովն են թափվում Ագուսան, Տագոլոան և այլ գետեր: Մակերեսը՝ 28 888 կմ^2: Երկարությունը՝ 310 կմ, լայնությունը՝ 160 կմ: Ծավալը՝ 12 422 կմ^3: Միջին խորությունը՝ 430 մ, առավելագույնը՝ 1 975 մ (Կամիգին կղզուց 23 կմ հս-արլ.):
Անվանումը ստացել է ***Բոհոլ*** կղզուց:

ԲՐԱՀՄԱՊՈՒՏՐԱ - տիբեթերեն ཡར་གླང་གཙང་པོ་ Յառլունգ Զանգբո, հինդի ब्रह्मपुत्र Բրահմապուտրա, ասսամերեն ব্ৰহ্মপুত্ৰ Բրահմապուտրա, անգլերեն Brahmaputra, չինարեն 布拉马普特拉河 /布拉馬普特拉河 Բուլամապուտելահե, բենգալերեն ব্ৰহ্মপুত্ৰ Բրահմապուտրա, սանսկրիտերեն ब्रह्मपुत्रानदी Բրահմապուտրանադի. գետ Չինաստանում, Հնդկաստանում, Բանգլադեշում՝ **Գանգեսի** ձախ վտակը: Բրահմապուտրայի ակունքը գտնվում է **Հիմալայների** հյուսիսային լանջերում 5 319,7 մ բարձրության վրա, Անգսի սառցադաշտում: Իր Բրահմապուտրա անվանումը գետը ստանում է 4 872 մ բարձրության վրա Զանգցի և Չեմա Յունդունգ գետերի միացումից: Շրջանցելով Ասամի լեռները դուրս է գալիս Բենգալյան հարթավայր, որտեղ միանալով **Գանգեսի** հետ և կազմելով ավելի քան 80 000 կմ^2 ունեցող այսպես կոչված Բենգալյան դելտան թափվում **Բենգալյան** ծոցը: Վտակներն են ձախից՝ Նաու, Չորթա Ցանգպո, Ռագա Ցանգպո, Ջիչու, Զամդա, Լուհիթ, Կապիլի, աջից՝ Նյանգչու, Սուբանսիրի, Բհարելի (Կամենգ), Մանաս, Տիստա: Երկարությունը՝ 3 848 կմ: Ավազանը՝ 712 035 կմ^2: Ջրի ծախսը՝ 19 830-100 000 մ^3/վրկ:
Իր հոսքի առանձին մասերում կրում է տարբեր անուններ՝ **Տիբեթում՝** Մացանգ և Յառլունգ Ցանգպո: **Հիմալայներից** դուրս գալուց՝ Սիյանգ և Դիհանգ, Հնդկաստանում՝ Բրահմապուտրա, Բանգլադեշում՝ Զամունա: Գետի հնդկական Բրահմապուտրա անունը սանսկրիտերենից թանգմանաբար նշանակում է *Բրահմայի որդի*:

ԲՐՈԱԴ ՊԻԿ - չինարեն 布洛阿特峰 Պու լուո ա թը ֆըն, ուրդու براڈ پیک, տիբեթերեն ས্ক্র-অ্র্র্র্ Ֆալչան Քանգրի. երկգագաթանի լեռ **Կարակորումի** լեռնահամակարգի հարավարևելյան մասում, Բալտորո Մուզտաղ լեռնաշղթայում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող հյուսիսային տարածքների ու Չինաստանի սահմանագլխին:Կազմում է **Գաշերբրում** բազմագագաթ լեռնազանգվածի մասը: Կազմված է 8000 մ-ից բարձր, երկու գագաթից՝ Բրոադ Պիկ Գլխավոր 8 051 մ և Բրոադ Պիկ Նախագագաթ 8 028 մ: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 051 մ, հարաբերականը՝ 1 701 մ: Առաջին անգամ 1957 թ. հունիսի 9-ին, լեռան գագաթն են բարձրացել ավստրիական արշավախմբի անդամներ՝ Ֆրից Վինտերշտելլերը, Մարկուս Շմուկը, Կուրտ Դիմբերգերը և Հերման Բուլը:
1892 թ-ին **Կարակորումում** բրիտանական արշավախմբի ղեկավար Ուիլյամ Մ. Քոնվեյի կողմից լեռը ստացել է Broad Peak, *Լայնարձակ Պիկ* անունը:

ԲՈՒՏՈՆ - ինդոնեզերեն Pulau Buton. կղզի Ինդոնեզիայում, **Սուլավեսի** կղզուց հարավ-արևելք: Տարածքի մեծ մասը ծածկված է արևադարձային անտառներով: Կղզու հյուսիսում է գտնվում Վավոնիա, արևմուտքում՝ **Մունա**, Կաբայենա, հարավ-արևելքում՝ Սիումպու, հարավում՝ Բատուատաս կղզիները: Ափերը խիստ մասնատված են:Մակերեսը՝ 4 408 կմ^2:Բարձր կետը՝ Կաբավո Լանգոհոգո լեռ (1 063 մ): Կղզին նախկինում հայտնի էր Բուտունգ անվամբ: Այժմյան անվանումը ստացել է այստեղ բնակվող *բուտոն* ցեղից:

ԲՈՒՐՈՒ - ինդոնեզերեն Pulau Buru, ճավայերեն Pulo Buru, մալայերեն Pulau Buru. կղզի **Մոլուքյան** կղզեխմբում: Հյուսիսից ողողվում է **Սերամ**, հարավից և արևմուտքից՝ **Բանդա** ծովերով: Արևելքից Մանիպա նեղուցով անջատված է **Սերամ**, Ամբոն և մի շարք մանր կղզիներից: Ափերը թույլ մասնատված են, միակ՝ Կայելի ծոցը, գտնվում է կղզու հյուսիսարևելյան մասում: Մակերեսը լեռնոտ է, հատկապես կենտրոնական և արևմտյան մասում: Խոշոր գետերն են՝ Ապո, Գերեն, Նիբե և այլն: Խոշոր լիճն է՝ Ռանա: Մակերեսը՝ 8 473,2 կմ^2: Երկարությունը՝ մոտ 130 կմ, լայնությունը՝ մոտ 90 կմ: Ափի երկարությունը՝ 427,2 կմ: Բարձր կետը՝ Կապալատմադա լեռ (2 693 մ):
Անվանումը ստացել է այստեղ բնակվող *բուրու* ցեղից:

Գ

ԳԱԼԻԼԵՅԱՆ ԾՈՎ - եբրայերեն ים כנרת Յամ Կիներեթ, արաբերեն طبريـــا بحـــيرة Բուհայր աթ Թաբրիա, եբրաարամեերեն גִּנֵּיסַר / דטבריא Օգնիսր / Յամա դե Թաբրիա. քաղցրահամ լիճ Իսրայելում, Սիրիաաֆրիկյան բեկվածքի հյուսիսային մասում՝ **Հորդանանի ռիֆտային հովտում**: Լճից արտահոսում է **Հորդանան** գետը: Մակերեսը՝ 166.7 կմ^2: Երկարությունը՝ 21 կմ, լայնությունը՝ 13 կմ: Ծավալը՝ 4,25 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 2 730 կմ^2: Լճափի երկարությունը՝ 53 կմ: Միջին խորությունը՝ 25,6 մ, առավելագույնը՝ 45,4 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 212,07 մ:
Գալիլեյան ծով անվանումը ստացել է Իսրայելի պատմական *Գալիլեա* մարզից: Լիճը հայտնի է տարբեր անուններով՝ Տվերիադյան, Գենիսարետի լիճ և Կիներետ: Տվերիադյան անվանումը ստացել է *Տվերիադա* (այժմյան Տվերիա) քաղաքից:
Գենիսարետի լիճ անվանումը ստացել է համանուն հովտից, որի անունն իր հերթին լճի ափերին հնում գոյություն ունեցող Կիներետ քաղաքի անվան հելլենականացման արդյունք է:
Հին կտակարանում և Իսրայելում լիճն անվանվում է Կիներետ՝ քանանյան Կիներետ քաղաքից, որի անունն իր հերթին ծագում է քաղաքի ուգարիտյան հովանավոր *Կինար* աստվածության անունից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանման հիմքում ընկած է հին եբրայերեն כינור կինոր *քնար* կամ Ziziphus lotus כינר կինար բույսի պտուղների անունը:

ԳԱՆԳ ԲԵՆՉԵՆ - չինարեն 炕苯清 Կանպենցին. լեռնագագաթ **Հիմալայներում**, Բայքու Քանգրի լեռներում, Տիբեթում, Չինաստանում: **Փորոնգ Ռի** լեռից 24,83 կմ

հեռավորությամբ: Կան շատ սատցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7281 մ, հարաբերականը՝ 1 340 մ:
Լեռը հայտնի է նաև Կանպենցին,Կանգբոկեն, Կանգբենգկվին, Կանգբեցին, Կանգպենկին, Կանգբոչին և այլ անուններով:

ԳԱՆԳԵՍ - հինդի गंगा Գանգա, սանսկրիտերեն गङ्गानदी Գանգանադի, ուրդու گنگا Գանգա, բհոջպուրի गंगा Գանգա, բենգալերեն গঙ্গা Գանգա, անգլերեն Ganges, տիբեթերեն གངྒ་ཆུ་བོ་ཁམས། Գլանգչեն կհաբաբս. գետ Հնդկաստանում և Բանգլադեշում: Աշխարհի ամենաջրառատ (**Բրահմապուտրայի** հետ միասին երրորդն աշխարհում՝ Ամազոնից և Կոնգոյից հետո) և ամենաերկար գետերից մեկը Հարավային Ասիայում: Սկիզբ է առնում Արևմտյան Հիմալայներից, Գանգոտրի սառցադաշտի՝ Գոմուխ վայրից (Բհագիրհատիի գետ՝ 3 892 մ) և 475 մ բարձրության վրա միավորվելով Ալաքնանդու գետի հետ՝ կազմավորվում է բուն Գանգեսը, որը հոսելով հարավարևելյան. ուղղությամբ կտրում անցնում է **Ինդոս-Գանգեսյան հարթավայրը** և Բանգլադեշի տարածքում, **Բրահմապուտրա** և Մեգհնա գետերի հետ կազմելով լայնարձակ դելտա թափվում **Բենգալյան** ծոցը: Վտակներն են ձախից՝ Գհագհրա, Գոմատի, աջից՝ Դամոդար, Սոն, Տամսա, Կարմանաշա: Երկարությունը՝ 2 525 կմ: Ավազանը՝ 1 080 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 1 2015 - 38 129 մ^3/վրկ:
Անվանման այս ձևը առաջացել է գետին հնդիկների տված Գանգա անվանումից, որը սանսկրիտերեն և ժամանակակից հինդի լեզվով բառացի նշանակում է *գետ*: Հնդիկները մեծարանքով գետն անվանում են *մայր Գանգա* և պաշտում այն որպես *սուրբ գետ*:

ԳԱՇԵՐԲՐՈՒՄ I - ուրդու گاشربرم اول, չինարեն 加舒尔布鲁木I峰 Ծյան շու ըր բու լու մու այ ֆըն. լեռնագագաթ **Կարակորումի** լեռնահամակարգի հարավարևելյան մասում, Բալտորո Մուզտաղ լեռնաշղթայում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող Հյուսիսային տարածքների և Չինաստանի սահմանագլխին: Կազմում է Գաշերբրում բազմագագաթ լեռնազանգվածի մասը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 080 մ, հարաբերականը՝ 2 155 մ: Առաջին անգամ 1958 թ. հուլիսի 5-ին, Գաշերբրում I-ի գագաթն են բարձրացել Կ. Լինչի ղեկավարած ամերիկյան արշավախմբի անդամներ՝ Պիտ (Պետեր) Կ. Շոնինգը և Էնդրյու Ջ. Կաուֆմանը:
Հայտնի է Կ5 և Hidden Peak *Թաքնված*, (*Քողարկված*) *Պիկ* անուններով, որը նա ստացել է **Կարակորումի** առաջին հետազոտողներից մեկի՝ Ուիլյամ Մ.Քոնվեյի կողմից: Այս անվանը հիմք է ծառայել այն փաստը, որ Բալտորո սառցադաշտի ակունքներից գագաթը քողարկված է հզոր լեռնաբազուկներով:
Գաշերբրումը հաճախ անվանում են *Փայլատակող պատ*, հաշվի առնելով հարևան **Գաշերբրում IV**-ի տեսանելի հզոր փայլ ունեցող նիստը:
Իրականում լեռան անունը առաջացել է բալթի լեզվի rgasha *գեղանի* և brum *լեռ* բառերից՝ *Գեղանի լեռ*:

ԳԱՇԵՐԲՐՈՒՄ II - ուրդու دوم برم گاشــر, չինարեն 加舒尔布魯木II峰 Ծյան շու ըր բու լու մու այ ֆըն. լեռնագագաթ **Կարակորումի** լեռնահամակարգի հարավարևելյան մասում, Բալտորո Մուզտաղ լեռնաշղթայում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող Հյուսիսային տարածքների ու Չինաստանի սահմանագլխին: Կազմում է Գաշերբրում բազմագագաթ լեռնազանգվածի մասը: Ունի բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 035 մ, հարաբերականը՝ 1 524 մ: Առաջին անգամ 1956 թ. հուլիսի 7-ին, Գաշերբրում II-ի գագաթն են բարձրացել ավստրիական արշավախմբի անդամներ՝ Ֆրից Մոռավեկը, Հանս Վիլլենպարտը և Յոզեֆ (Զեպ) Լարխը:
Լեռան անունը առաջացել է բալթի լեզվի rgasha *գեղանի* և brum *լեռ* բառերից՝ *Գեղանի լեռ*:

ԳԱՇԵՐԲՐՈՒՄ III - ուրդու سوم برم گاشــر, չինարեն 加舒爾布魯木III峰 Ծյան շու ըր բու լու մու սեն ֆըն.լեռնագագաթ **Կարակորումի** հարավարևելյան մասում, Գաշերբրում բազմագագաթ զանգվածում, Բալտորո Մուզտաղ լեռնաշղթայում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող Հյուսիսային տարածքներում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 952 մ, հարաբերականը՝ 461 մ: Առաջին անգամ 1975 թ. օգոստոսի 11-ին, Գաշերբրում III-ի գագաթն են բարձրացել լեհական արշավախմբի անդամներ՝ Վանդա Ռուտկեվիչը, Էլիսոն Չադվիկ-Օնիշկևիչը, Յանուշ Օնիշկևիչը և Կշիշտոֆ Ժիտովեցկին:
Լեռան անունը առաջացել է բալթի լեզվի rgasha *գեղանի* և brum *լեռ* բառերից՝ *Գեղանի լեռ*:

ԳԱՇԵՐԲՐՈՒՄ IV - ուրդու چہارم برم گاشــر, չինարեն 加舒爾布魯木IV峰 Ծյան շու էր բու լու մու այ վի ֆըն. լեռնագագաթ **Կարակորումի** հարավարևելյան մասում, Գաշերբրում բազմագագաթ զանգվածում, Բալտորո Մուզտաղ լեռնաշղթայում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 925 մ, հարաբերականը՝ 718 մ:
Հայտնի է նաև Կ3 անվամբ:
Լեռան անունը առաջացել է բալթի լեզվի rgasha *գեղանի* և brum *լեռ* բառերից՝ *Գեղանի լեռ*:

ԳԵՆՏ ՔԱՆԳՐԻ - ուրդու گینٹ کانگری Գիենթ Քանգարի, հինդի गेंट कांगरी Գենթ Կանգարի. բազմագագաթ լեռնազանգված **Կարակորումում**, Սալտորո լեռների հյուսիսային մասում, **Սիաչեն** սառցադաշտից արևմուտք, Քաշմիրի Պակիստանի կողմից վերահսկվող մասում: Սալտորո Քանգրի II լեռնագագաթից 13,03 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Գենտ Քանգրի Գլխավոր 7 401 մ, Գենտ Քանգրի II 7 342 մ, Գենտ Քանգրի III 7 060 մ, Դեպաք 7 150 մ, Չոգրոն Քանգրի 6 530 մ ու Արծաթյա Գահ 6 600 մ: Կան շատ սառցադաշտեր: Հարաբերական բարձրությունը՝ 1 493 մ:
Հայտնի է նաև Գենտ ու Գենտ I անուններով:

Լեռն առաջին անգամ չափագրվել է ամերիկացիներ Ֆաննի Բալլոք և Ուիլյամ Հանտեր Ուորքմանների կողմից 1912 թ-ին և ստացել Գենտ անվանումը հղում անելով 1814 թ-ի դեկտեմբերի 18-ին կնքած Գենտի պայմանագրին, որով ավարտվեց բրիտանաամերիկյան պատերազմը:

ԳԻԴԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ - ռուսերեն Гыданский полуостров. թերակղզի **Արևմտասիբիրական** հարթավայրի հյուսիսում, **Կարայի** ծովում, արևմուտքում Տազի ու **Օբի** խորշերի և արևելքում Ենիսեյի ծոցի միջև: Թերակղզում են գտնվում Գիդանի խորշով իրարից անջատված Յավայ և Մամոնտի թերակղզիները: Մակերեսն իրենից ներկայացնում է բլրոտ հարթավայր,որն հարավում վերածվում է Տանամայի բարձրավայրի: Խոշոր գետերն են՝ Յուրիբեյ, Գիդա, Անտիպայոտայախա, Նգետատոյախա, Մոնգոչե, Մոնգոչեյախա (Սոսնովայա) և այլն: Բազմաթիվ են ջերմակարստային լճերը՝ Յամբուտո, Խոսատո, Պելյատկա, Սուխոյե, Պոյե Տո և այլն: Մակերեսը՝ մոտ 160 000 կմ^2: Երկարությունը՝ մոտ 400 կմ, լայնությունը՝ մինչև 400 կմ: Բարձր կետը՝ 201 մ (Ստորինենիսեյան բարձրավայր):
Անվանումը ստացել է *Գիդա* գետից:

ԳՀՈՐ / ՀՈՐԴԱՆԱՆԻ ՌԻՖՏԱՅԻՆ ՀՈՎԻՏ - արաբերեն الغـور / الأردن وادي أخدود ալ Ղուր /Ուխդուդ վադի ալ ուրդուն, եբրայերեն ע'ור / הירדן בקעת Բիքյաթ հա Յարդեն / Գհոր. 1 000-1 400 մ բարձրությամբ, զառիվեր լանջերով եզերված, տեկտոնական իջվածք Իսրայելում, Հորդանանում, Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում: Իր մեջ է ընդգրկում Հորդանան գետը, Հուլա հովիտը, Քորազիմ սարահարթը, **Գալիլեյան** և **Մեռյալ ծովերը**, Արաբա իջվածքը, **Աքաբայի ծոցի** ափերը: Արտաքին հոսք չունի: Երկարությունը՝ 250 կմ, լայնությունը՝ մինչև 25 կմ:
Անվան հիմքում ընկած է սանսկրիտերեն घोर գհոր *սարսափելի* բառը:

ԳՅԱԼԱ ՓԵՐԻ - չինարեն 加拉白壘 Ծյա լա պայ լեյ. բազմագագաթ լեռնազանգված **Հիմալայների** արևելյան մասում, Յառլունգ Ցանգպո գետի կիրճի մուտքի մոտ, Նամջա Բարուա Հիմալ (կամ Նիյենչեն Տանգլա Ծան) լեռներում, Չինաստանում: **Նամջա Բարուա** լեռից 20,41 կմ հեռավորությամբ: Կան սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 294 մ, հարաբերականը՝ 2 942 մ:
Լեռան չինարեն անվանումը բառացի նշանակում է *Մեծ սպիտակ պատնեշ*:

ԳՅԱՉՈՒՆԳ ՔԱՆԳ - չինարեն 格重康峰 Գե չոնգ կանգ ֆըն, նեպալերեն ग्याचुङ काङ Գըաչունգ Կանգ. լեռնագագաթ **Հիմալայների** կենտրոնական մասում, Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայում, Նեպալի ու Տիբեթի սահմանագլխին: Լեռը **Չո Օյուի** հետ կազմում է 11 կմ երկարությամբ մեկ ընդհանուր լեռնապատ: Ունի շատ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 952 մ, հարաբերականը՝ 672 մ: Առաջին անգամ 1964 թ. ապրիլի 10-ին, Գյաչունգ Քանգի գագաթն են բարձրացել ճապոնական արշավախմբի անդամներ՝ Յուկիհիկո Կատոն, Կիյոհիտո Սակայզավը և շերպա Պասանգ Պուտարը:

Լեռան Գյաչունգ Քանգ անվանումը կազմված է տիբեթերեն Gya *հարյուր*, chung *հովիտ*, Kan *Ձյունածածկ լեռ* բառերից՝*Հարյուր հովիտների ձյունածածկ լեռ*:

ԳՈԲԻ - մոնղոլերեն ᠭᠣᠪᠢГовь, չինարեն 戈壁 Գոբի, դունգաներեն Гэби. անապատների, կիսաանապատների, տափաստանների և այլ աշխարհագրական շրջանների՝ Անդրալթայան, Մոնղոլական, Ալաշանի, Գաշունի և Ջունգարական Գոբիների ընդհանրական մարզ Կենտրոնական Ասիայում, Մոնղոլիայում և Չինաստանում: Իր մեծությամբ աշխարհի երրորդ անապատն է: Մակերևույթում գերակշռում են 900-1 200 մ բարձրությամբ հարթավայրերը: Ձգվում է արևմուտքից՝ **Ալթայի** ու **Տյան Շանի** լեռներից, մինչև **Չինական Մեծ հարթավայրի** արևելյան մասը: Հարավում Գոբին սահմանափակված է Նանշան և Ալթինդաղ լեռներով ու **Հուանհե** գետով, իսկ հյուսիսում՝ Մոնղոլիայի տափաստաններով: Մակերեսը՝ 1 295 000 կմ^2: Երկարությունը՝ 1 500 կմ, լայնությունը՝ 800 կմ:
Անվան հիմքում ընկած է մոնղոլերեն говь *ջրազուրկ վայր* բառը:
Հին ժամանակներում Գոբին հայտնի է եղել Շամո անապատ անվամբ:

ԳՈՆԳԿԱ - չինարեն 贡嘎山 Գոնգ կա շան. լեռնագագաթ Սիչուանում՝ Դաշու Շան լեռների կենտրոնական մասում, Հենդուան լեռնազանգվածում, Դադու և Յալոնգ գետերի միջև, Չինաստանում: **Նամջա Բարուայից** 660 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 556 մ, հարաբերականը՝ 3 642 մ:
Տեղացիները լեռն անվանում են *Սիչուանի լեռների արքա*:
Գոնգկա անվանումը թարգմանաբար նշանակում է *Մաքրամաքուր ձյուն*:

ԳՎԱԴԱՐ - ուրդու خلیج گوادر խալիժոն կ վաթր, պարսկերեն خلیج گوادر խալիջ է գվադերա, անգլերեն Gwadar Bay. ծոց **Արաբական** ծովի հյուսիսային մասում, Իրանի և Պակիստանի սահմանագլխին, Մակրանի ծովափին: Աշխարհագրորեն կազմում է **Օմանի** ծոցի ծայր հյուսիսարևելյան մասը: Ծոցն են թափվում Դաշտիարի, Դաշտ, Բաուակատ, Նավարհադ և այլ գետեր: Մակերեսը՝ 450 կմ^2: Երկարությունը՝ 31 կմ, լայնությունը՝ 16 կմ: Ծավալը՝ 30,6 կմ^3: Միջին խորությունը՝ 68 մ, առավելագույնը՝ 100 մ (հարավային մասում):
Անվանումը պարսկերենից թարգմանաբար նշանակում է *Ջրի ծոց*:

ԳՈՒՌԼԱ ՄԱՆԴՀԱՏԱ - տիբեթերեն གནམ་མཛོ་ཐ་ན Նայմոնա Նիի, չինարեն 纳木那尼 Նա մու նա նի, նեպալերեն गुरला मान्धाता Գուռլա Մանդհատա. լեռնագագաթ **Հիմալայների** կենտրոնական մասում, Նալականկար Հիմալ լեռներում, **Տիբեթի բարձրավանդակում**, Մապամ Յումցո լճի ափին: **Նանդա Դևի** լեռից 127,53 կմ հեռավորությամբ: Կան սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 694 մ, հարաբերականը՝ 2 788 մ:
Լեռան Գուռլա Մանդհատա անվանումը կազմված է *Գուռլա՝* այստեղ գտնվող ու լեռան հետ զուգորդվող բլրի անվան և հին Հնդկաստանի Սունիա հարստության *Մանդհատա* թագավորի անունից:

Լեռնագագաթի տիբեթերեն Նայմոնա Նիի անվանումը կազմված է նայմո *խոտաթուրմ*, նա *սև* և նիի *ծերպեր* բառերից:

Դ

ԴԱԼ - քաշմիրերեն डल झील / ڈل جیل Դալ ջիիլ/Դալ ջիլ, հինդի डल झील Դալ ջիիլ, անգլերեն Dal Lake, ուրդու ڈل جھیل Դալ ջոյլ. Դալ, Նագին, Անչար լճերից կազմված լճային համակարգ: Գտնվում է Հնդկաստանի հյուսիսարևմտյան Ջամմու և Քաշմիր նահանգի Սրինագար վարչական կենտրոնում: Խոշոր կղզիներն են՝ Սոնա և Ռուպա (Ջհար Չինարի): Լիճն են թափվում Ջելամ, Թելբալ, Դարա և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Դալգեյթն ու Ամիր Խանը: Մակերեսը՝ 19,6 կմ^2: Երկարությունը՝ 8 կմ, լայնությունը՝ 6,4 կմ: Ծավալը՝ 0,05 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 317 կմ^2: Լճափի երկարությունը՝ 15,5 կմ: Միջին խորությունը՝ 2,6 մ, առավելագույնը՝ 6 մ (հյուսիսարևմտյան մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 583 մ:

Անվանումը քաշմիրերենից डल թարգմանաբար բառացի նշանակում է *լիճ*:

ԴԱՆԿԱՆ - հինդի डंकन जलसन्धि Դանկան ջալասանդհի, անգլերեն **Duncan Passage**.Հնդկական օվկիանոսի նեղուց, որը բաժանում է հյուսիսում Մեծ Անդաման կղզեխմբի Ռութլանդ կղզին Փոքր Անդաման կղզուց հարավում: Նեղուցով են իրար միանում **Բենգալյան** ծոցն ու **Անդամանյան** ծովը: Խոշոր կղզիներն են՝ Հնգյակ, Անցման, Քույրեր, Հյուսիսային Եղբայր, Հարավային Եղբայր և այլն: Լայնությունը՝ մոտ 48 կմ:

ԴԱՇՏԵ ԼՈՒԹ - պարսկերեն دشت لوت. ավազաաղուտային անապատ Մերձավոր Արևելքում, Իրանում՝ **Իրանական** բարձրավանդակի կենտրոնական մասում: Անապատն հարավից եզերված է Նեմեքզար Է Շեհդադ անհոսք աղուտներով, հյուսիսից՝ **Դաշտե Կևիր** անապատով, հյուսիսարևելքից՝ Էշդեգերքուհ լեռնաշղթայով, արևելքից՝ Խորասանի լեռներով, հարավարևմուտքից՝ Քուհբենան լեռնաշղթայով, հյուսիսարևմուտքից՝ Քուհե Սորխ լեռներով: Մակերեսը՝ 51 800 կմ^2: Երկարությունը՝ 480 կմ, լայնությունը՝ 320 կմ:

Անվանումը կազմված է պարսկերեն دشت դաշտե *անապատ* և لوت լութ *սին*, *թալանված*, *մերկ* բառերից:

ԴԱՇՏԵ ԿԵՎԻՐ - պարսկերեն دشت کویر. մի շարք (600-800 մ) բարձրությամբ անհոսք իջվածքներից կազմված աղուտային անապատ Մերձավոր Արևելքում, Իրանում՝ **Իրանական** բարձրավանդակի հյուսիսարևելյան մասում: Անապատը հյուսիսարևմուտքում եզերված է **Էլբուրսի** հարավային ստորոտով, արևմուտքում՝ Դերյաչեյե Նեմեք աղուտով և հարավում՝ **Դաշտե Լութ** անապատով: Անապատի կենտրոնական մասն է զբաղեցնում 320 կմ երկարությամբ և 160 կմ լայնությամբ Կեվիր Բուզուրգ աղուտը: Մակերեսը՝ 77 600 կմ^2: Երկարությունը՝ 800 կմ, լայնությունը՝ 500 կմ:

Անվանումը կազմված է պարսկերեն دشت դաշտե *անապատ* և کوه կևիր *աղուտ* բառերից:

ԴԱՍՏԵԳՀԻԼ ՍԱՐ - ուրդու دستغل سر, անգլերեն Distaghil Sar. եռագագաթ լեռ **Կարակորումում**, Հիսպար Մուզտաղ լեռներում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 885 մ, հարաբերականը՝ 2 509 մ:
Անվանումը բուրուշասկի լեզվից թարգմանաբար նշանակում է *Փարախի գլուխ*:

ԴԱՎԱՈ - սեբուանո Davao Gulpo, տագալերեն Golpo ng Davao, անգլերեն Davao Gulf. ծոց **Մինդանաո** կղզու հարավարևելյան մասում: Խոշոր կղզիներն են՝ Սամալ, Տալիկուդ և այլն: Ծոցն են թափվում 33 գետ՝ Դավաո, Լիբուգանոն, Ագուսան և այլն: Մակերեսը՝ 3 080 կմ^2: Երկարությունը՝ մինչև 125 կմ, լայնությունը՝ մինչև 80 կմ: Ծավալը՝ 1 900.36 կմ^3: Ափի երկարությունը՝ 691 կմ: Միջին խորությունը՝ 617 մ, առավելագույնը՝ 1 028 մ (հարավային մասում):
Անվանումը ստացել է *Դավաո* քաղաքից:

ԴԵԹՅԱՆ - ԲԱՆ ԶՅՈԿ - չինարեն 板约瀑布 / 德天瀑布 Պան յու փուպու / Դե թյան փուպու, վիետնամերեն Thnc Bản Giốc Թակ Բան Զո. ջրվեժ Չինաստանի և Վիետնամի սահմանագլխին, Հիունգի կիրճում, Կույսոն (Կուայշոն) գետի վրա: Հարավարևելյան Ասիայի ամենախոշոր բնական ջրվեժը: Կազմված է երեք սանդղավանդներից: Անկման բարձրությունը՝ 53 մ: Լայնությունը՝ 208 մ:
Դեթյան անվանումը չինարենից թարգմանաբար նշանակում է *Առաքինի տեսարան*, վիետնամերենից՝ *Աստիճանաձև սողք*:

ԴԵԿԱՆ - հինդի दक्कन का पठार Դակիան կա պատհար, անգլերեն Deccan Plateau, սանսկրիտերեն दिण Դակշինա. սարահարթ Հնդկաստանում, **Հնդստան** թերակղզում: Հյուսիսից եզերված է Նարմադա, հարավից՝ Կավերի գետերով, արևմուտքից՝ Մալաբարյան ափը անջրպետող **Արևմտյան Գհաթերով**, իսկ արևելքից՝ Կորոմանդելյան ափը անջրպետող **Արևելյան Գհաթերով**: Խոշոր գետերն են՝ Տապտի, Գոդավարի, Պենգանգա, Բհիմա, Կրիշնա և այլն: Տարածությունը՝ շուրջ 1 000 000 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 300-900 մ:
Անվանումն առաջացել է սանսկրիտերեն दिण դակշինա *հարավ* բառից:

ԴԵՂԻՆ ԾՈՎ - չինարեն 黄海/黄Հուանհայ, կորեերեն 서해 /西海 սյոհայ *Արևմտյան ծով*, 황해 / 黄海 հվանհայ *Դեղին ծով*, 黄海 / Uòng-hāi արևելյան մին. Խաղաղ օվկիանոսի ծանծաղ կիսափակ ծայրամասային ծով, Ասիայի արևելյան ափերի մոտ, **Կորեական** թերակղզուց արևմուտք: Ողողում է Չինաստանի, Հյուսիսային և Հարավային Կորեաների ափերը, **Կորեական**, **Լյաոդունի** և **Շանդունի** թերակղզիները: Հյուսիսային և արևմտյան ափերն առավելապես ցածրադիր են, արևելյանը՝ բարձրադիր, ժայռոտ և խիստ մասնատված: Խոշոր կղզիներն են՝ Չեջու, Չին, Չանշան,

Լյուգուն, Վոլմի, Սինմի և այլն: Խոշոր ծոցերն են՝ Լյաոդուն, Բոհայվան, **Արևմտակորեական**, Լայչժոուվան, Կանգհվաման: Ծովն են թափվում **Հուանհե**, Հայհե, Լյաոհե, Յալուցզյան, Լուանհե և այլ գետեր: Մակերեսը՝ 416 000 կմ^2: Երկարությունը՝ 580 կմ, լայնությունը՝ 660 կմ: Ծավալը՝ 18 304 կմ^3: Միջին խորությունը՝ 44 մ, առավելագույնը՝ 152 մ (հարավարևելյան մասում):
Անվանումը ծովի չինարեն 黄海 / 黄海 Հուանհայ *Դեղին ծով* անվան բառացի պատճենումն է: Այդպես է կոչվել առափնյա մասի ջրերի պղտորավուն գույնի պատճառով, որը հետևանք է նրա մեջ թափվող Հուանհե գետի բերած դեղնավուն լյոսի:

ԴԵՄԱՎԵՆԴ - պարսկերեն دماوند Դամովանդ. հանգած հրաբուխ (5 607,1 մ) **Իրանական** բարձրավանդակի հյուսիսում, **Էլբուրս** լեռներում: Իրանի և Մերձավոր Արևելքի ամենաբարձր կետը: Խառնարանում շուրջ 400 մ տրամագծով, կա սառցե լիճ: Լեռը եզերված է հյուսիսից՝ Թինա, հարավից և արևելքից՝ Խարազ, արևմուտքից՝ Լար և Դավասիաբ գետերով:
Հայտնի է նաև Դամավանդե, Դամբավանդե, Դունբավանդ անուններով:
Դեմավենդ անվան ակունքներն ու իմաստը պարզ չեն, սակայն որոշ հետազոտողներ ենթադրում են, որ այն բառացի նշանակում է ծուխ ու մոխիր արտաբերող *լեռ*:
Մեկ այլ վարկածի համաձայն անունն առաջացել է հին պարսկերենի դամ *շունչ* և ավանդ *անոթ* բառերից:

ԴԻՐԱՆ - ուրդու دیرن. լեռնագագաթ **Կարակորումում**, Ռաքափոշի-Հարամոշ լեռների՝ Նագար հովտում, Գիլգիթ Բալտիստանում, Պակիստանում: **Ռաքափոշի** լեռից 15,64 կմ հեռավորությամբ: Այստեղ է գտնվում Մինապին սառցադաշտը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 266 մ, հարաբերականը՝ 1 325 մ:
Լեռը հայտնի է նաև Մինապին անվամբ:

ԴՀԱՈՒԼԱԳԻՐԻ - նեպալերեն धौलागिरी Դհաուլագիրի, դոթյալի धौलागिरी Դհաուլագիրի. բազմագագաթ լեռնազանգված **Հիմալայներում**, Մայանգդիի և Կալի Գանդակիի միջագետքում, Նեպալում: Լեռնազանգվածը կազմված է տասնմեկ գագաթից: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Լեռան լանջից է սկիզբ առնում Կալի Գանդակի գետը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 167մ, հարաբերականը՝ 3 357 մ:
Առաջին անգամ 1960 թ. մայիսի 13-ին, Դհաուլագիրիի գագաթն են բարձրացել Մակս Այզելինի ղեկավարած շվեյցարա-ավստրիական արշավախմբի անդամներ՝ Կուրտ Դիմբերգերը, Պետեր Դիները, Ալբին Շելբերտը, Էռնեստ Ֆոռեն և շերպաներ Նավանգն ու Նյիման:
Անվանումը կազմված է սանսկրիտերենի धवल դհավալա *սպիտակ* և गिरि գիրի *սար*, *լեռ* բառերից՝ *Սպիտակ սար*:

ԴՄԻՏՐԻ ԼԱՊՏԵՎԻ ՆԵՂՈՒՑ - ռուսերեն Пролив Дмитрия Лаптева, յակուտերեն Миитэрэй Лаптев силбэһиитэ. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի նեղուց **Լյախովի մեծ** կղզու և Եվրասիա մայրցամաքի միջև, իրար է միացնում **Լապտևների** և **Արևելասիբիրական** ծովերը: Ափերը ցածրադիր են: Ծոցի հարավային մայրցամաքային

ափը Սվյատոյ Նոս հրվանդանից մինչև Կոնդրատիևի գետի գետաբերանը կոչվում է Օյոգոս Յար ափ: Երկարությունը՝ 115 կմ, լայնությունը՝ 50-61 կմ: Առավելագույն խորությունը՝ 11-16 մ:
Անվանվել է ռուս բևեռախույզ *Դմիտրի Յակովլևիչ Լապտևի* պատվին:

Ե

ԵՆԻՍԵՅ - ռուսերեն Енисей, մոնղոլերեն Енисей, տիվայերեն Улуг-Хем, բուրյաթերեն Горлог, խակասերեն Ким суг, էվենկերեն Ионесси, սելկուպերեն Пӱӱл Тяасқолд, նենեցերեն Енся' ям', կետերեն Хук, էսկիմոսերեն Энненайваам. գետ Սիբիրում՝ աշխարհի խոշորագույն գետերից մեկը: Ենիսեյը սկիզբ է առնում Մեծ և Փոքր Ենիսեյների միացման վայրից, թափվում **Կարայի** ծովը:Գետը հանդիսանում է բնական սահման Արևմտյան և Արևելյան Սիբիրների միջև, նրա մեջ են թափվում մոտ 500-ից ավելի գետ ու գետակներ: Վտակներն են ձախից՝ Խեմչիկ, Կանտեգիր, Կեմ, Կաս, Աբական, Սիմ, Դուբչես, Ելոգույ, Տուրուխան, Փոքր ու Մեծ Խետաներ, Գրյազնուխա, Տանամա և այլն, աջից՝ **Անգարա**, **Ստորին Տունգուսկա**, Ուս, Կեբեժ, Տուբա, Սիդա, Սիսիմ, Մանա, Կան, Մեծ Պիտ, Խանտայկա, **Պոդկամենայա Տունգուսկա**, Բախտա, Կուրեյկա, Դուդինկա և այլն: Երկարությունը՝ 3 487 կմ (Փոքր Ենիսեյի հետ՝ 4 287 կմ, Մեծ Ենիսեյի հետ՝ 4 123 կմ): Ավազանը՝ 2 580 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 19 800 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 619,5 մ:
Անվան հիմքում ընկած է գետի էվենկերեն Ионесси *Մեծ ջուր* անունը:

ԵՓՐԱՏ - շումերերեն𒄀𒂗𒊩𒌦𒀀𒊩𒌦Բուրանունա,աքադերեն 𒀀𒊩𒌦𒄴𒊩𒌦𒁺𒊩𒌦 Փուրաթու, արաբերեն الفــرات ալ Ֆուրաթ, արամեերեն ܦܪܬ Փարաթ, հեբրայերեն פרת Պերատ,քրդերեն فــرات/Firat/Ferat, թուրքերեն Fırat, արատտերեն𒀀𒊩𒌦𒄴𒊩𒌦𒁺𒊩𒌦Փուրանտի. գետ **Հայկական լեռնաշխարհում**, Առաջավոր Ասիայի ամենաերկար գետը: Եփրատը կազմավորվում է Ծաղկավետ լեռների՝ Ոսկյանց լեռան լանջից սկիզբ առնող՝ Կարասու(Արևմտյան Եփրատ կամ **Եփրատ**) և Ծաղկանց լեռների հյուսիսային լանջերից սկիզբ առնող **Արածանի** (Մուրատ կամ Արևելյան Եփրատ) գետերի միախառնումից, հոսելով Ջեզիրե սարավանդով և Միջագետքի դաշտավայրով, **Պարսից** ծոցից 193 կմ հեռավորության վրա, ստորին հոսանքում միախառնվում է **Տիգրիս** գետին առաջացնելով Շատ էլ-Արաբ գետը և թափվում **Պարսից** ծոցը: Վտակներ են՝ Մանանաղի, Աղյունաձոր, Տևրիկ, Խաբուր, Մելաս: Երկարությունը՝ 2 736 կմ: Ավազանը՝ 673 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 300-400 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 531 մ, գետաբերանինը՝ 4 մ (Շատ էլ-Արաբ):
Աստվածաշնչում գետն անվանվում է Պրատ և համարվում է մեկը չորս գետերից՝ Փիսոն, Գեոն, **Տիգրիս**, որը հոսում է Եդեմական այգով:
Անվանումն ունի արամեական ծագում, արամեերեն՝ ephrat, բառացի նշանակում է *քաղցրահամ ջուր*:
Հայկական մատենագրության մեջ հիշատակվում է նաև Եփրատական գետ, Եդեմաբուխ գետ անուններով:

Զ

ԶԱԳՐՈՍ - պարսկերեն زاگرس Զագուրս, արաբերեն زاغروس Զագրուս, քրդերեն Çiyayên Zagrosê, լուրերեն ڕ ل ۆی ئەكـــسـزاگ Կյաֆյեիլան Զագրունսին. լեռնահամակարգ **Իրանական** բարձրավանդակի հարավ-արևմուտքում, Իրանում ու մասամբ Իրաքում: Բաղկացած է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող շուրջ 240 զուգահեռ շղթաներից: Լեռնահամակարգը բաժանված է Հյուսիսային, Միջին և Հարավային Զագրոսների: Այստեղից են սկիզբ առնում՝ Քարում, Ռուդ է Մանդ, Դեզ, Ռուդ Հանեշուր, Սիրվան, Ռուդ է Շուր և այլ գետեր: Բարձր գագաթը՝ Բիջան 3 լեռ (Քաշմստան 4 409 մ): Երկարությունը՝ շուրջ 1 600 կմ, լայնությունը՝ 240 կմ:
Զագրոսի հին շումերական անվանումը Քոռ էր, *կույր*: Որոշ ուսումնասիրողներ համարում են, որ անվան հիմքում ընկած է հին պարսկերենի Za-G´R արմատը, որը նշանակում է *մեծ լեռ*:
Սակայն ավելի հավանական է, որ լեռները կրում են ժամանակին այստեղ բնակություն հաստատած Զիկիրտու կամ Սագարտի՝ հնդեվրոպական ցեղախմբի անունը:

ԶԱՅՍԱՆ - ղազախերեն Зайсан (Жайсан), մոնղոլերեն Зайсан нуур, չինարեն桑泊 / 齋Զայսան Պո,չինարեն(սյաոցզին)ڤٌ جَ ىْ صْ Զայսան Պո,դունգաներեն Жэсонпэ, ռուսերեն Зайсан. լիճ Ղազախստանի արևելքում: Հյուսիսարևելքից **Ալթայի**, հյուսիսարևմուտքից՝ Քալբայի և հարավից՝ Տարբագաթայի լեռնաշղթաներով եզերված լայնարձակ, բարձրադիր և տափարակ հովտում: Լիճն են թափվում Սև Իրտիշ, Կենդիռլիկ, Կոկպեկտինկա, Բուղազ, Բազար, Չերգա, Արասան, Թերս Առլիկ և այլ գետեր, իսկ արտահոսում՝ **Իրտիշը**: Մակերեսը՝ 1 788 կմ^2: Երկարությունը՝ 111կմ,լայնությունը՝30կմ:Ծավալը՝ 9,12 կմ^3: Միջին խորությունը՝ 5,1 մ, առավելագույնը՝ 13 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 395 մ: Անվանման հիմքում ընկած է մոնղոլերեն зайсан *իշխանիկ* բառը:

ԶՈՆԴՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - ինդոնեզերեն Kepulauan Sunda, մալայերեն Kepulauan Sunda, պորտուգալերեն Ilhas da Ṣond սունդայերեն Kapuloan Sunda, աչեհերեն Pulo-pulo Sunda. ավելի քան 3000 կղզիներից կազմված կղզեխումբ Հարավարևելյան Ասիայում, Հնդկական և Խաղաղ օվկիանոսների միջև: Բաժանվում է Մեծ (**Կալիմանտան**, **Սումատրա**, **Սուլավեսի**, **Ճավա** և այլն) և Փոքր (**Բալի**, **Լոմբոկ**, **Սումբավա**, **Սումբա**, **Թիմոր**, **Ֆլորես** և այլն) Զոնդյան կղզիների: Խոշոր գետերն են՝ **Կապուաս**, Բարիտո, Կայան, Ռաջանգ, Մուսի, Կամպար և այլն: Խոշոր լճերն են՝ **Տոբա**, Սեմայանգ, Ջեմպանգ,**Լաուտ Տավար**, Ռանաու և այլն: Կղզեխմբի բարձր կետն է համարվում՝ Կինաբալու լեռը 4 095 մ (Կալիմանտան կղզում): Մակերեսը՝ 1 628 000 կմ^2:
Անվանումն առաջացել է Ճավա կղզու արևմտյան մասում ապրող *զունդա* (սունդա) ցեղի անունից:

ԶՈՆԴՅԱՆ ՆԵՂՈՒՑ - ինդոնեզերեն Selat Sunda, սունդայերեն Selat Sunda. նեղուց Ինդոնեզիայում, **Սումատրա** և **Ճավա** կղզիների միջև: Խաղաղ օվկիանոսի **Ճավայի** ծովը միացնում է Հնդկական օվկիանոսին: Նեղուցում կան բազմաթիվ կղզիներ,

որոնցից ամենահայտնիներն են Կրակատաու կղզիները, որի 1883 թ. օգոստոսի 26-27 հրաբխի ժայթքումը համարվում է ամենահզորներից մեկը մարդկության պատմության մեջ: Երկարությունը՝ 130 կմ, լայնությունը՝ 24 կմ: Առավելագույն խորությունը՝ 20 մ:
Անվանումը ստացել է *Ջոնդյան* կղզիներից:

Է

ԷԼԲՈՒՐՍ - պարսկերեն البرز Ալբորզ. լեռնահամակարգ Իրանի հյուսիսում: Աղեղնաձև ձգվում է **Կասպից ծովի** հարավարևմտյան և հարավային ափի երկայնքով, ապա թեքվում դեպի հյուսիս-արևելք, այնուհետ հարավ-արևելք ու ձգվում մինչև Աֆղանստանի սահմանը: Կազմված է երեք առանձնացված մասերից՝ Թալիշի, Կենտրոնական Էլբուրսի և Թուրքմենա-Խորասանի լեռներից: Այստեղից են սկիզբ առնում Շահրուտ, Քերեջ, Չալուս, Գորգան, Կարասու և այլ գետեր: Երկարությունը՝ 900 կմ: Բարձրությունը մինչև 5 607,1 մ (**Դեմավենդ** հրաբուխ): Միջին Արևելքի ամենաբարձր կետը:
Լեռների պարսկերեն البرز Ալբորզ անվանումն, առաջացել է Ավեստայի առասպելական Harā Barazaitī լեռից: Harā Barazaitī անունը արտացոլում է հին իրանական Harā Bṛzatī-ը, որտեղ Bṛzatī-ը bṛzan բարձունք բառի ածականն է և համարվում է սանսկրիտերեն बृहत् բրիհաթու բառին հարազատ նոր պարսկերենի بلند բոլանդ և barz/ berazandeh բառի նախնին: Harā Հարե-ն կարելի է մեկնաբանել, որպես *նայել*, *պահպանել*, հնդեվրոպական ser *պաշտպանել* արմատից: Միջին պարսկերենում Harā Barazaitī-ին վերածվեց Հարբորզ, նոր պարսկերենում՝ Ալբոս:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը պարսկերենից բառացի նշանակում է *փայլուն*:

Թ

ԹԱԹԱՐԱԿԱՆ ՆԵՂՈՒՑ - ռուսերեն Татарский пролив. նեղուց Եվրասիա մայրցամաքի և **Սախալին** կղզու միջև: **Նևելսկոյի** նեղուցով, Ամուրի ծովալճակով և Սախալինի ծոցով իրար է միացնում **Ճապոնական** և **Օխոտի** ծովերը: Արևմտյան ափերը հիմնականում բարձրադիր են և զառիթափ: Խոշոր կղզիներն են՝ Մոներոն, Տոկի, Դյուանկա, Դուգու Դու, Բազալտովի, Օբսերվատորիայի, Ուստրիչնի և այլն: Նեղուցն են թափվում Մաքսիմովկա, Կաբանյա, Եդինկա, Սամարգա, Նելմա, Բոտչի, Կոպպի, Տումնին և այլ գետեր: Երկարությունը՝ 713 կմ, լայնությունը՝ 40-328 կմ:
Անվանումն ոչ մի կապ չունի թաթար ժողովրդի անվան հետ: Անվանումը տվել են եվրոպացիներն այն ժամանակ, երբ սխալմամբ թաթարներ էին անվանում թյուրքական, մոնղոլական, տունգուսմանջուրական բոլոր ժողովուրդներին:

ԹԱՅԼԱՆԴԱԿԱՆ ԾՈՑ - թայերեն อ่าวไทย սաու թայ, քմերեն ឈូងសមុទ្រថៃ չոունսեմաթ թայ, վիետնամերեն Vịnh Thái Lan, մալայերեն Teluk Thailand.արևմուտքում և հյուսիսում Թայլանդի, արևելքում՝ Կամբոջայի և Վիետնամի, հարավ-արևմուտքում՝ Մալայզիայի ափերը ողողող ծոց: Կազմում է **Հարավչինական** ծովի մի մասը: Ծոցը Հնդկաչինի արևելյան մասը բաժանում է **Մալակկա** թերակղզուց: Ափագիծը սկսվում է արևելքում՝ Վիետնամի Կամաու հրվանդանից և ավարտվում հարավ-արևմուտքում՝ մալայզիական Կոտա Բարու քաղաքի մերձակայքում: Խոշոր կղզիներն են՝ Պհու Կուոկ, Չանգ, Մակ, Կուտ, Սամույ, Պհա Նգան և այլն: Ծոցն են թափվում Չաու Պրայա, Տապի, Պրան, Չայ Սի, Կելանտան և այլ գետեր: Մակերեսը՝ 300 858.76 կմ^2: Երկարությունը՝ 725 կմ, լայնությունը՝ 560 կմ: Ծավալը՝ 17 449.8 կմ^3: Ափի երկարությունը՝ 1 840 կմ: Միջին խորությունը՝ 58 մ, առավելագույնը՝ 85 մ (հյուսիսային մասում):

Թայլանդը նախկինում հայտնի էր อ่าว สยาม սաու սայամ Սիամի ծոց անվամբ:

Ծոցն այժմյան անվանումը ստացել է *Թայլանդ* երկրի անունից:

ԹԱՅՄԻՐ - ռուսերեն Таймыр. թերակղզի **Կարայի** ծովի Ենիսեյի ծոցի և **Լապտևների** ծովի՝ Խատանգայի ծոցի միջև: Թերակղզու հյուսիսում է գտնվում Եվրասիայի հյուսիսային ցամաքային ծայրակետը՝ Չելյուսկին հրվանդանը: Ըստ ռելիեֆի բնութագրի թերակղզին կարելի է բաժանել երեք մասի՝ Հյուսիսսիբիրական ցածրավայր, Բիռանգա լեռներ և Մերձափնյա հարթավայր: Խոշոր ծոցերն են՝ Միդդենդորֆի, Պյասինայի, Սիմսի, Թայմիրի, Թերեզ Կլավենեսի, Ֆադեյի և այլն: Խոշոր գետերն են՝ Պյասինա, Վերին և Ստորին Թայմիրա, Խատանգա և այլն: Խոշոր լճերն են՝ **Թայմիր**, Պորտնյագինո, Կունգասալախ, Լաբազ, Կոկորա և այլն: Մակերեսը՝ մոտ 400 000 կմ^2: Երկարությունը՝ 1 050 կմ, լայնությունը՝ 520 կմ: Բարձր կետը՝ Բիռանգա լեռներ (1 125 մ):
Անվանման հիմքում ընկած է ձկներով հարուստ Թայմիրա գետի էվենկերեն тамура *թանկարժեք*, *թանկագին*, *հարուստ* բառը:

ԹԱՅՄԻՐ - ռուսերեն Таймыр. լիճ Ռուսաստանի Դաշնության Կրասնոյարսկի երկրամասի հյուսիսում, **Թայմիր** թերակղզում: Ափերը խիստ մասնատված են: Լճի արևմտյան մասում կան բազմաթիվ ժայռոտ կղզիներ՝ Կուպֆեր, Կյուենոյ, Օդելնի, Ցվետոչնի, արևելյան մասում՝ Սոկոլով- Միկիտովի ավազե կղզին: Լիճն են թափվում Զապադնայա, Սևեռնայա, Վերին Թայմիրա, Բիկադա Նգուոմա, Բայկուրա և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Ստորին Թայմիրան: Մակերեսը՝ 4 560 կմ^2: Ծավալը՝ 12,768 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 104 300 կմ^2: Լճափի երկարությունը՝ 215,4 կմ: Միջին խորությունը՝ 2,8 մ, առավելագույնը՝ 26 մ (արևմտյան մասում՝ Յուկայամու ծոցում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 6 մ:
Անվանման հիմքում ընկած է ձկներով հարուստ Թայմիրա գետի էվենկերեն тамура *թանկարժեք*, *թանկագին*, *հարուստ* բառը:

ԹԱՅՎԱՆ - չինարեն 臺灣 / 台灣 / 台湾 Թայվան. կղզի Խաղաղ օվկիանոսում: **Թայվանի** նեղուցով անջատվում է Ասիայի ափերից: Հյուսիսից ողողվում է **Արևելաչինական**, հարավից՝ **Հարավչինական** և **Ֆիլիպինյան** ծովերով, իսկ արևելքից՝ Խաղաղ օվկիանոսով: Ափերը թույլ մասնատված են: Ամբողջ կղզով ձգվում են անտառապատ Թայվանի լեռները: Կղզին հարուստ է բազմաթիվ ջերմուկներով՝ Լյույդաո, Յանմինշան, Ցզինշան: Խոշոր գետերն են՝ Չժոշույցի, Գաոպինցի, Դանշույ և այլն: Խոշոր լճերն են՝ Ժիյուետան, Չժուինհու, Լյանչիտան: Մակերեսը՝ 35 882,6258 կմ^2: Երկարությունը՝ 395 կմ, լայնությունը՝ 144 կմ: Ափի երկարությունը՝ 1 239,5756 կմ: Բարձր կետը՝ հնգագագաթ Յուշան լեռ (3 952 մ):
1590 թ. Թայվան ներխուժեցին պորտուգալացիներն ու այն անվանեցին Ilha Formosa *Չքնաղ կղզի*:
Այժմյան անվանումը, հավանաբար, առաջացել է կղզում հոլանդական 1-ին Զելանդիա բնակավայրի տեղանքից, որը սիրայա ցեղի տեղաբնիկների լեզվով կոչվում էր Տայոան: Հետագայում չինացի գաղթականները փոխեցին անունը Դա յուան-ի *Մեծ շրջան*:
Մեկ այլ վարկածի համաձայն Թայվան անվանումը չինական աղբյուրներում սկսեց գերակշռել XVII դ. վերջից: Կղզում կար նավերի համար հարմարավետ ծովախորշ ավազե պարանոցով՝ չինարեն անվանումը կազմված է臺 թայ *հենահարթակ*, *տափակ բարձրացում* և 灣 վան *ծոց* բառերի միացումից: Հավանաբար ծոցի վրայի հենահարթակ է կոչվել հենց այդ ավազե պարանոցը:

ԹԱՅՎԱՆԻ ՆԵՂՈՒՑ - չինարեն 臺灣海峽 / 台灣海峽 Թայվան հայսյա. նեղուց Ասիայի արևմտյան ափի և **Թայվան** կղզու միջև: Իրար է միացնում **Հարավչինական** և **Արևելաչինական** ծովերը: Նեղուցի հարավային մասում է գտնվում Պենհու կղզեխումբը: Մայրցամաքային ափը խիստ մասնատված է ծոցերով, իրենց բազմաթիվ կղզիներով: Մակերեսը՝ 6 300 կմ^2: Երկարությունը՝ 400 կմ, լայնությունը՝ 130-380 կմ: Միջին խորությունը՝ 50 մ, առավելագույնը՝ 1 773 մ (հարավային մասում):
Նախկինում հայտնի էր Ֆորմոզայի նեղուց անվամբ: Այժմյան անվանումը ստացել է *Թայվան* կղզուց:

ԹԱՐ - հինդի थार म थल Թար մարուսթալ, անգլերեն Thar Desert, փենջաբերեն ਥਾਰ ਮਾਰੂਥਲ /تھر صحرائے, Թերա մերըթալա, գուջարաթի થાર રણ Թերա ռանա, ուրդու تھر صحرائے, սինդհի ٹھر ریگستان, անապատ Հնդկաստանի հյուսիս-արևմուտքում և Պակիստանի հարավ-արևելքում, որտեղ նա հայտնի է նաև Չոլիստան անվամբ: Հյուսիս-արևմուտքում անապատը եզերված է Սաթլեջ գետով, հյուսիս-արևելքում՝ Արավալի լեռնաշղթայով, հարավում՝ Մեծ Կաչի Ռան անապատով, արևմուտքում **Ինդոս** գետով: Անապատում միայն Լունի գետն է, որ պահպանում է իր մշտական հոսքը: Մեկ այլ՝ Գհագար գետը մշտական հոսք է ունենում միայն մուսսոնային անձրևներից հետո: Մակերեսը՝ 446 000 կմ^2: Երկարությունը՝ 850 կմ, լայնությունը՝ 485 կմ:

Հինդի լեզվից՝ थार թար անվանումը թարգմանաբար նշանակում է *պարապուրդ, անմշակ*:

ԹԱՐԻՄ - ույղուրերեն تاریم دەریاسی Թարիմ դերյասի, չինարեն 塔里木河 Թալիմու. գետ Կենտրոնական Ասիայում, Չինաստանի արևմուտքում, Թարիմի հարթավայրում: Թարիմը կազմավորվում է Ակսու և Խոթան գետերը՝ Յարքենդի հետ միախառնումից,հոսում արևելյան ուղղությամբ, շրջանցելով **Տակլա Մական** անապատը և Կոնչեդարյա գետի հետ առաջացնելով ընդհանուր դելտա՝ փոխեփոխ սնում Լոբնոր և Կարաբուրանկյոլ լճերը: Վտակներն են՝ Տաուշկանդարյա, Ակսու, Խոթան, Յարքենդ, Մուզարտ, Կաշկար: Երկարությունը՝ 1 321 կմ: Ավազանը՝ 435 500 կմ^2: Ջրի ծախսը՝ 920 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 025 մ, գետաբերանինը՝ 780 մ:
Հավանական է, որ Թարիմ անվանումն ունի թյուրքական ծագում և բառացի նշանակում է *ավազոտ ջուր*:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է մոնղոլերեն тариман *հացառատ*, *ցանքս* բառից:

ԹԵՐԱՄ ՔԱՆԳՐԻ - հինդի तेरम कांगरी Տիրամ Կանգարի, չինարեն 特拉木坎力峰 Թը լա մու քան լի ֆըն, ուրդու ٹیرم گرکانگی. քառագագաթ լեռնազանգված **Կարակորումում**, Սիահեն Մուզտաղ լեռներում, **Սիաչեն** սառցադաշտում, Չինաստանի և Հնդկաստանի սահմանագլխին: Սալտորո Քանգրի II լեռնագագաթից 28,37 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Թերամ Քանգրի I 7 462 մ (1 702 մ), Թերամ Քանգրի II 7 407 մ (167 մ), Թերամ Քանգրի III 7 382 մ (500 մ) ու Թերամ Քանգրի IV 6 986 մ (335 մ): Հարաբերական բարձրությունը՝ 1 702 մ:
Լեռն իր այժմյան Թերամ Քանգրի անվանումը ստացել է 1909 թ-ին, այս վայրերում եռանկյունաչափական ուսումնասիրություններ կատարած անգլիացի բժիշկ, հետազոտող և ալպինիստ Թոմ Լոնգստաֆի կողմից:
Անունը թարգմանաբար նշանակում է *Կտրտված սառցապիկ*:

ԹԻՄՈՐ - ինդոնեզերեն Timor, տետում Timor, մալայերեն Timor, պորտուգալերեն Timor. կղզի Փոքր Զոնդյան կղզեխմբում: Խոշոր գետերն են՝ Սեյկալ, Լոես, Բենաին, Բեսիամ և այլն: Խոշոր լիճն է՝ Սուրոբեկ: Մակերեսը՝ 28 738,41 կմ^2: Երկարությունը՝ 476 կմ, լայնությունը՝ 102 կմ: Բարձր կետը՝ Տատամայլաու լեռ (2 963 մ):
Անվանումը մալայերենից բառացի նշանակում է *արևելք* և արտացոլում այն փաստը, որ կղզին գտնվում է Փոքր Զոնդյան կղզիների ծայր արևելյան մասում:

ԹՈՆԴՐԱԿ - թուրքերեն Tendürek Dağı, քրդերեն Çiyayê Tendorek. գործող, վահանաձև, բազմածին հրաբուխ **Հայկական լեռնաշխարհում**, Ծաղկանց լեռներում, այժմյան Թուրքիայում: Վահանի վրա գոյություն ունեն երեք գագաթային խառնարաններ, որտեղ կան բազմաթիվ տաք աղբյուրների ու գազերի ելքեր, իսկ արևելյան խառնարանում՝ 500 մ տրամագծով լիճ: Վերջին ժայթքումը տեղի է ունեցել 1855 թ-ին: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 533 մ: Խառնարանի շրջագիծը՝ 2 000 մ: Խորությունը՝ 320 մ:

Թոնդրակ բառը ցույց է տալիս, որ լեռը հիշեցնում է հայկական թոնիրը:

ԹՈՆՇԱՆՋԻԱԲՈՒ - չինարեն 同山加布峰 Թոն շեն ծյա փու ֆընն. լեռնագագաթ **Հիմալայների** կենտրոնական մասում, Չինաստանի ու Բուտանի սահմանագլխին: Լիանքանգ Քանգրի լեռից 49,6 կմ հեռավորությամբ: Կան սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 207 մ (կամ 7 105 մ), հարաբերականը՝ 1 757 մ: Հայտնի է նաև Թերի Քանգ անվամբ:

ԹՐԻՎՈՐ - ուրդու ترِوُر. լեռնագագաթ **Կարակորումում**, Հիսպար Մուզտաղ լեռների արևմտյան մասում, Հիսպար սառցադաշտից հյուսիս, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: **Դաստեգհիլ Սարից** 10,28 կմ հեռավորությամբ: Լեռն ունի բազմաթիվ սառցադաշտեր՝ Մոմհիլ, Կունյանգ, Հիսպար, Թրիվոր (Գարեսա): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 577 մ, հարաբերականը՝ 997 մ:

ԹՈՒԶ - թուրքերեն Tuz Gölü, հին հունարեն Λιμνοθαλασσα εν Φρυγιη / λίμνη Τάττα. անհոսք, աղի լիճ Թուրքիայում, Անատոլական սարահարթում: Լճում են գտնվում Բյույուկ Ադա կղզիները: Լիճն են թափվում Պեչենեգ և Մելենդիզ ժամանակավոր ջրահոսքերը: Մակերեսը՝ 1 500-2 500 (միջինը՝ 1 580) կմ^2: Երկարությունը՝ 80 կմ, լայնությունը՝ 50 կմ: Ծավալը՝ 0,95 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 11 900 կմ^2: Միջին խորությունը՝ 0,6 մ, առավելագույնը՝ 5 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 905 մ:
Անվանումը թուրքերենից թարգմանաբար նշանակում է *աղի լիճ* :

ԹՈՒՐԱՆԻ ՑԱԾՐԱՎԱՅՐ - պարսկերեն توران, ղազախերեն Тұран, ուզբեկերեն Turon. հարթավայր Միջին Ասիայում՝ Ուզբեկստանում, Թուրքմենստանում և Ղազախստանի հարավային մասում: Տուրգայի հովտով միացվում է **Արևմտասիբիրական հարթավայրի** հետ: Ղազախստանի սահմաններում **Սիրդարյան** բաժանում է Թուրանի ցածրավայրը երկու մասի՝ հյուսիսային և հարավային: Ցածրավայրի մեծ մասը զբաղեցված է անապատներով՝ **Կարակում**, **Կզըլկում,** Մույունկում և այլն: Հյուսիսից եզերված է Տուրգայի սարավանդով, հյուսիս-արևելքից՝ **Ղազախական մանրաբլուրներով**, արևելքից՝ Բետպակ Դալա անապատով, հարավ-արևելքից՝ **Տյան Շանի** լեռներով, հարավից՝ Կոպետդաղի լեռների և Պարոպամիզի նախալեռներով, արևմուտքից՝ **Կասպից ծովով**, հյուսիս-արևմուտքից՝ Մուհոջարների արևելյան ստորոտով: Մակերեսը՝ շուրջ 1 900 000 կմ^2: Երկարությունը՝ մոտ 2 000 կմ: Բարձրությունը՝ 922 մ:
Անունը ստացել է Միջինասիական՝ *Թուրան* պատմական շրջանից, որն իր հերթին անվանվել է Ֆերեյդուն առասպելական արքայի որդու, Թուրի պատվին՝ *Թուրի երկիր*:
Մեկ այլ վարկածի համաձայն ենթադրվում է, որ Թուրան անվանումն առաջացել է հին պարսկերեն թույրիա *արագավազ*, *սրընթաց* բառից՝ ելնելով այն տպավորությունից, որ հարևան նստակյաց ժողովուրդների վրա թողել են արագավազ նժույգներ հեծած, այստեղով դեպի Արևմտյան Ասիա և Եվրոպա անցնող, անասնապահ քոչվորները:

ԹՈՒՐՖԱՆԻ ԻՋՎԱԾՔ - ույղուրերեն ئويمـــــانلىغى ترپـان ؤتۇ Թուրփան ոյմանլըղի, չինարեն 吐鲁番盆地 Թուլուֆան փենդի. տեկտոնական իջվածք Չինաստանի՝ Սինցզյան Ույղուրական ինքնավար շրջանում՝ Արևելյան Տյան Շանի ճյուղավորումներում: Եզերված է հյուսիսից՝ Բոգդո Ուլա, իսկ հարավից՝ Չյոլտաղ լեռնաշղթաներով: Մակերեսը՝ 50 000 կմ^2: Երկարությունը՝ մոտ 200 կմ, լայնությունը՝ մոտ 70 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ մինչև -154 մ (ամենախորը՝ Կենտրոնական Ասիայում):
Հայտնի է նաև Թուրֆանի գոգհովիտ անունով:
Անվան հիմքում ընկած է ույղուրերեն ترپـان ؤتۇ թուրփան *հարուստ, ծաղկող վայր* բառը:
Մեկ այլ վարկածի համաձայն, ենթադրվում է, որ Թուրֆան անվանումն առաջացել է *թուբա* կամ *թոֆա* ցեղանվան թյուրքերեն turfa ձևից, այսինքն *թուբա* ժողովրդի կողմից բնակեցված վայր:

Ի

ԻՆԴԻԳԻՐԿԱ - ռուսերեն Индигирка, յակուտերեն Индигиир. գետ Արևելյան Սիբիրում, Ռուսաստանի Դաշնությունում: Կազմավորվում է Խալկանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից սկիզբ առնող Խաստախ ու Տարին Յուրյախ գետերի միախառնումից և հոսելով Օյմյակոնի բարձրավանդակով և Յանա-Ինդիգիրկայի դաշտավայրով առաջացնելով 5,5 հազ կմ^2 տարածությամբ ընդարձակ դելտա ու թափվում **Արևելասիբիրական** ծովը: Վտակներն են աջից՝ Մոմա, Բադյարիխա, ձախից՝ Սելենյարխ, Ույանդինա, Ալայիխա, Բյորյոլյո: Երկարությունը՝ 1 726 կմ: Ավազանը՝ 360 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 1 570 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ մոտ 792 մ:
Անվանման հիմքում ընկած է էվեներեն ցեղային индигиир *ինդի ցեղի մարդիկ* անունը:
Գետը կրել է նաև Շան գետ, Ինդիգեր, Ինդիգիր, Արևմտյան Կոլիմա և այլն անուններ:

ԻՆԴՈՍ - ուրդու ســـندھ Սինդի, հինդի सिन्धु սինդհու, անգլերեն Indus, չինարեն 印度河 Յինդու հե, տիբեթերեն ཧིན་ཏུ་གཙང་པོ Սենգգե Զանգբո, փուշտու ابـــاســـين Աբասին, փենջաբերեն ਸਿੰਧ / ســـندھ Սինդհ /Սինդհ, սինդհիերեն ســـندھو սինդհու, հունարեն Ινδός. խոշոր գետ Հարավային Ասիայում՝ Չինաստանում, Հնդկաստանում, Պակիստանում: Սկիզբ է առնում **Տիբեթի բարձրավանդակի** հարավարևմտյան մասից, Քանգրինբոչե (Կայլաս) լեռից հյուսիս-արևելք գտնվող Նգարի շրջանից: Սենգգե Զանգբո (Շիցյուան) անվամբ հոսում է մինչև Լանգմար գյուղի մոտ, որտեղ Հար Զանգբո գետի հետ միախառնվելով, ստանում Ինդոս անունը: Շարունակելով իր հոսքը **Կարակորումի**, **Սուլեյմանի** լեռներով դուրս է գալիս **Ինդոս-Գանգեսյան հարթավայր** և այստեղ հոսելով ավելի քան 1 800 կմ ու կազմելով շուրջ 30 000 կմ^2 մակերես ունեցող դելտա, թափվում **Արաբական ծովը**: Խոշոր վտակներն են՝ Սաթլեջ, Գիլգիթ,

Զանսկար, Սենգգե-Զանգբո, Գար-Զանգբո, Շինգո, Շայոկ, Շիգար: Երկարությունը՝ 3 610 կմ: Ավազանը՝ 1 001 549 կմ^2: Ջրի ծախսը՝ 6 600 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 5 469,8 մ:
Անվան հիմքում ընկած են սանսկրիտերեն सिन्धु սինդհու *գետ* անունը:

ԻՆԴՈՍ-ԳԱՆԳԵՍՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ - հինդի सिन्धु-गंगा के मैदान Սինդհու-Գանգա կե մայդան, բենգալերեն সিন্ধু-গাঙ্গেয় সমভূমি Սինդհու-Գանգեյա սամաբհումի, անգլերեն Indo-Gangetic Plain, ուրդու سندھ و گنگ کا میدان, տափարակ, ալյուվիալ հարթավայր Հարավային Ասիայում՝ Հնդկաստանում, Պակիստանում և Բանգլադեշում, հյուսիսից եզերված է **Հիմալայներով**, հարավից՝ Չոթա Նագպուր սարահարթով, իսկ արևմուտքից **Իրանական** բարձրավանդակով: **Ինդոսի** և **Գանգեսի** ջրաբաժանում բարձրությունը հասնում է մինչև 270 մ: Խոշորագույն գետերն են՝ **Ինդոսը** իր Փանջնադ վտակով, որի մեջ են թափվում Ջելամ, Չինաբ, Բիաս, Ռավի, ինչպես նաև **Գանգեսը** և **Բրահմապուտրան** իրենց Ջամնայով,Գոմատի, Գհագրա, Գանդակ և այլ վտակներով: Մակերեսը՝ 2 550 000 կմ^2: Երկարությունը մոտ 3 000 կմ է, լայնությունը՝ 250-350 կմ:

ԻՆԼԵ - բիրմայերեն အင်းလေးကန် Այինլե կաան. քաղցրահամ լիճ Մյանմայի Շան նահանգի հարավում: Խոշոր կղզիներն են՝ Լին Կին, Իվամա, Թա Լայ, Կայ Լա Զայաթ Կյի և այլն: Լիճն է թափվում Զավգյի գետը, իսկ արտահոսում՝ Պիլուն գետը: Մակերեսը՝ 116 կմ^2: Երկարությունը՝ 22 կմ, լայնությունը՝ 10 կմ: Ծավալը՝ 2,44 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 3 800 կմ^2: Միջին խորությունը՝ 2,1-3,6 մ, առավելագույնը՝ 5,2 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 884 մ:
Անվանումը բիրմայերենից թարգմանաբար նշանակում է *չորս*, նկատի ունենալով լճի ափերին գոյություն ունեցող չորս գյուղերը:

ԻՇԻՄ - ռուսերեն Ишим, ղազախերեն Есіл. գետ Ղազախստանում և Ռուսաստանի Դաշնությունում, **Իրտիշի** ամենաերկար ձախ վտակը: Սկիզբ է առնում **Ղազախական մանրաբլուրների** հյուսիսային ծայրամասից, Նիյազ լեռների հարավային լանջերից և 775 կմ երկարությամբ հոսում արևելքից արևմուտք ուղղությամբ իր մեջ ընդունելով Կոկշետաուի բարձրավայրից ու Ուլիտաու լեռներից հոսող բազմաթիվ վտակները, հոսում Իշիմի հարթավայրով և Ուստ Իշիմ բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Տերիսական, Կոլուտոն, Ժաբայ, Ականբուռլիկ, Իմանբուռլիկ, Կարասու: Երկարությունը՝ 2 450 կմ: Ավազանը՝ 177 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 56,3 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 554 մ, գետաբերանինը՝ 41 մ:
Թաթարերենից հայտնի է ишимак *քանդող*, *ավերող* բառը, որը մեծ հավանականությամբ կարող է հանդիսանալ որպես գետի անվանման հիմք:
Ըստ ավանդույթի գետն իր անունը ստացել է թաթարական խանի որդի՝ Կուչումիշիմից, որը խեղդվել է այդ գետում:

ԻՍԹՈՐ Օ ՆԱԼ - ուրդու استور و نل, հինդի इस्तोर-ओ-नल Իստոր օ Նալ.լեռնագագաթ **Հինդուկուշի** լեռներում, Պակիստանի հյուսիսարևմտյան մասում, Չիտրալի շրջա-

նում: **Նոշաք** լեռից 8,25 կմ հեռավորությամբ: Լեռնագագաթը պսակում է 7 000 մ-ից բարձր տասնմեկ գագաթանի համանուն լեռնազանգվածը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 403 մ, հարաբերականը՝ 1 025 մ:
Անվանումը կհովար լեզվից թարգմանաբար նշանակում է *Ձիու պայտ*:

ԻՍԻԿ ԿՈՒԼ - ղըրղըզերեն Ысык-Көл, ռուսերեն Иссык-Куль.անհոսք լիճ Ղըրղըզստանի հյուսիսարևելյան մասում, Հյուսիսային **Տյան Շանի** Կունգեյ Ալաթաու և Թերսկեյ Ալաթաու լեռնաշղթաների միջև ընկած գոգավորությունում: Խոշոր ծոցերն են՝ Ռիբաչիյ, Ջերգալանի, Տյուպի և Պոկրովսկի: Լիճն են թափվում մոտ 80 գետ՝ Տյուպ, Ջերգալան, Կարակոլ և այլ գետեր: Մակերեսը՝ 6 236 կմ^2: Երկարությունը՝ 182 կմ, լայնությունը՝ 58 կմ: Ծավալը՝ 1 738,608 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 15 844 կմ^2: Լճափի երկարությունը՝ 688 կմ: Միջին խորությունը՝ 278 մ, առավելագույնը՝ 702 մ (հարավային մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 609 մ:
Լճի ղըրղըզերեն Ысык-Көл անվանումը բառացի նշանակում է *տաք լիճ*:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանման հիմքում ընկած է ызык, эзых *սուրբ* բառը:

ԻՍՄՈԻԼ ՍՈՄՈՆԻ ՊԻԿ - տաջիկերեն Қуллаи Исмоили Сомонӣ. լեռնագագաթ Տաջիկստանում՝ Պամիրի Գիտությունների ակադեմիայի և Պետրոս I-ինի լեռնաշղթաների ճյուղավորման տեղում: Կան շուրջ 136 կմ ^{2} մակերեսով բազմաթիվ սառցադաշտեր ու ֆիռնային դաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 495 մ, հարաբերականը՝ 3 402 մ:
Լեռը հայտնի էր Ստալինի Պիկ և Կոմունիզմի Պիկ անուններով:
Որոշ տվյալների հանաձայն տեղացիները լեռն անվանում են Узтерги, որը թարգմանաբար նշանակում է *Գլխապտույտ*:
1998 թ. լեռը վերանվանվեց 9-10-րդ դդ.Սամանիների հարստության էմիր և տաջիկների առաջին պետության հիմնադիր *Աբու Իբրոհիմ Իսմոիլի իբնի Ահմադի Սոմոնիի* պատվին:

ԻՏՈՒՐՈՒՊ - այներեն エトゥ･ヲロ･プ Ետուորոպու, ճապոներեն 択捉島 Էտորոֆտո, ռուսերեն Итуруп. ամենախոշոր կղզին **Կուրիլյան** կղզիներում:Ֆրիզի նեղուցով անջատված է Ուրուպ,իսկ Եկատերինայի նեղուցով՝ Կունաշիր կղզիներից: Կազմված է հրաբխային զանգվածներից և բլրաշարերից: Կղզում հաշվարկվում է շուրջ 20 հրաբուխ, որոնցից 9-ը գործող են՝ Կուդրյավի, Մենշիյ Բրատ, Չիրիպ, Բոգդան Խմելնիցկի, Բարանսկու, Իվան Ահեղ, Ստոկապ, Ատսոնուկուրի և Բերուտարուբե: Այստեղ է գտնվում Ռուսաստանի խոշորագույն Իլյա Մուրոմեց (141 մ) ջրվեժը: Ափերը կտրտված են: Խոշոր թերակղզիներն են՝ Ատոնոպուրի, Մեդվեժի և այլն: Խոշոր ծոցերն են՝ Կասատկա, Կույբիշևի, Օդեսայի, Նայբո: Խոշոր գետերն են՝ Կույբիշևկա, Սլավնայա, Տիխայա, Բոլոտնայա, Խվոյնայա: Խոշոր լճերն են՝ Կրասիվայա, Լեսոզավոդսկոյե, Դոբրոյե, Բլագոդատնոյե և այլն: Մակերեսը՝ 3 186,64 կմ^2: Երկարությունը՝ 214 կմ, լայնությունը՝ 7-27 կմ: Բարձր կետը՝ Ստոկապ հրաբուխ (1 634 մ):

Ենթադրում են, որ անվանումն առաջացել է այներեն լեզվի Էխ·Ֆ□·Ղ Ետուորոպու *մեդուզա* բառից:

ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ - պարսկերեն فلات ایران Ֆելաթի Էրանդի. Առաջավոր Ասիայի երեք բարձրավանդակներից երկուսը՝ (**Հայկական** և **Փոքրասիական**) ամենամեծն ու արևելյանը՝ Իրանում, Աֆղանստանում, Պակիստանում և Թուրքմենստանում: Գտնվում է արևմուտքում Միջագետքի և արևելքում **Ինդոս** գետի հովտի միջև: Հյուսիսից հյուսիս-արևելք եզերված է Հարավ Կասպյան ու **Թուրանի ցածրավայրերով** և Կոպետդաղի լեռնահամակարգով, հարավից՝ **Պարսից ծոցով** և **Արաբական ծովով**, որոնց երկայնքով ձգվում է մերձափնյա Հերմսիր անապատը: Արևմուտքից՝ սահմանակից է **Հայկական լեռնաշխարհին**: Բարձրավանդակի ներքին շրջանները կազմված են իրար հաջորդող լեռնահամակարգերից՝ Քուհրուդ, Քուհբենան, Միջինաֆղանական լեռներ և այլն, սարահարթերից՝ Սերհեդ, Ղազնի-Քանդագարի և այլն ու լայնարձակ իջեցումներից, որտեղ տեղակայված են անհոսք, անապատային ֆիզիկաաշխարհագրական օբյեկտներ՝ **Դաշտե Կևիր**, **Դաշտե Լութ**, Դաշտի Մարգո, Ջազմուրյանի իջվածք, Սիստան, Մաշկել և այլն: Լեռնաշխարհի գետերը կարճ են և համեմատաբար սակավաջուր՝ Քարուն, Գիլմենդ, Գերիռութ, Քուհռութ և այլն: Բարձրավանդակում են գտնվում՝ Դերյաչեյե Նեմեկ, Մեհառլու, Դերյաչեյե Թեշկ, Քաֆթառ, Համուն և այլ լճեր: Մակերեսը՝ մոտ 2 700 000 կմ^2: Երկարությունը՝ մինչև 2 500 կմ, լայնությունը՝ մինչև 1 500 կմ: Բարձր գագաթը՝ **Դեմավենդ** լեռ (5 607,1 մ):
Անվանումը ստացել է *Իրան* երկրից:

ԻՐԱՎԱԴԻ - բիրմայերեն ᏩᏭᏂᏍ Էրարվատի, չինարեն伊洛瓦底Յիլուովադի, սանսկրիտերեն इरावती नदी Աիրավատի նադի. գետ Մյանմայում: Կազմավորվում է երկրի հյուսիսային մասում, Կաչինում՝ Մալի և Նմայ գետերի միախառնումից: Գետը հոսում է հյուսիս-հարավ ուղղությամբ, վերին հոսանքում անցնում խորը կիրճերով ու ջունգլիներով, Մյիչինա քաղաքից հարավ գետի հովիտը լայնանում է և հասնում 800 մ, ապա կտրում անցնում է **Շանի** բարձրավանդակի արևմտյան մասը, առաջացնելով երեք կիրճ: Միջին և ստորին հոսանքում գետը հոսում է Իրավադիի հարթավայրով և կազմելով շուրջ 48 000 կմ^2 տարածքով դելտա թափվում **Անդամանյան** ծովը: Վտակներն են՝ Չինդվին, Մոլե, Դայինգ, Մու, Կաբաունգ: Երկարությունը՝ 2 210 կմ: Ավազանը՝ 413 674 կմ^2: Ջրի ծախսը՝ 13 000-14 000 մ^3/վրկ (առավելագույնը՝ 32 600 մ^3/վրկ): Ակունքի բարձրությունը՝ 147 մ:
Մեծ հավանականությամբ Իրավադի անունը առաջացել է գետի սանսկրիտերեն इरावती नदी աիրավատի *փղի գետ* անունից:
Մի քանի այլ վարկածների համաձայն անվան հիմքում ընկած են կամ բիրմայերեն ᏩᏭᏂᏍ *օվկիանոս* բառի, կամ արաբերեն Վադի *գետահովիտ*, *գետ* բառերը:

ԻՐՏԻՇ - ռուսերեն Иртыш, մոնղոլերեն Эрчис, չինարեն 额尔齐斯河 Էրցզիսըհե, ղազախերեն Ертіс /ەرتىس, ույղուրերեն Ertish / Ертиш / ئېرتىش, սիբիրի թաթարերեն

Эйӕртеӕ. գետ Չինաստանում, Ղազախստանում և Ռուսաստանի Դաշնությունում, **Օբ** գետի ձախ վտակը: Աշխարհի ամենաերկար գետ-վտակը: Սկիզբ է առնում Մոնղոլական Ալթայի արևելյան լանջերից, հոսելով Չինաստանով՝ Էրցիսիխե (Սև Իրտիշ)անունով, անցնում Ղազախստան ու կտրելով Զայսանի գոգավորությունը՝ թափվում **Զայսան** լիճը: Արտահոսելով լճից հյուսիսարևմտյան ուղղությամբ, անցնում է Ռուսաստանի Դաշնություն և Խանտի Մանսիյսկ քաղաքի մոտ թափվում **Օբ** գետը: Վտակներն են՝ Իշիմ, Բուրչուն, Կալժիր, Կուրչում, Նարիմ, Բուխտարմա, Ուլբա, Ուբա, Ղզըլսու, Չար, Տոբոլ, Կամիշլովկա, Օմ, Տարա, Ույ, Շիշ, Օշա, Շագան, Կոնդա, Ուսոլկա, Վագայ: Երկարությունը՝ 4 248 կմ: Ավազանը՝ 1 643 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 3 000 մ^3/վրկ (գետաբերանում): Թեքությունը՝ 0,03 մ/կմ: Գետաբերանի բարձրությունը՝ 17,8 մ:
Մեծ հավանականությամբ անվան հիմքում ընկած է գետի հին մոնղոլերեն Эрчис *գետ* բառը:
Մեկ այլ վարկածի համաձայն, անվան հիմքում ընկած է թյուրքերեն er *հող* և tish *փորող* բառերը:

Լ

ԼԱ ՊԵՐՈՒԶԻ ՆԵՂՈՒՑ - ռուսերեն Пролив Лаперуза, ճապոներեն 宗谷海峡 Սոյա կայկյո. նեղուց **Հոկայդո** և **Սախալին** (Կրիլյոն հրվանդան) կղզիների միջև: Իրար է միացնում **Ճապոնական** և **Օխոտի** ծովերը: Երկարությունը՝ 94 կմ, լայնությունը՝ 43 կմ: Միջին խորությունը՝ 20-40 մ, առավելագույնը՝ 118 մ:
Անվանվել է 1787 թ. նեղուցը հայտնաբերած ֆրանսիացի հռչակավոր ծովագնաց *Ժան Ֆրանսուա դը Գալո կոմս դը Լա Պերուզի* պատվին:

ԼԱԲՈՒՉԵ ՔԱՆԳ - չինարեն 拉布吉康峰 Լա բու ծի քան ֆըն.եռագագաթ լեռնազանգված **Հիմալայներում**, Լաբուչե Հիմալ լեռներում,Տիբեթում՝ Չինաստանում: **Չո Օյու** լեռից 38,31 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Լաբուչե Քանգ Գլխավոր 7 367 մ, Լաբուչե Քանգ II 7 072 մ (772 մ) ու Լաբուչե Քանգ III Արևելյան 7 250 մ (570 մ): Կան սառցադաշտեր: Հարաբերական բարձրությունը՝ 1 947 մ:
Հայտնի է նաև Լապչե Քանգ, Լոբուչե Քանգ I, Չոքսիամ և այլ անուններով:

ԼԱՆԳԹԱՆԳ ԼԻՐՈՒՆԳ - նեպալերեն लाङटाङ लि ङ Լանտան լիրուն . բազմագագաթ լեռնազանգված **Հիմալայներում**, Լանգթանգ Հիմալ լեռներում՝ Տրիսուլի Գանդակի հովտի մոտ, Նեպալում: **Փորոնգ Ռի** լեռից 24,92 կմ հեռավորությամբ: Այստեղ է գտնվում Լիրունգ սառցադաշտը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 234 մ, հարաբերականը՝ 1 534 մ:
Անվանումը կազմված է տիբեթերեն լանգ *լամա* (բուդհայական քահանա Տիբեթում ու Մոնղոլիայում), թանգ *գնալ հետևից*, *հետևել,* լի *անձուկ* և րունգ *աստիճան* բառերից:

ԼԱՆԳԹԱՆԳ ՌԻ - չինարեն 兰唐日 Լան թան Ռի, նեպալերեն लाङटाङ Լանտան. լեռնագագաթ **Հիմալայների** կենտրոնական մասում, Լանգթանգ Հիմալ լեռնազանգվածում, Լանգթանգ Կհոլա գետի հովտից հյուսիս, Նեպալի ու Չինաստանի սահմանագլխին: **Փորոնգ Ռի** լեռից 3,39 կմ հեռավորությամբ: Այստեղ է գտնվում Ֆուրֆու սառցադաշտը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 205 մ, հարաբերականը՝ 650 մ:
Անունը կազմված է տիբեթերեն լանգ *լամա* (բուդհայական քահանա Տիբեթում ու Մոնղոլիայում), թանգ *Գնալ հետևից*, *հետևել* և ռի *պիկ* բառերից:

ԼԱՈՒՏ ՏԱՎԱՐ - աչեհերեն Tasék Lut Tawar, ինդոնեզերեն Danau Laut Tawar. լիճ **Սումատրա** կղզու հյուսիսարևմտյան մասում, Գայո լեռներում: Լիճն են թափվում 42 գետեր և գետակներ: Մակերեսը՝ 54,72 կմ^2: Երկարությունը՝ 17 կմ, լայնությունը՝ 3,219 կմ: Ծավալը՝ 2,539 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 148,0322 կմ^2: Լճափի երկարությունը՝ 44 կմ: Միջին խորությունը՝ 46,4 մ, առավելագույնը՝ 80 մ (կենտրոնական մասում): Պարզությունը՝ 2,92 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 231 մ:
Լճի աչեհերեն Tasék Lut Tawar անվանումը բառացի նշանակում է *քաղցրահամ ջրի ծով*:

ԼԱՊՏԵՎՆԵՐԻ ԾՈՎ - ռուսերեն Море Лаптевых, յակուտերեն Лаптевтар байҕал-лара. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծայրամասային ծով Սիբիրի հյուսիսային ափերի մոտ՝ **Թայմիր** թերակղզու, արևմուտքում՝ **Հյուսիսային երկիր** և արևելքում՝ **Նորսիբիրական** կղզիների միջև: Արևմուտքում **Վիլկիցկու** նեղուցով հաղորդակցվում է **Կարայի**, արևելքում՝ **Դմիտրի Լապտևի**, Էտերիկան և **Սաննիկովի** նեղուցներով **Արևելասիբիրական** ծովերի հետ: Ծովի արևմտյան մասում և գետերի գետաբերաններում գտնվում են մի քանի տասնյակ կղզիներ՝ Մեծ Բեգիչև, Բելկովսկի, Փոքր Թայմիր, Ստոլբովոյ, Ստարոկադոմսկու, Պեսչանի և այլն: Ափերը խիստ մասնատված են: Խոշոր ծոցերն են՝ Խատանգայի, Օլենյոկի, Յանայի, Անաբարի, Բուոր Խայի: Ծովն են թափվում **Լենա**, Խատանգա, Անաբար, **Օլենյոկ**, Յանա և այլ գետեր: Մակերեսը՝ 672 000 կմ^2: Երկարությունը՝ 530 կմ, լայնությունը՝ 1 240 կմ: Ծավալը՝ 388 416 կմ^3: Ծովափի երկարությունը՝ 1 300 կմ: Միջին խորությունը՝ 578 մ, առավելագույնը՝ 3 385 մ (հյուսիսային մասում):
1935 թ. անվանվել է 1733-44 թթ. Հյուսիսային մեծ արշավախմբի մասնակից ռուս ծովագնացներ, հորեղբոր որդիներ Դմիտրի Յակովլևիչ և Խարիտոն Պրոկոֆիևիչ *Լապտևների* պատվին:
Մինչև 1935 թ. ծովը կրում էր Արկտիկայի շվեդ հետազոտող Ն. Ա. Է. Նորդենշելդի անունը:

ԼԱՔԱԴԻՎՅԱՆ ԾՈՎ- անգլերեն Laccadive Sea, հինդի ल ीप सागर Լաքշադվիփ սագր, դիվեհի ދ ވ ން ދ ީ Լաքշա քանդու, մալայալամ ലക് ഷ ിവ് കട ൽ լաթքաթըվուք քաթալ, թամիլերեն இலட்சத்த ீவ் கட ல் լաթքաթըվուք քաթալ, կաննադա

ಲಕ್ಷದ್ವೀಪ ಸಮುದ್ರ լաքադև սամուդրա. Հնդկական օվկիանոսի ծայրամասային ծով **Հնդստան** թերակղզու հարավարևմտյան մասի, **Շրի Լանկա** կղզու, **Լաքադիվյան** և **Մալդիվյան** կղզիների միջև: Ողողում է Հնդկաստանի, Շրի Լանկայի և Մալդիվների ափերը: Ծովն են թափվում Կալինադի, Պայասվանի, Պոնանի և այլ գետեր: Մակերեսը՝ 786 000 կմ^2: Երկարությունը՝ 1 050 կմ, լայնությունը՝ 710 կմ: Ծավալը՝ 1 516 194 կմ^3: Միջին խորությունը՝ 1 929 մ, առավելագույնը՝ 4 131 մ (հարավային մասում):
Անվանումը ստացել է *Լաքադիվյան* կղզիներից:

ԼԱՔԱԴԻՎՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - մալայալամ ലക്ഷദ്വീപ് Լաքշադվիփ, անգլերեն Laccadive Islands, դիվեհի ዎይውዚዌዚዎዚዌዚዎዚዌዚዎ

Դագուպան, Արինգայ, Բաուանգ և այլ գետեր: Մակերեսը՝ 2 079,2 կմ^2: Երկարությունը՝ 56,5 կմ, լայնությունը՝ 36,8 կմ: Ծավալը՝ 96,68 կմ^3: Ափի երկարությունը՝ 160 կմ: Միջին խորությունը՝ 46,5 մ, առավելագույնը՝ մոտ 200 մ (հյուսիսարևմտյան մասում):

Անվանումը ստացել է *Լինգայեն* քաղաքից:

ԼՀԱԳԲԱ ՓՈՒԼ - լիճ Տիբեթում, **Ջոմոլունգմայի** գագաթից 6 կմ հյուսիս: Ասիայի ամենաբարձրադիր լիճը: Երկարությունը՝ 180 մ, լայնությունը՝ 50 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 6 368 մ:

Անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *քամոտ ավազան*:

ԼՀՈՑԶԵ - տիբեթերեն ལྷོ་ཙྷེ՝ Lhorgze, նեպալերեն ल्होत्से Lhotsi, չինարեն 洛子峰 Լուո զի ֆըն. եռագագաթ լեռնազանգված **Հիմալայներում**, Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայում, Չինաստանի ու Նեպալի սահմանագլխին: Լեռն ունի երկարաձիգ կատարներով առանձնացված եռանիստ բուրգի տեսք, ընդգծված հարավային, արևելյան և արևմտյան (երբեմն՝ հյուսիսարևմտյան) զառիթափ պատերով: Բացի գլխավոր գագաթից լեռնազանգվածի արևելյան մասում առանձնանում են ևս երկու, 8 000 մ-ից բարձր գագաթներ՝ Լhոցզե Միջինը 8 414 մ և Լhոցզե Սարը 8 383 մ: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 516 մ, հարաբերականը՝ 610 մ: Առաջին անգամ 1956 թ. մայիսի 18-ին, Լhոցզեյի գագաթն են բարձրացել շվեյցարական արշավախմբի անդամներ՝ Էռնեստ Ռայսը և Ֆրից Լուխսինգերը:

Լhոցզե անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *հարավային պիկ*:

ԼՅԱԽՈՎԻ ՄԵԾ - ռուսերեն Большой Ляховский, յակուտերեն Ляхов улахан арыыта.խոշորագույն կղզի Լյախովի կղզիների կազմում:Հարավում **Դմիտրի Լապտևի** նեղուցով անջատված է մայրցամաքից, հյուսիսում Էտերիկան նեղուցով՝ Լյախովի Փոքր կղզուց: Կղզու լեռներն են՝ Էմիյ Թաս, Կովրիժկա, Խապտագայ և այլն: Խոշոր գետերն են՝ Մեծ Էտերիկան, Բլուդնայան, Տախտուբուտը, Ուստուգաստախը: Խոշոր լճերն են՝ Կոմարինոյե, Մելկոյե, Իքի Կյուել և այլն: Բարձր կետը՝ 433 մ: Մակերեսը՝ 4 600 կմ^2:

Անվանվել է ի պատիվ ռուս արդյունաբերող *Ի. Լյախովի*:

ԼՅԱՈԴՈՒՆ - չինարեն 辽东半岛 Լյաոդուն պենդա, կորեերեն 랴오둥 반도 լյաոդուն փանդո. թերակղզի Չինաստանի հյուսիսարևելյան մասում, Լյաոդունի և **Դեղին** ծովերի ու **Արևմտակորեական** ծոցի միջև: Թերակղզին իրենից ներկայացնում է բլրոտ հարթավայր: Խոշոր գետերն են՝ Դայանգ, Բիլյու, Հուն և այլն: Մակերեսը՝ 29 248,41 կմ^2: Երկարությունը՝ 210 կմ, լայնությունը՝ 110 կմ: Բարձր կետը՝ Բույունշան լեռ (1 131 մ):

Լյաոդուն անվանումը կազմված է 辽西 / 遼西 *Լյաո* գետի անվան և նրան ավելացված է 东 դուն *արևելք* բառից՝ *Լյաո* գետից *արևելք*:

ԼՅՈՍԱՅԻՆ ՍԱՐԱՎԱՆԴ - չինարեն 黄土高原Հուանթու Կաուեն. սարավանդ Չինաստանում՝ **Հուանհե** գետի ավազանի միջին մասում: Հարավից եզերված է Ցինլին լեռնաշղթայով, արևելքից՝ Տայհանշան լեռներով, հյուսիսից՝ Օրդոս անապատով, հյուսիս-արևմուտքից՝ Ալաշան անապատով, արևմուտքից՝ Նյանշանի արևելյան ճյուղավորումներով: Տարածքը ծածկված է 150-ից մինչև 300 մ խորությամբ դեղնավուն փխրահողով՝ լյոսով: Մակերեսը՝ մոտ 430 000 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝ միջինը 1200–1500 մ (առավելագույնը՝ 2500 մ):
Անվանումը ստացել է սարավանդում մեծ տարածում ունեցող *փխրուն*, *դեղնահող լյոս* անունից:

ԼՈՄԲՈԿ - ինդոնեզերեն Pulau Lombok. կղզի Փոքր Զոնդյան կղզիների կազմում: Հարավից ողողվում է Հնդկական օվկիանոսով, հյուսիսից՝ **Բալի** ծովով: Արևմուտքում համանուն նեղուցով անջատված է **Բալի**, արևելքում Ալաս նեղուցով՝ **Սումբավա** կղզիներից: Ափերը թույլ մասնատված են, բացառությամբ հարավայինի: Ռինջանի հրաբխի խառնարանում գտնվում է Սեգարա Անակ լիճը: Կղզու հյուսիսային մասը բարձրադիր է, հարավայինը՝ ցածրադիր, տեղ-տեղ բլրոտ: Խոշոր գետերն են՝ Գանտի, Սունգայ Կելեպ, Կալի Դոդոկան, Բաբակ, Կալի Սեգարա և այլն: Մակերեսը՝ 4 677.4 կմ^2: Երկարությունը՝ 96 կմ, լայնությունը՝ 82 կմ: Բարձր կետը՝ Ռինջանի հրաբուխ (3 726 մ):
Անվան հիմքում ընկած է սասակերեն luum-bok *ուղիղ առջևում* արտահայտությունը:
Մեկ այլ վարկածի համաձայն, անվանման հիմքում ընկած է չիլի պղպեղի ինդոնեզերեն lombok անունը, որը քիչ հավանական է:

ԼՈՆԳԻ ՆԵՂՈՒՑ - ռուսերեն Пролив Лонга. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի **Վրանգելի** կղզին Ռուսաստանի Դաշնության մայրցամաքային մասից անջատող նեղուց: Իրար է միացնում **Արևելասիբիրական** և **Չուկոտյան** ծովերը: Նեղուցի վրայով է անցնում ամսաթվերի փոփոխման գիծը: Երկարությունը՝ 128 կմ, լայնությունը՝ 141 կմ: Միջին խորությունը՝ 36-50 մ:
Անվանվել է 1867 թ. Վրանգելի կղզին հայտնաբերած ամերիկացի ծովագնաց և կետորս *Թոմաս Լոնգի* պատվին:

ԼՈՔՏԱՔ - մեյթեյ (մանիպուրի) ꯂꯣꯛꯇꯥꯛ Լոքտաք իսիմ, հինդի लोकटक झील Լոքատաք ջիիլ, անգլերեն Loktak Lake. քաղցրահամ լիճ Հնդկաստանի հյուսիսարևելյան մասում, Մանիպուր նահանգում: Հայտնի է իր Պհումդի լողացող կղզիներով, որի հիմքն են կազմում մահացած և նեխող օրգանական մնացորդները և որոնք օգտագործվում են տեղաբնիկների կողմից որպես բանջարանոցներ: Խոշոր կղզիներն են՝ Տհանգան, Իտհինգը և Սենդրան: Լիճն են թափվում Մանիպուր, Բարակ, Իմպհալ, Իրիլ, Թուբալ և այլ գետեր: Մակերեսը՝ 287 կմ^2: Երկարությունը՝ 35 կմ, լայնությունը՝ 13 կմ: Ծավալը՝ 2,07 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 980 կմ^2: Միջին խորությունը՝ 2,7 մ, առավելագույնը՝ մոտ 4,6 մ (արևմտյան մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 768,5 մ:

Անվանումն առաջացել է հինդի լեզվի लोक լոք *հոսք* և अंत տակ *վերջ* բառերի միացումից:

ԼՈՒՍՈՆ - բիկոլերեն Luzon, սեբուանո Luzon, իլոկաներեն Luzon, կապամպանգաներեն Luzon, տագալերեն Luzon, վարայերեն Luzon, անգլերեն Luzon. կղզի **Ֆիլիպինյան կղզեխմբի** հյուսիսում: Արևմուտքից ողողվում է **Հարավչինական**, արևելքից՝ **Ֆիլիպինյան** ծովերով: Լուսոնի նեղուցով կղզին անջատված է **Թայվան** և **Ռյուկյու** կղզիներից: Կղզում կան ինչպես հանգած՝ Արայատ, այնպես էլ գործող հրաբուխներ՝ Մայոն, Կագուա, Պինատուբո, Բանաաո և այլն: Հյուսիսարևմտյան մասում է գտնվում խոշոր Կենտրոնական Կորդիլիերա լեռնահամակարգը, որից հարավ տեղակայված են ցածրադիր Սամբալես լեռները, իսկ արևելքում՝ Կագայան գետի հովիտը, որն անջատում է Կորդիլիերան մեկ այլ ցածրադիր Սիեռա Մադրե լեռնաշղթայից:Հաշվի առնելով կղզու ափերի կտրտվածությունը, այն ունի բազմաթիվ ծոցեր և ծովախորշեր՝ Լինգայեն, Մանիլա, Լամոն, Կաբառույան, Տայաբաս, Ռագայ և այլն: Կղզու հարավային մասում է գտնվում Բայ լիճը: Խոշոր գետերն են՝ Կագայան, Ագնո, Պամպանգա և այլն: Մակերեսը՝ 109 964,9 կմ^2: Երկարությունը՝ 955 կմ, լայնությունը՝ 220 կմ: Ափի երկարությունը՝ 3 249,6 կմ: Բարձր կետը՝ Պուլոգ լեռը (2929 մ):
Անվանումը ծագում է պորտուգալերեն *Luções* անունից, որով պորտուգալացիներն անվանում էին այստեղ բնակվող ցեղերից մեկին:
Մեկ այլ վարկածի համաձայն 1570-71 թթ. իսպանացի ծովագնացներին զարմացրել են բնիկների տան դռների առջև դրած բրինձ ծեծելու տաշտաձև մեծ ամանները և նրանք կղզին անվանեցին Islas de los Losones՝ *Տաշտերի կղզիներ*:
Կա կարծիք, որ անվանումն առաջացել է չինարեն 呂宋 Լի Սոն *ցածրադիր*, *հարավային* կամ *փոքր Սյու* (թագավորական հարստություն Չինաստանում) անունից:

ԼՈՒՓԳՀԱՐ ՍԱՐ - ուրդու سر لوپہار. լեռնագագաթ **Կարակորումում**, Հիսպար Մուզտաղ լեռներում՝ Մոմիիլ Սար լեռնազանգվածում, Գիլգիթ Բալտիստանում, Պակիստանում: **Մոմիիլ Սար** լեռնագագաթից 3,83 կմ հեռավորությամբ: Կան շատ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 200 մ, հարաբերականը՝ 730 մ:
Անվանումը վախաներենից թարգմանաբար նշանակում է *Մեծ ժայռի գագաթ*:

Խ

ԽԱՆԿԱ - ռուսերեն Ханка, չինարեն 兴凯湖 / 興凱湖 Սինքայհու. քաղցրահամ լիճ Հեռավոր Արևելքում՝ Ռուսաստանի Դաշնության Պրիմորիեի երկրամասի և Չինաստանի Հեյլունցզյան նահանգի սահմանագլխին: Լճի հյուսիսային (չինական) ափի մոտ է տեղակայված Խանկայից ավազե նեղ ցամաքալեզվակով անջատված Փոքր Խանկա լիճը: Լիճն են թափվում 23 գետ՝ Իլիստայա, Կոմիսարովկա, Մելգունովկա, Սպասովկա և այլն, իսկ արտահոսում՝ Սունգաչան: Մակերեսը՝ 4 190 կմ^2: Երկարությունը՝ 90 կմ, լայնությունը՝ 45-67 կմ: Ծավալը՝ 18 885 կմ^3: Ջրահավաք ավա-

զանը՝ 18 400 կմ^2: Լճափի երկարությունը՝ 309 կմ: Միջին խորությունը՝ 4,5 մ, առավելագույնը՝ 10,6 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 68-70 մ:

Լճի չինարեն 兴凯湖 / 興凱湖 Սինքայիու / Խինկայ անվանումը բառացի նշանակում է *առատության և բարգավաճման ծով*:

Մեկ այլ վարկածի համաձայն, հավանական է, որ լճի անվանման հիմքում ընկած է չինարեն 汗海 Խանհայ *իջվածք* բառը:

ԽՈՒՎՍԳՅՈԼ - մոնղոլերեն Хөвсгөл нуур, բուրյաթերեն Хүбсэгэл. խոշոր քաղցրահամ լիճ Մոնղոլիայի հյուսիսում, միջլեռնային իջվածքում՝ **Սայանների** հարավային ճյուղավորումների մոտ: Խոշոր կղզիներն են՝ Դալայն Մոդոն, Ցամո Խադ, Բագա և այլն: Լիճն են թափվում 96 գետ ու գետակներ՝ Իխ Խորո Գյոլ, Բայան Գյոլ, Ջարգալանդ Գյոլ, Ցագան Սալա Գյոլ, Խանխ Գյոլ, Ալագ Ցար Գյոլ, իսկ արտահոսում՝ Էգիյն Գյոլը: Մակերեսը՝ 2 758,7 կմ^2: Երկարությունը՝ 136 կմ, լայնությունը՝ 36,5 կմ: Ծավալը՝ 380.7 կմ^3: Միջին խորությունը՝ 138 մ, առավելագույնը՝ 267 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 645 մ:

Բուն մոնղոլերեն Хөвсгөл нуур անվանումը բառացի նշանակում է ջրառատ լիճ: Հավանական է, որ անվանման հիմքում ընկած է լճի թյուրքերեն Kyep Suu Kyeli *Երկնագույն լիճ* անունը:

Կ

Կ12 - հինդի के१२ Կ12. լեռնագագաթ **Կարակորումում**, Սալտորո լեռնաշղթայում, **Սիաչեն** սառցադաշտից հարավ-արևմուտք, Հնդկաստանում: **Սալտորո Քանգրի** լեռից 19,42 կմ հեռավորությամբ:Կան բազմաթիվ սառցադաշտեր՝ Կ12, Բիլաֆոնդ, որից սկիզբ է առնում **Ինդոսի** վտակ՝ Դանզամը և այլն: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 428 մ, հարաբերականը՝ 1 978 մ:

Լեռը 1856 թ-ին հայտնաբերվել է եվրոպական արշավախմբի կողմից և ստացել Կ12 անվանումը, որպես **Կարակորումի** տասներկուերորդ գագաթ:

Կ2 / ՉՈԳՈՐԻ - ուրդու ٹو کے / ےچھوغور Չուգուրի / Կ2, հինդի के२ Կ2, չինարեն 喬戈里峰 Չիագոլի ֆըն. Լեռնագագաթ **Կարակորումի** լեռնահամակարգում, Բալտորոյի լեռներում, Պակիստանում: Կ2-ը բարձրությամբ երկրորդ լեռնագագաթն է աշխարհում **Ջոմոլունգմայից** հետո: Այստեղ կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակրդակից՝ 8 611 մ, հարաբերականը ՝ 4 017 մ: Առաջին անգամ 1 954 թ. հուլիսի 31-ին, Չոգորի գագաթն են բարձրացել Արդիտո Դեզիոյի ղեկավարած իտալական արշավախմբի անդամներ՝ Լինո Լաչեդելին և Ակիլե Կոմպանիոնին:

Լեռը 1856 թ-ին հայտնաբերվել է եվրոպական արշավախմբի կողմից և ստացել Կ2 անվանումը, որպես **Կարակորումի** երկրորդ գագաթ: Կ1, Կ3, Կ4 և Կ5 գագաթները

հետագայում վերանվանվել են՝ **Մաշերբրում**, **Բրոադ Պիկ**, **Գաշերբրում II**-րդ և **Գաշերբրում I**-ին:
Նախկինում լեռը հայտնի էր՝ *Գոդուին Օստեն* անվամբ՝ ի պատիվ այս շրջանը ուսումնասիրող,1861 թ-ին անգլիական տեղագրական առաջին արշավախմբի ղեկավար, գնդապետ Հենրի Գոդուին Օստենի, Լամբհա Պահար՝ *Մեծ լեռ*, Դափսանգ Կեչու/ Կետու և այլ անվանումներով:
Չոգորի անվանումը կազմված է բալթի լեզվի chhogo *հսկա* և ri *լեռ* բառերից՝ *Հսկա լեռ*:

Կ6 - ուրդու بلتستان چوٹی / کے 6. լեռնագագաթ **Կարակորումում**, Մաշեբրումի լեռներում, Գիլգիթ Բալտիստանում, Պակիստանում: **Շերպի Քանգրի** լեռից 21,62 կմ հեռավորությամբ: Խոշոր սառցադաշտերն են՝ հյուսիսում Շյոք գետի ակունքը հանդիսացող Հուշե հովտի սկզբնամասում գտնվող Չարակուսան, գագաթից հարավ-արևմուտք՝ Նագմահը (կամ Նանգպահ), իսկ արևելքում՝ Քաբերին: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7282 մ, հարաբերականը՝ 1962 մ:
Հայտնի է նաև Բալտիստան Պիկ անվամբ:
Լեռը 1856 թ-ին հայտնաբերվել է եվրոպական արշավախմբի կողմից և ստացել Կ6 անվանումը, որպես **Կարակորումի** վեցերորդ գագաթ:

ԿԱԶԲԵԿ - օսերեն Сæна / Урсхох, վրացերեն მყინვარწვერი (ყაზბეგი) մկինվարծվերի (կազբեգի), ինգուշերեն Баш-лоам, կաբարդերեն ІуащхьэмахуэцІыкІу / Къазбэч, ռուսերեն Казбек.հանգած ստրատոհրաբուխ Կենտրոնական Կովկասի արևելյան մասում՝ Կողքային լեռների Խոխի լեռներում, Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի սահմանագլխին: Վերջին ժայթքումը տեղի է ունեցել 650 թ-ին: Բարձրությունը ծովի մակարդակից 5 033,8 մ:
Այժմյան անվանումը լեռը ստացել է 19-րդ դարի սկզբներին այստեղի հողերի տեր ու տիրակալ իշխան Ղազիբեկից, որի անունը աղավաղվելով ստացել է *Կազբեկ* ձև:
Լեռան վրացերեն მყინვარწვერი մկինվարծվերի ու მყინვარი մկինվարի անվանումը, թարգմանվում է, որպես *սառցե գագաթով լեռ* կամ *սառցե գագաթ*:
Կազբեկի օսերեն անվանումներից Урсхох բառացի նշանակում է *Սպիտակ լեռ*, իսկ լեռան ինգուշերեն Баш-лоам անվանումը՝ *Հալչող լեռ*:

ԿԱԼԻՄԱՆՏԱՆ - ինդոնեզերեն Kalimantan, մալայերեն Borneo / بورنيو, բանջար Pulau Kalimantan. կղզի Հարավարևելյան Ասիայում, Մեծ Զոնդյան կղզիների կազմում: Հյուսիսում և հյուսիսարևմուտքում շրջապատված է **Հարավչինական**, հյուսիսարևելքում՝ **Սուլու** ծովերով, արևելքում՝ **Սուլավեսի** ծովով ու **Մակասարյան** նեղուցով, հարավում՝ **Ճավայի** ծովով ու **Կարիմատա** նեղուցով: Կղզուց արևմուտք են գտնվում **Մալակկա** թերակղզին ու **Սումատրա** կղզին, դեպի հարավ՝ **Ճավա**, արևելք՝ **Սուլավեսի** կղզիները: Մակերեսը ծածկված է մշտադալար արևադարձային անտառներով: Այստեղ են գտնվում՝ Բանջարան Կրոկ, Իրան, Կապուաս Հուլու լեռնաշղթաները, ինչպես նաև Հարդեն, Լիանգպրան լեռնագագաթները: Խոշոր գետերն են՝ **Կապուաս**, Մահակամ, Բարիտո, Ռաջանգ և այլն: Մակերեսը՝ 743 330

կմ^2: Երկարությունը՝ 1 336 կմ, լայնությունը՝ 960 կմ: Բարձր կետը՝ Կինաբալու լեռ (4095 մ):
Կղզին ունի տարբեր անվանումներ: Արևմտյան լեզուներում այն հայտնի է Բոռնեո անվամբ, որը ստացել է 1521 թ. Ֆ. Մագելանի արշավախմբի կողմից՝ կղզու հյուսիսային կողմում գտնվող Բրունեյի սուլթանության պատվին:
Ինդոնեզացի տեղաբնիկները կղզին անվանում են Կալիմանտան, որի անվանման ծագումնաբանությունն ունի մի քանի բացատրություն.
Վարկածներից մեկի համաձայն այն առաջացել է սանսկրիտերեն कालमंथन Կալամանտհանա *կիզիչ եղանակի կղզի* անունից:
Ըստ ամենատարածված վարկածի կղզին Կալիմանտան անվանումը ստացել է այստեղ բնակվող *կլեմանտաներ* ցեղի անունից:
Կան Կալիմանտան անվան թարգմանության ևս երկու վարկած՝ *Մանգոյի երկիր* և *Ալմաստե գետ*:

ԿԱՄԵԹ - հինդի कामेट Կամիթ. երկգագաթ լեռ **Հիմալայներում**,Ուտարակհանդ նահանգի՝ Չամոլի շրջանում, Հնդկաստանում: **Նանդա Դևի** լեռից 70,33 կմ հեռավորությամբ: Կան բազմաթիվ սառցադաշտեր՝ Պասհիմի, Պուրբի, Արևմտյան ու Արևելյան Կամեթ, Ռայհանա և այլն: Լեռան լանջերից են սկիզբ առնում Սարասվատի և Դաուլիգանգա գետերը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 756 մ, հարաբերականը՝ 2 825 մ:
Կամեթ լեռան անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *բոցավառվող*, *առկայծող*, *բոցկլտացող* լեռ:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը թարգմանաբար նշանակում է *Զյունագուրկ*:

ԿԱՄՈՏԵՍ - սեբուանո Camotes Sea, իլոկաներեն Baybay Camotes, տագալերեն Dagat Camotes, վարայերեն Dagat Camotes. միջկղզային ծով Ֆիլիպինյան կղզեխմբի **Լեյտե**, **Բոհոլ** և **Սեբու** կղզիների միջև: Հյուսիսում հաղորդակցվում է **Վիսայան**, իսկ հարավում՝ Բոհոլ և Կանիգաո նեղուցներով **Բոհոլ** ծովերի հետ: Ծովում են գտնվում **Կամոտես** կղզիները: Մակերեսը՝ 8 540 կմ^2: Երկարությունը՝ 85 կմ, լայնությունը՝ 150 կմ: Ծավալը՝ 2 331,42 կմ^3: Միջին խորությունը՝ 273 մ, առավելագույնը՝ 721 մ (կենտրոնական մասում):
Անվանումը ստացել է *Կամոտես* կղզիներից:

ԿԱՄՈՏԵՍ - սեբուանո Kapuloan ang Camotes, տագալերեն Kapuluan ng Camotes, անգլերեն Camotes Islands. կղզիների խումբ Ֆիլիպիններում, համանուն ծովում: Կազմված է երեք խոշոր և մեկ փոքր կղզիներից՝ Պորո, Պասիխան, Պոնսոն և Տուլանգ: Պասիխան կղզում է գտնվում Դանաո լիճը: Մակերեսը՝ 236,36 կմ^2:Կղզեխմբի բարձր կետն է համարվում՝ Ալտավիստա բլուր 388 մ (Պորո կղզում):
Ըստ ավանդապատումի, երբ իսպանացիները հարցրել էին տեղաբնիկներին այդ վայրի անվան մասին, ստացել էին կամոտե պատասխանը, որովհետև այդ ժամա-

նակ նրանք հավաքում էին քաղցր կարտոֆիլի (*կամոտի)* բերքը և կարծում էին, որ իսպանացիք հետաքրքրվում են, թե ինչ են նրանք հավաքում:

ԿԱՄՉԱՏԿԱ - ռուսերեն Камчатка. թերակղզի Եվրասիայի հյուսիսարևելյան մասում: Արևմուտքից ողողվում է **Օխոտի** ծովով, արևելքից՝ Խաղաղ օվկիանոսով և **Բերինգի** ծովով: Միացված է մայրցամաքին մինչև 93 կմ լայնությամբ նեղ Պարապոլսկի դոլ պարանոցով: Արևելյան ափը խիստ մասնատված է և առաջացրել է մի շարք խոշոր ծոցեր՝ Ավաչայի, Կամչատկայի, Կարագայի, Կորֆի և այլն: Կենտրոնական մասում են գտնվում երկու զուգահեռ լեռնաշղթա՝ Սրեդինի և Արևելյան, որոնց միջև է գտնվում Կենտրոնակամչատյան ցածրավայրը: Թերակղզում կան 300-ից ավելի հրաբուխ, որոնցից 29-ը համարվում են գործող՝ Իչինսկայա Սոպկա (3 621 մ), Կորյակական Սոպկա (3 456 մ), Ավաչինսկայա Սոպկա (2741 մ): Խոշոր գետերն են՝ Կամչատկա, Ավաչա, Տիգիլ, Ուկա, Տալովկա և այլն: Խոշոր լճերն են՝ Կոստական, Կուրիլյան, Կրոնոցկոյե, Շտյուբելի, Կալիգիր և այլն: Մակերեսը՝ 270 000 կմ^2: Երկարությունը՝ 1 200 կմ, լայնությունը՝ մինչև 440 կմ: Բարձր կետը՝ Կլյուչևսկայա Սոպկա հրաբուխ (4 835 մ):
Ամենայն հավանականության, անվանումը ստացել է *Կամչատկա* գետից:

ԿԱՆՉԵՆՋԱՆԳԱ - նեպալերեն कञ्चनजङ्घा Կանչանձանգիա, հինդի कंचनजंघा Կանչանջանգիա, դոթյալի कञ्चनजंघा Կանցանձանգիա. հնգագագաթ լեռնազանգված **Հիմալայներում**, Նեպալի ու Հնդկաստանի սահմանագլխին: Լեռնազանգվածը բարձրությամբ երրորդն է աշխարհում՝ **Ջոմոլունգմայից** և **Կ2** -ից հետո: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Կանչենջանգա Գլխավոր 8 586 մ, Կանչենջանգա Արևմտյան / Յալունգ Քանգ 8 505 մ, Կանչենջանգա Հարավային 8 491 մ, Կանչենջանգա Կենտրոնական 8 478 մ և Կանգբաչեն 7 902 մ: Այստեղ կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 586 մ, հարաբերականը՝ 3 922 մ: Առաջին անգամ 1955 թ. մայիսի 25-ին, Կանչենջանգայի գագաթն են բարձրացել բրիտանական արշավախմբի անդամներ՝ Ջո Բրաունը և Ջորջ Բենդը:
Հավանաբար *Կանչենջանգա* անվանումը ունի տիբեթական ծագում և հարավ տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Բյուր ձների հինգ գանձարան*, հաշվի առնելով, որ զանգվածը կազմված է հինգ գագաթից:

ԿԱՉ - գուջարաթի કચ્છનો ખખીત կաչանում ակիետա, հինդի कच्छ की खाड़ी կաչ կի քհաարի, անգլերեն Gulf of Kutch. հարավից՝ Կատհիավար, իսկ հյուսիսից՝ Կաչ թերակղզիներով եզերված **Արաբական** ծովի ծոց, Հնդկաստանի Գուջարաթ նահանգում: Ծոցում կան շուրջ 40 կղզի, որոնցից խոշորագույնը Կարումբհարն է: Մակերեսը՝ 7 350 կմ^2: Երկարությունը՝ 180 կմ, լայնությունը՝ 65 կմ: Ծավալը՝ 154,35 կմ^3: Միջին խորությունը՝ 21 մ, առավելագույնը՝ 123 մ (արևմտյան մասում):
Անվանումը ստացել է *Կաչ* թերակղզուց:

ԿԱՊՈՒԱՍ - ինդոնեզերեն Sungai Kapuas. գետ Ինդոնեզիայի Կալիմանտան կղզում: Աշխարհի ամենաերկար կղզային գետն է: Սկիզբ է առնում Մյուլերի ու Վե-

րին Կապուաս լեռնաշղթաների ծայրակցման կետ հանդիսացող Ռայա լեռան հարավարևմտյան լանջից և հոսելով արևմտյան ուղղությամբ ու Պոնտիանակ քաղաքից հարավ կազմելով ընդարձակ դելտա, թափվում **Նատունա** ծովը: Խոշոր վտակներն են՝ Մելավի, Մենգկիանգ: Երկարությունը՝ 1143 կմ: Ավազանը՝ 98 749 կմ^2: Ջրի ծախսը մոտ՝ 6 000 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 508 մ:
Անվանումը ստացել է *Կապուասի* լեռներից:

ԿԱՊՈՒՏՋՈՒՂ - ադրբեջաներեն Qapıcıq dağı.բազմագագաթ լեռնազանգված **Հայկական լեռնաշխարհում**, Զանգեզուրի լեռնաշղթայում, Հայաստանի Հանրապետության և Նախիջևանի սահմանագլխին: Զանգեզուրի լեռների ամենաբարձր կետը: Լեռան հյուսիսարևելյան մասից է սկիզբ առնում Քարահուն գետը: Լեռնազանգվածից են սկիզբ առնում նաև՝ Կարթ, Կապուտջուղ, Փառակա և այլ գետեր: Կապուտջուղ լեռան լանջերը զառիթափ են՝ ծածկված մերձալպյան և ալպյան մարգագետիններով, գագաթային շրջանում կան հավերժական ձնաբծեր:Բարձրությունը ծովի մակարդակից 3 905,2 մ, հարաբերականը՝ 1 818 մ:
Որոշ ուսումնասիրողներ համարում են, որ անունը կազմված է հայերեն *կապույտ* և *ծյուղ* բառերի միացումից՝ *Կապույտծյուղ*, որը հետագայում ստացել է այժմյան տեսքը: Սակայն այդ եզրակացությունը թյուր է:

ԿԱՍՊԻՑ ԾՈՎ - ռուսերեն Каспийское море, ղազախերեն Каспий теңізі, թուրքմեներեն Hazar deňzi, պարսկերեն دریای خزر Դրայա է խեզար, ադրբեջաներեն Xəzər dənizi, ավարերեն Каспий ралъад, լեզգիերեն Каспи гьуь**л**, լաքերեն Каспи хьхьири. երկրագնդի ամենամեծ անհոսք լիճը, Եվրոպայի և Ասիայի սահմանին: Պայմանականորեն բաժանվում է 3 մասի՝ Հյուսիսային, Միջին և Հարավային: Հյուսիսային և Միջին մասերի պայմանական սահման է հանդիսանում Չեչեն կղզու և Տյուբ Կարագան հրվանդանի միջև երևակայան գիծը, իսկ Միջին և Հարավային մասերինը՝ Չիլով կղզու և Ղան Ղուլու հրվանդանի միջև: Ափերը ցածրադիր են ու հարթ: Խոշոր ծոցերն են՝ Մանղշլաղի, **Կարա Բողազ Գյոլ**, Ղազախական, Կրասնովոդսկի, Թուրքմենական և այլն: Լիճն են թափվում 130 գետ՝ Վոլգա, Ուրալ, Սուլակ, Սամուր, **Կուր**, Թերեք, Էմբա, Ատրեկ, Սեֆիդրուդ և այլն: Մակերեսը՝ 371 000 կմ^2: Երկարությունը՝ 1 200 կմ, լայնությունը՝ 435 կմ: Ծավալը՝ 78 200 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 3 626 000 կմ^2: Լճափի երկարությունը՝ 7 000 կմ: Միջին խորությունը՝ 208 մ, առավելագույնը՝ 1 025 մ (հարավային մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ - 28 մ:
Լիճը հնում կոչվել է նաև Հիկանաց, Խազարական, Վրկանից և այլն:
Այժմյան **Կասպից ծով** անվանումը ստացել է նախկինում լճի հարավարևմտյան ափամերձ գոտում բնակվող *կասպք* ցեղերի անունից:

ԿԱՐԱ - ռուսերեն Кара. գետ Եվրասիայի հյուսիսային մասում, Ռուսաստանի Դաշնությունում: Կազմավորվում է Բևեռային Ուրալի հյուսիսարևմտյան լանջերից, Մեծ և Փոքր Կարա գետերի միացումից: Հոսելով հիմնականում հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ Պայ-Խոյ լեռնաշղթային զուգահեռ, քարվաստեր ու ջրվեժներ կազմավորելով, անցնում է մի քանի կիրճերով ու թափվում **Կարայի** ծովի՝ Բայդարատայի ծովախորշը: Վտակներն են՝ Նյարմա-Յախա, Սիլովա-Յախա, Սիբիրչատա-

Յախա և այլն: Երկարությունը՝ 257 կմ: Ավազանը՝ 13 400 կմ^2: Ակունքի բարձրությունը՝ 163 մ:
Անվանումն առաջացել է նենեցական xape *սառցակոշտ*, *տորոս* բառից:

ԿԱՐԱ ԲՈՂԱԶ ԳՅՈԼ - թուրքմեներեն Garabogazköl. **Կասպից** ծովի ծոց Թուրքմենստանի հյուսիսարևմտյան մասում: Ծովի հետ է կապված շուրջ 200 մ լայնությամբ համանուն նեղուցով: Ջուրը հայտնի է իր բարձր աղիությամբ (310 ‰): Մակերեսը՝ 18 400 կմ^2: Երկարությունը՝ 193 կմ, լայնությունը՝ 154 կմ: Ծավալը՝ 128,8 կմ^3: Ափի երկարությունը՝ 730 կմ: Միջին խորությունը՝ 7 մ, առավելագույնը՝ 13,8 մ (կենտրոնական մասում):
Անվանումը թյուրքերեն լեզուներից թարգմանաբար նշանակում է *Սև նեղուցի լիճ*:

ԿԱՐԱԳԻԵ - ղազախերեն Қарақия ойысы. խոր, անհոսք իջվածք Ղազախստանում՝ **Կասպից ծովի** արևելյան ափամերձ շրջանում, Մանղշլաղ թերակղզում: Երկարությունը՝ 85 կմ, լայնությունը՝ 10-25 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ -132 մ: Հատակը ծածկված է աղուտներով:
Հայտնի է նաև Բատիր անունով:
Անվանումը կազմված է թյուրքերեն kara *սև* և giye *զառիվեր սարալանջ* բառերից: Մեկ այլ վարկածի համաձայն, անվանումը թարգմանաբար նշանակում է *Սև երախ*:

ԿԱՐԱԿՈՐՈՒՄ - ուրդու قراقرم کوہ سلسلہ Սուլեսելո Քուր Քարա Կարամ, անգլերեն Karakoram, հինդի काराकोरम Կարակորում, չինարեն 喀喇昆仑山脉 Հալա Կուն Լուն շանմայ. լեռնահամակարգ Կենտրոնական Ասիայում, Պակիստանում, Հնդկաստանում (Ջամմու ու Քաշմիր նահանգ) և Չինաստանում: Հյուսիսից եզերված է՝ **Հինդուկուշի**, **Պամիրի**, **Կունլունի**, հարավից՝ **Հիմալայների** և Գանգդիսեշանի լեռներով: **Կարակորումի** արևմտյան մասը երբեմն կոչվում է Բալտորո Մուզտաղ: Այստեղ կան մոտավորապես 15 400 կմ^2 մակերեսով, շուրջ 2 300 սառցադաշտ՝ **Սիաչեն**, **Բիաֆո, Բալտորո**, **Բատուրա** և այլն: Լեռնահամակարգում են գտնվում աշխարհի 8000 մ բարձրություն ունեցող 14 գագաթներից 4-ը՝ **Կ 2**, **Գաշերբրում I, Բրոդ Պիկ** և **Գաշերբրում II**: Լեռներից են սկիզբ առնում Յարքենդ, Ծայոկ, Տաշկուրգան և բազմաթիվ այլ գետեր: Մակերեսը՝ 77 154 կմ^2: Երկարությունը՝ 476-800 կմ, լայնությունը՝ 466 կմ: Բարձր գագաթը՝ **Կ 2** / **Չոգորի** լեռ (8 614 մ):
Անվանումն առաջացել է թյուրքերեն kara *սև* և korum *քարացրոն* բառերից:

ԿԱՐԱԿՈՒԼ - տաջիկերեն Қарокул / Сиоб, ղըրղըզերեն Кара-Көл. անհոսք աղի լիճ Տաջիկստանի Լեռնային Բադախշանի ինքնավար մարզում, **Պամիրի** հյուսիսում: Լճում կա 4 կղզի: Լիճն են թափվում Կարաջիլգա, Կարարթ, Մուզկյոլ, Ակջիլգա, Մուզտեսու, Կոկսոյ, Կումբուլակ և այլ գետեր: Մակերեսը՝ 380 կմ^2: Երկարությունը՝ 33 կմ, լայնությունը՝ 23 կմ: Ծավալը՝ 42,56 կմ^3: Միջին խորությունը՝ 112 մ, առավելագույնը՝ 236 մ (արևմտյան մասում): Ջրի պարզությունը՝ 9 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3914 մ:

Անվանումն ունի թյուրքական ծագում և բառացի նշանակում է *սև լիճ*:

ԿԱՐԱԿՈՒՄ - թուրքմեներեն Garagum, ուզբեկերեն Qoraqum. ավազային անապատ Միջին Ասիայի հարավում, Թուրքմենստանում: Անապատի կազմում տարանջատվում են՝ Անդրունգուզյան, նրանից Ունգուզ իջվածքով անջատված՝ Հարավարևելյան և Կենտրոնական (Ցածրադիր) Կարակումները:Հյուսիսից անապատը եզերված է **Սարըղամիշի** իջվածքով և Ուզբոյի հնահունով, արևելքից՝ **Ամուդարյայի** հովտով, հարավ-արևելքից՝ Կարաբիլ ու Բադխիզ բարձրավայրերով, հարավից՝ Կոպետդաղի ստորոտով, արևմուտքից՝ Բալխանի լեռներով: Մակերեսը՝ 350 000 կմ^2: Երկարությունը՝ 420 կմ, լայնությունը՝ 570 կմ:
Անվանումն առաջացել է միջին թյուրքերեն kara *սև* ու kum *ավազ* բառերից, և բառացի նշանակում է *սև ավազ*: Սակայն իրականում անվանումը չի կրում գունային բաղադրիչ՝ թուրքմենները gara gum *սև ավազ* են անվանում բուսականությամբ ամրացված ավազներին, ի տարբերություն շարժուն բարխանային ավազների, որոնց անվանում են ak gum, *սպիտակ ավազ*:

ԿԱՐԱՅԻ ԾՈՎ - ռուսերեն Карское море. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծայրամասային ծով: Ծովը սահմանափակված է Եվրասիայի հյուսիսային ափով և Նոր Երկիր, Ֆրանց Յոսիֆի երկիր, **Հյուսիսային երկիր** և Գեյբերգի կղզիներով: Ծովի հյուսիսային մասում է գտնվում Վիզեի երկիր կղզին: Խոշոր ծոցերն են՝ Ենիսեյի, Պյասինայի, **Օբի խորշ**, Բայդարատայի խորշ, Գիդանի խորշ և այլն:Ծովն են թափվում **Օբ**, **Ենիսեյ**, **Կարա**, Տազ, Պյասինա և այլ գետեր: Մակերեսը՝ 893 400 կմ^2: Երկարությունը՝ 720 կմ, լայնությունը՝ 1280 կմ: Ծավալը՝ 100 954 կմ^3: Միջին խորությունը՝ 113 մ, առավելագույնը՝ 620 մ (Սուրբ Աննայի փողրակ):
Առաջներում այն կոչվում էր Նյարզոմայի (Նարզեմայի) ծով:
1736 թ. Կարայի գետաբերանից ոչ հեռու ձմեռել է Հյուսիսային մեծ արշավախմբի՝ Ստեպան Մալիգինի և Ալեքսեյ Սկուրատովի ղեկավարած արևմտյան ջոկատը, որից հետո ծովը ստացավ այժմյան անվանումը:
Անվանումը ստացել է Կարա գետից:

ԿԱՐԻՄԱՏԱ - ինդոնեզերեն Selat Karimata, մալայերեն Selat Karimata. նեղուց Ինդոնեզիայում, **Կալիմանտան** և **Բելիտունգ** կղզիների միջև: Իրար է միացնում **Նատունա** և **Ճավայի** ծովերը: Նեղուցն են թափվում **Կապուաս**, Կենդավանգան, Պավան, Սամբաս, Բարումուն, Մուսի և այլ գետեր: Նեղուցի հյուսիսարևելյան մասում կան բազմաթիվ կղզիներ՝ Կարիմատա կղզեխումբ, Պենեբանգան, Կելավար, Պելապիս, Բավալ և այլն: Երկարությունը՝ մինչև 201 կմ, նվազագույն լայնությունը՝ 210 կմ: Խորությունը՝ մինչև 36 մ:
Անվանումն արաբերենից թարգմանաբար նշանակում է *Մեծահոգի հայր*:

ԿԱՐՄԻՐ ԾՈՎ - արաբերեն ـــــــ

Աֆրիկայի միջև տեկտոնական իջվածքում տեղակայված Հնդկական օվկիանոսի ներքին ծով: Սուեզի ջրանցքով հաղորդակցվում է Միջերկրական ծովի, իսկ **Բաբ էլ Մանդեբ** նեղուցով՝ **Արաբական** ծովի հետ: Համաշխահրային օվկիանոսի մաս կազմող ամենաաղի ծովն է և միակն աշխարհում, որի մեջ չի թափվում ոչ մի գետ: Ափերը քիչ մասնատված են: Ողողում է Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի, Սուդանի, Եմենի, Ջիբութիի, Էրիթրեայի, Հորդանանի և Իսրայելի ափերը: Խոշոր կղզիներն են՝ Տիրան, Քամարան և մի շարք կղզեխմբեր՝ Դահլակ, Ֆարասան, Սուակին, Հանիշ և այլն: Խոշոր ծոցերն են՝ Սուեզի և **Աքաբայի**: Մակերեսը՝ 475 545 կմ^2: Երկարությունը՝ 2 250 կմ, լայնությունը՝ 355 կմ: Ծավալը՝ 233 017 կմ^3: Միջին խորությունը՝ 490 մ, առավելագույնը՝ 3 040 մ (կենտրոնական մասում):
Հավանաբար անվանումը սեմիթական հիմյարիթ ժողովրդի «հմր» անվան սխալ ընթերցանության արդյունք է, որն արաբերեն կարդացվել է որպես لأحمر ահմար *կարմիր*:
Անվանումը նաև կապում են որոշ ժողովուրդների առասպելական ավանդազրույցներում ընդունված երկրի կողմերի գունային երանգավորման հետ, որտեղ կարմիր գույնը նշանակում է ծովի հարավային մասում գտնվելը:
Մեկ այլ վարկածի համաձայն ծովը ստացել է իր անվանումը Trichodesmium erythraeum տեսակի ջրիմուռների սեզոնային ծաղկման հետևանքով:

ԿԱՐՋԻԱՆԳ - չինարեն 卡热疆峰 Հա ռյո ծյան ֆընն. բազմագագաթ լեռնազանգված կենտրոնական **Հիմալայներում,** Տիբեթում, Չինաստանի և Բուտանի սահմանամերձ գոտում: Քուլա Քանգրի Արևելյան լեռնագագաթից 2,97 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի հիմնական գագաթներն են՝ Կարջիանգ 7 221 մ, Կարջիանգ Հյուսիսային 7 196 մ, Կարջիանգ II (Կենտրոնական) 7 045 մ, Կարջիանգ III (Տապտոլ Քանգրի) 6 820 մ և այլն: Կան սառցադաշտեր: Հարաբերական բարձրությունը՝ 895 մ:
Հայտնի է նաև Կարջիանգ I կամ Կարջիանգ Հարավային անուններով:

ԿԵՐԻՆՉԻ - ինդոնեզերեն Gunung Kerinci. գործող հրաբուխ **Սումատրա** կղզու կենտրոնական մասի արևմուտքում՝ **Բարիսան** լեռնաշղթայում: Ինդոնեզիայի ամենաբարձր հրաբուխը: Խոշոր ժայթքումներ են տեղի ունեցել 2004 և 2009 թթ-ին, վերջինը՝ 2013 թ. հունիսի 2-ին: Լեռան լանջերից են սկիզբ առնում Ջուջուհան, Տեբո, Բանկո, Կատչիկ, Տիմբուլուն և այլ գետեր: Հրաբխի արևելյան մասում է գտնվում Գունունգտուջուհ լիճը, իսկ հարավ-արևելքում՝ Բենտո շամբը: Բարձրությունը ծովի մակարդակից 3 805 մ: Խառնարանի տրամագիծը՝ 600 մ, խորությունը՝ 400 մ:
Լեռը հայտնի է նաև Պունկակ Ինդրապուրա, Գադանգ, Կեռինչի, Կորինչիա անուններով:
Մեծ հավանականությամբ Կերինչի անվանումն առաջացել է Strobilanthes kunthianus տեսակի բույսի՝ թամիլերեն *կուրինչի* անունից: Թամիլների երկիրը առաջներում բաժանված էր չորս մասի, որտեղ ամեն մասը անվանվել էր որևէ տեղական բույսի անվամբ: Բարձրավայրերը, երկրի բարձրադիր մասերը բնորոշող բույսը կուրինչին է, որի թամիլերեն անվանումը, նաև նշանակում է *բարձրավայր*:

ԿԶԸԼԿՈՒՄ - ուզբեկերեն Qizilqum, ղազախերեն Qızılqum / Қызылқұм. ավազե անապատ **Թուրանի ցածրավայրում**, **Ամուդարյայի** և **Սիրդարյայի** միջագետքում, Ուզբեկստանում, Ղազախստանում ու մասամբ Թուրքմենստանում: Հյուսիս-արևմուտքից եզերված է Արալյան ծովով, հյուսիս-արևելքից՝ **Սիրդարյա** գետով, արևելքից՝ **Տյան Շան** և Պամիրա-Ալայ լեռնաբազուկներով, հարավ-արևմուտքում՝ **Ամուդարյա** գետով: Անապատն իրենից ներկայացնում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք թեքություն ունեցող հարթավայր: Մակերեսը՝ 300 000 կմ^2: Երկարությունը՝ 480 կմ, լայնությունը՝ 390 կմ:
Անվանումը թյուրքերենից բառացի թարգմանվում է *Կարմիր ավազներ*:

ԿԻԼԻԿՅԱՆ ԾՈՎ - Անվանումը ստացել է Կիլիկիա երկրամասից:
Երբեմն այդպես են կոչում հարավից Կիպրոս կղզով եզերված Միջերկրական ծովի ծայր հյուսիսարևելյան մասը:

ԿԻՐԱԹ ՉՈՒԼԻ - հինդի कीरात चुली / त बू पवरत Կիրատ Չուլի / Տըմբու պարվաթ, նեպալերեն कराट की चोली Կարատ կի Չուլի Կաչ. լեռնագագաթ **Հիմալայների** կենտրոնական մասում, Նեպալի ու Հնդկաստանի սահմանագլխին: **Կանչենջագա** լեռից 10,38 կմ հյուսիս-արևելք հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 365 մ, հարաբերականը՝ 1 168 մ:
Լեռը հայտնի է նաև Թենթ Պիկ անվամբ:
Կիրաթ Չուլի անվանումը լիմբու լեզվից թարգմանաբար նշանակում է *Աստվածուհու սրածայր գագաթ*՝ լեռը համարվում է Յումա Սամանգ աստվածուհու կացարանը:

ԿՀԱՐՏԱՊՀՈՒ - բազմագագաթ լեռնազանգված **Հիմալայների** կենտրոնական մասում՝ **Ջոմոլունգմայից** հյուսիս-արևելք, Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայում: Տեղակայված է Տիբեթում՝ Կանշունգ հովտի հյուսիսային մասում, հարավից եզերված է **Ջոմոլունգմա**, **Լհոցզե**, **Չոմո Լոնզո, Մակալու** լեռնագագաթներով: Չանգցե լեռից 7,4 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի հիմնական գագաթներն են՝ Կհարտապհու 7 213 մ, Կհարտապհու Արևմտյան 7 018 մ և այլն: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Հարաբերական բարձրությունը՝ 679 մ:
Հայտնի է նաև Քարդապու անվամբ: Անվանումը ստացել է *Կհարտա* հովտից:

ԿՅՈՒՍՅՈՒ - ճապոներեն 九州 Կյուսյու. **Ճապոնական կղզիների** մեծությամբ 3-րդ կղզին: Արևելքից ողողվում է Խաղաղ օվկիանոսով, հյուսիս-արևելքից՝ **Ներքին Ճապոնական** և արևմուտքից՝ **Արևելաչինական** ծովերով: Սիմոնոսեկիի նեղուցով անջատված է **Հոնսյու**, Բունգո նեղուցով՝ **Սիկոկու** կղզիներից: Ափերը, բացառությամբ արևելյանի, խիստ մասնատված են:Մակերեսը լեռնոտ է: Հյուսիս-արևմուտքում գերակշռում են ցածրադիր լեռներ և բլուրներ, հարավ-արևելքում՝ միջին բարձրության լեռներ: Այստեղ են տեղակայված Ասո, Կիրիսիմա, Սակուրաձիմա և այլ գործող հրաբուխներ: Խոշոր գետերն են՝ Տիկուգո, Միդորի, Սենդայ և այլն:

Մակերեսը՝ 36 782,37 կմ^2: Ափի երկարությունը՝ 3 888 կմ: Բարձր կետը՝ Նակադակե (Կյուձյո) հրաբուխ (1 791 մ):
Անվանումն առաջացել է ճապոներեն 九 կյու *նոր* և 州 սյու *երկիր*, *նահանգ* բառերի միացումից՝ *Նոր երկիր*:

ԿՈԼԻՄԱ - ռուսերեն Колыма, յակուտերեն Халыма, էվեներեն Кулу. գետ Ասիայի հյուսիս-արևելքում Ռուսասատանի Դաշնության,Սախայի Հանրապետությունում և Մագադանի մարզում: Կազմավորվում է **Կոլիմայի** բարձրավանդակի՝ Խալխանի լեռնաշղթայից սկիզբ առնող Կուլու և Այան Յուրյախ գետերի միախառնումից և հոսելով բարձրավանդակով, անցնում Կոլիմայի դաշտավայր ու առաջացնելով 3000 կմ^2 մակերեսով դելտա թափվում **Արևելասիբիրական** ծովի՝ Կոլիմայի ծոցը: Վտակներն են ձախից՝ Օժոգինա, Տասկան, Սեյմչան, Պոպովկա, Յասաչնայա, Զիրյանկա, Սեդեդեմա, աջից՝ Օմոլոն, Սրեդնիկան, Բախապչա, Բույունդա, Բալիգիչան, Սուգոյ, Կորկոդոն, Կամենկա, Բերյոզովկա, Անյու: Երկարությունը՝ 2 129 կմ: Ավազանը՝ 643 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 3 800 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 543մ:
Ենթադրվում է, որ Կոլիմա անվանումն առաջացել է յակուտերեն халыма *հողածածկ կոնաձև հյուղակ* բառից: Հնում այդպիսի կացարանները տարածված էին Հյուսիսի ձկնորսների մոտ:

ԿՈԼԻՄԱՅԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - ռուսերեն Колымское нагорье. լեռնաշխարհ Հյուսիսարևելյան Ասիայում՝ Ռուսասատանի Դաշնությունում, մեծամասամբ Մագադանի մարզում: Արևմուտքից՝ Օլա ու Բույունդա գետերի ակունքներից, ձգվում է արևելյան և հյուսիսարևելյան ուղղությամբ, ապա իրարից անջատելով Կոլիմա գետի ավազանը Խաղաղ օվկիանոսի ավազանի գետերից, հասնում մինչև Փոքր Անյույ գետի հովիտը ու **Անադիր** գետի ակունքները: Բարձրավանդակը կազմված է տեկտոնական իջվածքներով իրարից անջատված միջին բարձրության լեռնաշղթաներից ու զանգվածներից՝ Մայմանջայի, Կորկոդոնի, Կեդոնի լեռնաշղթաներ, Օլայի սարահարթ, Սեյմչանա-Բույունդայի, Օմսուկչանի իջվածքներ, Վերին Կեդոնյա գոգավորություն և այլն: Բարձրավանդակից են սկիզբ առնում՝ Օմոլոն, Կորկոդոն, Օլոյ, Մեծ Յարխոդոն, Շամանիխա և այլ գետեր: Երկարությունը՝ 1 300 կմ: Բարձր գագաթը՝ Օմսուկչանի լեռնաշղթայում 1 962 մ (անանուն):
Հայտնի է նաև Գիդան անունով:
Անվանումը ստացել է *Կոլիմա* գետից:

ԿՈՄՍՈՄՈԼԵՑ - ռուսերեն Комсомолец. **Հյուսիսային երկիր** կղզեխմբի ամենահյուսիսային կղզին, **Կարայի** և **Լապտևների** ծովերի միջև: Կարմիր Բանակի նեղուցով անջատված է **Հոկտեմբերյան Հեղափոխության**, իսկ Յունիյ նեղուցով՝ Պիոներ կղզիներից: Կղզու տարածքի շուրջ 65 %-ը ծածկված է սառցադաշտերով, մնացած մասը լերկ է և բուսականությունից զուրկ: Մակերեսը՝ 9 006 կմ^2: Երկարությունը՝ 120 կմ, լայնությունը՝ 75 կմ: Բարձր կետը՝ 781 մ (Գիտությունների Ակադեմիայի սառցադաշտ):
Կղզին անվանվել է Գ. Ուշակովի և Ն. Ուրվանցևի 1930-32 թթ. արշավախմբի կոմերիտականների կողմից:

ԿՈՆԳՈՒՐ - ույղուրերեն وۇقاغ رگۈ Կոնգուր Տաղ, չինարեն 公格尔峰 Կոնգըէր Ֆըն, մոնղոլերեն Хонгор Таг. լեռնազանգված **Պամիրի** Կոնգուրմուզտաղ լեռներում, Չինաստանում: Տեղակայված է Մուզտաղ Աթա լեռից հյուսիս և Կարակյոլ լճից հյուսիս-արևելք: Լեռան գագաթը սառցապատ է, հյուսիսային լանջը սնում է Կարայլյակ սառցադաշտի կենտրոնական և արևելյան ճյուղերը, հարավային լանջից իջնում է Չիմգեն սառցադաշտի կենտրոնական ճյուղը: Լանջերը հիմնականում լերկ են, միայն ցածրադիր մասերում տարածվում է թփուտային բուսականությունը: Բարձրությունը ծովի մակարդակից 7 649 մ (ըստ չինական աղբյուրների՝ 7 719 մ): Հարաբերական բարձրությունը՝ 3 585 մ:
Կոնգուր Տաղ անվանումը ունի ղըրղըզերեն ծագում և թարգմանաբար նշանակում է *Դարչնագույն լեռ*:

ԿՈՏԵԼՆԻ - ռուսերեն Котельный, յակուտերեն **Олгуйдаах арыы**. **Նորսիբիրական** կղզեխմբի խոշորագույն կղզին: Կղզու արևմտյան մասը Բունգեի երկրի միջոցով միացված է Ֆադդեևսկի թերակղզուն և կազմում է մեկ ընդհանուր զանգված: Արևմուտքից ողողվում է **Լապտևների**, իսկ հյուսիսից, արևելքից և հարավից՝ **Արևելասիբիրական** ծովերով: **Նոր Սիբիր** կղզուց բաժանված է Բլագովեշչենսկի, Լյախովի Փոքր կղզուց՝ Սաննիկովի և Բելկովսկի կղզուց՝ Զարյա նեղուցներով: Ափերը մասնատված են, որով էլ բացատրվում է բազմաթիվ ծոցերի, խորշերի և ծովալճակների առկայությունը՝ Դուռնայա, Ներպալախ, Յակով Սմիրնիցկու, Բոլշայա և այլն: Խոշոր գետերն են՝ Բալիկտախը, Կրեստովայան, Սաննիկովին, Ռեշետնիկովին: Խոշոր լիճն է՝ Եվսեկյու Կյուել: Մակերեսը՝ 23 200 կմ^2: Երկարությունը՝ 240 կմ, լայնությունը՝ մինչև 165 կմ: Բարձր կետը՝ Մալակատին Թաս լեռ (361 մ):
Կղզին 1773 թ. հայտնաբերվել է ռուս արդյունաբերող և հետազոտող Ի. Լյախովի կողմից: Նրա արշավախմբի մասնակիցներից մեկն այնտեղ մոռանում է պղնձյա կաթսան՝ котёл, որն երկու տարի անց գտնում է կղզու հատակագիծը կազմող տեղագիր Ս. Խվոյնովն ու անվանում *Կոտելնի*:

ԿՈՐԵԱԿԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ - կորեերեն 한반도 Հանբանդո. թերակղզի Ասիայի արևելյան մասում, արևելքում՝ **Ճապոնական** ծովի, հարավում՝ Կորեական ու Չեջու նեղուցների և արևմուտքում՝ **Դեղին** ծովի միջև: Արևելյան ափերը մեծամասամբ լեռնոտ են, արևմտյանն ու հարավայինը՝ ցածրադիր և մասնատված: Խոշոր գետերն են՝ Տյումեն, Յալու, Չհոնչհոն, Տեդոն, Կիմ, Նակթոն և այլն: Մակերեսը՝ 227 943,05 կմ^2: Երկարությունը՝ մոտ 1 000 կմ, լայնությունը՝ մինչև 200 կմ: Բարձր կետը՝ Պեկտուսան լեռ (2 744 մ):
Անվանումը ստացել է Կորեա երկրից:

ԿՈՐԵԱԿԱՆ ՆԵՂՈՒՑ - կորեերեն 대한해협 թեհանեյոփ, ճապոներեն 朝鮮海峡 Ճյոսեն կայկյո. նեղուց **Կորեական** թերակղզու և Ճապոնական՝ Իկի, **Կյուսյու** և **Հոկայդո** կղզիների միջև: Իրար է միացնում **Արևելաչինական** և **Ճապոնական** ծովերը:

Ցուսիմա կղզին բաժանում է նեղուցն երկու անցարանի՝ Արևելյան (Ցուսիմայի նեղուց) և Արևմտյան: Երկարությունը՝ 324 կմ, լայնությունը՝ 180 կմ: Նվազագույն խորությունը՝ 73 մ:
Անվանումը ստացել է *Կորեա* երկրից:

ԿՈՐՅԱԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - ռուսերեն Корякское нагорье. լեռնաշխարհ Հեռավոր Արևելքում՝ Ռուսաստանի Դաշնության, Կամչատկայի երկրամասում և Չուկոտյան ինքնավար շրջանում: Հարավ-արևելքից բարձրավանդակը ողողվում է **Բերինգի ծովով**, հարավ-արևմուտքից **Օխոտի ծովի**՝ Պենժինայի, իսկ հյուսիսարևմուտքից՝ **Անադիրի** ծոցերով: Հյուսիս-արևմուտքում եզերված է Պենժինա-Անադիրի իջվածքով, հյուսիսում՝ **Անադիր** գետի հովտով: **Կորյակական բարձրավանդակը** կազմված է միջին բարձրության մի շարք լեռնաշղթաներից և բլրաշարերից՝ Պախաչայի, Վետվեյայի, Օլյուտորայի, Նեպրոխոդիմիյի, Կոյվեռլանի, Պիլգինայի, Հարավ Մանյան և այլն, որոնց լանջերի մի մասը ենթարկված է սառցապատման, որի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 205 կմ^2: Բարձրվանդակի լեռներից են սկիզբ առնում բազմաթիվ գետեր՝ Մայն, Վելիկայա, Ապուկա, Պախաչա, Վիվենկա, Ուկելայտ և այլն: Մակերեսը՝ 500 000 կմ^2: Երկարությունը՝ 880-1 200 կմ, լայնությունը՝ 80-270 կմ: Միջին բարձրությունը՝ 600-1 800 մ: Բարձր գագաթը՝ Լեդյանայա լեռ (2 562 մ):
Անվանումը ստացել է այստեղ բնակվող *կորյակ* ժողովրդի անունից:

ԿՐԱԿԱՏԱՈՒ - ճավայերեն Kerakatau, ինդոնեզերեն Gunung Krakatau. համանուն կղզում տեղակայված գործող հրաբուխ Ինդոնեզիայում, **Ճավա** և **Սումատրա** կղզիների միջև, **Զոնդյան** նեղուցում: Տեղակայված է համանուն կղզում: Հայտնի է, որ 1883 թ. մայիսի 20-ից սկսած և նույն թվականի օգոստոսի 26 - 27-ին մի շարք հզոր ժայթքումների ավարտման արդյունքում, Կրակատաու կղզու մեծ մասը ոչնչացվել է և նրանից մնացել շուրջ 10,5 կմ^2 մակերես ունեցող երեք փոքր կղզիներ՝ Ռակատա, Սերգուն, Ռակատա Քեչիլ: Ոչնչացված հրաբխի տեղում ծնվեց նոր հրաբուխ՝ Անակ Կրակատաու անվամբ, որը շարունակելով աճել այժմ հասել է 813 մ բարձրության:
Տեղական Kerakatau անվանումն առաջացել է ճավայերեն rekatak *ճարճատել* բառից:

ԿՐԱՎԱՆ - քմերեն ᨿᨾᩁᩣᨾᩣᨶ չ ո ւոր պի նոմ կր ավան, թա յերեն ทิวเขาบรรทัด Թի ու քա ու Բնտհաթ. լեռներ Կամբոջայի արևմուտքում և Թայլանդի՝ հարավարևելքում: Կրավանը ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ Թայլանդի ծոցի ափի երկայնքով: Հարավ-արևելքում լեռները վերածվում են Դամրեյ լեռնաշղթայի: Արևմուտքից Կրավանը եզերում է Կամբոջական հարթավայրը: Երկարությունը՝ 320 կմ, լայնությունը՝ 70 կմ: Բարձր գագաթը՝ Օրալ լեռ (1 813 մ):
Հայտնի է նաև Հիլի լեռներ անվամբ:
Անվանումն առաջացել է այս լեռներում լայն տարածում ունեցող Դարչնային հասմիկի Artabotrys odoratissimus տեսակի տեղական *Կրավան* անունից:

ԿՈՒՄԲՀԱԿԱՌՆԱ - հինդի जङ्घा / कुम्भकर्ण Ջաննու/Կումբկարը, լիմբու फोक-टाङ्गुङमा Ֆոկ-տանլունգմա, նեպալերեն कुम्भकर्ण Կումբհակառնա. լեռնագագաթ **Հիմալայներում՝ Կանչենջանգայից** արևմուտք, Նեպալում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 710 մ, հարաբերականը՝ 1 035 մ:
Հայտնի է նաև Ջաննու և Ֆոկտանլունգմա անվամբ:
Կումբհակառնա անվանումը ստացել է Ռամայանայի (հին հնդկական պոեմ-էպոս) հերոսներից մեկի անունից, ով եղել է հրեշների արքա *հսկա չար-ոգի*:

ԿՈՒՆԱՇԻՐԻ (ՆԵՄՈՒՐՈ) ՆԵՂՈՒՑ - ճապոներեն 根室海峡 Նեմուրո կայկը, ռուսերեն Кунаширский пролив. **Հոկայդո** և Կունաշիր կղզիները իրարից բաժանող Խաղաղ օվկիանոսի նեղուց: Իրար է միացնում **Օխոտի** ծովն ու Դավաճանության նեղուցը: Ափերը հիմնականում բարձրադիր են: Նեղուցի ափերին առանձնանում են Ձնամենկա, Ալյոխինի, Իվանովսկի հրվանդանները: Նեղուցն են թափվում Վալենտինայի, Ասին, Ալյոխինի, Օզյոռնայա, Կրիվոնոժկա, Տյոմնայա, Տյուրյույ, Կոտանուկե, Ռիկուսիբեցու և այլ գետեր: Երկարությունը՝ 74 կմ, լայնությունը՝ 24-43 կմ: Առավելագույն խորությունը՝ 2 500 մ:
Անվանումը ստացել է *Կունաշիր* կղզուց:
Նեղուցի ճապոներեն 根室 Նեմուրո անվանումը, հավանաբար, առաջացել է այներեն նիմորո *ծառուտ* բառից:

ԿՈՒՆԼՈՒՆ - չինարեն 昆仑山脉 /崑崙山 Կունլուն շանմայ / Կունլուն շան, տիբեթերեն ཁུན་ལུན་རི་རྒྱུད། Կհու նուռիռգյուդ, ույղուրերեն كۇنلۇن تاغ سىستېمىسى. լեռնահամակարգ Ասիայում՝ Չինաստանում: Բաժանվում է Արևմտյան (Պամիրից մինչև Կերիա գետի հովիտը) և Արևելյան Կունլունների: Արևմտյան Կունլունը կազմված է միջլեռնային նեղ հովիտներով իրարից բաժանված Կարանգուտաղ, Մուզտաղ և այլ զուգահեռ լեռնաշղթաներից: Արևելյան Կունլունն ընդգրկում է Արկատաղ, Կուկուշիլի, Բոկալիկտաղ լեռնաշղթաները: Լեռներից սկիզբ են առնում՝ Սանջու, Յուրունկախ, Յավատոնգուզ, Անդիր, Կարամիրան, Նիյա և այլ գետեր: Մակերեսը՝ 623 267 կմ^2: Երկարությունը՝ մոտ 2 500 կմ, լայնությունը՝ 130-684 կմ: Բարձր գագաթը՝ Մուզ Տաղ լեռ (7 723 մ):
Լեռների չինարեն 昆仑 /崑崙 Կունլուն անվանումը բառացի նշանակում է *Սոխի լեռներ*՝ նկատի ունենալով լեռների լանջերին աճող վայրի սոխի առատությունը:

ԿՈՒՆՅԱՆԳ ԿՀԻՇ - ուրդու کنجنگ چش. եռագագաթ լեռնազանգված **Կարակորումում**, Հիսպար Մուզտաղ լեռներում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: **Դաստեգիիլ Սարից** 13,49 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Կունյանգ Կհիշ Գլխավոր 7 852 մ, Կունյանգ Կհիշ Հյուսիսային 7 108 մ և Պումարի Կհիշ (Կունյանգ Կհիշ Արևելյան) 7 492 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 852 մ, հարաբերականը՝ 1 765 մ:
Հավանաբար Կունյանգ Կհիշ անվանումը թարգմանաբար նշանակում է *Ծպտյալ գագաթ*:

Ըստ ճապոնական լեռնագնաց Կաձուո Տոբիտայի, լեռան անվանումը տեղացիների լեզվով նշանակում է *Անկյունի պիկ*:

ԿՈՒՐ - վրացերեն მტკვარი Մտկվարի, թուրքերեն Kura, ադրբեջաներեն Kür, հին հունարեն Κύρος, հին պարսկերեն Կուրուշ. գետ **Հայկական լեռնաշխարհում**, Թուրքիայում, Վրաստանում ևԱդրբեջանում: Սկիզբ է առնում Կարմիր Փորակ լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2 740 մ բարձրությունից (Կարսի մարզի Արդահանի շրջանի Գյոլեի տեղամասում), անցնում Կող ճահճացած գոգավորությունը, հոսում Վրաստանի ու Ադրբեջանի տարածքով, և առաջացնելով շուրջ 100 կմ^2 մակերեսով դելտա, թափվում **Կասպից** ծովը: Վտակներն են ձախից՝ Ալազան, Մեծ Լիախվի, Քսանի, Վերե, աջից՝ **Արաքս**, Թարթառ, Շամքոր, Խաչեն, Աղստև, Խրամ, Արագվի: Երկարությունը՝ 1 515 կմ: Ավազանը՝ 188 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 575 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 2 740 մ, գետաբերանինը՝ -28 մ:
Գետի անվան ստուգաբանությունը ունի մի շարք բացատրություններ՝ այն կապվում է նրա ավազանում բնակվող մի շարք ազգերի լեզուներում հանդիպող կուր *ջրամբար*, *գետ* բառի հետ:
Գետի վրացերեն მტკვარი Մտկվարի անվանումը բառացի նշանակում է *ընտիր ջուր*:
Կուր անվան ստուգաբանությունը Սալմաստի հայերեն բարբառի տարբերակում նշանակում է *կուռ ջրի ավազան*:

ԿՈՒՐԻԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - ռուսերեն Курильские острова, ճապոներեն 千島列島 Ցիսիմա ռետտո. կղզիների շղթա **Կամչատկա** թերակղզու և **Հոկայդո** կղզու միջև: Ուռուցիկ աղեղով իրարից է անջատում **Օխոտի** ծովը Խաղաղ օվկիանոսից: Ընդգրկում է 56 կղզի՝ **Իտուրուպ**, Կունաշիր, Ուրուպ, Շիկոտան, Սիմուշիր, **Պարամուշիր** և այլն: Կղզեխմբում կան շուրջ 68 հրաբուխ, որոնցից 36 գործող են՝ Կարպինսկու (1 345 մ), Չիկուրաչկի (1 816 մ), Կրենիցինի (1 324 մ) և այլն: Մակերեսը՝ 10 355,61 կմ^2, երկարությունը՝ շուրջ 1 200 կմ: Կղզեխմբի բարձր կետն է համարվում՝ Ալաիդ հրաբուխը 2 339 մ (Ատլասովա կղզում):
Անվան հիմքում ընկած է այնու ժողովրդի հնում օգտագործված クリ *կուրի* ինքնանունը:

Հ

ՀԱԼՄԱՀԵՐԱ - ինդոնեզերեն Halmahera, մալայերեն Halmahera. **Մոլուքյան** կղզիների խոշորագույն կղզին: Գործող հրաբուխներն են՝ Դուկոնո, Իբու և այլն: Խոշոր լճերն են՝ Պական, Գոլեան: Բարձր կետը՝ Գամկոնորա հրաբուխ (1 635 մ): Մակերեսը՝ 17 780 կմ^2:
Ենթադրվում է, որ Հալմահերա անվանումը, որը մալայերենից թարգմանաբար նշանակում է *Մեծ երկիր*, տվել են շրջակայքի մանր կղզիների բնակիչները:

ՀԱԼՄԱՀԵՐԱ ԾՈՎ - ինդոնեզերեն Laut Halmahera. Խաղաղ օվկիանոսի միջկղզային ծով Ինդոնեզիայում, **Մոլուքյան** կղզիների և Նոր Գվինեա կղզու միջև: Արևմուտքում սահմանափակված է **Հալմահերա**, հյուսիսում և հյուսիսարևելքում՝ **Վայգեո** կղզիներով, արևելքում՝ Չենդրավասիխ թերակղզով (Նոր Գվինեա), հարավում՝ Միսոոլ կղզով և հարավարևմուտքում՝ Օբի կղզիներով: Մակերեսը՝ 94 770 կմ^2: Երկարությունը՝ 290 կմ, լայնությունը՝ 325 կմ: Ծավալը՝ 70 793 կմ^3: Միջին խորությունը՝ 747 մ, առավելագույնը՝ 2 039 մ (հարավային մասում): Անվանումը ստացել է *Հալմահերա* կղզուց:

ՀԱԼՈՆԳ - վիետնամերեն Vịnh Hạ Long. ծովախորշ Վիետնամի հյուսիսային մասում, **Հարավչինական** ծովի **Բակբո** ծոցի հյուսիսարևմտյան մասը: Ծովախորշն իր մեջ է ներառում 1 969 կղզի՝ Կատբա, Տուանչաո, Չանվոյ, Վունգդայ և այլն: Մակերեսը՝ 1 553 կմ^2: Ծավալը՝ 9 318 կմ^3: Ափի երկարությունը՝ 120 կմ: Միջին խորությունը՝ 6 մ, առավելագույնը՝ 26 մ (կենտրոնական մասում):
Ծովախորշի վիետնամերեն Vịnh Hạ Long անվանումը բառացի նշանակում է *Սուզված վիշապի ծոց*:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊԻԿ - ղըրղըզերեն Жеңиш чокусу /جڭىش چوڭسُو, ույղուրերեն تیرومو Թյոմյուր, չինարեն 托木尔峰 Թու մո էր ֆըն, ղազախերեն Жеңіс шыңы. Լեռնագագաթ **Տյան Շանում**, Կակշաալ Թոո լեռնաշղթայում, Ղըրղըզստանի ու Չինաստանի սահմանագլխին: **Կոնգուր** լեռից 559 կմ հեռավորությամբ: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 439 մ, հարաբերականը՝ 4 148 մ:
Անվանումը ստացել է Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի պատվին:
Գագաթի ղըրղըզերեն Жеңиш чокусу անվանումը բառացի նշանակում է *Հաղթանակի Պիկ*:
Լեռան չինարեն 托木尔峰 Թու մո էր ֆըն անվանումը, իրենից ներկայացնում է ույղուրերեն تیرومو Թյոմյուր *երկաթ* և չինարենի 峰 ֆըն *պիկ* բառերի համակցությունը՝ *Երկաթե պիկ*:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ - վրացերեն სომხეთის მთიანეთი սոմխեթիս մթիանեթի, ադրբեջաներեն Ermən yaylası, թուրքերեն Ermeni platosu, պարսկերեն ارمنستان کوهستانی, արաբերեն الأرمنية المرتفعات էլ Մուրտաֆաատու էլ Արմանիյատու. բարձրավանդակ Առաջավոր Ասիայում, Հայաստանի Հանրապետությունում, Արցախում, Վրաստանում, Ադրբեջանում, Թուրքիայում, Իրանում և Նախիջևանում: Միջակա դիրք է գրավում արևմուտքում՝ **Փոքրասիական**, իսկ հարավարևելքում՝ **Իրանական բարձրավանդակների** միջև: Հյուսիսից եզերված է Սև ծովի հարավային ափերով, Արևելապոնտական ու Մսխեթի լեռնաշղթաներով, հարավից՝ Հայկական (Արևելյան Տավրոսի) և Կորդված լեռների հարավային ստորոտներով, իսկ արևմուտքից՝ Անտիտավրոսի լեռնաշղթաներով: Լեռնաշխարհի կենտրոնական մասը զբաղեցնում է **Հայկական** հրաբխային բարձրավանդակը, որն ունի շուրջ 100

000 կմ^2 մակերես: Այստեղ են գտնվում **Վանա**, **Ուրմիո**, **Սևանա**, Գայլատու, Փարվանա, Ծովակ Հյուսիսո (Չըլդըր) և այլ լճեր: Բարձրավանդակի լեռնաշղթաներից են սկիզբ առնում՝ **Եփրատ, Տիգրիս**, **Արածանի**, **Արաքս**, **Կուր**, Գայլգետ, Ճորոխ, Մեղրագետ, Բերկրի և այլ բազմաթիվ գետեր: Մակերեսը՝ 400 000 կմ^2: Միջին բարձրությունը՝ 1 700 մ: Բարձր գագաթը՝ **Արարատ** լեռ (5 165 մ):
Լեռնաշխարհն իր անվանումը ստացել է այն պարզ պատճառով, որ նրա սահմաններում է գտնվել հայ ժողովրդի ձևավորման ու տարաբնակեցման պատմական մարզը:

ՀԱՅՆԱՆ - չինարեն 海南 Հայնան. կղզի Չինաստանի հարավում: Արևելքից և հարավից ողողվում է **Հարավչինական** ծովով, արևմուտքից՝ **Բակբո** ծոցով: Հյուսիսից Հայնանի նեղուցով անջատված է մայրցամաքից: Խոշոր գետերն են՝ Չանգիուա, Չժանհուա, Նանդու, Վանցյուան և այլն: Մակերեսը՝ 33 920 կմ^2: Երկարությունը՝ 155 կմ, լայնությունը՝ 169 կմ: Ափի երկարությունը՝ 1 528 կմ: Բարձր կետը՝ Վուժի լեռ (1 867 մ):
Անվանումն առաջացել է չինարեն 海 հայ *ծով* և 南 նան *հարավ* բառերի միացումից՝ *Ծովից հարավ*:

ՀԱՋԱՐ - արաբերեն الحجر جبـال Ջիբալ ալ Հաջար. լեռնահամակարգ **Արաբական թերակղզու** հարավարևելյան մասում, Օմանում և Արաբական Միացյալ Էմիրություններում: Իր մեջ է ներառում արևմուտքում՝ Էլ Հաջար էլ Ղարբի, կենտրոնում՝ Էլ Ախդար և արևելքում՝ Էլ Հաջար էշ Շարքի լեռները: Լեռներից՝ առավելապես Էլ Ախդարից են սկիզբ առնում բազմաթիվ ժամանակավոր ջրահոսքեր՝ Վադի Սամաիլ, Վադի Մաբրահ, Վադի Ֆար, Վադի Ալֆայն: Էլ Ախդար լեռներում են գտնվում լեռնահամակարգի բարձր՝ Շամ (3 018մ) և Կաուր (2 719 մ) լեռնագագաթները: Երկարությունը՝ 450 կմ:
Լեռների արաբերեն الحجر جبـال Ջիբալ էլ Հաջար անվանումը թարգմանաբար նշանակում է *Քարե լեռներ*:

ՀԱՐԱՄՈՇ ՊԻԿ - ուրդու ہرامش چوٹی. երկգագաթանի լեռնազանգված **Կարակորումի** հյուսիսարևմտյան մասում, Ռաքափոշի Հարամոշ լեռներում, Գիլգիթ Բալտիստանում, Պակիստանում: **Մալուբիթինգ** լեռից 18,04 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Հարամոշ Պիկ 7 397 մ, Հարամոշ Կութվալ Լայլա Պիկ: Հարաբերական բարձրությունը՝ 2 277 մ:
Հայտնի է նաև Հարամոշ և Պիկ 58 անուններով:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԷՆԻԼՉԵԿ - ղըրղըզերեն Түштүк Эңилчек мөңгүсү. հովտային սառցադաշտ Ղըրղըզստանում, **Տյան Շանում**, Սարիջազայի ձախ վտակ՝ Էնիլչեկ գետի ակունքը: Իրենից ներկայացնում է 78 մեծ ու փոքր սառցադաշտերի համակարգ: Սկիզբ է առնում 4580 մ-ից և ձգվում մինչև 2800 մ: Երկարությունը՝ 58,9 կմ, լայնությունը՝ 2-3 կմ: Սառցահավաք մակերեսը՝ 567,2 կմ^2: Սառցի միջին հաստությունը՝ 250-350 մ:
Эңилчек անվանումը, ղըրղըզերենից թարգմանաբար նշանակում է *Քարաքոտ*:

ՀԱՐԱՎՉԻՆԱԿԱՆ ԾՈՎ - չինարեն 南海 / 南海 Նանհայ *Հարավային ծով*, վիետնամերեն Biển Đông *Արևելյան ծով*, թայերեն ทะเลจีนใต้ Թալեծինտայ, մալայերեն Laut Cina Selatan, ինդոնեզերեն Laut Cina Selatan / Laut Tiongkok Selatan, տագալերեն Dagat Timog Tsina, պորտուգալերեն Mar da China Meridional, անգլերեն South China Sea. կիսափակ ծով Խաղաղ օվկիանոսի արևմուտքում, Հարավարևելյան Ասիայի ափերի մոտ՝ Հնդկաչինի և **Կալիմանտան**, **Պալավան**, **Լուսոն** ու **Թայվան** կղզիների միջև: Հյուսիսում **Թայվանի** նեղուցով միանում է **Արևելաչինական** ծովին, հյուսիս-արևելքում Բաշի և Լուսոն նեղուցներով՝ Խաղաղ օվկիանոսին, հարավ-արևմուտքում Սինգապուրի նեղուցով՝ Հնդկական օվկիանոսին, հարավում Գելասի և **Կարիմատա** նեղուցներով՝ **Ճավայի** ծովին: Խոշոր կղզիներն են՝ **Հայնան** կղզի, **Սփրաթլի, Պարասելյան** և Պրատաս կղզիները: Խոշոր ծոցերն են՝ **Բակբո** (Տոնկինի) և **Թայլանդական**: Ծովն են թափվում **Մեկոնգ**, Հոնգհա, Ռաջանգ, Պահանգ, Պամպանգա, Պասիկ, Մին և այլ գետեր: Մակերեսը՝ 3 537 289 կմ^2: Երկարությունը՝ 2 480 կմ, լայնությունը՝ 1 160 կմ: Ծավալը՝ 4 287 194 կմ^3: Միջին խորությունը՝ 1 212 մ, առավելագույնը՝ 5 567 մ (**Մինդորո** կղզուց 240 կմ արմ.):
Այդպես է կոչվել, հաշվի առնելով իր դիրքը Չինաստանի նկատմամբ:

ՀԻՄԱԼԱՅՆԵՐ - սանսկրիտ हिमालय Հիմալայա, ասսամերեն হিমালয় Հիմալայա, բենգալերեն হিমালয় পৰ্বতমালা Հիմալայա պարբոտմալա, բհոջպուրի हिमालय Հիմալայա, տիբեթերեն ཧིམ་ལ་ཡ Հիմալայա, հինդի हिमालय Հիմալայա, անգլերեն Himalayas,քաշմիրի ہمالیہ Հիմալայա, նեվարերեն हिमालय Հիմալայա, փենջաբերեն ਹਿਮਾਲਿਆ /ہمالیہ Հիմալիա, ուրդու ہمالیہ سلسلہ کوہ, դոթյալի हिमालय Հիմալայա, չինարեն 喜马拉雅山脉 Սիմալայա շենմայ, բիրմայերեն ဟိမဝန္တာ တောင်တန်း Հիմավանտար տաունգտան. լեռնահամակարգ Կենտրոնական և Հարավային Ասիայի սահմանին՝ Հնդկաստանում, Նեպալում, Չինաստանում ու Բուտանում: Այստեղ են գտնվում աշխարհի 8000 մ բարձրություն ունեցող 14 գագաթներից 10-ը: **Հիմալայները** երեք սանդղավանդներով վեր են խոյանում **Ինդոս-Գանգեսյան հարթավայրի** հյուսիսային մասում, կազմավորելով Սիվալիկ լեռները (Նախահիմալայներ), Փոքր Հիմալայները (Փիր Փանջալ,Դհաուլադհար ու այլ լեռնաշղթաներ) և նրանցից Կատմանդուի, Քաշմիրի ու այլ հովիտներով առանձնացված Մեծ Հիմալայները, որոնք իրենց հերթին բաժանվում են Ասսամի, Նեպալյան, Կումաոնի և Փենջաբյան Հիմալայների: Սառցադաշտերը ծածկում են շուրջ 33 000 կմ^2, իսկ ձյան ծավալը՝ 6 600 կմ^3: Ամենաերկար սառցադաշտերն են՝ Գանգոտրին, Ձեման, Ռոնգբուկը: Հիմալայներից են սկիզբ առնում Հարավային Ասիայի խոշորագույն գետերը՝ **Ինդոսը**, **Գանգեսը**, **Բրահմապուտրան**: Մակերեսը՝ 1 089 133 կմ^2: Երկարությունը՝ 2 400 կմ, լայնությունը՝ 180-350 կմ (առավելագույնը՝ 1 335 կմ): Բարձր գագաթը՝ **Ջոմոլունգմա** լեռ (8 848 մ):
Լեռների անվանումն առաջացել է սանսկրիտերեն हिमालय Հիմալայա *ձյան կացարան* անունից:

ՀԻՄԱԼՉՈՒԼԻ - նեպալերեն हिमालचुली Հիմալչուլի. եռագագաթ լեռ **Հիմալայներում**, Մանսիրի-Հիմալ լեռներում, Նեպալի կենտրոնական մասի հյուսիսում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 893 մ, հարաբերականը՝ 1 633 մ:
Հիմալչուլի անվանումը նեպալերենից թարգմանաբար նշանակում է *Ձնե սրածայր պիկ*:

ՀԻՆԴՈՒԿՈՒՇ - դարի هندوكش, փուշտու هندوکش Հինդուկաշ, ուրդու کوہ سلسلہ ہندوکش, անգլերեն Hindu Kush, պարսկերեն هندوکش. լեռնահամակարգ Կենտրոնական Ասիայում՝ Աֆղանստանում ու Պակիստանում: Հյուսիսարևելքում **Հնդուկուշը** եզերված է **Ամուդարյա** և Փյանջ, արևելքում՝ Չիտրալ գետերի հովիտներով: Հիմնական լեռնաշղթաներն են՝ Բաբան, Պաղման ու բուն **Հինդուկուշը**, որն իր հերթին բաժանված է Սուրհաբ ու Կոկչա գետերի հովիտներով սահմանազատված արևմտյան, կենտրոնական և արևելյան մասերի: Այստեղից են սկիզբ առնում Հիլմենդ, Ֆարահ Ռուդ, Քաբուլ, Մուրղաբ և բազմաթիվ այլ գետեր:Երկարությունը՝ 1 200 կմ, լայնությունը՝ մինչև 240 կմ: Բարձր գագաթը՝ Տիրիչ Միր լեռ (7 708 մ):
Մեծ հավանականությամբ անվան հիմքում ընկած է պարսկերեն Հինդուկոշ *հինդուների դահիճ* բառակապակցությունը:
Մեկ այլ վարկածի համաձայն, անվանումն առաջացել է պարսկերեն هندوکوه հիդուկուհ կամ هند کوه Կուհ է Հինդ *Հնդկական լեռներ* արտահայտությունից:

ՀԻՋԱԶ - արաբերեն الحجاز Ջեբալ էլ Հիջազ. լեռնահամակարգ **Արաբական թերակղզու** արևմտյան մասում, Սաուդյան Արաբիայում: Կազմված է հյուսիս-արևմուտքում բուն Հիջազ, հարավ-արևմուտքում՝ Ասիր լեռնաշղթաներից: Արևմտյան լանջերը զառիվեր են, արևելյանը՝ մեղմաթեք: Երկարությունը՝ շուրջ 1 700 կմ, լայնությունը՝ 40-240 կմ: Բարձր գագաթը՝ Սուդա լեռ (3 678 մ):
Լեռների արաբերեն الحجاز էլ Հիջազ անվանումը բառացի նշանակում է *անջրպետ* , *պատվար* :

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՐԿԻՐ - ռուսերեն Северная Земля. կղզեխումբ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, **Կարայի** և **Լապտևների** ծովերի սահմանագծում, **Թայմիր** թերակղզուց հյուսիս, որից անջատված է **Վիլկիցկու** նեղուցով: Խոշոր կղզիներն են՝ **Հոկտեմբերյան Հեղափոխության**, **Բոլշևիկ**, **Կոմսոմոլեց**, Պիոներ և այլն: Կղզեխմբի տարածքը ծածկված է 20 խոշոր սառցադաշտերով՝ Լենինգրադի, Վավիլովի, Կարպինսկու, Ռուսանովի և այլն: Խոշոր գետերն են՝ Օգյորնայա, Ուշակովի, Տորա, Սկալիստայա և այլն: Խոշոր լճերն են՝ Սպարտակովսկոյե, Սինեյե, Մանյաշչեյե, Ռաստուշչեյե և այլն: Մակերեսը՝ 37 000 կմ^2: Բարձր կետը՝ 965 մ (Հոկտեմբերյան Հեղափոխության կղզում):
Կղզիները 1913 թ. սեպտեմբերի 4-ին հայտնագործել է Բ. Ա. Վիլկիցկու ռուսական ջրագրական արշավախումբը և ի սկզբանե անվանել Թայվայ (արշավախմբի «**Թայ**միր» և «**Վայ**գաչ» սառցահատերի անունների առաջին վանկերից): 1914 թ. հունվարի 10 (23)-ի ծովային նախարարի N14 հրամանով կղզիները ստացան Նիկոլայ II կայսրի երկիր անվանումը: 1926 թ. հունվարի 11-ի ՀԿԳԿ-ի N186 որոշմամբ կղզեխումբը ստացավ *Հյուսիսային երկիր* անվանումը:

ՀՆԴԿԱՉԻՆ - ֆրանսերեն Indochine, բիրմայերեն ইন্দোচীন, թայերեն อินโดจีน, քրմերեն ᨾᨣᨾᨾᨾᨾ, վիետնամերեն Bnn đảo Đłng Dương, մալայերեն Indochina. աշխարհագրական տարածաշրջան Ասիայի հարավարևելքում, այդպես է կոչվում Մյանմայի, Թայլանդի, Լաոսի, Վիետնամի, Կամբոջայի և Մալազիայի տարածքները:
Անվանումն ստեղծվել է ֆրանսիացիների կողմից, Հնդկաստան և Չինաստան անուններից, քանի որ բնիկների մոտ նկատվել են հնդկական և չինական գծերի զուգորդում:

ՀՆԴՍՏԱՆ - հինդի हिन्दुस्तान Հինդուստան, անգլերեն Hindustan, մալայալամ ഹിന്ദുസ്ഥാൻ Հինդուստան, մարատիի हिंदुस्तान Հինդուստանա, օդիա ହିନ୍ଦୁସ୍ତାନ Հինդուստան, փենջաբերեն ਹਿੰਦੁਸਤਾਨ Հինդուստանա, թամիլերեն ஹிந்துஸ்தான் Հինդուստան. թերակղզի Ասիայի հարավում: Արևմուտքից ողողվում է **Արաբական** ծովով, արևելքից՝ **Բենգալյան** ծոցով: Թերակղզու ծայր հարավային կետն է հանդիսանում Կոմորին հրվանդանը: Մակերեսը զբաղեցնում է **Դեկանի** սարահարթը, եզերված **Արևմտյան** և **Արևելյան Գհաթեր** լեռներով, որոնք իրենց հարավային մասում անջատում են սարահարթից Մալաբարյան և Կորոմանդելյան ափերի ցածրավայրերը: Խոշոր գետերն են՝ Նարմադա, Տապտի, Մահանադի, Գոդավարի, Կրիշնա, Կավերի և այլն: Մակերեսը՝ մոտ 2 000 000 կմ^2: Բարձր կետը՝ Անիմուդի լեռ (2 695 մ):
Անվանումն առաջացել է Հնդկաստանին տրված Հինդուստան անունից, որն իր հերթին առաջացել է հին պարսկերեն هندو *հինդու* բառից, որը ծագել է սանսկրիտերեն Ինդոս գետի պատմական सिन्धु Սինդհու անունից, նրան ավելացնելով պահլավերեն -ստան *երկիր* վերջածանցը:

ՀՈԿԱՅԴՈ - ճապոներեն 北海道 Հոկայդո, այներեն アィヌ・モシリ Այնու Մոսիր. **Ճապոնական կղզիների** մեծությամբ 2-րդ կղզին: Հյուսիսարևելյան ափը ողողվում է **Օխոտի**, արևմտյանը՝ **Ճապոնական** ծովերով, արևելյանը՝ Խաղաղ օվկիանոսով: Հարավում՝ Ցուգարու նեղուցով անջատված է **Հոնսյու** կղզուց: Գործող հրաբուխներն են՝ Տոկաչին, Շահին, Կարիբան: Խոշոր գետերն են՝ Իսիկարի, Տոկատի, Սացունայի, Մու, Տեսիո և այլն: Խոշոր լճերն են՝ Մասուն, Կուսշարոն, Նոտորոն, Աբասիրին, Սիկոցուն, Տոյան: Մակերեսը՝ 77 983,9 կմ^2: Ափի երկարությունը՝ 3 066 կմ: Բարձր կետը՝ Ասահի հրաբուխ (2 290,93 մ):
Մինչև 1859 թ. կղզին կոչվում էր Մացումաե՝ ի պատիվ կղզու այն ժամանակվա տիրակալներ Մացումաե տոհմի:
Իսկ մինչև 1868 թ. կղզին կոչվում էր Էձո (վայրի, վայրենի): Հայտնի էր նաև Էձոգասիմա (հյուսիսային օտարականների կղզի) և այլ անուններով:
Ճապոներեն Հոկայդո անվանումը թարգմանաբար նշանակում է *Ճանապարհ դեպի հյուսիսային ծով* (նկատի ունենալով Օխոտի ծովը):

Կղզու այներեն アィヌ・モシリ Այնու Մոսիր անվանումը բառացի նշանակում է *մարդկանցով բնակեցված երկիր*:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿՂԶԻ - ռուսերեն Остров Октябрьской Революции. **Հյուսիսային երկիր** կղզեխմբի ամենամեծ կղզին: Հյուսիսից, արևմուտքից և հարավից ողողվում է **Կարայի**, իսկ արևելքից՝ **Լապտևների** ծովերով: Շոկալսկու նեղուցով անջատված է **Բոլշևիկ**, իսկ Կարմիր Բանակի նեղուցով՝ **Կոմսոմոլեց** և Պիոներ կղզիներից: Ափերը խիստ մասնատված են: Այստեղ են գտնվում Կարպինսկու, Ռուսանովի, Համալսարանական, Վավիլովի, Ալբանովի, Դեժնյովի և Մալյուտկա խոշոր սառցադաշտերը: Բարձր լեռներն են՝ Կրեպոստ, Միրա, Չուդնայա, Բազառնայա և այլն: Խոշոր թերակղզիներն են՝ Գուսինի, Ժիլոյ, Փարիզյան Կոմունայի և այլն: Խոշոր ծոցերն ու խորշերն են՝ Մատուսևիչի ֆիորդը, Պյատնիստայան, Մոստովայան, Բազովայան: Խոշոր գետերն են՝ Օզյոռնայա, Ուշակովի, Բոլշայա և այլն: Խոշոր լիճն է՝ Ֆիորդովոյե: Մակերեսը՝ 13 708 կմ^2: Երկարությունը՝ 170 կմ, լայնությունը՝ մինչև 130 կմ: Բարձր կետը՝ Կարպինսկու սառցադաշտ (961 մ):
Այժմյան անվանումը 1932 թ-ին տվել են Գ.Ա.Ուշակովի և Ն.Ն.Ուրվանցևի գլխավորած բևեռային արշավախմբի մասնակիցները:

ՀՈՆՍՅՈՒ - ճապոներեն 本州 Հոնսյու. Ճապոնական կղզիների ամենամեծ կղզին, Խաղաղ օվկիանոսի և **Ճապոնական** ծովի միջև: Ցուգարու նեղուցով անջատված է **Հոկայդո**, **Ներքին Ճապոնական** ծովով՝ **Սիկոկու**, Սիմոնոսեկի նեղուցով՝ **Կյուսյու** կղզիներից: Գերակշռում են լեռները, կան գործող հրաբուխներ: Ափերը խիստ մասնատված են Մուցու, Սենդայ, Տոկիոյի, Սագամի, Սուրուգա, Իսե, Վակասա, Տոյամա և այլ ծոցերով ու խորշերով: Խոշոր գետերն են՝ Սինանոն, Կիտակամին, Մոգամին, Աբուկուման: Խոշոր լճերն են՝ **Բիվա**, Ինավասիրո, Տովադա, Օգավարա և այլն: Մակերեսը՝ 227 942,85 կմ^2: Երկարությունը՝ 1 300 կմ, լայնությունը՝ 50-230 կմ: Ափի երկարությունը՝ 10 084 կմ: Բարձր կետը՝ **Ֆուձի** հրաբուխ (3 776,12 մ):
Ճապոներեն 本州Հոնսյու անվանումը բառացի նշանակում է *հիմնական կղզի*, *գլխավոր մարզ*:
Տարածված է նաև անվանման Հոնդո ձևը:

ՀՈՐԴԱՆԱՆ - եբրայերեն נהר הירדן Նըհար հա Յարդեն, արաբերեն نهر الأردن Նահր ալ Ուրդուն.գետ Մերձավոր Արևելքում, Լիբանանում, Սիրիայում, Իսրայելում, Հորդանանում: Գետը կազմավորվում է Հերմոն լեռան լանջերից սկիզբ առնող Հասբանի, Բանյաս և Դան գետերի միացումից, հոսելով հյուսիսից հարավ, անցնում է **Գիոր** տեկտոնական իջվածքով, Հոլանով և **Գալիլեյան ծովով**, որից հետո հոսելով **Հորդանանի** հովտով և թափվում **Մեռյալ ծովը**: Վտակներն են ձախից՝ Յարմուկ, Սեյլ Էզ Զարկա (Յաբոկ) աջից՝ Հարոդ: Երկարությունը՝ 251 կմ: Ավազանը՝ 18 300 կմ^2: Ջրառատությունը՝ 16 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 76 մ, գետաբերանինը՝ - 431 մ:
Հորդանանը բազմաթիվ անգամ հիշատակվում է Աստվածաշնչում:

Մեծ հավանականությամբ գետի անվան հիմքում ընկած է հնդեվրոպական danu *հեղուկ, ջուր, գետ* արմատը: Գետի եբրայերեն יַרְדֵּן Յարդեն անվանման հիմքում ընկած է ירד յերեդ, որը նշանակում է *իջնող, ընկնող* բառը:

ՀՈՐՄՈՒԶԻ ՆԵՂՈՒՑ - պարսկերեն هرمز تنگــه Թանգեյե Խորմոզ, արաբերեն مضــيق هرمز Մուդիք Հարմազ. **Պարսից** և **Օմանի** ծոցերը միացնող նեղուց: Անջատում է հյուսիսում Իրանի ափերը ԱՄԷ-ից և հարավում՝ Օմանի ափերից: Նեղուցով է արտահանվում **Պարսից** ծոցի երկրներում արդյունահանվող նավթի 90 %-ը: Երկարությունը՝ 195 կմ, լայնությունը՝ 54 կմ: Առավելագույն խորությունը՝ 229 մ:
Անվանումը ստացել է *Հորմուզ* կղզուց:

ՀՈՒԱՆԳՈԾՈՒ - չինարեն 黄果树瀑布 Հուան գոշու փուպու. ջրվեժ Չինաստանի հյուսիսարևելյան մասում՝ Անշան քաղաքից 45 կմ հարավ-արևմուտք, Բայշույ գետի վրա՝ 903,9 մ բարձրության վրա: Անկման բարձրությունը՝ 77,8 մ: Լայնությունը՝ 101 մ: Ջրի միջին ծախսը՝ 18,2 լ/վրկ:
Չինարեն անվանումը 黄果树瀑布 Հուան գոշու փուպու բառացի նշանակում է *Դեղնամրգային ծառերի ջրվեժներ*:

ՀՈՒԱՆԳՈՒԱՆԳ - չինարեն 皇冠山 Հուանգ Գուանգ Շան. լեռնագագաթ **Կարակորումում՝** Ենգիսոգատ լեռներում, Չինաստանի Սինցզյան Ույղուրական ինքնավար շրջանում: **Չոնգթար** գագաթից 27,09 կմ հեռավորությամբ: Կան շատ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 295 մ: Հարաբերական բարձրությունը՝ 1 919 մ:
Հայտնի է նաև Քրոուն, Քրոուն Պիկ և այլ անուններով:
Լեռան չինարեն անվանումը բառացի նշանակում է *Դեղին լույսով առատ լեռ*:

ՀՈՒԱՆՀԵ - չինարեն 黄河/黄河 Հուանհե, տիբեթերեն ՀՈՒԱՆՀԵ Ռմա Չու, մոնղոլերեն Шар мөрөн /Хатан гол. Ասիայի խոշորագույն գետերից մեկը Չինաստանում: Սկիզբ է առնում **Տիբեթի բարձրավանդակի** արևելյան մասից՝ Բայան- Խարա-Ուլա լեռներից բխող աղբյուրներից, հոսում Հետաո հարթավայրով, **Լյոսային սարավանդով**, **Չինական Մեծ հարթավայրով** և առաջացնելով դելտա, թափվում **Դեղին** ծովի՝ **Բո Հայ** ծոցը: Վտակներն են՝ Մացյույ, Դասյա, Տաո, Հուանշույ, Ցզուլի, Ուդին, Վեյ, Լո, Դահեյ: Երկարությունը՝ 5 464 կմ: Ավազանը՝ 752 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 2 771 մ^3/վրկ (գետաբերանում): Ակունքի բարձրությունը՝ 4 801,2 մ:
Հուանհե անվանումը չինարենից թարգմանաբար նշանակում է *Դեղին գետ*:
Անվան հիմքում ընկած է գետի ջրի գույնը, որն անցնելով **Լյոսային սարավանդով**, իր մեջ է լուծում մեծ քանակությամբ դեղնավուն երանգ ունեցող լյոս:

Ղ

ՂԱԶԱԽԱԿԱՆ ՄԱՆՐԱԲԼՈՒՐՆԵՐ - ղազախերեն Сарыарқа. տափաստան Ղազախստանի կենտրոնական և արևելյան մասերում: Եզերված է արևմուտքում

Տուրգայի սարավանդով, հյուսիս-արևելքում՝ **Իրտիշի** հովտով, հյուսիսում՝ **Արևմտասիբիրական հարթավայրով**, հարավ-արևմուտքում՝ **Թուրանի ցածրավայրով**: Կենտրոնում տեղակայված են Կարկարալինյան լեռները, ավելի հարավ՝ Կզըլտաս զանգվածը՝ Աքսորան լեռով, հարավ-արևմուտքում՝ Ուլուտաու լեռները, հյուսիսում՝ Կոկշետաուի բարձրավայրը, արևելքում՝ Չինգիզտաու, Աքշատաու լեռնաշղթաները և այլն: Խոշոր գետերն են՝ Իշիմ, Նուրա, Սարիսու, Սիլետը, Շիդերտը, Տոկըրաու և այլն: Տափաստանում կան բազմաթիվ աղի լճեր, իսկ քաղցրահամ լճերը հիմնականում տեղակայված են Կոկշետաուի բարձրավայրում՝ Բորովոյե, Շչուչիե, Մեծ Չեբաչիե, Իմանտաու և այլն: Միջին բարձրությունը՝ 300-500 մ, առավելագույնը՝ 1 565 մ (Աքսորան լեռ): Երկարությունը՝ 1 200 կմ, լայնությունը՝ 400 կմ-ից (արևելքում) - 950 կմ (արևմուտքում):
Անվանումը ստացել է այստեղ գտնվող բազմաթիվ ցածրադիր մանր բլուրներից: Տափաստանի ղազախերեն Сарыарқа անվանումը, բառացի նշանակում է *Դեղին շղթա*:

Ճ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԾՈՎ - ճապոներեն 日本海 / にほんかՆիհոնկայի, ռուսերեն **Японское море**, կորեերեն 동해 / 東海 տոնհե, 조선동해 / 朝鮮東海 չոսոնտոնհե. Խաղաղ օվկիանոսի կիսափակ, ծայրամասային ծով Եվրասիա մայրցամաքի և **Ճապոնական** կղզիների ու **Սախալին** կղզու միջև: Ողողում է Ռուսաստանի Դաշնության, Հյուսիսային Կորեայի,Հարավային Կորեայի և Ճապոնիայի ափերը: **Թաթարական**, **Նևելսկոյի** և **Լա Պերուզի** նեղուցներով միացված է **Օխոտի** ծովին, Ցուգարո նեղուցով՝ Խաղաղ օվկիանոսին, **Կորեական** նեղուցով՝ **Արևելաչինական** և **Դեղին** ծովերին: Խոշոր ծոցերն են՝ **Արևելակորեական** և **Պետրոս Մեծի**: Ծովն են թափվում Տումնին, Սուչան, Կումհո և այլ գետեր: Մակերեսը՝ 1 062 000 կմ^2: Երկարությունը՝ 2 255 կմ, լայնությունը՝ 1 070 կմ: Ծավալը՝ 1 630 170 կմ^3: Ծովափի երկարությունը՝ 7 600 կմ: Միջին խորությունը՝ 1 535 մ, առավելագույնը՝ 3 742 մ (կենտրոնական մասում):
Ծովն իր անվանումը ստացել է *Ճապոնիայից*, որը վիճարկվում է կորեական երկու պետությունների կողմից՝ Հյուսիսային Կորեայում ծովը կոչվում է 조선동해 չոսոնտոնհե *Արևելակորեական ծով*, Հարավային Կորեայում՝ 동해 տոնհե *Արևելյան ծով*:

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐ- ճապոներեն 日本列島 Նիհոնրետո. կղզեխումբ Խաղաղ օվկիանոսի հյուսիսարևմտյան մասում, **Կորեական** նեղուցով և **Ճապոնական** ծովով անջատված է Եվրասիա մայր ցամաքից: Կղզիները շուրջ 3 500 կմ երկարությամբ և մոտ 300 կմ լայնությամբ ձգվում են հարավ-արևմուտքից, հյուսիս-արևելք ուղղությամբ: Ընդգրկում են 6 852 կղզիներ՝ **Հոնսյու**, **Հոկայդո**, **Կյուսյու**, **Սիկոկու** և այլն: Աշխարհագրական տեսակետից Ճապոնական կղզիների մաս է կազմում նաև Ռուսաստանի Դաշնությանը պատկանող **Սախալին** կղզին: Խոշոր գետերն են՝ Տեսիո, Մոգամի, Կիտակամի, Տոնե, Կիսո և այլն: Լճերն են՝ Բիվան, Ինավասիրոն, Սուվան, Օգավարան, Կուտյարոն: Կղզեխմբի բարձր կետն է համարվում **Ֆուձի** հրաբուխը 3 775,51 մ (Հոնսյու կղզում): Մակերեսը՝ շուրջ 450 000 կմ^2:
Անվանումը ստացել է *Ճապոնիա* երկրից:

ՃԱՎԱ - ինդոնեզերեն Jawa, բանյամասան Jawa, ճավայերեն Jawa, սունդայերեն Pulo Jawa. կղզի Մեծ Զոնդյան կղզիների կազմում: Հարավից ողողվում է Հնդկական օվկիանոսով, հյուսիսից՝ **Ճավայի** ծովով, արևմուտքից՝ **Զոնդյան** և արևելքից՝ **Բալի** նեղուցներով: Կղզում կա 120 հրաբուխ, որոնցից 30-ը գործող՝ **Մերապի**, Պանգրանգո, Սլամետ, Լավու և այլն: Տարածքի 30 %-ը զբաղեցնում են ջունգլիները: Խոշոր գետերն են՝ Սոլո, Լուսի և այլն: Խոշոր լճերն են՝ Պենինգ, Մենջեր և այլն: Մակերեսը՝ 126 700 կմ^2:Երկարությունը՝ 1 062 կմ, լայնությունը՝ մինչև 199 կմ: Բարձր կետը՝ Սեմերու հրաբուխ (3 676 մ):

Անվանումն առաջացել է սանսկրիտերեն यवक ՃԻԿ Յավակա դվիպա *գարու կղզի* բառակապակցությունից:

Մեկ այլ վարկածի համաձայն կղզու անունն առաջացել է հին աստրոնեզիական լեզվի java *տուն* բառից:

ՃԱՎԱՅԻ ԾՈՎ - ինդոնեզերեն Laut Jawa, ճավայերեն Segara Jawa. միջկղզային ծով Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում, **Սումատրա**, **Ճավա**, **Սուլավեսի, Կալիմանտան** կղզիների միջև: **Զոնդյան** նեղուցով միացված է Հնդկական օվկիանոսին: Հյուսիսում ծովն եզերված է Կաիտ, Սամբար հրվանդաններով, **Բանգկա**, **Բելիտունգ**, Միրտ և Սամբալենա կղզիներով, իսկ հարավում՝ **Ճավա** և արևմուտքում՝ **Սումատրա** կղզիներով: Գլխավոր նեղուցներն են՝ **Զոնդյան** և **Մակասարյան**: Ծովն են թափվում Բարիտո, Սերույան, Կահայան և այլ գետեր: Մակերեսը՝ 317 000 կմ^2: Երկարությունը՝ 1 600 կմ, լայնությունը՝ 380 կմ: Ծավալը՝ 14 582 կմ^3: Միջին խորությունը՝ 46 մ, առավելագույնը՝ 272 մ (հարավարևելյան մասում):
Անվանումը ստացել է *Ճավա* կղզուց:

Մ

ՄԱԴՈՒՐԱ - ինդոնեզերեն Pulau Madura, ճավայերեն Pulo Madura. կղզի Ինդոնեզիայում, **Ճավա** կղզու հյուսիսարևելյան ափի մոտ, որից անջատված է Մադուրա նեղուցով: Ողողվում է **Ճավայի** և **Բալի** ծովերով:Ափերը թույլ մասնատված են, բացառությամբ հարավարևելյանի:Մակերեսը հիմնականում բլրոտ է, հարավարևմուտքում՝ ցածրադիր: Խոշոր գետերն են՝ Կոնանգ, Բուլանչինգ, Տամբերու և այլն: Մակերեսը՝ 4 428,9 կմ^2: Երկարությունը՝ 160 կմ, լայնությունը՝ 38 կմ: Բարձր կետը՝ Տեմբուկու բլուր (499 մ):

Հավանաբար անվանումը սանսկրիտերեն मधुरै մդհուրա *քաղցրավենիք* բառի ածանցյալն է:

Մեկ այլ վարկածի համաձայն Մադուրա անվանումն ածանցյալ է սանսկրիտերեն मारुतहैम Մաարութհայիմ բառից, որով Սանգամի դարաշրջանի արվեստում շեշտվում էր բնապատկերի հատուկ տեսակը:

ՄԱԼԱԿԿԱ - մալայերեն Semenanjung Tanah Melayu / ملايو تانه سمننجڠ, թայերեն คาบสมุทรมลายู Քհաբսմութ մլայու, բիրմայերեն မလေးကျွန်းဆွယ် մլայի կյավանս-վալ. թերակղզի Հարավարևելյան Ասիայում, **Հնդկաչինի** հարավային մասը: Արևմուտքից ողողվում է **Անդամանյան** ծովով և **Մալակկայի** նեղուցով, արևելքից՝ **Հարավչինական** ծովով և **Թայլանդական** ծոցով, հարավ-արևելքից՝ **Նատունա** ծովով: Հյուսիսային սահման է հանդիսանում Կրա պարանոցը (նվազագույնը 44 կմ լայնությամբ): Խոշոր գետերն են՝ Պահանգ,Պերակ, Ռոմպին, Մուար, Էնդաու և այլն: Մակերեսը՝ 187 300 կմ^2: Երկարությունը՝ մոտ 1 300 կմ: Բարձր կետը՝ Տահան լեռ (2 187 մ):
Անվանումը ստացել է 1402-1511 թթ. այստեղ գոյություն ունեցող *Մալակկաս* սուլթանությունից:

ՄԱԼԱԿԿԱՅԻ ՆԵՂՈՒՑ - մալայերեն Selat Melaka, ինդոնեզերեն Selat Malaka. նեղուց **Մալակկա** թերակղզու և **Սումատրա** կղզու միջև: Առավելագույն խորությունը՝ 113 մ: Երկարությունը՝ 805 կմ, լայնությունը՝ 40 կմ:
Անվանվել է 1 400-1 511 թթ. նեղուցի ափերին գոյություն ունեցող *Մալակկայի* սուլթանության պատվին:

ՄԱԼԱՅԱՆ ԱՐՇԻՊԵԼԱԳ - ինդոնեզերեն Kepulauan Melayu/Nusantara, մալայերեն Kepulauan Melayu/Nusantara, պորտուգալերեն Arquipélago Malaio, տագալերեն Kapuluang Malay, աչեհերեն Pulo-pulo Meulayu, սեբուանո Malay Archipelago, անգլերեն Malay Archipelago, իսպաներեն Archipiélago malayo, վիսայերեն Kapupudang Malay. աշխարհի խոշորագույն կղզեխումբ, **Հնդկաչինի** և Ավստրալիայի միջև, Խաղաղ ու Հնդկական օվկիանոսների սահմանին: Կազմված են շուրջ 25 000 կղզիներից, իր մեջ ներառելով **Զոնդյան**, **Ֆիլիպինյան**, **Մոլուքյան** և այլ կղզիներ: Կղզիներում կան ավելի քան 330 հրաբուխ, որոնցից մոտ 100-ը գործող՝ ամենահայտնին **Կրակատաու** հրաբուխը: **Հնդկաչինից** բաժանված է **Հարավչինական**, **Նատունա** ծովերով և **Մալակկայի նեղուցով**, Ավստրալիայից՝ Արաֆուրյան ու Թիմորի ծովերով: Խոշոր կղզիներն են՝ **Կալիմանտան**, **Սումատրա**, **Ճավա**, **Սուլավեսի**, **Լուսոն**, **Մինդանաո**, **Թիմոր**, **Հալմահերա**, **Սամար** և այլն: Գլխավոր գետերն են՝ **Կապուաս**, Մահակամ, Ռոկան, Կագայան, Մինդանաո և այլն: Լճերն են՝ **Տոբա**, Տովուտի, Բայ, Սեմայանգ, Լանաո և այլն: Մակերեսը՝ շուրջ 2 000 000 կմ^2: Կղզեխմբի բարձր կետն է համարվում Կինաբալու լեռը 4 101 մ (Կալիմանտան կղզում):
Հայտնի է նաև Մալայան աշխարհ, Հնդկաավստրալիական կղզեխումբ, Հնդկական կղզեխումբ և ի զանազանում Վեստ Ինդիայից (Արևմտահնդկական կղզիներ)՝ Օստ Ինդիա (Արևելահնդկական կղզիներ) անուններով:
Անվանման առաջացումն ոմանք կապում են Մալայա անվան հետ, որը նրանց կարծիքով այս կղզիների վրա տարածվել է, **Մալակկա** թերակղզում գտնվող Մալյուր երկրից:
Մեկ ուրիշ վարկածի համաձայն, անվանումն ունի տեղական ծագում և առաջացել է ճավայերեն մալաույու *հեռանալ*, *փախչել* բառից. որով մատնանշում է բնակիչներին, որպես փախստականներ, գաղթականներ:

ՄԱԼԱՆԳՈՒՏԻ ՍԱՐ - ուրդու ملنگتی سر. լեռնագագաթ **Կարակորումում**, Հիսպար Մուզտաղ լեռներում, Շիմշալ հովտում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: **Դաստեգիիլ Սարից** 5,44 կմ հեռավորությամբ: Սառցադաշտերն են՝ Մալանգուտի, Մոմիիլ և այլն: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 207 մ, հարաբերականը՝ 507 մ:

ՄԱԼԴԻՎՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - դիվեհի ڈرۋۋڑڈڈۋڑڑ Դիվեհի ռաջիգե դիբու.կղզեխումբ Հնդկական օվկիանոսում, **Շրի Լանկա** կղզուց հարավ-արևմուտք: Կղզեխմբի կազմում կա 1196 կղզի, որոնք բաշխված են 26 մարջանի կղզիներում՝ Մալե, Հուվադհու, Արի, Մուլակու, Քոլհումադուլու և այլն: Մակերեսը՝ 298 կմ^2: Երկարությունը՝ 871 կմ: Բարձր կետը՝ 2,4 մ (Վիլինգիլի կղզի):

Հավանաբար անվանումն առաջացել է կղզիների սանսկրիտերեն मालाद्वीप մելեդվիփա *կղզիների շարան* անունից:

ՄԱԼՈՒԲԻԹԻՆԳ - ուրդու تنــــگےمالون. հինգ գագաթանի լեռնազանգված **Կարակորումում**, Ռաքափոշի Հարամոշ լեռների կենտրոնական մասում, **Ինդոսի** հյուսիսային ափին՝ Հունզա և Շիգար վտակների միջև, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում:**Թրիվոր** լեռից 36,93 կմ հեռավորությամբ:Կա Չոգոլունգմա անվամբ մեծ սառցադաշտ: Լեռան հյուսիսարևելյան ստորոտով է հոսում Ֆուպարաշ գետը: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Մալուբիթինգ 7 458 մ, Մալուբիթինգ Կենտրոնական 6 970 մ(2 544 մ), Մալուբիթինգ Հյուսիսարևելյան (Մալուբիթինգ Հյուսիսային) 6 834 մ(1 943 մ), Ջուտո Սար 6 785 մ (265 մ), Միար Կիիշ 6 824 մ (724 մ): Հարաբերական բարձրությունը՝ 2 193 մ:
Հայտնի է նաև Մալուբիթինգ Արևմտյան անվամբ:
Մալուբիթինգ անվանումը թարգմանաբար նշանակում է *Ուղղորդող, ղեկավարող*:

ՄԱԿԱԼՈՒ - չինարեն 马卡鲁峰 Մակ հա ռու ֆընն, նեպալերեն मकालु Մակալու, տիբեթերեն ཨ་ཙ་ལུ Մակալու, սանսկրիտերեն महाकाल Մահա կալա. երկգագաթ լեռնազանգված կենտրոնական **Հիմալայներում**, Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայում, Նեպալի ու Չինաստանի սահմանագլխին: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Մակալու Գլխավոր 8 481 մ և Մակալու Հարավարևելյան 8 110 մ: Կան շատ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 485 մ, հարաբերականը՝ 2 386 մ: Առաջին անգամ 1955 թ. մայիսի 15-ին, Մակալուի գագաթն են բարձրացել ֆրանսիական արշավախմբի անդամներ՝ Լիոնել Տերայը և Ժան Կուզին:
Լեռը տեղացիների մոտ հայտնի է նաև Կումբա կառնա անվամբ:
Մակալու անվանումն առաջացել է սանսկրիտերեն महाकाल Մահա կալա *Մեծ սև* անունից, որը համապատասխանում է քամուց սրբած հսկա ժայռոտ բուրգի տեսքին:

ՄԱԿԱՍՍԱՐՅԱՆ ՆԵՂՈՒՑ - ինդոնեզերեն Selat Makassar, մալայերեն Selat Makassar. **Կալիմանտան** և **Սուլավեսի** կղզիները բաժանող նեղուց: Իրար է միացնում **Սուլավեսի** և **Ճավայի** ծովերը: Նեղուցն են թափվում Մահակամ, Բաայ, Լարիանգ, Կարամա և այլ գետեր: Երկարությունը՝ 716 կմ, լայնությունը՝ 120-398 կմ: Առավելագույն խորությունը՝ 2 553 մ (կենտրոնական մասում):
Անվանումը ստացել է Սուլավեսի կղզու հարավարևմտյան մասում բնակվող *մակասար* ժողովրդից:

ՄԱՄՈՍԹՈՆ ՔԱՆԳՐԻ - հինդի मामोस्तोंग कांगरी Մամոսթոն Կանգարի.լեռնագագաթ **Կարակորումում,** Ռիմո Մուզտաղ լեռներում, **Սիաչեն** սառցադաշտից հարավարևելք, Հնդկաստանում՝ Ջամմու և Քաշմիր նահանգում: **Սասեր Քանգրի** լեռից 34,48 կմ հեռավորությամբ: Կան բազմաթիվ սառցադաշտեր՝ Հարավային Չունգ Կումդան, Փոքր Կումդան (Տհանգման), Մամոսթոն, Հարավային Տերոնգյան և այլն:
Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 516 մ, հարաբերականը՝ 1 803 մ:
Հայտնի է նաև Կ35 անվամբ:
Անվանումը թարգմանաբար նշանակում է *Բյուր մառախուղների սառցապիկ*:

ՄԱՆԱՍԼՈՒ - նեպալերեն मनास्लु Մանասլու.եռագագաթ լեռնազանգված **Հիմալայներում**, Մանսիրի Հիմալ լեռներում, Նեպալի կենտրոնական մասի հյուսիսում:Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 163 մ, հարաբերականը՝ 3 092 մ: Առաջին անգամ 1956 թ. մայիսի 9-ին, Մանասլուի գագաթն են բարձրացել Մակի Յուկոյի ղեկավարած ճապոնական արշավախմբի անդամներ՝ Տոսիո Իմանիսիին, Կիիսիրո Կատո, Նինորու Հիգետան և շերպա Գյալզեն Նորբուն: Տիբեթցիների մոտ լեռը հայտնի է *Կուտան*(*գ*) անվամբ:
Մանասլու անվանումը առաջացել է սանսկրիտերեն maanasa *բանականություն, միտք, ոգի, հոգի* բառից և կարող է մեկնաբանվել իբրև *հոգու* (*ոգու*) *լեռ*:

ՄԱՆԱՐԻ ԾՈՑ - թամիլերեն மன்னார் வளைகுடா Մաննար վալայկյութա, սինհալերեն මන්නාරම් බොක්ක մաննարա բոքը, հինդի मन्नार की खाड़ी մաննաար կի քիաարի, անգլերեն Gulf of Mannar. **Շրի Լանկա** կղզով, **Հնդստան** թերակղզու հարավարևելյան ափով և բազմաթիվ կղզյակներով ու ժայռերով եզերված Հնդկական օվկիանոսի ծոց: **Փոլքի** նեղուցով Մանարի ծոցը միացված է **Բենգալյան** ծոցին: Խոշոր կղզիներն են՝ Տալալարի, Հարե, Ապպա, Մանալի և այլն: Ծոցն են թափվում Տամբրապառնի (Հնդկաստան), Արուվի Արու (Շրի Լանկա) և այլ գետեր: Մակերեսը՝ 32 400 կմ^2: Երկարությունը՝ 160 կմ: Առավելագույն լայնությունը՝ 275 կմ: Ծավալը՝ 9 072 կմ^3: Միջին խորությունը՝ 280 մ, առավելագույնը՝ 1 335 մ (հարավային մասում):
Անվանումը ստացել է Մանար կղզուց, որի անունն իր հերթին ունի արաբական ծագում և առաջացել է منارة մինարաթ *Փարոս*, *Պաշտամունքի վայր* բառից:

ՄԱՆԻԼԱ - տագալերեն Look ng Maynila, անգլերեն Manila Bay, իլոկաներեն Luek Manila. ծովախորշ Ֆիլիպիններում, **Լուսոն** կղզու արևմտյան մասում: Ծովախորշի

հյուսիսային և հյուսիսարևելյան ափերը սահմանակից են Լուսոնի հարթավայրին: Խոշոր կղզիներն են՝ Կոռեխիդոր, Կաբալյո, Լա Մոնյա և այլն: Ծովախորշն են թափվում Պամպանգա, Պասիգ և 24 այլ գետեր: Ջրահավաք ավազանը՝ 17 000 կմ^2: Մակերեսը՝ 1 996,3 կմ^2: Երկարությունը՝ 55,3 կմ, լայնությունը՝ 36,1 կմ: Ծավալը՝ 33,9 կմ^3: Ափի երկարությունը՝ 190 կմ: Միջին խորությունը՝ 17 մ, առավելագույնը՝ 71 մ (հարավարևմտյան մասում):
Անվանումը ստացել է *Մանիլա* քաղաքից:

ՄԱՆԻՆՋԱՈՒ - մինանգկաբաու Danau Maninjau / مانينجـــاو دانـاو, ինդոնեզերեն Danau Maninjau. լիճ Ինդոնեզիայի **Սումատրա** կղզում: Լիճն են թափվում Անտոկան և այլ գետեր: Մակերեսը՝ 99,96 կմ^2: Երկարությունը՝ 16,46 կմ, լայնությունը՝ 7,5 կմ: Ծավալը՝ 10,226 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 13,26 կմ^2: Լճափի երկարությունը՝ 52,68 կմ: Միջին խորությունը՝ 102,3 մ, առավելագույնը՝ 168 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 462,82 մ:
Մանինջաու անվանումը մինանգկաբաու լեզվից թարգմանաբար նշանակում է *դիտում*, *ծկլտում*, *հետևվում*:

ՄԱՆՂԾԼԱՂ - ղազախերեն Man'g'ystay' tu'begi, թուրքմեներեն Maňgyşlagyň ýarymada. թերակղզի **Կասպից** ծովի հյուսիսարևելյան ափին, Ղազախստանում: Այստեղ է գտնվում **Կարագիե** իջվածքը (-132 մ): Երկարությունը՝ մոտ 250 կմ: Բարձր կետը՝ Մանգիսթաու լեռ (556 մ):
Անվանումը թուրքմեներենից թարգմանաբար նշանակում է *Հազար ղշլաղ*:

ՄԱՇԵՐԲՐՈՒՄ - ուրդու شـــربرم ما. երկգագաթանի լեռնազանգված Կենտրոնական **Կարակորումում**, Մաշերբրումի լեռներում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: **Բրոադ Պիկից** 30, 6 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Մաշերբրում Գլխավոր (Հյուսիսային) 7 821 մ և Մաշերբրում Հարավարևմտյան 7 806 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 821 մ, հարաբերականը՝ 2 457 մ:
Հայտնի է նաև Կ1 անվամբ:
Լեռան անվան ծագումը ունի մի շարք բացատրություններ՝
• այն կազմված է mashadar *թնդանոթ* և brum *լեռ* բառերից:
• .....masha *թագուհի* և brum *լեռ* բառերից:
• .....masher *ծմակ* brum *լեռ* բառերից:

ՄԱՍԲԱՏԵ - տագալերեն Masbate, կենտրոնական բիկոլերեն Masbate, վիսայերեն Masbate. կղզի **Ֆիլիպինյան կղզեխմբի** կենտրոնական մասում: Հարավից ողողվում է **Վիսայան**, արևմուտքից՝ **Սիբույան**, արևելքից՝ **Սամար** ծովերով: Հարավում կղզու մեջ է մխրճված խորը Ասիդ ծոցը: Խոշոր գետերն են՝ Մալբուգ, Բանյոն, Կասոլոգ, Դայո և այլն: Մակերեսը՝ 3 269 կմ^2: Երկարությունը՝ 133 կմ, լայնությունը՝ 75 կմ: Բարձր կետը՝ Ուակ բլուր (593 մ):

Հավանաբար անվանման հիմքում ընկած է տեղաբնիկների masibát *նիզակներով լի* բառը, որով ակնարկվում է տեղացիների լավ զինված լինելը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանման հիմքում ընկած է masibad բառը, որը բիկոլերենում նշանակում է *ծայրից ծայր կտրել անցնել*, իսկ վարայերենում՝ *կլանող*, որով ակնարկվում է կղզու գետերում կոկորդիլոսների առկայությունը:

ՄԱՏԱՆՈ - ինդոնեզերեն Danau Matano. լիճ Ինդոնեզիայում, **Սուլավեսի** կղզու կենտրոնական մասում,Հարավային Սուլավեսի մարզում:Խոշոր կղզիներն են՝ Լանկայ, Տիմադոնգ, Մեոկո, Օնդալո, Ալաբոնա և այլն: Լճից արտահոսում են Պենտեն ու Լարոնա գետերը: Մակերեսը՝ 164,1 կմ^2: Երկարությունը՝ 28 կմ, լայնությունը՝ 8 կմ: Ծավալը՝ 6,07 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ մոտ 436 կմ^2: Միջին խորությունը՝ 37 մ, առավելագույնը՝ ավելի քան 590 մ (կենտրոնական մասում), ջրի պարզությունը՝ 23 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 382 մ:
Մատանո անվանումը դոնգի լեզվից թարգմանաբար նշանակում է *գարուն*:

ՄԵԾ ԽԻՆԳԱՆ - չինարեն 大兴安岭 Դասինանլին, մոնղոլերեն ᠬᠦᠨᠳᠦ ᠬᠢᠨᠭᠠᠨ Ին Հյանգանը նուրուու. հրաբխային լեռնաշղթա Չինաստանի հյուսիսարևելքում ու Մոնղոլիայի արևելքում:Զգվում է հարավարևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ: Անջրպետ է հանդիսանում Չինաստանի հյուսիսարևելյան հարթավայրերի և Մոնղոլական սարահարթի միջև: Արևմտյան լանջերը երկարավուն են ու մեղմաթեք, արևելյանը՝ զառիվեր: Լեռները հիմնականում ծածկված են խիտ անտառներով: Այստեղից են սկիզբ առնում՝ Գան, Դոբուկուր, Նայդու և բազմաթիվ այլ գետեր: Մակերեսը՝ 84 700 կմ^2: Երկարությունը՝ մինչև 1 200 կմ, լայնությունը՝ մինչև 306 կմ: Բարձր գագաթը՝ Խուանգան լեռ (2035 մ):
Լեռնաշղթան հայտնի նաև Դասինանլին անունով:
Խինգան անվանումը տունգուս-մանջուրական լեզուներում թարգմանաբար նշանակում է *բլրոտ վայր, ալիքավոր հարթավայր*:

ՄԵԿՈՆԳ - տիբեթերեն རྒྱ་ཆུ Զա Չու, չինարեն 湄公河 Մեյգոնխա, բիրմայերեն မဲခေါင်မြစ် Մեգայուն մյիտ, լաոսերեն ແມ່ນ້ຳໂขง Մենայմ խոն/ Նայմ, թայերեն แม่น้ำโขง Մենան խոն, քմերեն ទន្លេមេគង្គ/ទន្លេធំ Տոնլե Մեկոնկ / Տոնլե Տhում, վիետնամերեն Mê Kông. **Հնդկաչինի** ամենամեծ գետը: Սկիզբ է առնում **Տիբեթի բարձրավանդակի**՝ Տանգլա լեռնաշղթայի լանջերից և հոսելով Չինաստանով, Մյանմայով, Լաոսով, Թայլանդով, Կամբոջայով ու Վիետնամով և կազմավորելով շուրջ 70 000 կմ^2 մակերեսով դելտա, թափվում **Հարավչինական ծովը**: Վերին և միջին հոսանքում Մեկոնգը անցնում է խորը կիրճերով: Վերին հոսանքում կոչվում է Զաչու, միջին հոսանքում՝ Լանցանցզյան: Խոշոր վտակներն են՝ Մուն, Տոնլեսապ, Էմչու, Զեչու, Թհեն, Սա: Երկարությունը՝ 4 350 կմ: Ավազանը՝ 795 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 15 000 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 5 374 մ:
Ենթադրվում է, որ Մեկոնգ անվան հիմքում ընկած է սանսկրիտերեն मी गंगा Մա գանգա *ջրերի գլխավոր, գետերի մայր* անունը, որտեղ գանգան ձևափոխվելով դարձել է कांग կոնգ:

ՄԵՌՅԱԼ ԾՈՎ - եբրայերեն ים המלח Յամ հա Մելախ, արաբերեն البحر الميت ալ Բահր ալ Մեյըթ. անհոսք աղի լիճ Մերձավոր Արևելքում, Գհոր տեկտոնական իջվածքում, Իսրայելի և Հորդանանի սահմանագլխին: Լիճն են թափվում **Հորդանան**, Յարմուկ, Առնոն և այլ գետեր: Մակերեսը՝ մոտ 650 կմ^2: Երկարությունը՝ 51 կմ, լայնությունը՝ 18 կմ: Ծավալը՝ 114,01 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 43 000 կմ^2: Լճափի երկարությունը՝ 135 կմ: Միջին խորությունը՝ 175,4 մ,առավելագույնը՝ 380 մ (հյուսիսարևմտյան մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ - 431,3 մ:
Անվանումը ստացել է այնտեղ օրգանական կյանք չլինելու հետևանքով(կան միայն մի քանի տեսակի բակտերիաներ), որի պատճառը ջրի 342 ‰ հասնող աղիությունն է:
Լճի եբրայերեն ים המלח Յամ հա Մելախ անվանումը, թարգմանաբար նշանակում է *Աղի լիճ*:

ՄԵՐԱՊԻ - ճավայերեն Gunung Merapi, ինդոնեզերեն Gunung Merapi. գործող հրաբուխ Ինդոնեզիայում, **Ճավա** կղզու կենտրոնական մասում: Խոշոր ժայթքումները տեղի են ունենում միջինը ամեն յոթ տարին մեկ, փոքրերը՝ մոտավորապես տարին երկու անգամ: Բարձրությունը ծովի մակարդակից 2 930 մ:
Հրաբխի անվանումը կազմված է ճավայերեն meru *լեռ*, որում արծածվում է հինդուիզմի *Աստվածների լեռը,* և api *հուր*, *կրակ* բառերից՝ *հրո լեռ*:

ՄԵՐՁԿԱՍՊՅԱՆ ՑԱԾՐԱՎԱՅՐ - ռուսերեն Прикаспийская низменность, ղազախերեն Каспий маңы ойпаты, ավարերեն Каспиялъухъ гIодоблъи, ցածրավայր Ասիայի և Եվրոպայի սահմանագլխին, Արևելաեվրոպական հարթավայրի հարավարևելյան մասում, **Կասպից ծովի** հյուսիսային ափին: Հյուսիսից եզերված է Օբշչիյ Սըրթ բարձրավայրով, արևմուտքից՝ Մերձվոլգյան և Երգենի բարձրավայրով, արևելքից՝ Մերձուրալյան և Ուստյուրտ սարահարթերով: Ցածրավայրը իրենից ներկայացնում է դեպի **Կասպից ծով** զառիկող թեքություն ունեցող տափարակ տարածք, որում առանձնանում են ցածրադիր Ինդերի, Մեծ ու Փոքր Բոգդո և այլ բլրաշարերը: Այստեղ կան բազմաթիվ աղի լճեր՝ Բասկունչակ, Էլտոն, Ինդեր, Բոտկուլ: Ցածրավայրով են հոսում՝ Վոլգա, **Ուրալ**, Էմբա, Կումա, Թերեք և այլ գետեր: Որոշ փոքր գետեր՝ Մեծ և Փոքր Ուզենները, Ուիլը, Սագիը ամռանը չորանում են կամ տրոհվելով մի շարք գոգավորությունների, կազմավորում լճակներ: Մակերեսը՝ մոտ 200 000 կմ^2: Երկարությունը՝ 770 մ, լայնությունը՝ 550 մ: Բարձրությունը՝ -28-ից մինչև 149 մ:
Ցածրավայրն անունը ստացել է, հաշվի առնելով իր դիրքը ***Կասպից ծովի*** նկատմամբ:

ՄԻՆԴԱՆԱՈ - տագալերեն Mindanao / Kamindanawan, սեբուանո Mindanao, իլոկաներեն Mindanao, վարայերեն Mindanao, անգլերեն Mindanao, չաբականո Mindanao. մեծությամբ երկրորդ կղզին **Ֆիլիպինյան կղզեխմբի** հարավում: Հյուսիսից ողողվում է **Բոհոլ**, արևելքից՝ **Ֆիլիպինյան**, հարավից՝ **Սուլավեսի**, արևմուտքից՝ **Սուլու** ծովերով: Ռելիեֆում լեռները զուգակցվում են ճահճոտ ցածրավայրերի հետ: Կան

գործող հրաբուխներ: Խոշոր ծոցերն են՝ Մորո, **Դավաո**, Սարանգանի, Իլիգան և այլն: Խոշոր գետերն են՝ Մինդանաո, Ագուսան, Դավաո և այլն: Խոշոր լճերն են՝ Լանաո, Մայնիտ, Բուլուան և այլն: Մակերեսը՝ 97 530 կմ^2: Երկարությունը՝ 521 կմ, լայնությունը՝ 471 կմ: Բարձր կետը՝ Ապո հրաբուխ (2 954 մ):
Անվանման հիմքում ընկած է 1520 թ. Շարիֆ Մուհամեդ Կաբունգսուանի կողմից հիմնած և մինչև 1888 թ. գոյություն ունեցած Մագինդանաո սուլթանության անունը:

ՄԻՆԴՈՐՈ - տագալերեն Mindoro, անգլերեն Mindoro. **Ֆիլիպինյան** կղզեխմբի մեծությամբ 7-րդ կղզին: Արևելքից ողողվում է Տաբլաս նեղուցով: Հարավ-արևմուտքում Կալամյան կղզիներից անջատված է Մինդորո, **Լուսոն** կղզուց՝ Վերդե կղզու նեղուցներով: Խոշոր գետերն են՝ Պագբահան, Ասիս, Լումինտաո և այլն: Խոշոր լճերն են՝ Նաուխան, Կալուանգան և այլն: Մակերեսը՝ 10 571,8 կմ^2: Ափի երկարությունը՝ 618,8 կմ: Բարձր կետը՝ Հալկոն լեռ (2586 մ):
Անցյալում չինացի վաճառականները կղզին անվանում էին 馬一世 Մայի կամ 邁特 Մաի տը, հետագայում իսպանացիները՝ Mina de Oro *Ոսկու հանք*, որից էլ առաջացել է այժմյան անվանումը:

ՄԻՋԻՆ ՍԻԲԻՐԱԿԱՆ ՍԱՐԱՀԱՐԹ - ռուսերեն Среднесибирское плоскогорье, յակուտերեն Орто Сибиир хаптал хайалаах сирэ. սարահարթ Հյուսիսային Ասիայի կենտրոնական մասում, Արևելյան Սիբիրում, Ռուսաստանի Դաշնության, Կրասնոյարսկի երկրամասում, Իրկուտսկի մարզում և Սախայում: Հարավում եզրավորվում է Արևելյան Սայաններով, Մերձբայկալյան և Անդրբայկալյան լեռնաշղթաներով, արևմուտքում՝ **Ենիսեյի** հովտով, հյուսիսում՝ Հյուսիսսիբիրական ցածրավայրով, արևելքում՝ **Լենայի** հովտով: Հարթավայրին հատուկ է լայն սարահարթերի և բլրաշարերի հաջորդականությունը: Առավել բարձրադիր տեղամաս է համարվում Պուտորանայի սարավանդը: Խոշոր գետերն են՝ **Ստորին Տունգուսկա**, **Պոդկամեննայա Տունգուսկա**, **Անգարա**, **Լենա**, **Վիլյույ**, **Խատանգա** և այլն: Տարածությունը՝ մոտ 3 500 000 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝ միջինը 500-700մ, առավելագույնը՝ 1 701 մ (Կամեն լեռ):

ՄՈԼԱՄԵՆՑԻՆ - չինարեն 摩拉門青 Մո լա մեն ցին. լեռնագագաթ **Հիմալայներում**, Ջուգալ Հիմալ լեռներում, Չինաստանում: **Շիշաբանգմայից** 2,48 կմ հեռավորությամբ: Համարվում է **Շիշաբանգմայի** արևելյան առանձնացված մասը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 703 մ, հարաբերականը՝ 433 մ:
Հայտնի է նաև Ֆոլա Գանգչեն անվամբ:
Անվանումը կազմված է չինարեն 摩 մո *լեռ*, 拉 լա *ծգված*, 門 մեն *դուռ* և 青 ցին *կանաչ* բառերից:

ՄՈԼՈՒՔՅԱՆ ԾՈՎ - ինդոնեզերեն Laut Maluku, վարայերեն Dagat Molucca. Խաղաղ օվկիանոսի միջկղզային ծով, **Մինդանաո**, Սանգիհե, **Սուլավեսի**, Սուլա, **Մոլուքյան** և Տալաուդ կղզիների միջև: Մակերեսը՝ 289 600 կմ^2: Երկարությունը՝ 725

կմ, լայնությունը՝ 430 կմ: Ծավալը՝ 280 892 կմ^3: Միջին խորությունը՝ 1 031 մ, առավելագույնը՝ 4 970 մ (հարավարևելյան մասում):
Անվանումը ստացել է *Մոլուքյան* կղզիներից:

ՄՈԼՈՒՔՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - ինդոնեզերեն Kepulauan Maluku. 1027 կղզուց բաղկացած կղզեխումբ, **Սուլավեսի** և Նոր Գվինեա կղզիների միջև, **Թիմոր** կղզուց հյուսիս: Խոշոր կղզիներն են՝ **Հալմահերա**, **Սերամ**, **Բուրու**, Ամբոն, Տեռնատե և այլն: Մակերեսը՝ 74 505 կմ^2: Կղզեխմբի բարձր կետն է համարվում՝ Բինայա լեռ 3 027 մ (**Սերամ** կղզում):
Չինացիները, իսկ հետագայում պորտուգալացի ծովագնացները, ովքեր եվրոպացիներից առաջինը XVI դ. հասան այստեղ, դրանց անվանեցին Համեմունքի կղզիներ:
Անվանման հիմքում ընկած է մալայերեն molok *կարևոր*, *գլխավոր* բառը:
Մեկ այլ վարկածի համաձայն, անվանման հիմքում ընկած է միջնադարում տարածաշրջանի արաբ վաճառականների կողմից տրված جزيرة الملوك ջազիրաթ ալ մուլուք *թագավորների կղզի* անունը:

ՄՈՄՀԻԼ ՍԱՐ - ուրդու سر مومہل Մոմհիլ սար. լեռնագագաթ **Կարակորումում**, Հիսպար Մուզտաղ լեռների արևմտյան մասում, Գիլգիթ Բալտիստանում, Քաշմիրի Պակիստանի կողմից վերահսկվող մասում: **Թրիվոր** լեռից 5,27 կմ հեռավորությամբ: Կան շատ սառցադաշտեր, որոնցից խոշորը 26 կմ-ոց Մոմհիլն է և բազմաթիվ այլ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 343 մ, հարաբերականը՝ 990 մ:
Լեռան անվանումը վախաներենից թարգմանաբար նշանակում է *Տատիկի արոտի գլուխ:*

ՄՈՒԶՏԱՂ ԱԹԱ - ույղուրերեն ئاتا تاغ زۇم Մուզ տաղ աթա, չինարեն 慕士塔格峰 Մու շի թա գը ֆըն. լեռնագագաթ **Պամիրում՝** Կոնգուր Մուզտաղ լեռնաշղթայում, Չինաստանում: Կոնգուր Ջուբի լեռից 38,42 կմ հեռավորությամբ: Կան շուրջ տասնվեց սառցադաշտ, որոնցից ամենախոշորը Քոքսելն է: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 546 մ, հարաբերականը՝ 2 735 մ:
Մուզտաղ Աթա անվանումը ույղուրերենից թարգմանաբար նշանակում է *Սառցալեռների հայր*:

ՄՈՒԶՏԱՂ ԹԱՈՒԵՐ - ուրդու ٹاور تاغ موز. լեռնագագաթ **Կարակորումում**, Բալտորո Մուզտաղ լեռնաշղթայում, **Բալտորո** և Սարպո Լագո սառցադաշտերի միջև, Գիլգիթ Բալտիստանում, Պակիստանի ու Չինաստանի սահմանագլխին: **Սքիլ Բրում** լեռից 6,36 կմ հեռավորությամբ: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 273 մ, հարաբերականը՝ 1 707 մ (Մոնի լեռնանցքից՝ 55-66 մ):
Լեռնագագաթի անվանումը կազմված է ույղուրերեն تاغ موز Մուզտաղ *Սառցե լեռ* և անգլերեն Tower *աշտարակ* բառերից:

ՄՈՒՆԱ - ինդոնեզերեն Pulau Muna, մունայերեն Witeno Wuna. կղզի Ինդոնեզիայում, **Սուլավեսի** կղզուց հարավ-արևելք: Տիվորո նեղուցով անջատված է **Սուլավե-**

սի, Բուտոն նեղուցով՝ **Բուտոն**, Մունա նեղուցով՝ Կաբայենա կղզիներից: Ափերը խիստ մասնատված են, առավելապես հարավային և հարավարևելյան մասերում: Խոշոր գետերն են՝ Պոնդո, Լամբիկ, Տիվորո և այլն: Մակերեսը՝ 2 889 կմ^2: Երկարությունը՝ 93,4 կմ, լայնությունը՝ մինչև 48,5 կմ: Ափի երկարությունը՝ 389,9 կմ: Բարձր կետը՝ 276 մ:
Անվանումը ստացել է *Մունա* (*Վունա*) ժողովրդի անունից:

Յ

ՅԱՄԱԼ - ռուսերեն Ямал. թերակղզի Արևմտյան Սիբիրի հյուսիսում: Արևմուտքից ողողվում է **Կարայի** ծովով և Բայդարատայի խորշով, արևելքից՝ **Օբի խորշով**: Մակերեսը մեղմաթեք է՝ ծածկված տունդրայով, հարավում՝ անտառատունդրայով: Խոշոր գետերն են՝ Մորդիյախա, Ներուտայախա, Սյադորյախա, Պիյակոյայախա և այլն: Թերակղզում է գտնվում Նեյնո լճերի համակարգը: Մակերեսը՝ 122 000 կմ^2: Երկարությունը՝ 700 կմ, լայնությունը՝ մինչև 240 կմ: Բարձր կետը՝ 102 մ:
Անվանումը կազմված է նենեցերեն Я *երկիր*, *հող* և мал *վերջ*, *ծայր* բառերի միացումից:

ՅԱՄԴԵՆԱ - ինդոնեզերեն Pulau Yamdena. կղզի Տանիմբար կղզեխմբում, Սելարու կղզուց հյուսիս-արևելք, որից անջատված է Էգերոն նեղուցով: Արևելքից ողողվում է Արաֆուրյան ծովով: Արևելյան ափերը բլրոտ են, արևմտյանը՝ հարթ: Արևելյան ափամերձ գոտին ծածկված է խիտ անտառներով: Կղզու խոշոր գետը Ռանորմոյն է: Մակերեսը՝ 2 981 կմ^2: Բարձր կետը՝ Մալոլի բլուր (240 մ):
Այժմյան անվանումը կղզու ֆորդատա լեզվով Yamrene *Մայր երկիր* անվան ձևափոխության արդյունք է:

ՅԱՆԱ-ՕՅՄՅԱԿՈՆԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - ռուսերեն Яно-Оймяконское нагорье. լեռնային երկիր Հեռավոր Արևելքում, Ռուսաստանի Դաշնության՝ Սախայի Հանրապետությունում, Խաբարովսկի երկրամասում և Մագադանի մարզում:Հարավում ու արևմուտքում եզերված է **Վերխոյանսկի** և Սունտար Խայատայի, արևելքում ու հարավ-արևելքում՝ **Չերսկու** և Մոմայի լեռնաշղթաներով: Բարձրավանդակի կենտրոնական մասը զբաղեցված է Օմյակոնի սարահարթով, որի մեջ առանձնանում է համանուն գոգավորությունը: Այստեղից են սկիզբ առնում՝ **Ինդիգիրկա**, Յանա, Մոմա, Սունտար, Սելենյախ և բազմաթիվ այլ գետեր: Բարձրավանդակում են գտնվում Դարպիր, Նեմա, Էմանջա, Սեբյան Կյուել լճերը: Մակերեսը՝ 1 155 000 կմ^2: Երկարությունը 1 100 կմ, լայնությունը՝ 1 050 կմ: Միջին բարձրությունը՝ 400-2 000 մ: Բարձր գագաթը՝ Պոբեդա լեռ 3 003 մ (Բուորդախի բարձրադիր լեռնազանգվածում):
Անվանումը ստացել է *Յանա* գետից և *Օմյակոն* բնակավայրից:

ՅԱՆԳՐԱ - նեպալերեն यांग्रा Յանգրա, չինարեն 央然康日峰 Յան րան քանգ րի ֆըն. լեռնագագաթ **Հիմալայներում**, Գանեշ Հիմալ լեռնաշղթայում, Բուդհի Գանդակի և

Տրիսուլի Գանդակի հովիտների միջև, Նեպալի ու Չինաստանի սահմանագլխին: **Հիմալչուլի** լեռից 48,08 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 422 մ, հարաբերականը՝ 2 352 մ:
Հայտնի է նաև Գանեշ I անվամբ:
Լեռան չինարեն 央然 Յանգրան անվանումը թարգմանաբար նշանակում է *Կենտրոնական*:

ՅԱՆՑԶԻ - չինարեն 长江 / 長江 Չանծյան, տիբեթերեն འབྲི་ཆུ Դրի Չու. Եվրասիայի ամենաերկար և ջրառատ գետը՝ Չինաստանում, ջրառատությամբ երրորդն աշխարհում: Սկիզբ է առնում **Տիբեթի բարձրավանդակի** արևելյան մասից, հատում Սինա-Տիբեթական լեռները, Սիչուանի գոգավորությունը, **Չինական Մեծ** հարթավայրը ու կազմելով շուրջ 80 000 կմ^2 մակերեսով լայնարձակ դելտա, թափվում **Արևելաչինական** ծովը: Գետն ունի ավելի քան 700 վտակներ՝ Հանշույ, Մինցզյան, Յալունցզյան, Ցզյալինցզյան, Տուո և այլն: Երկարությունը՝ 6 380 կմ: Ավազանը՝ 1 808 500 կմ^2: Ջրի ծախսը՝ 110 000 մ^3/վրկ (միջինը՝ 31 900 մ^3/վրկ): Ակունքի բարձրությունը՝ 5 042 մ:
Չինաստանում Յանցզի անունը հազվադեպ է գործածվում և վերաբերվում է միայն նրա ստորին հոսանքին:
Անվանումն առաջացել է գետի ափին պեղված *Յանչժոու* քաղաքի անունից: Գետը Չինաստանում ամբողջապես անվանվում է Չանցզյան՝ *Երկար գետ*: Վերին հոսանքում կրում է մոնղոլերեն Ուլան-մուրեն *Կարմիր գետ*, միջին հոսանքում՝ Ցզինշացզյան *Ոսկե ավազի գետ* անունները:

ՅՈԳ - հինդի जोग जल प्रपात Ջոգ ջալ պրաբաթ, անգլերեն Jog Falls, կաննադա ಜೋಗ Յոգա. ջրվեժ Հնդկաստանում, **Արևմտյան Գհաթեր** լեռների հարավային մասում, Շարավաթի գետի վրա: Գահավիժում է 488 մ բարձրությունից: Անկումը՝ 253 մ: Ջրի ծախսը՝ 153 մ^3/ վրկ:
Կաննադա լեզվի Յոգա անվանումը թարգմանաբար նշանակում է *Անկում*, որն իր հերթին ածանցավոր է ಜಮಗು յավուգու *ճահիճ*, *խոնավ* բառին:

ՅՈՒԹՄԱՐՈՒ ՍԱՐ - ուրդու یوتمرو سر.լեռնագագաթ **Կարակորումում**, Հիսպար լեռնաշղթայում, Գիլգիթ Բալտիստանում, Պակիստանում: Յուկշին Գարդան սարից 2,91 կմ հեռավորությամբ: Այստեղ է գտնվում Յութմարու սառցադաշտը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 283 մ, հարաբերականը՝ 620 մ:
Անունը ուրդու լեզվից թարգմանաբար նշանակում է *Խոսող (մեծ) գլուխ:*

ՅՈՒՔՇԻՆ ԳԱՐԴԱՆ ՍԱՐ - ուրդու یوکشن گردن سر. լեռնագագաթ **Կարակորումում,** Հիսպար Մուզտաղ լեռներում, Յազգիլի սառցադաշտից հյուսիս-արևմուտք և Յուքշին Գարդան սառցադաշտից հյուսիս-արևելք, Պակիստանում: **Քնջութ Սարից** 8,65 կմ հեռավորությամբ: Լեռան ստորոտից է սկիզբ առնում Շիմշալ գետը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 469 մ, հարաբերականը՝ 1 313 մ:
Անվանումը թարգմանաբար նշանակում է *Ամուր պարանոցի գլուխ*:

Ն

ՆԱՄՋԱ ԲԱՐՈՒԱ - տիբեթերեն གནམ་ལྕགས་བཀའ་ བ ղնամ ըչագ բար բա, չինարեն 南迦巴瓦 Նան ցզյա պա ուա. լեռնազանգված **Հիմալայների** արևելքում, Տիբեթում: Լեռը համարվում է **Հիմալայների** արևելյան ծայրակետը: **Գյալա Փերի** լեռից 22 կմ հարավ-արևելք հեռավորությամբ: Լեռնազանգվածի հիմնական գագաթներն են՝ Նամջա Բարուա 7 782 մ, **Գյալա Փերի** 7 294 մ, Նաի Պենգ 7 043 մ: Կան սառցադաշ-տեր: Հարաբերական բարձրությունը՝ 4 106 մ:
Հայտնի է նաև Նամջե Բարու, Նամջակ Բարու ու Նամչակ Բարուա անուններով:
Անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Շանթահար*:

ՆԱՆԳԱ ՊԱՐԲԱՏ - ուրդու نانگا پربت Նանգա Պարբատ, հինդի नंगा पर्वत Նանգա Պարվաթ. ութ գագաթանի լեռնազանգված **Հիմալայների** հյուսիս-արևմուտքում, **Ինդոս** և Աստոր գետերի միջև, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող Հյուսի-սային տարածքներում: Լեռնազանգվածի գագաթներից երեքը բարձր են 8 000 մ-ից՝ բուն Նանգա Պարբատը 8 125 մ, Հյուսիսային Նանգա Պարբատ (Հյուսիսային թիակ) 8 070 մ և Հարավային Նանգա Պարբատ (Հարավային թիակ) 8 042 մ: Նան-գա Պարբատի հյուսիսարևմտյան լանջերից են սկիզբ առնում Դիամիր, Ռակիոտ, Բուլդար, իսկ արևելքում և հարավ-արևելքում՝ Չոնգրա, Տարշինգ, Ռուպալ, Ռամա և այլ սառցադաշտեր: Ռուպալի պատը համարվում է երկրագնդի ամենաբարձր՝ շուրջ 4,5 կմ երկարությամբ լեռնային որմը: Լեռան լանջերից են սկիզբ առնում **Ինդոսի** վտակներ՝ Աստորը, Բուլդարը, Ռակիոտը, Պատրոն, Դիամիրը, Ռուպալը և այլն: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 125 մ, հարաբերականը՝ 4 608 մ: Առա-ջին անգամ 1953 թ. հուլիսի 3-ին, Նանգա Պարբատի գագաթն է բարձրացել Կ.Հեռ-լիգկոֆերի ղեկավարած գերմանա-ավստրիական արշավախմբի անդամ Հերման Բուլը:
Տեղացիների մոտ լեռը հայտնի է Դիամիր *Հսկա լեռ* անվամբ:
Ուրդու լեզվից թարգմանաբար լեռան անունը նշանակում է *Լերկ սար*:

ՆԱՆԴԱ ԴԵՎԻ - հինդի नन्दा देवी Նանդա Դևի. երկգագաթանի լեռնազանգված **Հի-մալայներում**, Հնդկաստանում: **Դհաուլագիրի** լեռից՝ 388,72 կմ հեռավորությամբ: Ունի բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 816 մ, հարաբերականը՝ 3 139 մ:
Նանդա Դևին համարվում է Շիվայի կնոջ՝ Պարվաթիի առարկայացումը:
Նանդա Դևի անվանումը թարգմանաբար նշանակում է *Երանություն շնորհող աստվածուհի*:

ՆԱՏՈՒՆԱ - ինդոնեզերեն Laut Natuna, մալայերեն Laut Natuna. լայնարձակ միջ-կղզային ծանծաղ ծով:Սահմանափակված է հյուսիսից՝ Նատունա, Անամբաս կղզի-ներով, արևելքից՝ **Կալիմանտան** կղզով, հարավից՝ **Բելիտունգ**, **Բանգկա** և արև-մուտքից՝ Ռիաու, Լինգա կղզիներով: Առաջներում այս տարածքը համարվում էր **Հարավչինական** ծովի մաս, սակայն 1986 թ. միջազգային ջրագրական կազմակեր-պությունը պաշտոնապես ճանաչեց Նատունա ծովը: **Կարիմատա** նեղուցով միաց-ված է **Ճավայի** ծովին: Ծովն են թափվում Բատանգհարի, Մուսի, **Կապուաս** և այլ գետեր: Երկարությունը՝ 750 կմ, լայնությունը՝ 530 կմ:
Անվանումը ստացել է *Նատունա* կղզիներից:

ՆԳԱԴԻ ՉՈՒԼԻ - նեպալերեն गाडी चुली Նգադի Չուլի. լեռնագագաթ **Հիմալայներում**, Մանսիրի Հիմալ լեռներում՝ **Մանասլու** և **Հիմալչուլի** լեռների միջև, Նեպալում: Մա-նասլուից՝ 5,21 կմ հեռավորությամբ: Կան շատ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 871 մ, հարաբերականը՝ 1 020 մ:
Նգադի Չուլի անվանումը նեպալերենից թարգմանաբար նշանակում է *Երերուն սրածայր պիկ*:

ՆԵԳՐՈՍ - սեբուանո Negros, հիլիգայնոն Negros, անգլերեն Negros, տագալերեն Negros, վարայերեն Negros. կղզի **Ֆիլիպինյան կղզեխմբի** կենտրոնական մասում, **Վիսայան** կղզիների կազմում: Հյուսիսից ողողվում է **Վիսայան**, հարավից՝ **Սուլու** ծովերով: Մակերեսը լեռնոտ է, արևմտյան ափերը ցածրադիր: **Պանայ** կղզուց ան-ջատված է Գիմարաս, **Սեբու** կղզուց՝ Տանյոն նեղուցներով: Խոշոր գետերն են՝ Հի-մոգաան, Սիպալայ, Տայաբանոն, Կոլիպապա և այլն: Խոշոր լճերն են՝ Բալինսա-սայոն և Կաբալինանը: Մակերեսը՝ 13 328,4 կմ^2: Ափի երկարությունը՝ 644,9 կմ: Բարձր կետը՝ Կանլաոն հրաբուխ (2 465 մ):
Ի սկզբանե տեղացիներին կղզին հայտնի էր Բուգլաս անվամբ, որը հին հիլիգայ-նոն լեզվով նշանակում է կտրել: Երբ իսպանացիները 1565 թ. ապրիլին ժամանե-ցին կղզի, այն անվանեցին *Նեգրոս*, նկատի ունենալով բնիկների մաշկի գույնը:

ՆԵՄՐՈՒԹ - թուրքերեն Nemrut Dağı, քրդերեն Nemrod. գործող, բազմաձին ստրա-տոհրաբուխ **Հայկական լեռնաշխարհում**, **Վանա** լճից արևմուտք, Դատվան քաղա-քից 10 կմ հյուսիս-արևմուտք, այժմյան Թուրքիայում: Հրաբուխը էլիպսաձև է, նրա չափերը հիմքում կազմում են 27 x18 կմ: Հրաբխի գագաթը իրենից ներկայացնում է խոշոր՝ 46,7 կմ^2 մակերեսով կալդերա, որի մեջ գոյացել է 9 կմ^2-ոց և մինչև 176 մ խորությամբ քաղցրահամ Նեմրութ լիճը: Հետագայում, առանձնացվել է ևս մեկ՝ Ըլը լիճը: Վերջին ժայթքումը տեղի է ունեցել 1692 թ-ին: Բարձրությունը ծովի մա-կարդակից 2 948 մ, հարաբերականը՝ 1 250 մ: Խառնարանը 2 500 մ բարձրության վրա է, ամենամեծը **Հայկական լեռնաշխարհում**՝ տրամագիծը 8 000 մ:
Հայ մատենագրության մեջ հայտնի էր Սարակն *մռայլ*, *ջղայն* անունով:
Անվանվել է Բել աստծո աստվածաշնչյան *Նեբրովթի* (*Նիմրոտի*) պատվին:

ՆԵՄՐՈՒԹ - հունարեն Όρος Νεμρούτ, պարսկերեն نمرود کوه, քրդերեն Çiyayê Nemrûdê, թուրքերեն Nemrut Dağı. լեռնագագաթ **Հայկական լեռնաշխարհում**, **Տավրոսի** լեռներում, այժմյան Թուրքիայում: Ձգվում է **Եփրատ** գետի երկայնքով: Բարձրությունը ծովի մակարդակից 2 150 մ:
Լեռան 2 000 մ բարձրության վրա հայտնաբերված է Կոմմագենեի Անտիոքոս Ա Երվանդունի թագավորի (մ.թ.ա. 69-34) կառուցած դամբարան-սրբավայրը:
Լեռան արդի անվանումը համեմատաբար նոր է և վերաբերվում է միջնադարին և անվանվել է Բել աստծո աստվածաշնչյան *Նեբրովթի* (*Նիմրոտի*) պատվին:

ՆԵՎԵԼՍԿՈՅԻ ՆԵՂՈՒՑ - ռուսերեն Пролив Невельского. նեղուց Եվրասիա մայրցամաքի և **Սախալին** կղզու միջև: **Թաթարական** նեղուցը միացնում է Ամուրի ծովալճակի հետ: Երկարությունը՝ 56 կմ, նվազագույն լայնությունը՝ 7,3 կմ: Առավելագույն խորությունը՝ մինչև 7,2 մ:
Անվանվել է 1849 թ. նեղուցը հայտնաբերած ռուս ծովակալ *Գ. Ի. Նևելսկոյի* պատվին:

ՆԵՐՔԻՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԾՈՎ - ճապոներեն 瀬戸内海 / せとないかい Սետո Նայկայ. Խաղաղ օվկիանոսի ծով, որն իրենից ներկայացնում է ծովերի՝ Հուշի, Բինգո, Հարիմա, Ակի, Սուո, Իյո, Բիսան Սետո և նեղուցների համակարգ: Հյուսիսում և արևելքում ողողում է **Հոնսյու** կղզու հարավային ափերի արևմտյան մասը, հարավարևմուտքում՝ **Կյուսյու** և հարավում՝ **Սիկոկու** կղզիների ափերը: Հարավ-արևմուտքում Հայասուի ու Բունգո, արևելքում՝ Կիի ու Նարուտո նեղուցներով միանում է Խաղաղ օվկիանոսին, իսկ արևմուտքում Սիմոնոսեկի նեղուցով՝ **Ճապոնական** ծովին: Ծովում տեղակայված են շուրջ 3 000 կղզի: Մակերեսը՝ 23 203 կմ^2: Երկարությունը՝ 450 կմ, լայնությունը՝ 37 կմ: Ծավալը՝ 865,472 կմ^3: Միջին խորությունը՝ 37,3 մ, առավելագույնը՝ 186 մ (հարավարևելյան մասում, Սադա հրվանդանից արևմուտք՝ Հալաուի նեղուց):

ՆԻԱՍ - ինդոնեզերեն Pulau Nias, նիասերեն Tanö Niha. կղզի Ինդոնեզիայում, Հնդկական օվկիանոսի արևելյան մասում: Մակերեսն առավելապես լեռնոտ է, գերակշռում են հրաբխային ծագման բլուրներ և սարահարթեր: Խոշոր գետերն են՝ Մուզոյ, Սովու, Օյո, Մոլա, Սուսուվա, Գոմո և այլն: Մակերեսը՝ 4 772 կմ^2: Երկարությունը՝ 125 կմ, լայնությունը՝ 40 կմ: Բարձր կետը՝ Լելեմացյուա լեռ (886 մ):
Կղզու տեղաբնիկների ինքնանունը Onö Niha է, որը բառացի նշանակում է *մարդու հետնորդ*: Չնայած նրան, որ կղզին նիասերենում հայտնի է Tanö Niha *Մարդկանց երկիր* անվամբ, Նիաս անվանումը, հավանաբար, Tanö Niha անվան հետագա հնչյունափոխության արդյունք է:

ՆԻԿՈԲԱՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - հինդի निकोबारद्वीपसमूह Նիկոբար դվ իպսամուհա, անգլերեն Nicobar Islands, թամիլերեն நிக்கோபார் தீவுகள் Նիքոբար տիվուկալ. 22 կղզիներից կազմված կղզեխումբ Հնդկական օվկիանոսի հյուսիսում, **Բենգալյան** ծոցի և **Անդամանյան** ծովի միջև: Կազմում է Անդամանյան և Նիկոբարյան կղզիներ

հնդկական դաշնային տարածքի մասը: Խոշոր կղզիներն են՝ Մեծ Նիկոբար, Չաուրա, Տերեսա, Տրինկատ, Նանկաուրի և այլն: **Անդամանյան** կղզիներից բաժանվում է **Տասներորդ աստիճանի** նեղուցով: Մակերեսը՝ 1 648.13 կմ^2: Կղզեխմբի բարձր կետն է համարվում՝ Տույե լեռը 642 մ (Մեծ Նիկոբար կղզում):

Այժմյան անվանումը,հավանաբար, առաջացել է կղզիների թամիլերեն நக்கா வரம் Նաքավարամ *մերկ մարդ* անունից:

ՆՈՀԿԱԼԻԿԱՅ - հինդի नोहकलिकाइ Նոհեկալիկաե, անգլերեն Nohkalikai Falls. Ամենաբարձր ջրվեժը Հնդկաստանում, Չերապունջի քաղաքի մոտ, Արևելյան Խասի բլուրներում: Սնվում է անձրևաջրերով: Անկման բարձրությունը՝ 340 մ:
Անվանումը բարբառային լեզվից թարգմանաբար նշանակում է *խելահեղ, կատաղի ցատկ*:

ՆՈՅՁԻՆ ՔԱՆՍԱՆ - տիբեթերեն གནོ་ཇིན་ཁང་བཟང Նոդ ցզին Գան զան, չինարեն 宁金抗沙峰 Նին ծին կան շա ֆընն. առանձնացված լեռնագագաթ **Հիմալայների** կենտրոնական մասում, **Տիբեթի բարձրավանդակում**, **Բրահմապուտրա** (Ցանգպո) գետի և Բարձր Հիմալայների միջև ընկած Կարո Լա լեռնախմբում՝ Լհագոի Քանգրի լեռնաշղթայում, Չինաստանում: **Թոնշանջիաբու** լեռնագագաթից 89,5 կմ հեռավորությամբ: Լեռնախմբի գլխավոր գագաթներն են՝ Նոյձին Քանսան 7 206 մ (կամ 7 208 մ), Քալուկսունգ 6 674 մ և այլն: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Հարաբերական բարձրությունը՝ 2 160 մ:
Հայտնի է նաև Նորինքանգ, Նոյցզիքանգսանգ և Նոցենքանսարի անվանումներով: Անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Վեհանձն ձյունածածկ լեռներում ապրող խավարի աստված*:

ՆՈՇԱՔ - փուշտու نوشــاخ / نوشــک , դարի نوشــاخ, ուրդու نوشــاخ. լեռնագագաթ **Հինդուկուշի** լեռնահամակարգում, Աֆղանստանի հյուսիսարևելյան մասում, Պակիստանի սահմանագլխին: Աֆղանստանի ամենաբարձր գագաթը: Տիրիչ Միր Արևմուտք II լեռնագագաթից 18,89 կմ հեռավորությամբ: Կան շատ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 492 մ, հարաբերականը՝ 2 024 մ:
Նոշաք անվանումը դարի լեզվից թարգմանաբար նշանակում է *Ինը հովիտ*:

ՆՈՐ ՍԻԲԻՐ - ռուսերեն Новая Сибирь, յակուտերեն Саҥа Сибиир арыы. կղզի **Նորսիբիրական** կղզեխմբում, Անժուի կղզիների կազմում: Ողողվում է **Արևելասիբիրական** ծովով, հարավարևմուտքից՝ **Սաննիկովի** նեղուցով: Բլագովեշչենսկի նեղուցով անջատված է **Կոտելնի** կղզուց: Կղզու ռելիեֆի նկատելի հատկանիշներից է այն, որ բարձրացումները տեղակայված են ափամերձ շրջաններում, իսկ կենտրոնական մասը ցածրադիր է: Խոշոր գետերն են՝ Բոլշայան, Օբվալը, Բերեգովայա, Սուտուլան, Սրեդնյայան: Խոշոր լճերն են՝ Չյոռնիխ Գուսեյ, Օտտոխ Կյուելե, Ձարա Կյուել, Մուտնոյե և այլն: Մակերեսը՝ մոտ 6 200 կմ^2: Երկարությունը՝ 156 կմ, լայնությունը՝ 65 կմ: Բարձր կետը՝ 79 մ (Դերևյանի լեռներ):

Կղզին 1806 թ-ին հայտնագործել են վաճառական Ս. Սիրովատսկու արդյունաբերողները: Новая Сибирь անվանումը կղզին ստացել է 1810 թ-ին ռուս բևեռախույզ Մ. Մ. Գեդենշտրոմի կողմից, նկատի ունենալով կղզու մեծությունն ու անկամորդ լինելը:
Հայերեն **Նոր Սիբիր** անվանումը կղզու ռուսերեն անվան պատճենն է:
ՆՈՐՍԻԲԻՐԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐ - ռուսերեն Новосибирские острова, յակուտերեն Саҥа Сибиир арыылара. կղզեխումբ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի **Լապտևների** և **Արևելասիբիրական** ծովերի միջև,որն իր հերթին բաղկացած է 3 կղզեխմբերից՝ Լյախովի, Անժուի և Դը Լոնգի կղզիներից: Մակերեսը ծածկված է արկտիկական տունդրային բուսականությամբ: Խոշոր գետերն են՝ Բալիկտախ, Բոլշայա, Ուլախան Յուրյախ, Գուոր Յուրյախ և այլն: Խոշոր լճերն են՝ Եվսեկյու Կյուել, Մելկոյե, Կետետ Կյուել, Գլուբոկոյե և այլն: Մակերեսը՝ 38 400 կմ^2: Բարձր կետը՝ 426 մ (Բեննետի կղզում):
Անվանումը ստացել է Անժուի կղզիների խմբի մեջ մտնող *Նոր Սիբիր* կղզուց:

ՆՈՒՊՑԶԵ - տիբեթերեն ནུ་པ་རྩྭ་ Նուբ րցե, նեպալերեն नुब्चे Նուպցզե. յոթ գագաթանի լեռ Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայի՝ Կհումբու շրջանում, Նեպալում: Լհոցզե-Նուպցզե լեռնազանգվածի արևմտյան հատվածն է: **Ջոմոլունգմայից** 4,19 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 861 մ, հարաբերականը՝ 319 մ:
Լեռան անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Արևմտյան Պիկ*:

Շ

ՇԱՆ - բիրմայերեն ရှမ်းကုန်းမြင့်မြင့်Շամ յոնե պյին մյան, չինարեն 掸邦高原 Դանբան գաոյուեն, թայերեն ฉานโยนา Շան յոմա. խոշորագույն լեռնաշխարհ Հարավարևելյան Ասիայում՝ Մյանմայում,Չինաստանում, Լաոսում և Թայլանդում: Հիմնականում տեղակայված է Մյանմայի արևելյան մասում՝ **Իրավադի** գետի ակունքներից արևմուտք: Այստեղով է հոսում Սալուին գետը: Լեռնաշխարհից են սկիզբ առնում բազմաթիվ գետեր՝ Մա, Յի Տու, Նամլանգ, Զավգյի, Իլու Տենգ, Հկա, Հկոկ, Հոկ, Պանգ և այլն: Մակերեսը՝ 150 000 կմ^2: Երկարությունը՝ 560 կմ, լայնությունը՝ 330 կմ: Միջին բարձրությունը՝ 750-1200 մ: Բարձր գագաթը՝ Լոյ Լենգ լեռ (2673 մ):
Լեռնաշխարհն իր այժմյան անվանումը ստացել է այստեղ բնակվող *Շան* ժողովրդից, որի անունն իր հերթին առաջացել է **Շանի** բարձրադիր մասը գբաղեցնող *Միամ* բարձրավանդակից:

ՇԱՆԴՈՒՆ - չինարեն 山东半岛 Շենդոն պենդա. թերակղզի Չինաստանի արևելքում: Հյուսիսից ողողվում է **Բո Հայ** և Կորեական ծոցերով, արևելքից և հարավից՝ **Դեղին** ծովով: Խոշոր գետերն են՝ Դագուջիա, Բուլոնգ, Դագու և այլն: Մակերեսը՝ 38

642,01 կմ^2: Երկարությունը՝ 260 կմ, լայնությունը՝ 80-130 կմ: Բարձր կետը՝ Լաոշան լեռ (1 132,7 մ):

Անվանումը կազմված է չինարեն 山 շան *լեռ* և 东 դոն *արևելք* բառերից, որը բառացի նշանակում է *Լեռներից արևելք*՝ հաշվի առնելով թերակղզու դիրքը Թայիան լեռների նկատմամբ:

ՇԱՆՏԱՐՅԱՆ ԾՈՎ - երբեմն այդպես են կոչում հյուսիսից՝ Շանտարյան Մեծ, արևելքից՝ Շանտարյան Փոքր կղզիներով, հարավից՝ Տուգուրի ծոցով, արևմուտքից՝ Ուդայի խորշով և հյուսիս-արևմուտքից՝ Ֆեկլիստովի կղզիով սահմանափակված Օխոտի ծովի հյուսիսարևմտյան մասը:

ՇԵԼԻԽՈՎԻ ԾՈՑ - ռուսերեն Залив Шелихова. **Օխոտի** ծովի ծոց, Ասիա աշխարհամասի և բուն **Կամչատկա** թերակղզու միջև: Հյուսիսային մասում Տայգոնոս թերակղզով բաժանվում է Գիժիգայի և Պենժինայի խորշերի: Ծոցի հարավային մասում են գտնվում Յամայի կղզիները: Ծոցն են թափվում Գիժիգա, Պենժինա, Յամա, Մալկաչան, Էտալոնա,Պալանա և այլ գետեր: Մակերեսը՝ 72 450 կմ^2: Երկարությունը՝ 650 կմ, միջին լայնությունը՝ 230 կմ: Ծավալը՝ 9 418,5 կմ^3: Միջին խորությունը՝ 130 մ, առավելագույնը՝ 445 մ (հարավային մասում):
Անվանվել է XVIII դ. ռուս հետազոտող, ծովագնաց և վաճառական *Գ.Վ.Շելիխովի* պատվին:

ՇԵՐՊԻ ՔԱՆԳՐԻ - հինդի शेरपी कांगरी Շերպի Կանգարի, ուրդու کےـــــیرپیش نگر. լեռնագագաթ **Կարակորումում**, Հնդկաստանի ու Պակիստանի սահմանագլխին: **Գենտ Քանգրի** լեռից 5,95 կմ հեռավորությամբ: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 380 մ, հարաբերականը՝ 1 000 մ:
Շերպա անվանումը կազմված է տիբեթերեն շյար *արևելք* և պա *ժողովուրդ* բառերից:

ՇԻԿՈՑՈՒ - ճապոներեն 支笏湖 Շիկոցու կո, այներեն「シ・コッ」Շի կո-ցու. քաղցրահամ լիճ **Ճապոնական կղզիներում**, **Հոկայդո** կղզու հարավարևմտյան մասում, Տարումաե հրաբխի ստորոտում: Լիճն են թափվում Բիֆու, Օկոտանպե, Նինարու, Ֆուրենայ և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Չիտոսեն: Մակերեսը՝ 78,48 կմ^2: Երկարությունը՝ 19 կմ, լայնությունը՝ 16 կմ: Ծավալը՝ 20,83 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 223 կմ^2: Լճափի երկարությունը՝ 40,4 կմ, ջրի պարզությունը՝ 17,5 մ: Միջին խորությունը՝ 265,4 մ, առավելագույնը՝ 360,1 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 247 մ:
Անվանման հիմքում ընկած է այներեն シコット Սիկոտտո *իջվածք*, *դատարկություն* բառը:
Ճապոներենում անվանումը հնչում է իբրև Շիկոցու կո *Մեռած ոսկորներ*, որի պատճառով նրանք մի քանի անգամ փորձել են փոխել լճի անունը, բայց ապարդյուն:

ՇԻՇԱԲԱՆԳՄԱ - չինարեն 希夏邦马峰 Սի սյա պանգ մա ֆըն, նեպալերեն शिशापाङ्मा Սիսապանմա,սանսկրիտերեն गोसाईथान Գոսաինտհան.բազմագագաթ լեռնազանգված Կենտրոնական Տիբեթում, Զուգալ Հիմալ լեռներում, Չինաստանում: Լեռնագագաթներն են՝ Շիշաբանգմա Գլխավոր 8 027 մ, Շիշաբանգմա Կենտրոնական 8 008 մ և այլն: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Հարաբերական բարձրությունը՝ 2 897 մ: Առաջին անգամ 1964 թ. մայիսի 2-ին, Շիշաբանգմայի գագաթն են բարձրացել Սյու Ցզինի ղեկավարած չինական արշավախմբի ինն անդամները:
Լեռան սանսկրիտերեն गोसाईथान Գոսաինտհան անվանումը բառացի նշանակում է *սրբերի վայր*, *սրբավայր*:
Տիբեթերեն Շիշաբանգմա անվանումը թարգմանվում է իբրև *Խոտավետ հարթավայրից վերև*:

ՇԻՍՊԱՐԵ - ուրդու شیسپر. լեռնագագաթ **Կարակորումի** արևմտյան մասում, Բատուրա Մուզտաղ լեռներում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող շրջանում: **Բատուրա Սարից** 16,18 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 611 մ, հարաբերականը՝ 1 241 մ:
Հայտնի է նաև Շիսպար սար կամ Շիսպարե սար անվամբ:

ՇԻՐԱԲԱԴ - պարսկերեն رآباد شیر آبشار Աբշար Շիրաբադ. ջրվեժ Հյուսիսային Իրանում, Էլբուրս լեռներում, Խանբեբին բնակավայրից 6 կմ հարավ՝ անտառում: Կազմված է տասներկու մեծ ու փոքր սանդղավանդներից: Բացարձակ բարձրությունը՝ 257 մ:
Անվանումը կազմված է պարսկերեն شیر շիր, *կաթ* և آباد աբադ, *բնակավայր* բառերից:

ՇՐԻ ԼԱՆԿԱ- սինհալերեն ශ්‍රී ලංකාව Շրի Լամկավա, թամիլերեն இலங்கை Իլանկայի, սանսկրիտերեն श्रीलङ्का Շրիլանկա, անգլերեն Sri Lanka. կղզի Հարավային Ասիայում: Ողողվում է Հնդկական օվկիանոսով և **Բենգալյան** ծոցով: **Մանարի** ծոցով և **Փոլկի** նեղուցով անջատված է **Հնդստան** թերակղզուց: Խոշոր գետերն են՝ Մահավելի Գանգա, Արուվի Արու, Պարանգի Արու, Յան, Կելանի, Գանգա, Գալ և այլն: Մակերեսը՝ 65 610 կմ^2: Երկարությունը՝ 445 կմ, լայնությունը՝ 225 կմ: Ափի երկարությունը՝ 1 340 կմ: Բարձր կետը՝ Պիդուրուտալագալա լեռ (2 524,13 մ):
Մինչև 1972 թ. կղզին անվանվել է Ցեյլոն (սանսկրիտերեն सिंहल द्वीप Սինհալա դվիպա *Առյուծների կղզի*):
Այժմյան **Շրի Լանկա** անվանումը սանսկրիտերենից թարգմանաբար նշանակում է *Օրհնյալ երկիր*:

Չ

ՉԱԳՈՍ - անգլերեն Chagos Archipelago, ֆրանսերեն Archipel des Chagos, դիվեհի ؋ؤؤؤ؋ Ֆոապհավահի,հինդի चेहंद्वीप Պիեհանդվիպ, թամիլերեն சேகான தீவுகள் Պեկանա Տիվուկալ.յոթ ատոլում խմբված 64 կղզիներից կազմված կղզեխումբ Հնդկական օվկիանոսի կենտրոնական մասում: Աղեղնաձև ձգվում են շուրջ 350 կմ երկարությամբ, հյուսիս-հարավ ուղղությամբ: Կղզիներն են՝ Դիեգո Գարսիա, Էգմոնտ, Արևմտյան Էգմոնտ, Պերոս Բանիոս, Պիեռ, Կուան և այլն: Ցամաքային մակերեսը՝ 56,13 կմ^2: Ծովափի երկարությունը՝ 798 կմ: Բարձր կետը 15 մ է Դիեգո Գարսիա կղզում:
Նախկինում հայտնի էին նաև Նավթային կղզիներ անվամբ:

ՉԱՄԼԱՆԳ - նեպալերեն चाम्लङ բազմագագաթ լեռնազանգված կենտրոնական **Հիմալայներում**, Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայում, Նեպալում: **Մակալու** լեռնագագաթից 16,35 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի հիմնական գագաթներն են՝ Չամլանգ 7 319 մ, Չամլանգ II 7 296 մ, Կենտրոնական 7 150 մ, Արևելյան 7 235 մ, Տուրցե (Պիկ 6) և Պիկ 7: Ունի բազմաթիվ սառցադաշտեր: Լեռնազանգվածից արևմուտք են գտնվում Հունգկու Դրանգկա հովիտը, ինչպես նաև երկու սառցադաշտային լճեր: Հարաբերական բարձրությունը՝ 1 193 մ:
Հայտնի է նաև Չամլանգ I անվամբ:
Անվանումը շերպա լեզվից թարգմանաբար նշանակում է *Թևերը թափահարող մեծ թռչուններ*:

ՉԱՆՉԵ - տիբեթերեն ཚང՝ Չանգզե, չինարեն 章子峰 Ճան զը ֆըն. լեռնագագաթ Կենտրոնական **Հիմալայներում**, Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայում, Գլխավոր և Արևելյան Ռոնգբուկ սառցադաշտերի միջև, **Ջոմոլունգմայից** 4,16 կմ հյուսիս, Տիբեթում: Հյուսիս- արևմուտքից եզերում է Կանշունգ հովիտը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 553 մ, հարաբերականը՝ 497 մ:
Անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Հյուսիսային Պիկ*:

ՉԵՐՍԿՈՒ ԼԵՌՆԱՇՂԹԱ - ռուսերեն Хребет Черского, յակուտերեն Черскэй хайалара. լեռնահամակարգ Սիբիրի հյուսիս-արևելքում, Սախայում և Մագադանի մարզում: Ձգվում է Յանա գետի ստորին հոսանքից մինչև **Կոլիմայի** վերին հոսանքը: Հարավ-արևմուտքում եզերված է **Յանա-Օյմյակոնի բարձրավանդակով**, հյուսիս-արևելքում՝ Մոմո-Սելենյախայի միջլեռնային իջվածքով: Լեռների արևմտյան մասում են տեղակայված Խադարանյա, Տաս Խայախտախ, Չեմալգինի, Կուրունդյա, Դոգդո, Չիբագալախի, Բորոնգ, Սիլյապայի, արևելքում՝ Ուլախան Չիստայ, Չերգե, հյուսիսում՝ Սելենյախայի, Մոմայի և այլ լեռնաշղթաները: Այստեղից են սկիզբ առնում Մոմա, Էրիկիտ, Տիրեխտյախ և բազմաթիվ այլ գետեր: Երկարությունը՝ 1 500 կմ: Բարձր գագաթը՝ Պոբեդա լեռ (3 003 մ):
Լեռնահամակարգը 1926 թ. ուսումնասիրվել է Ս.Վ. Օբրուչևի և Կ.Ա. Սալիշչևի կողմից ու անվանվել երկրաբան, հնէաբան, աշխարհագրագետ *Ի.Դ. Չերսկու* պատվին:

ՉԺՈՒՑԶՅԱՆ - չինարեն 珠江/粤江 / 粤江 Չժուցզան / Յուեցզյան / Յուեցզյան, պորտուգալերեն Rio das Pérolas,վիետնամերեն Châu Giang. գետ Չինաստանի հարավում: Չինաստանի՝ երկարությամբ երրորդ և ջրառատությամբ՝ երկրորդ գետը: Սկիզբ է առնում Յուննան մարզի հարավարևելյան մասի լեռներից ու հոսելով արևելյան ուղղությամբ և առաջացնելով լայն դելտա, թափվում **Հարավչինական ծովը**: Վտակներն են՝ Սի, Դուն, Բեյ,Հան և այլն: Երկարությունը՝ 2 400 կմ: Ավազանը՝ 453 700 կմ^2: Ջրի ծախսը՝ 9 500 մ^3/վրկ:
Անվանումը չինարենից բառացի թարգմանաբար նշանակում է *Մարգարտյա գետ*:

ՉԻՆԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՐԹԱՎԱՅՐ - չինարեն 大中华平原 Տա Չժունհու փինյուեն. խոշորագույն, տափարակ հարթավայր Չինաստանի հյուսիսարևելյան մասում: Իր մեջ է ընդգրկում Հյուսիսչինական և Յանցզիի միջին ու ստորին հոսանքի հարթավայրերը: Ձգվում է շուրջ 1 000 կմ, **Դեղին** և **Արևելաչինական ծովերի** երկայնությամբ: Հարթավայրի արևելյան մասում են գտնվում Շանդունի լեռները: Խոշոր գետերն են՝ **Հուանհե**, Հուայ, Լուան և այլն: Տարածությունը՝ 325 000 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝ մինչև 100 մ (միջինը՝ 75 մ):
Հարթավայրն իր անունը ստացել է *Չինաստան* երկրից:

ՉՈ ՕՅՈՒ - տիբեթերեն

দ্দ্রদ্দ্রদ্দ্র্য Չո բո դբու յագ, նեպալերեն चोयु Չոյու, չինարեն 卓奥友峰 Չուա էո յու ֆընն. լեռնագագաթ **Հիմալայներում**, Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայում, **Ջոմոլունգմա** լեռնազանգվածում, Չինաստանի ու Նեպալի սահմանագլխին: Կան սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 8 188 մ, հարաբերականը՝ 2 344մ: Առաջին անգամ 1954 թ. հոկտեմբերի 19-ին, Չո Օյուի գագաթն են բարձրացել ավստրիական արշավախմբի անդամներ՝ Հերբերտ Տիխին, Յոզեֆ Յոխլերը և շերպա Պասանգ Դավա Լաման:
Հավանաբար անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Ձորեղ գլուխ* կամ *Աստծո գլուխ*:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը հավանաբար կազմված է տիբեթերեն չոմո *աստվածուհի* ու յո *փիրուզ* բառերից՝ *Փիրուզի աստվածուհի*:

ՉՈԳՈԼԻԶԱ - ուրդու چھوغو لیسا Չոգո լինգ սա. երկգագաթանի լեռ **Կարակորումում**, Մաշերբրում լեռներում, **Բալտորո** սառցադաշտի ակունքներում, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: **Գաշերբրում I-**ից 16,5 կմ հեռավորությամբ: Տեղակայված է 8 000 մ-ից ավելի բարձրություն ունեցող՝ **Կ2, Գաշերբրում II** և **Բրոադ Պիկ** լեռնագագաթների մոտ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Չոգոլիզա I 7 668 մ և Չոգոլիզա II (Բրայդ Պիկ) 7 657 մ: Կան շատ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 668 մ, հարաբերականը՝ 1 624 մ:
Չոգոլիզա անվանումը ուրդու լեզվից բառացի թարգմանվում է որպես *Մեծ որս*:

ՉՈՄՈ ԼՈՆՁՈ - չինարեն 珠穆隆索 Չումուլոնսուա. եռագագաթ լեռնազանգված Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայում, Տիբեթում: **Մակալու** լեռից 4,14 կմ հեռավո-

ությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Չոմո Լոնզո Գլխավոր 7 804 մ, Չոմո Լոնզո Հյուսիսային 7 199 մ և Չոմո Լոնզո Կենտրոնական 7 540 մ: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 804 մ, հարաբերականը՝ 590 մ:
Չոմո Լոնզո անունը թարգմանաբար նշանակում է *Թռչունների աստվածուհի*:

ՉՈՆԳԹԱՐ ՔԱՆԳՐԻ - ուրդու چونگتر کانگری. բազմագագաթ լեռնազանգված **Կարակորումում**, Պակիստանի ու Չինաստանի սահմանագլխին: **Սքիլ Բրում** լեռից 7,64 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի հիմնական գագաթներն են՝ Չոնգթար Քանգրի 7 315 մ, Չոնգթար Հյուսիսային 7 250 մ, Չոնգթար Հարավային 7 180 մ, Չոնգթար Հյուսիսարևելյան 7 145 մ, Չոնգթար II 6 857 մ և այլն: Հարաբերական բարձրությունը՝ 1300 մ:
Հայտնի է նաև Չոնգթար I և Չոնգթար Պիկ անուններով:

ՉՈՒԿՈՏՅԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - ռուսերեն Чукотское нагорье. միջին բարձրության լեռնաշղթաների և զանգվածների համակարգ, Հեռավոր Արևելքի հյուսիսարևելյան մասում՝ Ռուսաստանի Դաշնությունում: Լինելով Արևելասիբիրական բարձրության մասը, ձգվում է Չաունի ծովախորշից մինչև **Անադիրի ծոցը**, իրարից բաժանելով Խաղաղ ու Հյուսիսային սառուցյալ օվկիանոսների ավազանները: Այստեղ կան շուրջ 100 սառցադաշտեր: Բարձրավանդակով են հոսում՝ Ամգուեմա, Պեգտիմել, Պալյավաամ, Բելայա, Կանչալան և բազմաթիվ այլ գետեր: Այստեղ են գտնվում՝ Իոնի, Կոոլեն, Էլգիգիթգին, Էկիտիկի և այլ լճեր: Երկարությունը՝ 450 կմ: Միջին բարձրությունը՝ 1 000-1 800 մ: Բարձր գագաթը անանուն է (1 887 մ, Չանտալի լեռներում):
Անվանումը ստացել է *Չուկոտկա* աշխարհագրական երկրամասից:

ՉՈՒԿՈՏՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ - ռուսերեն Чукотский полуостров, չուկչիերեն Чукоткакэн тэпк'эн. թերակղզի Եվրասիա մայրցամաքի ծայր հյուսիսարևելյան մասում: Հյուսիսից ողողվում է **Չուկոտյան**, հարավից՝ **Բերինգի** ծովերով: Խոշոր գետերն են՝ **Անադիր**, Օմոլոն, Վելիկայա, Ամգուեմա և այլն: Մակերեսը՝ 69 870,7 կմ^2: Երկարությունը՝ 370 կմ, լայնությունը՝ 280 կմ: Բարձր կետը՝ Վելիկան լեռ (1 525 մ):
1728 թ. անվանվել է հայտնի դանիացի ծովագնաց Վիտուս Բերինգի կողմից այստեղ բնակվող *չուկչի* ժողովրդից:

ՉՈՒԿՈՏՅԱՆ ԾՈՎ - ռուսերեն Чукотское море, անգլերեն Chukchi Sea. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծայրամասային ծով, Չուկոտկայի և Ալյասկայի թերակղզիների միջև: Ողողում է Ասիայի հյուսիսարևելյան և Հյուսիսային Ամերիկայի հյուսիսարևմտյան ափերը: Արևմուտքում **Լոնգի** նեղուցով միանում է **Արևելասիբիրական** ծովին, արևելքում Բառոու հրվանդանի մոտակայքում՝ Բոֆորտի ծովին և հարավում Բերինգի նեղուցով՝ Խաղաղ օվկիանոսին: Ափերը թույլ մասնատված են: Ծովի վրայով է անցնում ամսաթվերի փոփոխման գիծը: Խոշոր կղզիներն են՝ **Վրանգելի**, Հերալդի, Կոլյուչինի և այլն: Խոշոր ծոցերն են՝ Կոցեբու, Կոլյուչինի խորշ, Շիշմարյովի ծովախորշ և այլն: Ծովն են թափվում Ամգուեմա, Նոատակ և

այլ գետեր: Մակերեսը՝ 589 600 կմ^2: Երկարությունը՝ 1 160 կմ, լայնությունը՝ 700 կմ: Ծավալը՝ 41 862 կմ^3: Միջին խորությունը՝ 71 մ, առավելագույնը՝ 1 256 մ (հյուսիսարևելյան մասում):
Անվանումը ստացել է ծովի ափերին բնակվող *չուկչի* ժողովրդի անունից:

Պ

ՊԱԼԱՎԱՆ - սեբուանո Palawan, իլոկաներեն Palawan, տագալերեն Palawan, վարայերեն Palawan, անգլերեն Palawan. կղզի **Ֆիլիպինյան կղզեխմբի** արևմուտքում, **Հարավչինական** և **Սուլու** ծովերի միջև: Կղզու տարածքի մեծ մասը զբաղեցնում են լեռները, ջունգլիներն ու անտառները: Խոշոր գետերն են՝ Իլիան, Տարադունգան, Մալասգաո, Իլոգ և այլն: Մակերեսը՝ 12 188,6 կմ^2: Երկարությունը՝ 425 կմ, լայնությունը՝ մինչև 40 կմ: Ափի երկարությունը՝ 1 354,1 կմ: Բարձր կետը՝ Մանտալինգախան լեռ (2 085 մ):
Կղզու այժմյան անվանման ծագումն ունի մի քանի վարկած: Ամենահավանականն այն է, որ Պալավան անվան հիմքում ընկած է իսպաներեն paragua *հովանոց* բառը, որովհետև կղզու ձևը հիշեցնում է փակ հովանոց:
Որոշ հետազոտողներ պնդում են, որ անվանման հիմքում ընկած է չինարեն 帕劳瑜 Պա Լաո Յու *Հրաշալի նավահանգիստների երկիր* արտահայտությունը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է սանսկրիտերեն पालवान պալավանա *տարածք* բառից:
Կա նաև կարծիք, որ անվանումն առաջացել է տեղացիների կողմից *պալվա* կոչվող բույսի անունից:

ՊԱՄԻՐ - տաջիկերեն Помир, պարսկերեն پامیر Փոմիր, ղըրղըզերեն Памир, ույղուրերեն پامیر Փամիր Եզգիզլիկի, չինարեն 帕米爾 Փամի եր, ուրդու پامیر سلسلہ کوہ Պամիր Կուհեստան, փուշտու غرونپامیر Դա Փեմիր Ղրունա, դունգաներեն پَامِعَر / ضْوْلْ.. բարձրադիր լեռնահամակարգ Կենտրոնական Ասիայի հարավային մասում, Տաջիկստանում, Չինաստանում, Աֆղանստանում և Պակիստանում: Լեռները հարուստ են սառցադաշտերով, այստեղ է գտնվում **Ֆեդչենկոյի սառցադաշտը**: **Պամիրից** են սկիզբ առնում՝ Կաշգար, Մուրղաբ, Ալիչուր, Շահդար, Գունտ, Պամիր և այլ գետեր: Մակերեսը՝ 120 000 կմ^2: Երկարությունը՝ 500 կմ, լայնությունը՝ 300 կմ: Բարձր գագաթը՝ Կոնգուր լեռ (7 649 մ):
XIX դարից սկսած լեռները հայտնի են *Աշխարհի տանիք* թևավոր բնորոշմամբ, որը լեռների տաջիկերեն Бом и дуние անվան բառացի թարգմանությունն է:
Հավանական է, որ անվանումն առաջացել է հին իրաներեն Pa i Mih-ի, *Միհրի* (*արևի աստծո*) *ստորոտ* անունից:

Այլ բացատրություններից առավել ճշմարտանման է թվում այն, որ լեռների անվան առաջացումը կապված է Պամիր աշխարհագրական տերմինի հետ, որով նշվում են բարձր լեռնային, համեմատաբար հարթ, լանդշաֆտները կամ **U**-աձև հովիտները:

ՊԱՆԱՅ - հիլիգայնոն Panay, տագալերեն Panay, անգլերեն Panay. կղզի **Ֆիլիպինյան կղզեխմբում**: Գիմարաս նեղուցով անջատված է **Նեգրոս** կղզուց: Հյուսիս-արևելքից ողողվում է **Վիսայան**, հյուսիսից՝ **Սիբույան** և հարավից՝ **Սուլու** ծովերով: Կղզու արևմտյան մասը լեռնոտ է (Կորդիլիերաս լեռնաշղթա), արևելյանը՝ մեղմաթեք: Խոշոր գետերն են՝ Պանայ, Ջալաուր, Ակլան, Սիբալոմ, Տիգում, Իլոիլո, Կանգարանան, Դալանաս, Պալիվան, Տիբիաո, Կայրավան, Իբաջայ և այլն: Մակերեսը՝ 12 011,1 կմ^2: Բարձր կետը՝ Նանգտուդ հրաբուխ (2 049 մ):
Հավանաբար այժմյան Պանայ անվանումը կղզուն տրվել է Ֆիլիպինների իսպանացի նահանգապետ և գեներալ-կապիտան Գոնսալո Ռոնկիլյո դե Պենյալոսայի կողմից, ով հասնելով այս վայրերն անվանեց այն Pan hay *Հաց կա*:

ՊԱՆԳՈՆԳ - տիբեթերեն ལྷན་གཞོང་ սպանգ գոնգ մցhո, հինդի पांगोंग त्सो Պանգոնգ gn, չինարեն 班公错 Բան գոն քուո.անհոսք լիճ **Հիմալայներում**, Հնդկաստանի Ջամմու և Քաշմիր նահանգի և Չինաստանի Տիբեթի ինքնավար շրջանի սահմանագլխին: Լիճն են թափվում Չեշուլ, Պագալ և այլ գետեր: Մակերեսը՝ 687,84 կմ^2: Երկարությունը՝ 134 կմ, լայնությունը՝ 8 կմ: Ջրահավաք ավազանը՝ 36,87 կմ^2: Միջին խորությունը՝ 53,6 մ, առավելագույնը՝ 100 մ (արևմտյան մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 238 մ:
Անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *բարձրադիր մարգագետնային լիճ*:

ՊԱՐԱՄՈՒՇԻՐ - ռուսերեն Парамушир, այներեն ぱらむしる / ほろむしろ Պարամուսիրու / Հորոմուսիրո, ճապոներեն 幌筵 Հորոմուշիրո. մեծությամբ երկրորդ կղզին **Կուրիլյան կղզեխմբում**: Արևմուտքից ողողվում է **Օխոտի** ծովով, արևելքից՝ Խաղաղ օվկիանոսով: Կղզում կա 23 հրաբուխ, որոնցից հինգը գործող են՝ Չիկուրաչկի, Էբեկո, Տատարինովի, Ֆուսսի, Կարպինսկու: Ալաիդ նեղուցով անջատված է Ատլասովի, Կուրիլյան Երկրորդ նեղուցով՝ Շումշու, Լուժինի (Կուրիլյան Երրորդ) նեղուցով՝ Անցիֆերովի, Կուրիլյան Չորրորդ նեղուցով՝ Օնեկոտան և Մականրուշի կղզիներից: Շրջապատված է մանր կղզիներով՝ Ճայի, Կիտ, Պտենեց, Բազառնի, Բարիեռնի, Դիմ, ինչպես նաև խութերով և ժայռերով՝ Տորչկի, Ունո, Օպասնայա, Խիտրայա, Խմիր, Պենիստիե և այլն: Մակերեսը լեռնոտ է: Խոշոր գետերն են՝ Տուխարկա, Շիմոյուր, Յուրևկա, Գորշկովի, Պրոգրաչնայա, Օկեանսկայա և այլն: Խոշոր լճերն են՝ Ձերկալնոյեն, Գլուխոյեն, Պեռնատոյեն: Մակերեսը՝ 2 053 կմ^2: Երկարությունը՝ 120 կմ, լայնությունը՝ մինչև 30 կմ: Բարձր կետը՝ Չիկուրաչկի հրաբուխ (1 816 մ):

Անվանումն առաջացել է կղզու այներեն ぱらむしる Պարամուսիրու *Լայնարձակ կղզի* անունից:

ՊԱՐԱՍԵԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - չինարեն 西沙群岛 Սիշա ցինդաո, վիետնամերեն **Quần đảo Hoàng Sa**. կղզեխումբ **Հարավչինական** ծովում: Գտնվում է **Հայնան** կղզուց 230 կմ հարավ, Վիետնամից՝ 200 կմ արևելք: 1974 թ-ից վերահսկվում է Չինաստանի և Վիետնամի կողմից: Բաղկացած է 130 կղզուց՝ Վուդի, Թրի, Ռոբերտ, Լինկոլն, Դանկան և այլն: Մակերեսը՝ 7,8 կմ^2: Ափի երկարությունը՝ 518 կմ: Բարձր կետը՝ 14 մ (Ռոքի կղզի):
Կղզեխումբն անվանումը ստացել է այս շրջանի հին պորտուգալական քարտեզներում ծանծաղուտները նշելու համար օգտագործվող Parcel կամ Pracel *փաթեթ*, *կապոց* բառից:

ՊԱՐՍԻՑ ԾՈՑ - պարսկերեն خلیج فارس խալիջ է փարս, արաբերեն **العربي الخليج** էլ խալիջ էլ արաբիյու. ծոց Իրանի և **Արաբական** թերակղզու միջև: **Հորմուզի** նեղուցով ու **Օմանի** ծոցով միանում է **Արաբական** ծովին և Հնդկական օվկիանոսին: Ողողում է Օմանի, ԱՄԷ-ի, Սաուդյան Արաբիայի, Կատարի, Բահրեյնի, Քուվեյթի, Իրաքի և Իրանի ափերը: Խոշոր կղզիներն են՝ Քեշմ, Բուբիյան, Բահրեյն, Քեյս, Հենդորաբի, Աբու ալ Աբյադ և այլն: Ծոցն են թափվում Շատ էլ Արաբ, Զոհրեի, Հելլեի, Ռուդ է Մանդ, Մեհրան և այլ գետեր: Մակերեսը՝ 237 473 կմ^2: Երկարությունը՝ մինչև 989 կմ, լայնությունը՝ 55-370 կմ: Ծավալը՝ 7 361,7 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ մոտ 1 400 000 կմ^2: Ափի երկարությունը՝ 5 930 կմ: Միջին խորությունը՝ 31 մ, առավելագույնը՝ 102 մ (հյուսիսային մասում):
Անվանումը ստացել է Իրանի հարավում գոյություն ունեցած *Փարս* կամ *Պարս* երկրամասի անունից:
Արաբական երկրները վիճարկում են ծոցի այժմյան անվանումը և ցանկանում են, որ այն անվանվի Արաբական ծոց:

ՊԵՏՐՈՍ ՄԵԾԻ ԾՈՑ - ռուսերեն Залив Петра Великого. **Ճապոնական** ծովի ծոց Ռուսաստանի Դաշնության Պրիմորիեի երկրամասում, արևելքում՝ Պովորոտնի հրվանդանի, իսկ արևմուտքում՝ Տումաննայա գետի գետաբերանի միջև: Ծոցի ափերը խիստ մասնատված են և իր հերթին առաջացնում մի շարք ներքին ծոցեր և խորշեր՝ Պոսյետի, Սլավյանսկի, Ամուրի, Ուսուրիի, Ստրելոկ, Վոստոկ, Նախոդկա և այլն: Խոշոր կղզիներն են՝ Ռուսկի, Պոպովի, Ռեյնեկեի, Ռիկորդի, Մոիսեևի, Ֆուրուգելմի, Ասկոլդ, Պուտյատինի և կղզեխմբերը՝ Ռիմսկի Կորսակովի, Պախտուսովի, Ժելտուխինի, Երկու Եղբայր: Ծոցն են թափվում Ռազդոլնայա, Արտյոմովկա, Ամբա և այլ գետեր: Մակերեսը՝ 9 000 կմ^2: Երկարությունը՝ մոտ 80 կմ, լայնությունը՝ մոտ 200 կմ: Ծավալը՝ 468 կմ^3: Ափի երկարությունը՝ մոտ 1 500 կմ: Միջին խորությունը՝ 52 մ, առավելագույնը՝ մոտ 200 մ (հարավային մասում):
1855 թ. ծոցը հայտնի էր Վիկտորիա անվամբ: 1859 թ. անվանվել է ռուսական կայսր *Պետրոս I Մեծի* պատվին:

ՊՈԴԿԱՄԵՆՆԱՅԱ ՏՈՒՆԳՈՒՍԿԱ - ռուսերեն Подкаменная Тунгуска, էվենկերեն Дулгу Катэнҗа. գետ Ռուսաստանի Դաշնությունում, **Ենիսեյի** աջ վտակը: Գետի ակունք է համարվում Անգարայի բլրաշարից սկիզբ առնող և Վերին Տունգուսյան բարձրավայրում, Կատանգա և Տետերե գետերի միացման կետը, ապա հոսելով Կենտրոնատունգուսյան ու Անդրանգարյան սարավանդներով, կտրում անցնում Ենիսեյի բլրաշարը և թափվում մայր գետը: Վտակներն են՝ ձախից՝ Կատանգա, Կամո, Վելմո, աջից՝ Չունյա, Տետերե, Չուլա և այլն: Երկարությունը՝ 1 865 կմ: Ավազանը՝ 240 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 1587,18 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 510 մ, գետաբերանինը՝ 27 մ:
Այժմյան անվանումը գետը ստացել է XVII դարում, ռուսների կողմից էվենկներին նախկինում տրվող *տունգուսներ* ցեղանունից: *Պոդկամեննայա* զանազանիչ որոշիչը բառացի նշանակել է *սարատակի*՝ հին ռուսերեն камень *սար*, *լեռ* բառից: Որոշ աղբյուներում հայտնի է նաև Միջին Տունգուսկա անունով:

ՊՈՅԱՆ - չինարեն 鄱阳湖 / 鄱陽湖 Պոյան հու. խոշոր քաղցրահամ լիճ Չինաստանի Ցզյանսի նահանգում, Յանցզի գետի աջափնյակում: Լիճն ունի 41 կղզիներ՝ Նիֆանգ, Չանգշանկուն, Լաոսիանգմիաս, Յոնգսիու և այլն: Լիճն են թափվում **Յանցզի**, Գան, Յուննան, Ֆու, Սին, Ռաո, Սյույ և այլ գետեր, իսկ արտահոսում՝ **Յանցզին**: Մակերեսը՝ 2 700 - 4 070 (այժմ 3 206,98) կմ^2: Երկարությունը՝ 173 կմ, առավելագույն լայնությունը՝ 74 կմ: Ծավալը՝ 26,94 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 162 225 կմ^2: Լճափի երկարությունը՝ 1 200 կմ: Միջին խորությունը՝ 8,4 մ, առավելագույնը՝ 25,1 մ (արևելյան մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 21,71 մ:
Նախկինում լիճը կոչվում էր Պենցզեհու կամ Պենհու:
Լիճն իր այժմյան անվանումը ստացել է նրա կենտրոնական մասում գտնվող *Պոյան* լեռից:

Ջ

ՋԱՎԱԽՔԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - վրացերեն ჯავახეთის მაღალმთიანი ջավախեթիս մաղալմթիանի. լեռնային երկիր **Հայկական լեռնաշխարհում**, Հայկական հրաբխային բարձրավանդակի հյուսիսային մասը: Ջավախքի բարձրավանդակը ծալքավոր ու հրաբխային լեռների՝ Սամսարի, Ջավախքի, էրուշեթի և այլն, լեռնազանգվածների՝ Մեծ Աբուլ, Փոքր Աբուլ, Շավնաբադ, սարավանդների՝ Ախալքալաքի, Դմանիսիի և այլն ու գոգավորությունների՝ Ծալկայի և Գոմարեթի համալիր է: Այստեղով են հոսում **Կուր**, Փարվանա, Քսիա, Չոբարեթ և այլ գետեր: Բարձրավանդակում են գտնվում՝ Փարվանա, Մադաթափա, Խանչալի, Խոզապին, Սաղամո, Տաբածկուր և այլ լճեր: Մակերեսը՝ 4 500 կմ^2 է: Միջին բարձրությունը՝ 1 800 մ: Բարձր գագաթը՝ Մեծ Աբուլ լեռ (3 301 մ):
Արգիշտի I թագավորի Խորխորի արձանագրության մեջ տարածքը հայտնի է Զաբախա անվամբ, որը հետագայում ենթարկվելով մի շարք փոփոխությունների Զաբախային փոխարինել է Ջավախան: Հնդեվրոպական լեզուներով խոսողները **բ**-ն

փոխարինել են **վ**-ի, դարձնելով Ջավախա, հայերենում վերջին **ա**-ն սղվել է, ավելացվել **ք** տառը և դարձել Ջավախք:

ՋՈՀՈՐԻ ՆԵՂՈՒՑ - մալայերեն Selat Johor, անգլերեն Straits of Johor, չինարեն 柔佛海峡 Ռոուֆու Հայսյա, թամիլերեն ஜொஹூர் நீர்ச்சந்தி Ջոկուր նիարչանտի. Նեղուց Հարավարևելյան Ասիայում, Սինգապուր կղզին անջատում է Մալայզիայի Ջոհոր նահանգից: Նեղուցն է թափվում Ջոհոր գետը: Երկարությունը՝ 52 կմ: Լայնությունը՝ 0.7-5 կմ:
Անվանումը ստացել է Ջոհոր գետի անունից, որն իր հերթին առաջացել է արաբերեն جوهر ջաուհար բառից, վերջինս էլ փոխառություն է պարսկերեն گوهر գաուհար *գոհար*, *զարդ* անունից:

ՋՈՄՈԼՈՒՆԳՄԱ - նեպալերեն सगरमाथा Սագարմատհա, չինարեն 珠穆朗瑪 Ճումուլանգմա. լեռնագագաթ (8 848 մ) **Հիմալայներում**, Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայի՝ Կհումբու Հիմալ մասում, Չինաստանի և Նեպալի սահմանագլխին: Երկրագնդի ամենաբարձր լեռնագագաթն է՝ 8 848 մ բարձրությամբ: Գագաթն ունի եռանիստ բուրգի տեսք՝ հարավային լանջը ավելի զառիվեր է: Առաջինը ով 1852 թ. որոշեց, որ Ջոմոլունգման երկրագնդի ամենաբարձր գագաթն է, հնդիկ մաթեմատիկոս և տեղագրագետ Ռադհանատ Սիկդարն էր: 1950-ական թ. հնդիկ տեղագիրները կրկին չափեցին լեռան բարձրությունը և ստացան 8 848 մ: 1975 թ. չինական արշավախումբը ճշգրտել է գագաթի բարձրությունը՝ 8 848,13 մ, 1998 թ. ամերիկյան արշավախումբը գագաթի բարձրության չափագրումների արդյունքում ստացավ՝ 8 850 մ, սակայն այս արդյունքը պաշտոնապես ընդունված չէ: 2005 թ. չինացի գիտնականները ուսումնասիրությունների արդյունքում ստացան 8 844,43 մ (± 21 սմ): 2010 թ. ապրիլի 8-ից **Ջոմոլունգմայի** ձյունածածկ գագաթի պաշտոնական բարձրությունը ֆիքսվում է, որպես 8 848 մ բարձր ծովի մակարդակից, իսկ կարծր ապարի բարձրությունը՝ 8 844 մ: Հանդիսանալով երկրագնդի ամենաբարձր կետը այն իր մոտ է սևեռում լեռնագնացների մեծ ուշադրությունը: Առաջին անգամ 1953 թ. մայիսի 29-ին **Ջոմոլունգմայի** գագաթն են բարձրացել Ջոն Հանտի անգլիական արշավախմբի անդամներ, նորզելանդացի՝ Էդմոնդ Հիլարին և շերպա՝ Տենսիգ Նորգեյը:
Լեռը հայտնի է նաև այլ անուններով՝ Սագարմատհա և Էվերեստ:
Ջոմոլունգմա անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Կենսական էներգիայի աստվածային մայր* ՝այդպես է անվանվել Շերաբ Ջամմա աստվածուհու պատվին:
Գագաթն ունի տիբեթերեն մեկ այլ Ջոմոգանգկար. *Ձյան պես սպիտակ Սուրբ Մայր* անվանումը:
1856 թ. լեռն անվանվել է 1830-43 թթ.-ին Բրիտանական Հնդկաստանի գեոդեզիայի ծառայության ղեկավար Ջոն Էվերեստի պատվին:
1960-ական թ-ից լեռը ստացավ նաև իր նեպալերեն Սագարմատհա անվանումը, որը թարգմանաբար նշանակում է *Երկնային գագաթ* կամ *Երկնքի գերիշխանը*:

ՁՈՄՈՆ ԼՀԱՐԻ - տիբեթերեն ཛོ་མོ་ལྷ་རི, չինարեն 卓木拉日峰 Ձո մու լա րի ֆը.ն. լեռնագագաթ **Հիմալայներում**, Չինաստանի ու Բուտանի սահմանագլխին: Պաուհունրի լեռից 44,4 կմ հեռավորությամբ: Կան շատ սառցադաշտեր: Լեռան լանջերին գտնվում մի շարք լճեր՝ Ցենինգմա, Ձոմո Լհարանգ և այլն: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 326 մ, հարաբերականը՝ 2 086 մ:
Անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Աստվածուհու լեռ*:

ՁՈՆԳՍՈՆԳ - հինդի जोंगसोंग Ձոնգսոնգ, չինարեն 瓊桑峰 Չոն սան ֆը.ն, նեպալերեն जोंग्सोंग Ձոնսոն. լեռնագագաթ **Հիմալայների** կենտրոնական մասում, Ձանակ շրջանում, Չինաստանի, Նեպալի ու Հնդկաստանի սահմանագլխին: Քանգբաչեն լեռնագագաթից 18,43 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 462 մ, հարաբերականը՝ 1 256 մ:
Հայտնի է նաև Ձոնգսանգ Ռի և Ձոնգսոնգ Պիկ անուններով:

ՁՈՒԳՁՈՒՐ - ռուսերեն Джугджур. լեռներ Հեռավոր Արևելքում, Ռուսաստանի Դաշնության՝ Խաբարովսկի երկրամասի՝Տուգուրո-Չումիկանի և Այանո-Մայայի շրջաններում: Ձգվում են **Օխոտի ծովի** հյուսիսարևմտյան ափամերձ շրջանով, հանդիսանալով ջրբաժան **Ալդան** գետի ավազանի և **Օխոտի ծովի** միջև: Ռելիեֆը հիմնականում միջին բարձրության է: Լեռներից են սկիզբ առնում Ուչուր, Ձանա, Լիմնու, Մայմական, Բատոմգա, Նետ, Ուլյա և այլ գետեր: Երկարությունը՝ 900 կմ, լայնությունը՝ 175-200 կմ: Բարձր գագաթը՝ Տոպկո լեռ (1 906 մ):
Ռուսերեն Джугуджур անվանումը լեռների էվենկերեն Дюгдюр *բարձր լերկ լեռ* անվան աղավաղված ձևն է:

Ռ

ՌԱՔԱՓՈՇԻ - ուրդու یراکـــاپوش. լեռնագագաթ **Կարակորումի** լեռնահամակարգում, Նագարա,Դաներ և Բագրոտ հովիտների միջև, Գիլգիտ-Բալտիստանում, Պակիստանի հյուսիսում: **Բատուրա Սարից** 40,9 կմ հեռավորությամբ: Կան շատ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 788 մ, հարաբերականը՝ 2 818 մ:
Հայտնի է նաև Դումանի *Մառախուղի մայր* անվամբ:
Ռաքափոշի անվանումը տեղացիների լեզվով թարգմանաբար նշանակում է *Փայլատակող պատ*, մեկ այլ վարկածի համաձայն՝ *Ձնով ծածկված:*

ՌԻՄՈ I - հինդի रिमो १ Ռիմո իթ, չինարեն 里莫I峰 Լի մո այ ֆը.ն. քառագագաթ լեռնազանգված **Կարակորումի** հյուսիսային մասում, Ռիմո Մուզտաղ լեռներում, **Սիաչեն** սառցադաշտից 20 կմ հյուսիս- արևելք, Հնդկաստանի ու Պակիստանի սահմանագլխին: **Մամոսթոն Քանգրի** լեռից 30,39 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Ռիմո I 7 385 մ, Ռիմո II 7 373 մ, Ռիմո III 7 233 մ, Ռիմո IV 7 169 մ:

Կան մի քանի սառցադաշտեր՝ Կենտրոնական Ռիմո (հյուսիսային կողմում), Հարավային Ռիմո (արևելյան կողմում), Հյուսիսային Տերոնգ (արևմտյան կողմում): Լեռնազանգվածի սառցադաշտերից է սկիզբ առնում Շայոկ գետը: Հարաբերական բարձրությունը՝ 1 438 մ:
Ռիմո անվանումը թարգմանաբար նշանակում է *Ձոլավոր լեռ*:

ՌՅՈՒԿՅՈՒ - ճապոներեն 琉球諸島 Ռյուկյու սոտո, օկինավերեն 琉球/ルチュ Ռյուկյու/Ռուցյու.կղզեխումբ **Հարավչինական** ծովում, Ճապոնիայից հարավ-արևմուտք: Աղեղնաձև ձգվում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք՝ **Կյուսյու** և **Թայվան** կղզիների միջև,1 200 կմ երկարությամբ: Համեմատաբար խոշոր կղզիների մակերեսը բլրոտ է և բարձրադիր, փոքր կղզիներինը՝ ցածրադիր: Ռյուկյուի կազմի մեջ մտնում են 98 կղզի՝ **Օկինավա**, Միյակո, Յաեյամա, Ամամի, Դայտո և այլն: Կղզեխմբի բարձր կետն է համարվում՝ Միյանոուրա լեռը (1 936 մ, Յակու կղզում): Մակերեսը՝ 4 642,11 կմ^2:
Անվան հիմքում ընկած է կղզեխմբի չինարեն 琉球國 լյուցյուգո *եղջերավոր լաքաթաթկ վիշապ* անվանումը, որը հիշատակվում է 607 թ. «Սույշու» պատմական աշխատության մեջ: Հետագայում, հնչյունափոխվելով, այն ստացավ այժմյան անվանումը:

Ս

ՍԱԼՈՒԻՆ - տիբեթերեն རྒྱ་མཚོ་རྒྱ་ཆུ / ནགས་ཆུ Գյալմո Նգուլ Չու /Նագ Չու, բիրմայերեն သံလွင်မြစ် Թանլուանմյիտ, թայերեն ส่าละวิน Սալաուին, չինարեն 萨尔温江 / 薩爾溫江 Սայերվիենտյան. գետ Չինաստանում, Թայլանդում և Մյանմայում: Սկիզբ է առնում **Տիբեթի բարձրավանդակից**՝ Տանգուլա լեռնաշթայի արևելյան լանջերից և առաջացնելով սահանքներ, քարվաստներ ու ջրվեժներ, հոսում Յուննանի և **Շանի** բարձրավանդակների խոր կիրճերով, դուրս գալիս հարթավայր, վերածվում հարթավայրային գետի ու թափվում **Անդամանյան** ծովի՝ Մոուտամա ծոցը: Վտակներն են՝ Պայ, Յունզալին, Նամպուն, Յուամ, Պաուն, Նամ, Նու և այլն: Երկարությունը՝ 3 562 կմ: Ավազանը՝ 266 037 կմ^2: Ջրի ծախսը՝ 4 876 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 5 432,5 մ:
Ենթադրվում է, որ անվանումն ունի տիբեթական ծագում և տիբեթական լեզուներից մեկում, բառացի նշանակում՝ *Կապույտ գետ*:

ՍԱԼՏՈՐՈ ՔԱՆԳՐԻ- հինդի सा तोरो कांगरी Սալտորո Կանգարի, ուրդու سالتورو کنگری . երկգագաթ լեռ **Կարակորումում**, Սալտորո լեռնաշղթայում, **Սիաչենից** հարավ-արևմուտք, Հնդկաստանի կողմից վերահսկվող շրջանում: **Գաշերբրում I**-ից 38,82 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Սալտորո Քանգրի I (Կ10) 7 742 մ, Սալտորո Քանգրի II (Կ11) 7 705 մ: Ունի բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 742 մ, հարաբերականը՝ 2 160 մ:

ՍԱԽԱԼԻՆ - ռուսերեն Сахалин, ճապոներեն 樺太 /サハリン Կարաֆուտո / Սահարին, այներեն カムイ･カラ･プト･ヤ･モシリ/ カラ･プト Կամույ Կար Պուտ Յա Մոսիր / Կարպուտ, մանջուրերեն ᡧᡠᡥᠠᡵᡳᠶᠠᠨ ᡠᡵᡠᡥᠠ Սահալիյան ուլա անգգա հադա, չինարեն 库页 / 庫頁 Քույե / Քյույե. կղզի Ասիայի արևելյան ափի մոտ, **Օխոտի** և **Ճապոնական** ծովերի միջև: Մայրցամաքից անջատված է **Թաթարական** (ամենանեղ մասում՝ **Նևելսկոյի** նեղուցում, ունի 7.3 կմ լայնություն), **Հոկայդո** կղզուց՝ **Լա Պերուզի** նեղուցներով: Կղզու հարավային և կենտրոնական մասերը լեռնոտ են և կազմված երկու միջօրեականով ձգվող լեռնահամակարգերից՝ Արևմտասախալինյան և Արևելասախալինյան, որոնք իրարից անջատված են Տիմ Պորոնայի ցածրավայրով: Հյուսիսային մասը, բացառությամբ Շմիդտի թերակղզուց, իրենից ներկայացնում է զառիկող բլրոտ հարթավայր: Ափերը թույլ մասնատված են, կան միայն երկու խոշոր ծոց՝ Անիվան, Տերպենիան: Խոշոր թերակղզիներն են՝ Շմիդտի, Կրիլյոն, Տոնինո-Անիվայի և այլն: Խոշոր գետերն են՝ Պորոնայը, Օլենյան, Տիմը, Վալը, Գլուխարկան: Խոշոր լճերն են՝ Նևսկոյե, Տունայչա, Մեծ ու Փոքր Վովոյսկոյե և այլն:Մակերեսը՝ 76 600 կմ^2: Երկարությունը՝ 948 կմ, լայնությունը՝ 26-160 կմ: Ափի երկարությունը՝ 2 510 կմ: Բարձր կետը՝ Լոպատինի լեռ (1 609 մ):
Կղզու այժմյան Սախալին անվանման առաջացումը կապված է մի թյուրիմացության հետ, ըստ որի, XVIII դ. սկզբին ֆրանսիացի միսիոներների կողմից կազմած քարտեզում, Ամուր գետի մանջուրերեն ᡧᡠᡥᠠᡵᡳᠶᠠᠨ ᡠᡵᡠᡥᠠ Սահալիյան ուլա *Սև գետի ժայռեր* անունը սխալմամբ վերագրվել է կղզուն և հետագա քարտեզներում տպագրվել արդեն որպես կղզու անուն:
Ճապոներեն 樺太 Կարաֆուտո անվանումը ծագում է այներեն カムイ･カラ･プト･ヤ･モシリ Կամույ Կար Պուտ Յա Մոսիր *Գետաբերանի Աստծո երկիր* արտահայտությունից:

ՍԱՄԱՐ - վարայերեն Samar, տագալերեն Samar, անգլերեն Samar. կղզի **Ֆիլիպինյան կղզեխմբի** կենտրոնական մասում: Սան Խուանիկո նեղուցով անջատված է **Լեյտե**, Սան Բեռնարդինո նեղուցով՝ **Լուսոն** կղզիներից: Արևմուտքից ողողվում է **Սամար** ծովով, հարավից՝ Լեյտե ծոցով, հյուսիսից և արևելքից՝ Խաղաղ օվկիանոսով: Խոշոր գետերն են՝ Դոլորես, Գանդարա, Իլբատան, Ուլոտ և այլն: Մակերեսը՝ 12 849,4 կմ^2: Ափի երկարությունը՝ 800,6 կմ: Բարձր կետը՝ Հուրա լեռ (811 մ):
Հավանաբար անվանման հիմքում ընկած է վարայերեն samad *վերք*, *ակոս* բառը, հաշվի առնելով այստեղի հողերի խիստ կտրտված լինելը:

ՍԱՄԱՐ - սեբուանո Samar Sea, տագալերեն Dagat Samar, վարայերեն Dagat san Samar.Խաղաղ օվկիանոսի փոքր միջկղզային ծով, **Ֆիլիպինյան կղզեխմբում**: Սահմանափակված է արևելքում՝ **Սամար**, հարավում՝ **Լեյտե**, արևմուտքում՝ **Մասբատե** և հյուսիսում՝ **Լուսոն** կղզիներով: Հյուսիսում Սան Բեռնարդինո նեղուցով միանում է **Ֆիլիպինյան** ծովին, հարավ-արևելքում Սան Խուանիկո նեղուցով՝ Լեյտե ծոցին, հարավ-արևմուտքում Մասբատե նեղուցով՝ **Վիսայան**, հյուսիս-արևմուտքում Տիկաո նեղուցով՝ **Սիբույան** ծովերին: Խոշոր կղզիներն են՝ Ալմագրո, Բիլիրան, Տիկաո, Նինա, Դարամ և այլն: Խոշոր ծոցն է՝ Կարիգա: Մակերեսը՝ 8 870 կմ^2:

Երկարությունը՝ 160,5 կմ լայնությունը՝ 70 կմ: Ծավալը՝ 487,85 կմ^3: Միջին խորությունը՝ 55 մ, առավելագույնը՝ 153 մ (արևմտյան մասում՝ Ալմագրո կղզուց 5 կմ արևմուտք): Անվանումը ստացել է *Սամար* կղզուց:

ՍԱՅԱՆՆԵՐ - ռուսերեն Саяны, մոնղոլերեն Соёны нуруу. լեռնահամակարգ Սիբիրի հարավում՝ Ռուսաստանի Դաշնության Կրասնոյարսկի երկրամասում, Իրկուտսկի մարզում, Խակասիայի, Տիվայի, Բուրյաթիայի հանրապետություններում և Մոնղոլիայում: Տարանջատվում են Արևմտյան և Արևելյան Սայանների: 650 կմ երկարությամբ Արևմտյան Սայանը հարավ-արևմուտքում սահմանակից է **Ալթային**: Նրա գլխավոր շղթան, Սայանի ջրբաժան լեռնաշղթան է իր բարձր՝ Ղզըլ Տայգա լեռով (3 121 մ): Արևմտյան Սայանի լեռնաշղթաները բնորոշվում են զառիվեր լանջերով և ռելիեֆի խիստ մասնատվածությամբ: Արևելյան Սայանը 1 000 կմ երկարությամբ ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, **Ենիսեյից** մինչև **Բայկալ** լիճը: Հարավ-արևելքում են տեղակայված ամենաբարձր ու դժվարամատչելի լեռնաշղթաները՝ Մեծ Սայան, Տունկայի Գոլցի, Կիտոյի Գոլցի, Կրոպոտկինի և այլն: Գետային ցանցը պատկանում է **Ենիսեյի** ավազանին: Լեռներից սկիզբ առնող առավել նշանավոր գետերն են՝ **Ենիսեյը**, Աբականը, Կանտեգիրը, Ալաշան, Ակ Սուգան, Ույուկը, Սիստիգ խեմը, Տուբանը, Սիդանը, Սիսիմը, Մանանը, Կանը, Բիրյուսան և այլն: Լճերի մեծ մասը տեղակայված են լեռնաշղթաների կատարային գոտում, դրանցից են՝ Կարա խոլը, Սուտ խոլը, Էմգեն խոլը, Խալետ խոլը, Ազուլին, Տիբերկուլը, Մոժարին: Բարձր գագաթը՝ Մունկու Սարդիկ լեռ (3 491 մ):
Սայաններ անվան ծագման վերաբերյալ գոյություն ունեն մի շարք բացատրություններ.
-առաջացել է մոնղոլերեն саган *սպիտակ*, *ձնոտ* բառի աղավաղման արդյունքում:
-առաջացել է *սոյոն* (այժմ՝ տուվիններ) ցեղանունից:
Հինդի լեզվի सयान սայան *հասուն, փորձառու* բառից:

ՍԱՆՆԻԿՈՎԻ ՆԵՂՈՒՑ - ռուսերեն Пролив Санникова, յակուտերեն Санников силбэһиитэ. **Նորսիբիրական** կղզիների **Կոտելնի** և Լյախովի փոքր կղզիների միջև ընկած Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի նեղուց: Իրար է միացնում **Լապտևների** և **Արևելասիբիրական** ծովերը: Երկարությունը՝ 238 կմ, լայնությունը՝ մինչև 55 կմ: Առավելագույն խորությունը՝ մինչև 24 մ:
1935 թ. պաշտոնապես անվանվել է 1800-11 թթ. Նորսիբիրական կղզիները հետազոտած ռուս արդյունագործող *Յակով Սաննիկովի* պատվին:

ՍԱՍԵՐ ՔԱՆԳՐԻ - հինդի ससेर कांगरी Սըսեր Կանգարի, չինարեն 莎瑟 Շա սը. վեց գագաթանի լեռնազանգված **Կարակորումի** արևելյան մասում, Սասեր Մուզտաղ լեռների հյուսիսարևմտյան եզրում, Հնդկաստանում (Ջամմու և Քաշմիր նահանգում): **Սալտորո Քանգրի** լեռից 101,39 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Սասեր Քանգրի I 7 672 մ, Սասեր Քանգրի II Արևելյան 7 518 մ, Սասեր Քանգրի II Արևմտյան 7 500 մ, Սասեր Քանգրի III 7 495 մ, Սասեր Քանգրի

IV 7 416 մ և Պլատո Պիկ 7 287 մ: Կան մի շարք սառցադաշտեր՝ Կունչան, Սականգ, Պուկպոչե: Լեռանագանգվածի լանջերից է սկիզբ առնում Նուբրա գետը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 672 մ, հարաբերականը՝ 2 304 մ:
Սասեր Քանգրի անվանումը թարգմանաբար նշանակում է *Ոսկե սառցապիկ*:

ՍԱՎՈՒ - ինդոնեզերեն Laut Sawu, պորտուգալերեն Mar de Savu. Խաղաղ օվկիանոսի միջկղզային ծով, **Ֆլորես**, **Սումբա**, Սավու, Ռոտե և **Թիմոր** կղզիների միջև: Մակերեսը՝ 53 000 կմ^2: Երկարությունը՝ 560 կմ, լայնությունը՝ 235 կմ: Ծավալը՝ 89 199 կմ^3: Միջին խորությունը՝ 1 683 մ, առավելագույնը՝ 3 497 մ (հյուսիսարևելյան մասում):
Անվանումը ստացել է *Սավու* կղզուց:

ՍԱՐԱԳՀՐԱՐ - ուրդու سراغرار. բազմագագաթ լեռնազանգված **Հինդուկուշի** լեռներում, Պակիստանում: **Իսթոր օ Նալ** լեռից 25,72 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածը իրենից ներկայացնում է մոտ 7 000 մ բարձրությամբ ձգված սարավանդ: Լեռնազանգվածի հիմնական գագաթներն են՝ Սարագհրար Հյուսիսարևելյան (Սարագհրար I) 7 340 մ, Սարագհրար Հյուսիսարևմտյան 7 300 մ, Սարագհրար Հարավարևմտյան 7 148 մ, Սարագհրար Հարավային 7 307 մ, Սարագհրար Հարավարևելյան 7 208 մ և այլն: Հարաբերական բարձրությունը՝ 1 979 մ:
Լեռան անունն ուրդու լեզվից թարգմանաբար նշանակում է *Շփոթություն*, *խառնաշփոթ*, *խառնիճաղանջ*, *անկանոն*:

ՍԱՐԵԶԻ ԼԻՃ - տաջիկերեն Сарез سرزی. փլվածքային լիճ **Պամիրում**, Տաջիկստանի Լեռնային Բադախշանի ինքնավար մարզում: Գոյացել է 1911 թ. մարտի 3-ին տեղի ունեցած երկրաշարժից՝ Բարտանգի գետահունի աղետալի ամբարտակման հետևանքով: Սարեզի ամբարտակը համարվում է խոշորագույնն աշխարհում՝ ծավալը 2,2 կմ^3, քաշը՝ 6 մլրդ. տոննա, երկարությունը՝ 5 կմ, լայնությունը՝ 3,2 կմ, տարածքը՝ 10,8 կմ^2, բարձրությունը՝ 567 մ: Լիճն են թափվում Լյանգար, Ռամաիֆ, Մարջանայ, Վատասաիֆ և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Բարտանգը: Մակերեսը՝ 79,7 կմ^2: Երկարությունը՝ 75,8 կմ, լայնությունը՝ մինչև 3,3 կմ: Ծավալը՝ 16,083 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 15 755 կմ^2: Լճափի երկարությունը՝ 162 կմ: Միջին խորությունը՝ 201,8 մ, առավելագույնը՝ 505 մ (հյուսիսարևմտյան մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 263 մ:
Անվանումը ստացել է *Սարեզ* բնակավայրից:

ՍԱՐԸՂԱՄԻՇԻ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ - թուրքմեներեն Sarygamyş çöketligi, ուզբեկերեն Sariqamish soyligi / Sariqamish botig'I. աղուտներով և ավազներով ծածկված անհոսք իջվածք Թուրքմենստանում ու Ուզբեկստանում(Կարակալպակստան), **Թուրանի ցածրավայր**: Հյուսիսից եզերում է **Կարակում** անապատը: Գոգավորության կենտրոնական մասում է գտնվում Սարըղամիշի լիճը: Երկարությունը՝ շուրջ 150 կմ, լայնությունը՝ շուրջ 90 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ -38 մ:
Սարըղամիշ անվանումն ունի թյուրքական ծագում և թարգմանաբար նշանակում է *Դեղին եղեգ*:

ՍԵԲԵԼԱՆ - պարսկերեն سبلان Սաբալան, ազարբաջանի ساوالان Սավալան. Հանգած ստրատոհրաբուխ ու հրաբխային վահան **Հայկական լեռնաշխարհի** արևելյան մասում, Իրանի հյուսիս-արևմուտքում: **Հայկական լեռնաշխարհի** բարձրությամբ երկրորդ գագաթը՝ **Արարատից** հետո: Արևմուտքում՝ Ղարադաղի շղթաների միջոցով կապված է Հայաստանի և Հարավային Կովկասի լեռների հետ: Հարավում, Թալիշի լեռների արևմտյան բազուկներից անջատված է Հաջիչայ գետի հովտով, արևելքում՝ Թալիշի գլխավոր շղթաներից՝ Կարասու գետի հովտով: Խառնարանում է գտնվում 145 x 80 մ չափերով և 40 մ խորությամբ Իրանի միակ խառնարանային լիճը: Բարձրությունը ծովի մակարդակից 4 811մ:
Սեբելանի գլխավոր գագաթը կոչվում է *Սոլտան է Սաբալան*:
Հավանաբար անվան հիմքում ընկած է պարսկերեն սաբլանի *մորուքով* բառը:

ՍԵԲՈՒ - սեբուանո Sugbo, տագալերեն Cebu, անգլերեն Cebu. կղզի **Ֆիլիպինյան կղզեխմբի** կենտրոնական մասում: Տանյոն նեղուցով անջատված է **Նեգրոս**, Բոհոլ նեղուցով՝ **Բոհոլ** կղզիներից: Հյուսիսից ողողվում է **Վիսայան**, արևելքից՝ **Կամոտես** ծովերով: Մակերեսը լեռնոտ է: Կղզու հյուսիսարևմտյան մասում է գտնվում հռչակավոր Կավասան ջրվեժը: Խոշոր գետերն են՝ Տամբուլ, Անինգան, Ինուլավան, Բոխո և այլն: Խոշոր լճերն են՝ Լանաոն, Մալունոգը, Բուսվանգը: Մակերեսը՝ 4 467,5 կմ^2: Երկարությունը՝ 225 կմ, լայնությունը՝ 46 կմ: Ափի երկարությունը՝ 513,9 կմ: Բարձր կետը՝ Մանունգալ լեռ (1 097 մ):
Անվանումն առաջացել է տեղաբնիկների լեզվի sebu *կենդանական յուղ* բառից:

ՍԵՆԹ ՔԼԵՐՍ - սինհալերեն සෙන්ට් ක්ලෙයාර්ස් Սենթ Քլերս, թամիլերեն செயின் ட் Սեյինթ Քիլայար. ջրվեժ Շրի Լանկայում, Մահավելի գետի Կոտմալե վտակի վրա, Նուվարա Էլիյա շրջանում: Կազմված է երկու սանդղավանդներից՝ Մահա-Էլլա և Կուդա-Էլլա անվանումներով: Անկման բարձրությունը՝ մոտ 130 մ: Լայնությունը՝ 50 մ:
Շրջապատված լինելով Ցեյլոնի հռչակավոր թեյի տնկադաշտերով, ջրվեժը անվանումը ստացել է իր մոտակայքում գտնվող թեյի Saint Clair համալիրից:

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ - քաղցրահամ լիճ Գեղարքունիքի մարզում, Կովկասի լճերից ամենամեծը: Հյուսիս-արևմուտքից շրջապատված է Փամբակի և Արեգունի, հյուսիսարևելքից՝ Սևանի, արևելքից՝ Արևելյան Սևանի, արևմուտքից՝ Գեղամա, հարավից՝ Վարդենիսի լեռներով: Արտանիշի և Նորատուսի թերակղզիներով անցնող պայմանական գծով լիճը բաժանվում է երկու մասի՝ Մեծ ու Փոքր Սևանի: Լճի ջրերի համալրման նպատակով կառուցվել է 48,3 կմ երկարությամբ Արփա- Սևան թունելը՝ Արփա գետի ջրերը լիճ փոխադրելու համար: Լիճն են թափվում 28 գետ ու գետակ՝Գավառագետ,Արգիճի,Վարդենիս,Մարտունի, Աստղաձոր, Ձկնագետ, Ծակքար և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Հրազդանը: Մակերեսը՝ 1 266,21 կմ^2: Երկարությունը՝ 73,7 կմ, լայնությունը՝ 36,8 կմ: Ծավալը՝ 34,95 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 3 722,24 կմ^2: Լճափի երկարությունը՝ 239,94 կմ: Միջին խորությունը՝ 27,6 մ,

առավելագույնը՝ 82,9 մ (հյուսիսարևմտյան մասում): Ջրի պարզությունը՝ 4,5 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 900 մ:
Մեծ հավանականությամբ անվանման հիմքում ընկած է ուրարտերեն սունիա *լիճ* բառը:
Մեկ այլ վարկածի համաձայն՝ անվանման հիմքում ընկած են հայերեն *սև* և *վանք* բառերը, որոնք բնութագրում են IX-րդ դ. Սյունիքի իշխանուհի Մարիամ Բագրատունու կողմից սև տուֆից կառուցած Սևանավանքը:

ՍԵՐԱՄ - ինդոնեզերեն Seram. կղզի **Մոլուքյան** կղզեխմբում: Հյուսիսից ողողվում է **Սերամ**, հարավից՝ **Բանդա** ծովերով: Մանիպա նեղուցով անջատված է **Բուրու** կղզուց: Ափերը խիստ մասնատված են, առավելապես արևելյան մասում, որն էլ բերել է բազմաթիվ ծոցերի առաջացմանը՝ Պիրու, Սավայ, Էլպապուտիի, Տալուտ և այլն: Խոշոր գետերն են՝ Մասիվանգ, Տալա, Սապոլևա և այլն: Մակերեսը՝ 17 100 կմ^2: Երկարությունը՝ 340 կմ, լայնությունը՝ 60 կմ: Ափի երկարությունը՝ 824,329 կմ: Բարձր կետը՝ Բինայա լեռ (3 027 մ):
Հավանաբար անվանման հիմքում ընկած է տեղաբնիկների լեզվի selan կամ siran *ծերուկ* բառը, որը հետագայում ընդունել է այժմյան Սերամ տեսքը:

ՍԵՐԱՄ - ինդոնեզերեն Laut Seram. միջկղզային ծով, **Սերամ**, **Բուրու**, Սուլա, Օբի, Միսոոլ կղզիների և Չենդրավասիխ թերակղզու (Նոր Գվինեա) միջև: Խոշոր կղզիներն են՝ **Սերամ**, **Բուրու**, Սուլա, Օբի, Միսոոլ և այլն: Մակերեսը՝ 116 000 կմ^2: Երկարությունը՝ 870 կմ, լայնությունը՝ 210 կմ: Ծավալը՝ 124 584 կմ^3: Միջին խորությունը՝ 1 074 մ, առավելագույնը՝ 5 319 մ (արևմտյան մասում):
Անվանումը ստացել է *Սերամ* կղզուց:

ՍԻ - չինարեն 西江 Սիցզյան, վիետնամերեն Tây Giang. գետ Չինաստանի հարավում, Չժուցզյան գետի արևմտյան վտակը: Կազմավորվում է Գույցզյան ու Սյունցզյան գետերի միախառնումից, ապա հոսելով Գուանդուն մարզով, թափվում է Չժուցզյան գետի դելտան: Վտակներն են՝ Յու, Գույ, Ռոնգ և այլն: Երկարությունը՝ 2 075 կմ: Ավազանը՝ 353 100 կմ^2: Ջրի ծախսը՝ 7 410 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 2 145 մ:
Գետի չինարեն 西江 Սիցզյան անվանումը, բառացի նշանակում է *Արևմտյան գետ*:

ՍԻԱ ՔԱՆԳՐԻ - հինդի सिआ कांगरी Սիա Կանգարի, ուրդու سیا رنگری Սյա Քանգրի, չինարեն 錫亞康戈里峰 Սի յա գանգ րի ֆըն. լեռնագագաթ **Կարակորումում**, Բալտորո Մուզտաղ լեռնաշղթայում, **Սիաչեն** սառցադաշտում, Չինաստանի, Հնդկաստանի ու Պակիստանի սահմանագլխին: Հիդեն Պիկ լեռից 9,01 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 442 մ, հարաբերակաը՝ 640 մ:
Հայտնի էր նաև Մերի Թագուհու Պիկ անվամբ:
Լեռն իր անվանը պարտական է **Սիաչեն** սառցադաշտին:

ՍԻԱՉԵՆ - հինդի सियाचिन हिमनद Սիաչին հիմնադ, անգլերեն Siachen Glacier, ուրդու سیاچن گلیشیر. սառցադաշտ Կենտրոնական Ասիայում, ամենամեծը **Կարակորում** լեռնահամակարգում: Սկսվում է Արևելյան Կարակորումի 5 753 մ բարձրությունից և ձգվում մինչև 3 620 մ բարձրությունը: Արևմուտքից սահմանափակված է Սալտորո լեռնաշղթայով, արևելքից՝ **Կարակորումի** հիմնական շղթայով: Սառցադաշտից են սկիզբ առնում Ծայոկ և Նուբրա գետերը: 1984 թ-ից ամբողջ սառցադաշտը վերահսկվում է Հնդկաստանի կողմից: Սառցահավաք մակերեսը՝ 1 180 կմ^2: Երկարությունը՝ մոտ 76 կմ:
Անվանումը բալթի լեզվից թարգմանաբար նշանակում է *Բյուր վարդեր*:

ՍԻԲԵՐՈՒՏ - ինդոնեզերեն Pulau Siberut. Մենտավայ կղզեխմբի ամենամեծ և հյուսիսային կղզին Ինդոնեզիայում: Ողողվում է Հնդկական օվկիանոսով: Մենտավայ նեղուցով անջատված է **Սումատրա** կղզուց:Կղզին ունի լայն հովիտներով ընդհատվող բլրոտ մակերես: Խոշոր գետերն են՝ Սիլիմպանգ, Տարեկան, Կոյլոպ, Կալեա: Խոշոր լիճն է՝ Մանգեունգեու: Մակերեսը՝ 3 828,5 կմ^2: Բարձր կետը՝ Սիմատոմբոտոմբո բլուր (384 մ):
Անվանումն առաջացել է կղզու հարավում բնակվող sabirut *առնետներ* ցեղախմբի անունից:

ՍԻԲՈՒՅԱՆ - իլոկաներեն Baybay Sibuyan, կապամպանգաներեն Dayat Malat ning Sibuyan, վարայերեն Dagat Sibuyan, սեբուանո Sibuyan Sea. միջկղզային ծով Ֆիլիպինյան կղզեխմբում՝ **Պանայ**, Տաբլաս, Մարինդուկե, **Լուսոն**, Բուրիաս և **Մասբատե** կղզիների միջև: Հարավարևելքում Խինտոտոլո նեղուցով հաղորդակցվում է **Վիսայան** ծովի հետ: Կենտրոնական մասում է գտնվում Սիբույան կղզին: Ծովն է թափվում Պանայ գետը: Մակերեսը՝ 29 200 կմ^2: Երկարությունը՝ 310 կմ, լայնությունը՝ 190 կմ: Ծավալը՝ 12 848 կմ^3: Միջին խորությունը՝ 440 մ, առավելագույնը՝ 985 մ (հյուսիսարևմտյան մասում՝ Լուսոն կղզու Բոնդոկ թերակղզուց 57 կմ հարավ):
Անվանումը ստացել է *Սիբույան* կղզուց:

ՍԻԳՈՒԱՆԳ ՌԻ - չինարեն李四光. բազմագագաթ լեռնազանգված **Հիմալայների** կենտրոնական մասում,Մահալանգուր Հիմալ լեռնաշղթայում,Չինաստանում: Նգոջումբա Քանգ լեռնագագաթից 4,54 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի հիմնական գագաթներն են՝ Սիգուանգ Ռի 7 308 մ, Սիգուանգ Ռի Սար 6 998 մ(398 մ), Սիգուանգ Ռի Հյուսիսարևմտյան 6 840 մ(340 մ) և այլն: Լեռնազանգվածի սառցադաշտերն են՝ Սիգուանգ, Պալունգ, Գյաչունգ Քանգ և այլն: Հարաբերական բարձրությունը՝ 659 մ:

ՍԻԽՈՏԵ ԱԼԻՆ - ռուսերեն Сихотэ-Алинь, չինարեն 锡霍特 Սի հուո թը. լեռնային երկիր Հեռավոր Արևելքում՝ Ռուսաստանի Դաշնության, Խաբարովսկի և Պրիմորիեի երկրամասերում: Իրենից ներկայացնում է հրաբխային լեռնավահան: Ձրբաժան է հանդիսանում **Ամուրի** և **Ճապոնական ծովի** ու **Թաթարական նեղուցի**

ավազանների գետերի համար: Արևմտյան լանջերը մեղմաթեք են, արևելյանը՝ զառիվեր: **Սիխոտե Ալինի** հարավային մասը հիմնականում ներկայացված է անտառածածկ, կլորավուն լեռներով, հյուսիսային մասը՝ խորը ձորակներով, խիստ մասնատված ռելիեֆով: Այստեղից են սկիզբ առնում՝ Սամարգա, Կեմա, Տումնին, Իման, Խոր, Բիկին և այլ գետեր: Երկարությունը՝ 1 200 կմ, լայնությունը՝ 250 կմ: Բարձր գագաթը՝ Տորդոկի Յանի լեռ (2 090 մ):
Սիխոտե Ալին անվանումը հավանաբար ունի մանջուրական ծագում և բառացի նշանակում է *առափնյա լեռնաշղթա*:
Կա ենթադրություն, որ անունը կազմված է նանայերեն сихте *փշատերև*, *եղևնի* և алин *լեռնաշղթա* բառերից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը կազմված է չինարեն 四 սի *արևմուտք*, 合 հե *գետ*, 大 տա *մեծ*, որին գումարվել է մանջուրերեն ալին *լեռնաշղթա* բառը՝ *Արևմտյան գետի մեծ լեռնաշղթա*:

ՍԻԿՈԿՈՒ - ճապոներեն四国 Սիկոկու. մեծությամբ 4-րդ կղզին **Ճապոնական կղզիների** հարավում: **Հոնսյու** կղզուց անջատված է **Ներքին Ճապոնական** ծովով, **Կյուսյու** կղզուց՝ Բունգո նեղուցով: Խոշոր գետերն են՝ Յոսինո, Նակա, Մոնոբե, Նիյոդո, Սիմանտո և այլն: Մակերեսը՝ 18 297,78 կմ^2: Երկարությունը՝ 225 կմ, լայնությունը՝ 50-150 կմ: Ափի երկարությունը՝ 2 091 կմ: Բարձր կետը՝ Իսիձուտի լեռ (1 982 մ):
Ճապոներեն 四国 անվանումը բառացի նշանակում է *չորս նահանգ*, նկատի ունենալով կղզում եղած Ավա, Իյո, Սանուկի և Տոսա չորս պատմական նահանգները:

ՍԻՆԳՀԻ ՔԱՆԳՐԻ - հինդի सिंघी कांगरी Սինգհի Կանգարի. լեռնագագաթ **Կարակորումում**, **Սիաչեն** սառցադաշտում, Հնդկաստանի կողմից վերահսկվող շրջանի և Չինաստանի սահմանամերձ գոտում: Թերամ Քանգրի III լեռնագագաթից 5,84 կմ հեռավորությամբ: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 202 մ, հարաբերականը՝ 787 մ:
Անվանումը սինդհի լեզվից թարգմանաբար նշանակում է *Խրթին սառցապիկ*:

ՍԻՐԴԱՐՅԱ - տաջիկերեն Сирдарё, ուզբեկերեն Sirdaryo, ղազախերեն Сырдария. ամենաերկար և ջրառատությամբ երկրորդ գետը **Ամուդարյայից** հետո, Միջին Ասիայում, Ղըրղըզստանում, Տաջիկստանում, Ուզբեկստանում, Ղազախստանում: Կազմավորվում է Ֆերգանայի հովտի արևելյան մասից՝ Նարին և Կարադարյա գետերի միախառնումից: Ֆերգանայի հովտից դուրս գալուց, կտրում անցնում է Ֆարհադի լեռները, հոսում Սովյալ տափաստանով, **Կզըլկում** անապատի արևելյան ու հյուսիսային ծայրամասով, **Թուրանի ցածրավայրով** և թափվում Արալյան ծովի հյուսիսային մասը (Փոքր ծով): Վտակներն են՝ Ահանգարան, Չիրչիկ, Քելես, Սարիսու և այլն: Երկարությունը՝ 2 212 կմ: Ավազանը՝ 219 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 703 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 402 մ, գետաբերանինը՝ 42,2 մ:
Ենթադրվում է, որ Սիրդարյա անվանումն ունի պարսկերեն ծագում և բառացի նշանակում՝ *Ջրառատ* (*լայնարձակ*) *գետ*:

Անտիկ հույն հեղինակների մոտ գետը հայտնի էր Ἰαξάρτης, Յաքսարտես, *մարգարտի գետ* անվամբ, արաբ աշխարհագրագետներն այն անվանել են يحون—سـ Սեյհուն, իսկ միջնադարյան աղբյուներում հիշատակվում է, որպես Խոջենտդարյա:

ՍԻՓԱՆ - թուրքերեն Süphan Dağı, քրդերեն Sîpanê Xelatê. հանգած ստրատոհրաբուխ **Հայկական լեռնաշխարհում**, **Վանա** լճի հյուսիսարևմտյան ափամերձ շրջանում, այժմյան Թուրքիայում: Հարավարևելյան ստորոտում է գտնվում Արին լիճը: Բարձրությունը ծովի մակարդակից 4 058 մ: Հարաբերական բարձրությունը՝ 2 189 մ: Խառնարանի խորությունը՝ 150 մ:
Հայկական հին աղբյուրներում լեռը հիշատակվում է որպես Նեխ Մասիք, Մեծ լեռ կամ Ծիփան անվամբ:

ՍՊՐԱԹԼԻ - տագալերեն Kapuluang Spratly, վիետնամերեն Quần đảo Trường Sa, չինարեն 南沙群岛 Նանշա ցինդաո, մալայերեն Kepulauan Spratly, անգլերեն Spratly Islands. կղզեխումբ **Հարավչինական** ծովի հարավարևմտյան մասում: Ընդգրկում է 100-ից ավելի կղզի՝ Իտու Աբա, Տիտու, Արևմտյան Յորք, Սպրաթլի, Հյուսիսարևելյան ժայռ և այլն: Կղզիների պատկանելիությունը վիճարկվում է Վիետնամի, Չինաստանի,Թայվանի, Մալայզիայի, Ֆիլիպինների և Բրունեյի կողմից: Բարձր կետը՝ Հարավարևմտյան ժայռ (4 մ):Մակերեսը՝ մինչև 5 կմ^2, ափի երկարությունը՝ 926 կմ:
Անվանվել է XIX դ. բրիտանական ծովագնաց *Ռ. Սպրաթլիի* պատվին:

ՍՏԱՆՈՎՈՅ ԼԵՌՆԱՇՂԹԱ - ռուսերեն Становой хребет, յակուտերեն Сир кура. լեռնաշղթա Հեռավոր Արևելքի հարավում՝ Ռուսաստանի Դաշնության Ամուրի մարզում, Սախայում և Խաբարովսկի երկրամասում: Ձգվում է Օլյոկմայ գետի միջին հոսանքի շրջանից մինչև Ուչուր գետի ակունքները: Արևմուտքում միակցվում է Ստանովոյ բարձրավանդակին, արևելքում՝ **Ձուգջուր** լեռներին: Հանդիսանում է ջրբաժան Հյուսիսային սառուցյալ և Խաղաղ օվկիանոսների ավազանների գետերի միջև: Լեռները կազմված են նեղ ու խորը, անտառապատ կիրճերով իրարից առանձնացված, բրգաձև, ժայռոտ և լերկ գագաթներից: Լեռների սահմաններում են գտնվում՝ Օկոնոն, Մեծ ու Փոքր Տոկոներ լճերը: Այստեղից են սկիզբ առնում՝ Ալգամա, **Ալդան**, Ամեդիչի, Գոնամ, Տիմպտոն, Բոմնակ, Զեյա, Տոկ, Չիլչի, Իդյում, Մայա և այլ գետեր: Երկարությունը՝ շուրջ 700 կմ, լայնությունը՝ 100-180 կմ: Բարձր գագաթը՝ Սկալիստիյ Գոլեց լեռ (2 412 մ):
Հայտնի է նաև Արտաքին Խինգան անվամբ:
Լեռներն իրենց անվանումը ստացել են ռուսերեն становой *հիմնական*, *առանցքային* ածականից՝ նկատի է առնվել լեռնաշղթաների գլխավոր առանցքը, որից խոտորնակի տարածվում են մյուս շղթաները:
Տեղաբնիկ էվենկները ընդհանուր Ձուգջուր անվամբ միավորելով Ձուգջուր, Ստանովոյ և Յաբլոնովի լեռները այն անվանել են *Երկրի ողնաշար*:

ՍՏՈՐԻՆ ՏՈՒՆԳՈՒՍԿԱ - ռուսերեն Нижняя Тунгуска, յակուտերեն Аллараа Тунгуска, էվենկերեն Катэнга. գետ Սիբիրում, **Ենիսեյի** աջ վտակը: Սկիզբ է առնում **Միջին Սիբիրական** սարահարթի՝ Տունգուսական լեռնաշղթայի հարավարևելյան լանջերից և Տուրուխանսկ քաղաքի մոտ թափվում մայր գետը: Գետի վրա կան բազմաթիվ քարվաստներ՝ Սակկո, Վիվինսկի, Ուչամսկի, Օրոն և այլն: Վտակներն են ձախից՝ Նեպա, Մեծ Երյոմա, Տետեյա, Իլիմպեյա, Նիդիմ, Թայմուրա, Ուչամի և այլն, աջից՝ Կոչեչում, Եյկա, Յամբուկան, Վիվի, Տուտոնչանա, Երաչիմո և այլն: Երկարությունը՝ 2 989 կմ: Ավազանը՝ 473 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 3 680 մ^3/վրկ:
Տունգուսկա անվանումն առաջացել է կետերեն էվենկներին տրվող тунгаскет *երեք տոհմի մարդիկ* ածական անունից: Ստորին է կոչվել Պոդկամենայա Տունգուսկա (Միջին) և Վերին Տունգուսկա (Անգարա) գետերից զանազանելու համար:

ՍՈՒԲԻՔ - տագալերեն Look ng Subic, անգլերեն Subic Bay, իլոկաներեն Luek Subic. ծովախորշ Ֆիլիպիններում, **Լուսոն** կղզու արևմտյան մասում: Ծոցն են թափվում Կալակլան, Մալավաան, Բոտոն, Տրիբաո և այլ գետեր: Մակերեսը՝ 123,5 կմ^2: Երկարությունը՝ մինչև 36 կմ, լայնությունը՝ մինչև 12 կմ: Ծավալը՝ 2,7 կմ^3: Միջին խորությունը՝ 22 մ, առավելագույնը՝ 43 մ (հարավային մասում):
Տեղացիները խորշը շրջապատող տարածքը կոչում էին Հուբեկ *Գութանի գլուխ* : Իսպանացի միսիոներները սխալմամբ այն անվանել էին *Սուբիք* :

ՍՈՒԼԱՎԵՍԻ - բուգիերեն ᨿᨊᨗᨕᨘᨁᨗ Սուլաբեսի, ինդոնեզերեն Sulawesi. կղզի Մեծ Զոնդյան կղզիների կազմում: Հյուսիսից ողողվում է **Սուլավեսի**, հյուսիս-արևելքից՝ **Մոլուքյան**, հարավ-արևելքից՝ **Բանդա** ծովերով: Արևմուտքում **Մակասարյան** նեղուցով անջատված է **Կալիմանտան** կղզուց: Ափերը խիստ մասնատված են, ինչը բերել է բազմաթիվ ծոցերի առաջացմանը՝ Տոմինի, Բոնե, Պոսո, Տոլիտոլի, Դոնդո, Տամբու և այլն: Մակերեսը լեռնոտ է: Կղզու կենտրոնական մասից ճառագայթաձև ձգվում են չորս երկար ու նեղ թերակղզիներ, որոնցից խոշորը Մինահասանն է: Հյուսիսարևելյան մասում կան գործող հրաբուխներ՝ Սոպուտան, Կլաբատ և այլն: Խոշոր գետերն են՝ Կարոն, Կարաման, Պալուն, Բոնգկան, Սոլոն: Խոշոր լճերն են՝ Տովուտի, Պոսո, Մատանա, Տեմպե, Լիմբոտո և այլն: Մակերեսը՝ 174 600 կմ^2: Բարձր կետը՝ Լատիմոջոնգ լեռ (3 478 մ):
Այժմյան ավանումը, հավանաբար, կազմված է բուգիերեն ᨿᨊ սուլա *կղզի* և ᨕᨘᨁᨗ բեսի *երկաթ* բառերի միացումից:

ՍՈՒԼԱՎԵՍԻ - ինդոնեզերեն Laut Sulawesi, տագալերեն Dagat Celebes, իլոկաներեն Baybay Celebes, մալայերեն Laut Sulawesi, վարայերեն Dagat Celebes. Միջկղզային ծով Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում՝ **Սուլավեսի**, **Կալիմանտան** կղզիների, Սուլու կղզեխմբի, **Մինդանաո**, Սանգիհե կղզիների միջև: Խոշոր ծոցերն են՝ Մորո, Իլյանա և այլն: Ծովն են թափվում Կայան, Սիբուգեյ և այլ գետեր: Մակերեսը՝ 468 720 կմ^2: Երկարությունը՝ 675 կմ, լայնությունը՝ 837 կմ: Ծավալը՝ 1 542 557 կմ^3: Միջին խորությունը՝ 3 291 մ, առավելագույնը՝ 6 220 մ (հյուսիսարևելյան մասում՝ **Մինդանաո** կղզուց 82 կմ հարավ, Կոտաբատո փողրակում):

Անվանումը ստացել է *Սուլավեսի* կղզուց:

ՍՈՒԼԵՅՄԱՆԻ ԼԵՌՆԵՐ- փուշտու غر ســـلیمان د դա Սուլայման Գհար, ուրդու سلســـلہ کــوہ سـلیمان, պարսկերեն کــوہرشــته سـلیمان Կոh է Սուլայմեն. լեռնահամակարգ Հարավային Ասիայում, **Իրանական** բարձրավանդակի արևելյան ծայրամասում՝ Պակիստանում և Աֆղանստանում: Ձգվում են հյուսիսարևելքից հարավ-արևմուտք ուղղությամբ: Լեռներից են սկիզբ առնում՝ Սանգար, Նարեչի, Լունի, Վեհոա, Ռակնի, Դելաբ և այլ գետեր: Երկարությունը՝ շուրջ 600 կմ: Բարձր գագաթը՝ Թախտ է Սուլեյման լեռ (3 487 մ):
Լեռները անվանվել են *Սողոմոն Մարգարեի* պատվին:

ՍՈՒԼՈՒ - տագալերեն Dagat Sulu, մալայերեն Laut Sulu, ինդոնեզերեն Laut Sulu, իլոկաներեն Baybay Sulu. Խաղաղ օվկիանոսի միջկղզային ծով: Հյուսիսարևելքում և արևելքում սահմանափակված է **Ֆիլիպինյան**, հյուսիսարևմուտքում՝ **Պալավան**, հարավարևմուտքում՝ **Կալիմանտան** կղզիներով և հարավարևելքում՝ Սուլու կղզեխմբով: Մինդորո նեղուցով հաղորդակցվում է **Հարավչինական** ծովի հետ: Մակերեսը՝ 335 000 կմ^2: Երկարությունը՝ 790 կմ, լայնությունը՝ 455 կմ: Ծավալը՝ 850 565 կմ^3: Միջին խորությունը՝ 2 539 մ, առավելագույնը՝ 5 576 մ (արևելյան մասում):
Անվանումը ստացել է *Սուլու* կղզեխմբից:

ՍՈՒՄԱՏՐԱ - ինդոնեզերեն Sumatera, աչեհերեն Ruja, մինանգկաբաու Sumatera. կղզի Ինդոնեզիայում, Մեծ Զոնդյան կղզիների կազմում: **Մալակկա** թերակղզուց անջատված է **Մալակկայի**, **Ճավա** կղզուց՝ **Զոնդյան** նեղուցներով: Կղզին ձգվում է հյուսիսարևմուտքից հարավ-արևելք և հասարակածով բաժանվում մոտավորապես հավասար մասերի:Հարավարևմուտքով անցնում է Բարիսան լեռնաշարը, որը հիմնականում կազմված է գործող հրաբուխներից՝ Դեմպո, **Մերապի**, Օպհիր, Տալանգ և այլն: Ափերը թույլ մասնատված են: Խոշոր գետերն են՝ Ռոկանը, Կամպարը, Բատանգհարին, Ինդրագիրին, Հարին, Մուսին: Խոշոր լճերն են՝ Տոբա, Լաուտավար, Մանինջաու, Ռանաու և այլն: Մակերեսը՝ 473 481 կմ^2: Երկարությունը՝ 1 790 կմ, լայնությունը՝ 435 կմ: Բարձր կետը՝ **Կերինչի** հրաբուխ (3 805 մ):
Անվանումն առաջացել է սանսկրիտերեն समुद्र սամուդրո *ծով* բառից:

ՍՈՒՄԲԱ - ինդոնեզերեն Sumba. կղզի Փոքր Զոնդյան կղզիների կազմում, **Ֆլորես** կղզուց հարավ, **Սումբավա** և **Թիմոր** կղզիների միջև: Հյուսիսարևելքից ողողվում է **Սավու** ծովով, հարավից և արևմուտքից՝ Հնդկական օվկիանոսով: Սումբա նեղուցով անջատված է **Ֆլորես** կղզուց: Ափերը թույլ մասնատված են: Խոշոր գետերն են՝ Կադանեն, Կալադան, Կանջիջին, Կամբանիրուն: Կղզում կան բազմաթիվ լճեր՝ Լայրինի լճեր և այլն: Մակերեսը՝ 11 052.42 կմ^2: Երկարությունը՝ 210 կմ, լայնությունը՝ 40 կմ: Բարձր կետը՝ Վանգամետի լեռ (1 225 մ):
Հավանաբար անվանումն առաջացել է հնում այս վայրերի տիրակալ Umbu-ի կնոջ Humba-ի անվան հնչյունափոխության արդյունքում:

ՍՈՒՄԲԱՎԱ - ինդոնեզերեն Sumbawa, ճավայերեն Sumbawa. կղզի Փոքր Զոնդյան կղզիների կազմում: Արևմուտքում Ալաս նեղուցով անջատված է **Լոմբոկ**, արևելքում Սապե նեղուցով՝ Կոմոդո կղզիներից: Հյուսիս-արևմուտքից ողողվում է **Բալի**, հյուսիսից՝ **Ֆլորես** ծովերով, հարավից՝ Հնդկական օվկիանոսով: Ափերը խիստ մասնատված են: Խոշոր ծոցերն են՝ Սալեհ, Լամպույ, Սանգար, Բիմա, Վավորադա և այլն: Խոշոր գետերն են՝ Ռեա, Տեպա, Բեհ և այլն: Մակերեսը՝ 14 624.59 կմ^2: Երկարությունը՝ 280 կմ, լայնությունը՝ մինչև 90 կմ: Բարձր կետը՝ Տամբորա հրաբուխ (2 850 մ):
Անվանումը, հավանաբար, առաջացել է այստեղ բնակվող samawa ցեղախմբի անվան ձևափոխման արդյունքում:

ՍՈՒՆԱՆԴԱ ԴԵՎԻ - հինդի सुनन्दा देवी Սունանդա Դևի. լեռնագագաթ Գարվալյան Հիմալայներում, Ուտարակհանդ նահանգում, Հնդկաստանում: **Նանդա Դևի** լեռից 2,62 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 434 մ, հարաբերականը՝ 260 մ:
Լեռը հայտնի էր նաև Նանդա Դևի Արևելք անվամբ:
Անվանվել է Դուրգա աստվածուհու հոգևոր օգնական *Սունանդա* աստվածուհու պատվին: *Սունանդա Դևին* համարվում է Շիվայի կնոջ՝ Պարվաթիի առարկայացումը:

ՍՈՒՆԳԱՐԻ - չինարեն 松花江 / 海西 Սոնգհուա ցզյան/Հայսի, մանջուրերեն ᡧᡠᠨᡤᠠᡵᡳ / ᡥᠠᡳᡥᡳ Սունգգարի Ուլա/Սունգգարի Բիրա. գետ Չինաստանի հյուսիսարևելքում, **Ամուրի** խոշորագույն աջ վտակը: Սկիզբ է առնում Չանբայշան սարահարթից, հատում Արևելամանջուրական լեռները, հոսում հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք ուղղությամբ, Տունցզյան քաղաքի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Ինմա, Հոյֆա, Նենցզյան, Հուլան, Տանվան, Շաոլին, Չալին և այլն: Երկարությունը՝ 2 308 կմ: Ավազանը՝ 546 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 2 463 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 305 մ, գետաբերանինը՝ 44 մ (Տունցզյան քաղաքում):
Մեծ հավանականությամբ անվանումն առաջացել է տունգուս-մանջուրական լեզուներում сунь *կաթ* ՝ (գետի մեջ լուծվող լյոսը ջրին տալիս է պղտոր սպիտակավուն երանգ) և гиринь *զոլ* բառերից, որը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ անունը սերտ կապ ունի Ծիր Կաթին (Հարդագողի ճանապարհ) համաստեղության անվան հետ:

ՍՔԻԼ ԲՐՈՒՄ - ուրդու سکل برم, չինարեն 斯吉爾布魯木峰 Սի ծի եռ պու լու մու ֆընլ.լեռնագագաթ **Կարակորումում**, Գիլգիթ Բալտիստանում, Գոդվին Օստեն սառցադաշտից արևմուտք, Քաշմիրի՝ Պակիստանի կողմից վերահսկվող մասում: **Կ2** գագաթից 8,47 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 410 մ, հարաբերականը՝ 1 152 մ:
Անվանումն ուրդու լեզվից թարգմանաբար նշանակում է *Փչեչան*, *դարձուցակ*:

ՍՔՅԱՆԳ ՔԱՆԳՐԻ - ուրդու گنگ انسرگئی. երկգագաթանի լեռնազանգված **Կարակորումում**, Բալտորո Մուզտաղ լեռնաշղթայում, Պակիստանի և Չինաստանի սահմանագլխին: **Կ2**-ից 6,74 կմ հյուսիս-արևելք հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Սքյանգ Քանգրի Գլխավոր 7 545 մ և Սքյանգ Քանգրի Հարավային 7 514 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 545 մ, հարաբերականը՝ 1 085 մ:
Սքյանգ Քանգրի լեռը ուրդու լեզվից թարգմանաբար նշանակում է *Սանդուխքավոր (Քառթավոր, Ատամնավոր) սառցապիկ*:

Վ

ՎԱՅԳԵՈ - ինդոնեզերեն Pulau Waigeo. կղզի Ինդոնեզիայի արևելյան մասում, Ռաջա Ամպատ կղզեխմբի չորս խոշոր կղզիներից (մյուսներն են՝ Միսոոլ, Սալավատի, Բատանտա) ամենամեծը, **Հալմահերա** և Նոր Գվինեա կղզիների միջև: Հարավում և հարավ-արևելքում Դամպիր նեղուցով անջատված է Նոր Գվինեա կղզուց: Արևմուտքից ողողվում է **Հալմահերա** ծովով, հյուսիսից և արևելքից՝ Խաղաղ օվկիանոսով: Ափերի խիստ մասնատվածությունը բերել է Մայալիբիտ ծովախորշի, Կաբույ, Ատժույ և այլ ծոցերի առաջացմանը: Խոշոր թերակղզիներն են՝ Արագո, Բաբուլա, Մանարե, Վարայ և այլն: Խոշոր գետերն են՝ Աչուկեն, Կաջավեն, Վերարին, Ռաջան: Մակերեսը՝ 3 153,7 կմ^2: Երկարությունը՝ 124,8 կմ, լայնությունը՝ 48,6 կմ: Ափի երկարությունը՝ 691,5 կմ: Բարձր կետը՝ Սամլոր լեռ (993 մ):
Նախկինում կղզին հայտնի էր Ամբերի և Վայգիու անուններով:
Այժմյան Վայեգո անվանումը տեղաբնիկների լեզվով բառացի նշանակում է *պատերազմ*:

ՎԱՆԱ ԼԻՃ - թուրքերեն Van Gölü, քրդերեն Gola Wanê. անհոսք, աղի լիճ **Հայկական** լեռնաշխարհում, Մեծ Հայքի Տուրուբերան և Վասպուրական նահանգներում, ներկայիս Թուրքիայի արևելքում: Ամենամեծն է աշխարհում իրենց ջրերում սոդա պարունակող լճերից: Գտնվում է Հայկական Տավրոսի հյուսիսարևելյան մասի, Կորդվաց լեռների, Կոտուր լեռնաշղթայի և Ծաղկանց լեռների միջև: Երբեմնի մեծ ջրային ավազանի մնացորդ է: Խոշոր կղզիներն են՝ Լիմ, Կտուց, Աղթամար և Առտեր: Լիճն են թափվում Բանդիմահի (Բերկրի), Ձելան (Արճեշ), Կարասու (Մարմետ), Դելիչայ (Գայթիս), Թուխ, Հայոց ձոր (Խոշաբ) և այլ գետեր: Մակերեսը՝ 3 717 կմ^2: Երկարությունը՝ 119 կմ, առավելագույն լայնությունը՝ 96 կմ: Ծավալը՝ 609,96 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 15 495 կմ^2: Միջին խորությունը՝ 164,1 մ, առավելագույնը՝ 451 մ (Դատվանի ավազանում): Լճափի երկարությունը՝ 430 կմ, ջրի աղիությունը՝ 22 ‰: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 648 մ:
Անվանումը ստացել է *Վան* քաղաքից:
Պատմական անցյալում լիճը կրել է բազմաթիվ այլ անուններ՝ Արսենե (հավանաբար այդպես է անվանվել Արարատյան երկրի բնակիչների կողմից, Նաիրի երկրների ծով (Նաիրի երկրի անունից), Տոսպա ծով (Տոսպ քաղաքի անունից), Բզնունյաց

ծով (Բզնունի իշխանական տոհմի անունից), Ռշտունյաց ծով (Ռշտունի իշխանական տոհմի անունից), Արճեշի ծով (Արճեշ քաղաքի անունից), Աղի ծով և այլն:

ՎԱՍՅՈՒԳԱՆԻ ՃԱՀԻՃՆԵՐ - ռուսերեն Васюганские болота. աշխարհի խոշորագույն ճահիճներից մեկը Արևմտյան Սիբիրում, **Օբ** և **Իրտիշ** գետերի միջև, Վասյուգանի հարթավայրում, Ռուսաստանի Դաշնությունում: Այստեղ են տեղակայված շուրջ 800 000 փոքր լճեր: Ճահիճներից են սկիզբ առնում բազմաթիվ գետեր՝ Վասյուգան,Չուլիմ, Ավա, Բակչար, Տարտաս, Մեծ ու Փոքր Յուգան, Շիշ, Շեգարկա, Տարա, Օմ: Ճահիճները պարունակում են տորֆի հսկայական պաշարներ՝ շուրջ 1 մլդ. տոննա: Մակերեսը՝ 53 000 կմ^2: Երկարությունը՝ 573 կմ, լայնությունը՝ 320 կմ: Ջրի ծավալը՝ 400 կմ^3: Միջին խորությունը՝ 7,5 մ:
Անվանվել է այստեղից սկիզբ առնող Վասյուգան գետի անունից:

ՎԵՄԲԱՆԱԴ - մալայալամ വേമ്പനാട്ടു കായല് վեմպանատու կայալ, հինդի वेम्बनाड झील վեմբանադ ջիլ, անգլերեն Vembanad, սանսկրիտերեն वेम्बनाड् सरोवरम् վեմբանադ սարովարամ. **Արաբական** ծովից նեղ պատնեշանման կղզով անջատված լիճ Հնդկաստանի հարավարևմտյան մասում, Կերալա նահանգում: Լճի լայնացումը դեպի հյուսիս բերում է Վերամպուժա ճահիճների կազմավորմանը: Խոշոր կղզիներն են՝ Ուիլինգդոնը, Վիպինը, Մուլավուկադը, Վալարպադամը,Պատիհռամանալը, Պերումբալամը, Պալիպուրամը: Լիճն են թափվում Աչենկովիլ, Մանիմալա, Մինաչիլ, Մուվատուպուժա, Պամբա, Պերիյար և այլ գետեր: Մակերեսը՝ 2 033,02 կմ^2: Երկարությունը՝ 96.5 կմ, լայնությունը՝ 14 կմ: Ծավալը՝ 3.25 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 15 770 կմ^2: Միջին խորությունը՝ 1,6 մ, առավելագույնը՝ 12 մ (հարավային մասում):
Անվանումը մալայալամ լեզվով բառացի նշանակում է *հայրենիքին հրաժեշտի ճամփա*:

ՎԵՏԱՐ - ինդոնեզերեն Selat Wetar. նեղուց **Վետար** և **Թիմոր** կղզիների միջև: Երկարությունը՝ 210 կմ, նվազագույն լայնությունը՝ 36 կմ: Առավելագույն խորությունը՝ 1 000-ից ավելի մ (հարավային մասում):
Անվանումը ստացել է *Վետար* կղզուց:

ՎԵՏԱՐ - ինդոնեզերեն Pulau Wetar. ամենամեծ կղզին Բարատ Դայա կղզեխմբում, Փոքր Զոնդյան կղզիների կազմում: Հյուսիսից ողողվում է **Բանդա** ծովով: Հարավում **Վետար** նեղուցով անջատված է **Թիմոր**, արևմուտքում Օմբայ նեղուցով՝ Ալոր կղզիներից: Մակերեսը լեռնոտ է, ափերը թույլ մասնատված: Կենտրոնական մասում է գտնվում Տուհի լիճը: Մակերեսը՝ 3 600 կմ^2: Երկարությունը՝ 116,1 կմ, լայնությունը՝ 51,3 կմ: Բարձր կետը՝ Լալայտու լեռ (1 411 մ):

ՎԵՐԽՈՅԱՆՍԿԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ - ռուսերեն Верхоянский хребет, յակուտերեն Үөһээ Дьааҥы сис хайат. լեռնահամակարգ Ռուսաստանի Դաշնությունում, Սա-

խայում: Ջրբաժան է հանդիսանում արևմուտքից **Լենա** և **Ալդան**, արևելքից՝ Օմոլոյ, Յանա և **Ինդիգիրկա** գետերի համար: Կազմված է տասնյակ միջին բարձրության և ցածրադիր լեռնաշղթաներից՝ Օրուլգան, Կուլար, Խարաուլախ և այլն: Լեռնաշղթայի անջրպետը կտրտված է **Լենայի** ավազանի գետերի խորը կիրճերով: Այստեղից են սկիզբ առնում՝ Մենկերե, Սոբոլոխ Մայան, Ունդյուլյունգ, Դյանիշկա, Տոմպո, Բիտանտայ, Դուլգալախ, Սարտանգ, Նելսերե և այլ գետեր: Երկարությունը՝ 1 200 կմ, լայնությունը՝ 100-250 կմ: Բարձր գագաթը անանուն՝ 2 389 մ (Սոբոլոխ Մայան գետի վերնագավառում):
Հայտնի է նաև Վերխոյանսկի շղթաներ անվամբ:
Անվանումը պայմանավորված է այն բանով, որ լեռնաշղթայի լանջերից են սկիզբ առնում Յանան կազմավորող Դուլգալախ և Սարտանգ գետերը: Այսպիսով անվանումը նշանակում է *Վերին Յանայի լեռնաշղթա*:

ՎԻԼԿԻՑԿՈՒ ՆԵՂՈՒՑ - ռուսերեն Пролив Вилькицкого. նեղուց **Թայմիր** թերակղզու և **Հյուսիսային երկիր** կղզեխմբի միջև, իրար է միացնում **Կարայի** և **Լապտևների** ծովերը: Առավելագույն խորությունը՝ մինչև 210 մ, երկարությունը՝ մոտ 130 կմ, նվազագույն լայնությունը՝ 56 կմ:
Անվանվել է 1913 թ.նեղուցը հայտնաբերած և ուսումնասիրած ռուս ջրագիր *Բ. Ա. Վիլկիցկու* պատվին:

ՎԻԼՅՈՒՅ - ռուսերեն Вилюй, յակուտերեն Бүлүү. գետ Ռուսաստանի Դաշնությունում, **Լենայի** ամենաերկար ձախ վտակը: Սկիզբ է առնում **Միջին Սիբիրական** սարահարթից,Վիլյույի սարավանդի Բես Կյուլյլե լճից: Գետի վերին հոսքն ունի հյուսիս- հարավ ուղղվածություն, ապա ընդունելով Չոնա վտակը, կտրուկ փոխում է իր ուղղությունը դեպի արևելք և հոսելով Կենտրոնայակուտական ցածրավայրով, թափվում մայր գետը: Գետն ունի շուրջ 63 վտակներ, որոնցից են աջից՝ Ուլախան-Վավա, Չիրկուո, Չոնա, Չիբիդա, Ուլախան-Բոտուոբույա, Օչուգույ-Բոտուոբույա, Բապագայ, ձախից՝ Մարխա, Ախտարանդա, Տյուկյան, Տյունգ և այլն: Երկարությունը՝ 2 650 կմ: Ավազանը՝ 454 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 1 468 մ^3/վրկ: Գետաբերանի բարձրությունը՝ 54 մ:
Ենթադրվում է, որ գետի ռուսերեն Вилюй անվանման հիմքում ընկած է կորյակերեն вил բառը, որը նշանակում է *վայր*, ուր հնում փոխանակային առևտուր էր կատարվում տայգայի ձկնորսների և որսորդների միջև:
Գետի յակուտերեն бүлүү անվանումը բառացի նշանակում է *պատնեշով սահմանազատող*:

ՎԻՍԱՅԱՆ - տագալերեն Dagat Kabisayaan, կենտրոնական բիկոլերեն Dagat Visayan, սեբուանո Visayan Sea, վարայերեն Dagat han Kabisay-an. Խաղաղ օվկիանոսի միջկղզային փոքր ծով, հյուսիսում՝ **Մասբատե**, արևելքում և հարավ-արևելքում՝ **Լեյտե**, հարավում՝ **Սեբու** ու **Նեգրոս** և արևմուտքում՝ **Պանայ** կղզիների միջև: Կանիգաո նեղուցով միացված է **Կամոտես**, Խինտոտոլո նեղուցով՝ **Սիբույան**, Տանյոն նեղուցով՝ **Բոհոլ**, Գիմարաս նեղուցով՝ **Սուլու,** Մասբատե նեղուցով՝ **Սամար** ծովերի հետ: Մակերեսը՝ 13 397 2 կմ^2: Երկարությունը՝ 155 կմ, լայնությունը՝ 115 կմ: Ծա-

վալը՝ 241,15 կմ^3: Միջին խորությունը՝ 18 մ, առավելագույնը՝ 34 մ (արևելյան մասում):
Անվանումը ստացել է *Վիսայան* կղզիներից:

ՎԻՍԱՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - վիսայերեն Kabisay-an, տագալերեն Kabisayaan, անգլերեն Visayas. Ֆիլիպինները կազմող 3 կղզեխմբերից մեկը: Խոշոր կղզիներն են՝ **Նեգրոս**, **Բոհոլ**, **Սեբու**, **Լեյտե**, **Պանայ**, **Սամար** և այլն: Կղզեխմբի բարձր կետն է համարվում՝ Կանլաոն հրաբուխը 2 435 մ (**Նեգրոս** կղզում): Մակերեսը՝ 61 077 կմ^2:
Կղզեխումբն անվանումը ստացել է VII դ.Սումատրայում գոյություն ունեցող श्रीविजय Շրիվիջայի պետության անունից, որտեղ श्री շրի-ն նշանակում է *հաջողակ*, *երջանիկ*, իսկ विजय վիջայա-ն՝ *հաղթական*:

ՎԻՏԻՄ - ռուսերեն Витим, յակուտերեն Витим, էվենկերեն Видым. գետ Ռուսաստանի Դաշնությունում, Արևելյան Սիբիրում, **Լենայի** աջ վտակը: Կազմավորվում է Իկատի լեռնաշղթայի հարավային լանջերից սկիզբ առնող Վիտիմկան և Չինա գետերի միախառնումից: Վերին և միջին հոսանքում անցնում է Վիտիմի սարահարթով, հոսում Ստանովոյի բարձրավանդակով, հյուսիսում կտրում Հարավ և Հյուսիս Մուսյան լեռները, բաժանում Հյուսիսբայկալյան ու Պատոմայի բարձրավանդակները՝ Վիտիմ ավանում միախառնվում մայր գետին: Վտակներն են աջից՝ Կուանդա, Կարենգա, Կալական, Կալար, Բոդայբո, Տակսիմա, ձախից՝ Ցիպա, Մույա, Մամական, Մամա և այլն: Երկարությունը՝ 1 837 կմ: Ավազանը՝ 225 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 1 520 մ^3/վրկ (Բոդայբո քաղաքում): Ակունքի բարձրությունը՝ 1 171 մ, գետաբերանինը՝ 176 մ:
Հավանաբար անունն առաջացել է այստեղ աճող ճահճախոտի բուրյաթերեն вить անունից, որին ավելացել է թյուրքական im վերջավորությունը:

ՎՐԱՆԳԵԼԻ ԿՂԶԻ - ռուսերեն Остров Врангеля. կղզի Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, **Արևելասիբիրական** և **Չուկոտյան** ծովերի միջև: **Լոնգի** նեղուցով անջատված է Չուկոտկայի հյուսիսային ափից: Գտնվում է Արևելյան և Արևմտյան կիսագնդերի սահմանին և 180-րդ միջօրեականով բաժանվում մոտավորապես հավասար մասերի: Ափերը թույլ մասնատված են: Կղզու հարավային մասը լեռնոտ է, հյուսիսայինը՝ ցածրադիր: Խոշոր ծոցերն են՝ Կրասինը, Յուժնին, Դուբլիցկուն, Պեսցովայա ծովախորշը: Խոշոր գետերն են՝ Նեիզվեստնայա, Կրասնի Ֆլագ, Մամոնտովայա, Կլեր, Նասխոկ և այլն: Խոշոր լճերն են՝ Գագաչիե, Զապովեդնոյե, Կմո և այլն: Մակերեսը՝ 7 670 կմ^2: Բարձր կետը՝ Սովետսկայա լեռ (1 095,7 մ):
Անվանվել է XIX դ. ռուս ծովագնաց, քաղաքական գործիչ *Ֆ.Պ. Վրանգելի* պատվին: Կղզու չուկչիերեն Ումկիլիր անվանումը բառացի նշանակում է *Սպիտակ արջերի կղզի*:

S

ՏԱԼԻԱԲՈՒ - ինդոնեզերեն Pulau Taliabu. կղզի Խաղաղ օվկիանոսում, Սուլա կղզեխմբի ամենամեծն ու արևմտյանը: Հյուսիսից ողողվում է **Մոլուքյան**, հարավից՝ **Բանդա** ծովերով: Արևմուտքում Սալուե Տիմպաուս նեղուցով անջատված է Բանգաի կղզեխմբից և **Սուլավեսի** կղզուց, արևելքում Կապալուլու նեղուցով՝ Մանգոլե կղզուց: Մակերեսը լեռնոտ է և անտառածածկ: Ափերը թույլ մասնատված են: Խոշոր գետերն են՝ Բուլանգ, Հայ, Մենանգա, Տաբոնա և այլն: Մակերեսը՝ 2 913,2 կմ^2, ափի երկարությունը՝ 410,5 կմ: Բարձր կետը՝ Գոդո լեռ (1 649 մ):
Անվանումը ստացել է այստեղ բնակվող taliabu ժողովրդի անունից:

ՏԱԿԼԱ ՄԱԿԱՆ - չինարեն 塔克拉玛干沙漠 Տաքըլամա կեն շամո, դունգաներեն Такәламагаан Шамә, ույղուրերեն كاىلى قۇملۇقىتىان Տեկիլիմական կիմիկի. անապատ Չինաստանի արևմուտքում՝ Թարիմի հարթավայրի կենտրոնական մասում: Աշխարհի խոշոր ավազային անապատներից մեկը: Հարթ մակերեսը իջնում է աստիճանաբար հյուսիս-արևելք 1 200-1 300 մ-ից մինչև 800-900 մ: Անապատի արևմուտքում վեր են խոյանում ավազաքարերից կազմված և մինչև 1 664 մ (Չոնգտագ լեռ) բարձրությամբ առանձին բլրաշարեր: Տակլա Մականի եզրերում զգալի տարածքներ են զբաղեցնում աղուտները: Շրջակա լեռներից սկիզբ առնող բազմաթիվ գետերից ու գետակներից միայն Խոթան և **Թարիմ** գետերն են, որ պահպանում են իրենց մշտական հոսքը: Մակերեսը՝ ավելի քան 330 000 կմ^2: Երկարությունը՝ ավելի քան 1 000 կմ, լայնությունը՝ մինչև 400 կմ:
Մեծ հավանականությամբ անվանումն առաջացել է պարսկերեն ترك տակլա *թողնել հեռանալ* և ույղուրերեն قۇم մական, *կացարան* բառերի միացումից, որը հաճախակի մեկնաբանվում է որպես *լքյալ վայր* կամ *երբ դուք մտնում եք՝ երբևիցե դուրս չեք գա*:

ՏԱՅ - չինարեն 太湖 Տայհու. խոշոր լիճ **Յանցզի** գետի գետաբերանում, Չինաստանի Ցզյանսու և Չժեցզյան մարզերի սահմանին: Խոշոր կղզիներն են՝ Մանշան, Յուշան, Չանշա և այլն: Լիճն են թափվում Վանյու, Չանդու Հարբուր, Տյաոսի Բրուք գետերը, իսկ արտահոսում՝ Սուչժուն: Լիճը միացված է Չինական Մեծ ջրանցքի հետ: Մակերեսը՝ 2 250- 2 338 կմ^2: Երկարությունը՝ 60 կմ, լայնությունը՝ 45 կմ: Ծավալը՝ 5,85-9,58 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 36 500 կմ^2: Լճափի երկարությունը՝ 1 400 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 0,7 մ:
Միջին խորությունը՝ 3,3 մ, առավելագույնը՝ 4,8 մ (արևելյան մասում): Չինարեն太湖 Տայհու անվանումը բառացի նշանակում է *Մեծ լիճ*:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՆԵՂՈՒՑ - հինդի दस डिग्री जलसन्धि Դաս դիգրի ջելսնդի, անգլերեն Ten Degree Channel. նեղուց Հնդկական օվկիանոսում: Իրարից է անջատում **Անդամանյան** (Փոքր Անդաման կղ.) ու **Նիկոբարյան** (Կար Նիկոբար կղ.) կղզիները և միացնում **Անդամանյան** ծովը **Բենգալյան** ծոցին: Լայնությունը՝ 147 կմ: Առավելագույն խորությունը՝ 1 280 մ::
Անցնում է հյուսիսային լայնության *10^0*-ով, որից էլ ստացել է իր անվանումը:

ՏԱՎՐՈՍ - հունարեն Ταύρος / Ὄρη Ταύρου, թուրքերեն Toros Dağları, արաբերեն طوروس جبال Ջիբել Տուրուս. լեռներ այժմյան Թուրքիայի հարավում: Կազմելով **Փոքրասիական** բարձրավանդակի և **Հայկական** լեռնաշխարհի արևմտյան մասի հարավային եզրամասերը ձգվում են Միջերկրական ծովի ափի երկայնքով: Ընդունված է **Տավրոսը** բաժանել երեք մասի՝ Արևմտյան Տավրոս (Անթալիայի ծոցի շրջան), Կենտրոնական և Հայկական (Արևելյան) Տավրոս: Վերջինս ձգվում է արևմուտքում Էգիրդիր լճից մինչև **Եփրատի** ակունքները արևելքում, շուրջ 600 կմ երկարությամբ: Այստեղից են սկիզբ առնում Լամաս, Տարսուս, Սարոս, Իբրալա, Փիրինջ և այլ գետեր: Երկարությունը՝ ավելի քան 1 250 կմ, լայնությունը՝ 50-325 կմ: Բարձր գագաթը՝ Դեմիրկազըկ լեռ (3 756 մ):
Տավրոսը հայտնի է նաև Ծաղկանց լեռներ անվամբ:
Համարվում է, որ լեռների անվանումը հունարեն Ταύρου Տավրոս անունից է, որը թարգմանաբար նշանակում է *ցուլ*:
Ավելի հավանական է, որ անվան առաջացումը կապված լինի ասորերեն տուր *լեռներ* բառի հետ:

ՏԻԱՈԼՈՆ - չինարեն 蛟龍瀑布 Ծյաոլոն փուպու. ջրվեժ Արևելյան Ասիայում, Տայվանում: Գահավիժում է Դա Տա լեռան ծերպերից՝ 1 797 մ բարձրությունից: Ջրվեժը կազմավորում է Կինշույ գետը: Կազմված է չորս սանդղավանդներից: Անկման բարձրությունը՝ 846 մ:
Անվանումը չինարենից 蛟龍瀑布 Ծյաոլոն փուպու բառացի, նշանակում է *Վիշապի ջրվեժ*:

ՏԻԲԵԹԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - չինարեն 青藏高原 Ցինտան գաոյուեն, տիբեթերեն བོད་ཐང་མཐོ་རིས། բոդ սա մտհո. լեռնաշխարհ Կենտրոնական և Հարավային Ասիայում, մեծամասամբ Չինաստանում: Եզերված է հյուսիսից **Կունլուն**, հյուսիսարևելքից Ցիլյանշան լեռնաշղթաներով, հարավից՝ **Հիմալայներով**, արևմուտքից՝ **Կարակորումով**: Իրենից ներկայացնում է 4 000-5 000 մ բարձրությամբ մեղմաթեք հարթավայրերի ու 6 000 -7 000 մ բարձրությամբ լեռնաշղթաների զուգակցում: Բարձրավանդակի հարավային մասը զբաղեցնում է ծովի մակարդակից շուրջ 5 000 մ բարձրություն ունեցող Տիբեթի բարձրադիր սարահարթը: Բարձրավանդակն ունի մոտ 47 000 կմ^2 մակերեսով սառցադաշտեր: Այստեղից են սկիզբ առնում՝ **Ինդոս, Բրահմապուտրա**, **Սալուին**, **Մեկոնգ**, **Յանցզի**, **Հուանհե** և այլ գետեր: Այստեղ են գտնվում Նամ, Սիլինգ, Ժարի, Տանգրա, Ուլան Ուլ և այլ լճեր: Մակերեսը՝ շուրջ 2 000 000 կմ^2: Միջին բարձրությունը՝ 4 877 մ:
Անվանումը ստացել է *Տիբեթ* աշխարհագրական երկրամասից:

ՏԻԳՐԻՍ - աքադերեն 𒌓𒄴𒊩𒌋𒁕𒄿𒄿 Իդիքլաթ, արամեերեն ܕܺܝܓܠܰܬ Դիգլաթ, արատտերեն 𐡃𐡉𐡂𐡕 Արանզահ, շումերերեն 𒌓𒄴𒊩𒌋𒁕 Իդիգնա / Իդիգինա, սիրիերեն ܕܺܝܓܠܰܬ Դեգլաթ, արաբերեն دجلة / حداقل Հուդաքիլ /Դիջլահ, հունարեն Τίγρης, պարսկերեն دجله Դեջլե, եբրայերեն דִּיקְלַת Հիդդեքել, քրդերեն Dîcle Dîjla دیجلە Դիջլա, թուրքերեն Dicle. գետ **Հայկական լեռնաշխարհում** և Միջագետքում: Սկիզբ է առ-

նում Արղնիի լեռներից, Ծովք լճից, Մադենի կիրճով կտրում անցնում Ջեզիրե սարավանդն ու Միջագետքի մեծ մասը և Էլ Քուռնա քաղաքի մոտ միանում **Եփրատի** հետ, կազմելով Շատ էլ Արաբը, որը թափվում է **Պարսից ծոցը**: Վտակներն են՝ Խաբուր, Մեծ ու Փոքր Զաբ, Դիյալա, Էլ Ուզայմ, Բարազգիր: Երկարությունը՝ 1 900 կմ: Ավազանը՝ 375 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 1014 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 248 մ, գետաբերանինը՝ 4 մ (Շատ էլ Արաբ):
Աստվածաշնչում գետն անվանվում է Տիգրիս և համարվում է մեկը չորս գետերից՝ Փիսոն, Գեոն, Եփրատ, որը հոսում է Եդեմական այգով:
Գետի հին հունարեն Τίγρις անունը փոխարյալ է հին պարսկերենի tigrā-ից, որն իր հերթին փոխառված է շումերերեն idigna-ից---էլամերեն ti-ig-ra-ից: Հավանական է, որ գետի շումերերեն Idigna կամ Idigina անվանումն առաջացել է id (i)gina *վազող ջուր* բառից և մեկնաբանվել, որպես *Արագ գետ* : Գետի անվան այս ձևը աքադերենում ընդունել է Idiqlat տեսքը և այդտեղից անցել այլ սեմիթական լեզուները: Միջին պարսկերենում Տիգրիսն անվանվում էր رود ارون Արվանդ Ռուդ, *Արագ գետ*:

ՏԻՐԱՆԻ ՆԵՂՈՒՑ - արաբերեն تـــيران Տեյրան. **Աքաբայի** ծոցը **Կարմիր** ծովին միացնող նեղուց: Իրարից է անջատում **Սինայի** և **Արաբական** թերակղզիները: Երկարությունը՝ շուրջ 13 կմ: Առավելագույն խորությունը՝ մինչև 200 մ (արևմտյան մասում):
Անվանումը ստացել է այստեղ գտնվող *Տիրան* կղզուց:

ՏԻՐԻՉ ՄԻՐ - ուրդու ترـــيرـــ مير, փուշտու ترـــيرـــ مير. յոթ գագաթանի լեռնազանգված **Հինդուկուշի** լեռներում, Պակիստանի հյուսիսում: **Հինդուկուշի** ամենաբարձր լեռն է: **Ռաքափոշի** լեռից 238 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Տիրիչ Միր Գլխավոր 7 708 մ, Տիրիչ Միր Արևելք 7 691 մ, Տիրիչ Միր Արևմուտք I 7 487 մ, Տիրիչ Միր Արևմուտք II 7 500 մ, Տիրիչ Միր Արևմուտք III 7 400 մ, Տիրիչ Միր Արևմուտք IV 7 338 մ: 7 000 մ-ից բարձր անանուն յոթերորդ պիկը գտնվում է զանգվածի հարավային մասում:
Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 708 մ, հարաբերականը՝ 3 908 մ:
Համարվում է, որ անվանումը թարգմանաբար նշանակում է *Տիրիչի արքա* , որտեղ *Տիրիչը* լեռան կողային հովիտներից մեկի անունն է:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը վախաներենից թարգմանվում է ինչպես *Խավարի արքա*:

ՏՅԱՆ ՇԱՆ - ղըրղըզերեն Теңир-Тоо, չինարեն 天山山脉 Թիենշան շանմայ, ղազախերեն Тянь-Шань, ուզբեկերեն Tyan-Shan, ույղուրերեն تئۈەنشەن Տենգրիտաղ, դունգաներեն صا تيـــا Տյանսան. լեռնահամակարգ Կենտրոնական Ասիայում՝ Ուզբեկստանում, Տաջիկստանում, Ղըրղըզստանում, Ղազախստանում ու Չինաստանում: **Տյան Շանը** կարելի է բաժանել մի քանի լեռնագրական շրջանների. Հյուսիսային Տյան Շան՝ Կետմեն, Անդրիլիական, Ալաթաու, Կյունգյոյ Ալա Թոո և Ղըրղըզական լեռնաշղթաները, Արևելյան Տյան Շան՝ Բորոխորո, Իրեն Հաբիրգա, Բողդո Ուլա, Կառլիկտաղ Խալիկտաու, Սարմին Ուլա, Կուրուկտաղ լեռնաշղթաները, Արևմտյան Տյան Շան՝ Կարաթաու, Թալասի Ալա Թոո, Չատկալի, Պսկեմի, Ուղղա-

մի լեռնաշղթաները, Հարավարևմտյան Տյան Շան՝ Ֆերգանայի հովիտը եզերող և իր մեջ ընդգրկող Ֆերգանայի լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերը, Ներքին Տյան Շան՝ հյուսիսից սահմանափակված է Ղըրղըզական լեռնաշղթայով և Իսիկ Կուլի գոգավորությամբ, հարավից՝ Կակշաալ Թոո, արևմուտքից՝ Ֆերգանայի լեռնաշղթայով, արևելքից՝ Ակշիյրակ լեռնազանգվածով: Ունի շուրջ 7 300 կմ^2 տարածքով սառցադաշտեր, որոնցից խոշորագույնը **Հարավային Էնիլչեկ**: Այստեղից են սկիզբ առնում՝ Չու, Նարին, Թարիմ, Իլի և այլ գետեր: Լճերն են՝ Իսիկ Կուլ, Սոն Կուլ, Չատըր Կուլ: Բարձր գագաթը՝ **Հաղթանակի պիկ** լեռ (7 439 մ): Մակերեսը՝ ավելի քան 570 000 կմ^2: Երկարությունը՝ մինչև 2 450 կմ, լայնությունը՝ մինչև 400 կմ:
Լեռնաշղթայի անվանումը չինարենից թարգմանաբար նշանակում է *Երկնային* կամ *Աստվածային լեռներ*:

ՏՈԲԱ - ինդոնեզերեն Danau Toba, բատակ տոբա Tao Toba. քաղցրահամ լիճ **Սումատրա** կղզու հյուսիսային մասում, Բարիսան լեռնաշարում: Գտնվում է հսկայական 100 x 30 կմ չափի կալդերայի մեջ, որն առաջացել է 74 000 տարի առաջ համանուն հրաբխի ժայթքման արդյունքում: Համարվում է աշխարհի հրաբխային ծագման ամենամեծ լիճը: Խոշոր կղզիներն են՝ Սամոսիր, Տուլաս, Տաո, Սիբանդան (Պարդեպուր), Սիմամորա և այլն: Լիճն են թափվում Բատուգանգա, Սիմարե, Մանդասի և բազմաթիվ այլ գետեր ու գետակներ, իսկ արտահոսում՝ Ասահանը: Մակերեսը՝ 1 103 կմ^2: Երկարությունը՝ 84,5 կմ, լայնությունը՝ 35 կմ: Ծավալը՝ 240 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 3 726 կմ^2: Լճափի երկարությունը՝ 464 կմ: Միջին խորությունը՝ 217,6 մ, առավելագույնը՝ 505 մ (հյուսիսային մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 904 մ:
Ըստ ավանդույթի լիճն անվանվել է այս վայրերում բնակվող բատագ ժողովրդի նախահայր *Տոբայի* պատվին:

ՏՈՆԹԻ - չինարեն 洞庭湖 Տոնթինհու. խոշոր, ծանծաղ լիճ Չինաստանի Հունան մարզի հյուսիսարևելյան մասում, **Յանցզի** գետի ավազանում: Լիճն են թափվում **Յանցզի**, Սյանցզյան, Ցզի, Յուան, Լիշուի գետերը և այլն, իսկ արտահոսում՝ **Յանցզի** գետը: Խոշոր կղզիներն են՝ Պյաովեյը, Յուշանը, Չանշան: Մակերեսը՝ 2 820-20 000 կմ^2 (միջ. 3 968 կմ^2): Երկարությունը՝ 150 կմ, լայնությունը՝ 95 կմ: Ծավալը՝ 24,6 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 262,800 կմ^2: Միջին խորությունը՝ 6,2 մ, առավելագույնը՝ 31 մ (հյուսիսարևմտյան մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 33 մ:
Լճի չինարեն անվանումը կազմված է՝ 洞 տոն-*անձավ*, 庭 թին-*արքունիք* 湖 հու-*լիճ* բառերից:

ՏՈՆԼԵՍԱՊ- քմերեն ទន្លេសាប բաւնգտոնլեսապ.լիճ Կամբոջայում՝ **Հնդկաչինի** ամենամեծ ջրավազանը: Թափվում և արտահոսում է Տոնլեսապ գետը: Տարվա մեծ մասը լիճը համեմատաբար փոքր է և ծանծաղ, սակայն անձրևների ժամանակ լճից արատահոսող **Մեկոնգ** թափվող Տոնլեսապ գետի ջրերը ետ են շուռ գալիս, ինչի հետևանքով լճի մակերեսը մեծանում է շուրջ 6 անգամ: Մակերեսը՝ 2 700-16 000

կմ^2 (միջինը 8 300 կմ^2): Երկարությունը՝ 250 կմ (չոր ժամանակ՝ 145 կմ), լայնությունը՝ 100 կմ (չոր ժամանակ՝ 40 կմ): Ծավալը՝ 3,78-155,2 կմ^3 (միջինը 44,0 կմ^3): Միջին խորությունը՝ 5,3 մ (չոր ժամանակ՝ 1,4 մ), առավելագույնը՝ 9,7 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 0,5 մ:
Անվանումը քմերենից թարգմանաբար նշանակում է *մեծ գետի լիճ*:

Ց

ՑԱՆԳՊՈ - չինարեն 雅魯藏布. կիրճ Տիբեթի հարավարևելյան մասում, Չինաստանում: Աշխարհի խոշորագույն և ամենախոր կիրճերից մեկն է: Զբաղեցրած մակերեսը կազմում է 9 168 կմ^2: Երկարությունը՝ 504,6 կմ: Միջին խորությունը՝ 2 268 մ, առավելագույնը՝ 6 009 մ: Այստեղով է հոսում **Բրահմապուտրա** (վերին հոսանքում՝ Յառլունգ Ցանգպո) գետը:
Հայտնի է նաև Յառլունգ Ցանգպո Գրանդ Կանյոն, Ցանգպո Կանյոն, Բրահմապուտրա Կանյոն, Ցանգպո կիրճ և այլ անուններով:
Ցանգպո անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *մաքրիչ, զտիչ*:

ՑՉՅՈՒԼՈՒՆ - չինարեն 九龍半島 Ցզյուլուն պենդա, անգլերեն **Kowloon Peninsula**. թերակղզի Չինաստանի հարավարևելքում: Ողողվում է **Հարավչինական** ծովով: Մակերեսում գերակշռում են սարահարթերը (400-600 մ), ափերը խիստ մասնատված են և լի ժայռոտ հրվանդաններով, ծովախորշերով: Այստեղ է գտնվում Հոնգ Կոնգ հատուկ վարչական շրջանը: Մակերեսը՝ 1 092,8 կմ^2: Բարձր կետը՝ Ֆեյլուշան լեռ (602,6 մ):
Չինարեն 九龍 Ցզյուլուն անվանումը բառացի նշանակում է *Ինը վիշապ*:

ՑԻՆՀԱՅ- տիբեթերեն [illegible] Ցո Նգոնպո, չինարեն 青海湖Ցինհայ հու, մոնղոլերեն [illegible] Хөх нуур. Կենտրոնական Ասիայի ամենամեծ լեռնային, անհոսք աղի լիճը: Գտնվում է Չինաստանի արևմուտքում, Ցինհայ մարզում, **Տիբեթի** սարահարթի հյուսիսարևելյան մասում, Ցինհայ հարթավայրի կենտրոնում: Ափերը թույլ մասնատված են, լճում կան մի քանի կղզիներ՝ Թռչնի, Շադաո և այլն: Լիճն են թափվում 23 գետեր՝ Բուխ Գոլ, Դաոտան և այլն: Մակերեսը՝ 4 236,6 կմ^2 (առավելագույնը՝ 4 451,45 կմ^2): Երկարությունը՝ 110 կմ, լայնությունը՝ 80 կմ: Ծավալը՝ 88,97 կմ^3 (առավելագույնը 93,48 կմ^3): Միջին խորությունը՝ 21 մ, առավելագույնը՝ 32,8 մ (կենտրոնական մասում): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 260 մ:
Լճի անվանումը չինարենից, մոնղոլերենից և տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Կապույտ լիճ*:

Ու

ՈՒԼԹԱՐ ՍԱՐ - ուրդու سار آلــتر Ուլթար Սար. բազմագագաթ լեռնազանգված **Կարակորումում**, Բատուրա Մուզտաղ լեռներում, Պակիստանում: **Ծիսպարե** լեռից 6,38 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ **Ուլթար Սար** 7 388 մ, Բոջոհագուր Դուանասիր II 7 329 մ, Հունզա Պիկ, Բուբլիմոթին և ուրիշներ: Կան բազմաթիվ սառցադաշտեր՝ Գուլկին, Գուլմիտ, Ահմադ Աբադ, Ուլթար, Հասանաբադ և այլն: Հարաբերական բարձրությունը՝ 888 մ:
Հայտնի է նաև Ուլթար, Ուլթար II, Բոջոհագուր, Դուանասիր II և այլ անուններով: Անվանումը թարգմանաբար նշանակում է *Պատվական* :

ՈՒՎՍ ԼԻՃ - մոնղոլերեն Увс нуур, տիվաերեն Успа-Холь. անհոսք, աղի լիճ Մոնղոլիայի և Ռուսաստանի Դաշնության սահմանագլխին, Մեծ Լճերի գոգավորությունում: Լիճ են թափվում 38 գետ՝ Խոլու, Իրբիտեյ, Օրուկու շինա, Տես խեմ, Նարիյն գոլ, Խուրմասին գոլ, Խարխիրա գոլ, Բորշո գոլ, Տարգալիգ և այլն: Մակերեսը՝ 3 350 կմ^2: Երկարությունը՝ 84 կմ, լայնությունը՝ 79 կմ: Ծավալը՝ 33,8 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 70 100 կմ^2: Միջին խորությունը՝ 10,1 մ, առավելագույնը՝ 20 մ (կենտրոնական մասում): Աղիությունը՝ 18,5-19,7 ‰: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 758,9 մ:
Հավանաբար անվան հիմքում ընկած է այրագի (մոնղոլական կաթի գինի) պատրաստումից մնացած դառը субсен անվամբ մնացորդը, որը վկայակոչում է ջրի համի դառնությունը և խմելու անպիտանելիությունը:

ՈՒՐԱԼ - ռուսերեն Урал, ղազախերեն Жайық, բաշկիրերեն Яйык, նողայերեն Яйык. գետ Ռուսաստանի Դաշնությունում և Ղազախստանում: Սկիզբ է առնում Հարավային Ուրալի Ուրալթաու լեռնաշղթայի Նաժիմ (914,8 մ) լեռան հյուսիս-արևելյան լանջից, հոսելով հարավային ուղղությամբ ու հանդիպելով բարձրադիր Ղազախական տափաստանի հետ, կտրուկ թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, Ուրալսկ քաղաքի մոտ փոխում իր հոսքի ուղղությունը դեպի հարավ և **Մերձկասպյան ցածրավայրում**, Ղազախստանի Ատիրաու քաղաքի մոտ՝ թափվում **Կասպից ծովը**: Վտակներն են ձախից՝ Գումբեյկա, Սունդուկ, Մեծ Կումակ, Օր, Իլեկ, Ուտվա, Բարբաշևա, Սոլյանկա, աջից՝ Չագան, Արտազիմ, Մեծ Կիզիլ, Տանալիկ, Գուբեռլյա, Սակմարա, Զաժիվնայա, Կինդելյա, Իրտեկ, Ռուբեժկա: Երկարությունը՝ 2 428 կմ: Ավազանը՝ 231 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 400 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 804 մ, գետաբերանինը՝ -28 մ:
Նախկինում գետը կրում էր Յաիկ անվանումը, որի հիմքում ընկած է թյուրքական jajyk *լայնարձակ, փռված* բառը: Նպատակ ունենալով ջնջել Յաիկի մասին հիշողությունը, ուր սկսվել և ընթացել էր Ե. Ի. Պուգաչովի գլխավորությամբ 1773-75 թթ. տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունը, 1775 թ-ի հունվարի 15-ին կայսրուհի Եկատիրինա II հրամանով վերանվանվել է *Ուրալ*՝ այն լեռների անունով, որտեղից սկիզբ է առնում գետը:

ՈՒՐԱԼՅԱՆ ԼԵՌՆԵՐ - ռուսերեն Уральские горы, բաշկիրերեն Урал тауҙары, կոմի Из / Сибыр Из, մանսիերեն Нёр, խանտիերեն Кев, նենեցերեն Нгарка Пэ, ղազախե-

րեն Орал таулары. լեռնային երկիր Եվրոպայի և Ասիայի սահմանագլխին՝ Արևելաեվրոպական ու **Արևմտասիբիրական հարթավայրերի** միջև, Ռուսաստանի Դաշնությունում ու Ղազախստանում: Միջօրեականի ուղղությամբ ձգվում են **Կարայի ծովի** ափերից մինչև **Ղազախական մանրաբլուրները**: **Ուրալը** կարելի է բաժանել մի քանի լեռնագրական շրջանների. Բևեռային, Մերձբևեռային, Հյուսիսային, Միջին և Հարավային: Այստեղ են գտնվում՝ Տավատույ, Ուվիլդի, Իրտյաշ, Տուրգոյակ, Մեծ Կասլի լճերը: Լեռներից են սկիզբ առնում **Ուրալ**, Բելայա, Վիշերա, Իսետ, Կամա, Միաս, Պեչորա, Տոբոլ, Չուսովայա և այլ գետեր: Մակերեսը՝ 781 100 կմ^2: Երկարությունը՝ 2 000 կմ, լայնությունը՝ 40-150 կմ: Բարձր գագաթը՝ Նարոդնայա լեռ (1895 մ):
Լեռների անվանումն առաջացել է բաշկիրերեն ypay *գոտի*, *գոտևորել* բառից:

ՈՒՐՄԻՈ ԼԻՃ - պարսկերեն دریاچه ارومیه դարյեչե է Օրումիե, ազարի گولــو اورمو Ուրմիյա գյոլու. անհոսք աղի լիճ **Հայկական լեռնաշխարհում**, Իրանի հյուսիսարևմուտքում: Մերձավոր և Միջին Արևելքի խոշոր լիճ: Լճում կան 102 կղզի՝ Կազեմ Դաշի, Արամ, Բարդ, Շահի և այլն: Լիճն են թափվում Ջաղատու, Հաջիչայ, Քադեր, Թաթավու և այլ գետեր: Մակերեսը՝ 5 200 կմ^2: Երկարությունը՝ 140 կմ, լայնությունը՝ 40-55 կմ: Ծավալը՝ 24,96 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 51 876 կմ^2: Միջին խորությունը՝ 4,8 մ, առավելագույնը՝ 16 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 267 մ:
Հնում հայտնի էր հետևյալ անուններով՝ Կապուտան, Թիլ, Մանթիա, Մեդի, Սպավտա (Սպաուտա), Չեչաշ, Շահի և այլն:

Փ

ՓԱՍՈՒ ՍԱՐ - ուրդու سر پســو.երկգագաթ լեռնազանգված **Կարակորումում**, Բատուրա Մուզտաղում, Հունզա հովտից արևմուտք,Պակիստանի ծայր հյուսիսում: **Բատուրա Սարից** 6,36 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Փասու Սարը (Փասու I) 7 478 մ ու Փասու Դիարը (Փասու Արևելք, Փասու II) 7 284 մ: Կան բազմաթիվ սառցադաշտեր՝ Փասու, Բատուրա և այլն: Հարաբերական բարձրությունը՝ 647 մ:
Փասու բառը թարգմանաբար նշանակում է *Այծագլուխ*:

ՓՈԼՔԻ ՆԵՂՈՒՑ - թամիլերեն பாக்கு நீரிணை Պակքյու նիրինայ, սինհալերեն පාක් සමුද්‍රය සන්ධිය Փոք Սամուդրա Սանդհիյա, հինդի **पाक जलडमरूमध्य** Պաք ջլդումուրումադյա, անգլերեն **Palk Strait**. Հնդկական օվկիանոսի **Բենգալյան** և **Մանարի** ծոցերը միացնող նեղուց, **Շրի Լանկա** կղզու և **Հնդստան** թերակղզու միջև: Երկարությունը՝ մոտ 150 կմ: Լայնությունը՝ 55-82 կմ: Խորությունը՝ 2-9 մ:
Անվանվել է Մադրասի նահանգապետ, անգլիական պետական գործիչ լորդ *Ռոբերտ Փոլքի*, 1-ին բարոնետի պատվին:

ՓՈՐՈՆԳ ՌԻ - չինարեն 市容日 Ֆու րոնգ րի. լեռնագագաթ **Հիմալայներում**, Ջուգալ Հիմալ լեռներում, Տիբեթում: Եբոկանգալ Ռի լեռից 5,46 կմ հեռավորությամբ: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 292 մ, հարաբերականը՝ 520 մ:
Անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Օրհնված փառքի լեռ*:

ՓՈՔՐ ԱՍԻԱ - հունարեն Μικρά Ασία / Ανατολία, թուրքերեն Anadolu / اناطولى Էնաթոլի / Küçük Asya. թերակղզի Ասիայի արևմուտքում: Ողողվում է Սև, Մարմարայի, Էգեյան և Միջերկրական ծովերով, ինչպես նաև Ասիան Եվրոպայից անջատող Բոսֆոր և Դարդանելի նեղուցներով: Թերակղզու մեծ մասը զբաղեցնում է **Փոքրասիական** բարձրավանդակը, արևելքում՝ **Հայկական** լեռնաշխարհը: Խոշոր գետերն են՝ **Եփրատ**, **Տիգրիս**, Կզըլ Իրմակ, Սակարյա, Ճորոխ և այլն: Խոշոր լճերն են՝ **Թուզ**, Բեյշեհիր, Էգիրդիր, Ակշեհիր, Բուրդուր և այլն: Մակերեսը՝ 506 000 կմ^2: Երկարությունը՝ 1 300 կմ, լայնությունը՝ 670 կմ: Բարձր կետը՝ Արարատ լեռ (5 165 մ): **Փոքր Ասիա** անվանումն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել իր 7 գրքից բաղկացած «Պատմություն հեթանոսների դեմ» աշխատությունում IV-V դդ. Քրիստոնյա պատմիչ և աստվածաբան Պաուլուս Օրոսիուսի կողմից, որով նա փորձել է առանձնացնել Պողոս առաքյալի կողմից քրիստոնեացված այս տարածքը Մեծ (կամ Վերին) Ասիայից, այսինքն՝ ամբողջ Ասիա ցամաքից:

ՓՈՔՐ ԽԻՆԳԱՆ - ռուսերեն Малый Хинган, չինարեն 小兴安岭 Սյանսինանլին. լեռնաշղթա Հեռավոր Արևելքում՝ Չինաստանում և Ռուսաստանի Դաշնության՝ Խաբարովսկի երկրամասի Հրեական ինքնավար ու Ամուրի մարզերում: Լեռների չինական մասը անջատում են իրարից **Ամուրի** և Նենցգյան գետերի հովիտները: **Փոքր Խինգանը** ծածկված է խիտ անտառներով: Այստեղից են սկիզբ առնում Վուտոնգ, Կուրբին, Ժան, Տոնկեն, Նումին և այլ գետեր: Մակերեսը՝ 130 000 կմ^2: Երկարությունը՝ մոտ 450 կմ: Բարձր գագաթը՝ Պինգդին լեռ (1 429 մ):
Խինգան անվանումը տունգուս-մանջուրական լեզուներում թարգմանաբար նշանակում է *բլրոտ վայր*, *ալիքավոր հարթավայր*:
Փոքր սահմանումը հակադրումն է **Մեծ Խինգանին**:
Մեկ այլ վարկածի համաձայն անունն առաջացել է էվենկերեն хинган *Ձառիվեր լանջերով լեռներ* կամ յակուտերեն хянган *զառիվայր*, *կատար* բառերից:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - հունարեն Μικρά Ασία, թուրքերեն Anadolu. լեռնաշխարհ **Փոքր Ասիա** թերակղզում, այժմյան Թուրքիայում: Հյուսիսից եզերված է՝ Պոնտական, հարավից՝ **Տավրոսի** լեռներով, ներքին մասը զբաղեցնում է Անատոլական սարահարթը: Արևելքում բարձրավանդակը միանում է **Հայկական լեռնաշխարհին**, արևմուտքում՝ դեպի Էգեյան ծովը ձգվող **Փոքր Ասիա** թերակղզու արևմտյան մասի լեռնաշղթաներին: **Փոքրասիական բարձրավանդակի** գետերը սակավաջուր են և հիմնականում սկիզբ են առնում նրա արևելյան լեռնաշղթաներից: Խոշոր գետերն են ՝ Կզըլ Իրմակ, Չուբուկ, Բալաբան, Սակարյա և այլն: Բարձրավանդակում են գտնվում Թուզ, Ակշեհիր, Էբեր, Բեյշեհիր, Սուղլա, Բուրդուր, Հա-

ջիգյոլ, Կարամիկ, Կուրբաղա և այլ լճեր: Երկարությունը շուրջ 1 200 կմ, լայնությունը՝ մինչև 600 կմ: Միջին բարձրությունը՝ 800-1500 մ: Բարձր գագաթը՝ Արգեոս հրաբուխ (3 917 մ):
Անվանումը ստացել է *Փոքր Ասիա* թերակղզուց:

Ք

ՔԱԲՐՈՒ - նեպալերեն काबु Քավրու, հինդի काबु Կաբրու. բազմագագաթ լեռնազանգված **Հիմալայներում**, Սինգալիլա լեռնաշղթայում, Նեպալի ու Հնդկաստանի սահմանագլխին: **Կանչենջանգա** լեռից 7,4 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Քաբրու Հյուսիս (Քաբրու III) 7 412 մ, Քաբրու Կենտրոնական (Քաբրու II) 7 353 մ (113 մ), Քաբրու Հարավային (Քաբրու I) 7 317 մ (118 մ), Տալունգ 7 349 մ (409 մ), Քաբրու Գմբեթ 6 585 մ, Ռատհոնգ 6 682 մ: Հարաբերական բարձրությունը՝ 780 մ:
Քաբրու անվանումը թարգմանաբար նշանակում է *Սպիտակ ձնահոսք*:

ՔԱՄԲԵՅԻ ԾՈՑ - գուջարաթի ખંભાત કી ખાડી Քամբիաաթ կի քիաարի, անգլերեն Gulf of Khambhat.**Արաբական** ծովի ծանծաղ ծոց, **Հնդստան** թերակղզու հյուսիսարևմտյան ափին: Ծոցն են թափվում Նարմադա, Տապտի, Մահի, Կիմ, Դադհար, Սաբարմաթիի և այլ գետեր: Մակերեսը՝ 25 720 կմ^2: Երկարությունը՝ 130 կմ, լայնությունը՝ 50 կմ: Ծավալը՝ 360,08 կմ^3: Միջին խորությունը՝ 14 մ, առավելագույնը՝ 42 մ (հարավարևմտյան մասում):
Անվանումը ստացել է ծոցի ափին գտնվող Քամբիաթ նավահանգստի անգլերեն հնչյունափոխված *Քամբեյ* անունից:

ՔԱՆԳՊԴՀՈՒ ՔԱՆԳ - չինարեն 康复康 Քանֆու Քան. բազմագագաթ լեռնազանգված **Հիմալայների** կենտրոնական մասում, Բուտանի ու Չինաստանի սահմանագլխին: **Թոնշանջիաբու** լեռնագագաթից 11,81 կմ հեռավորությամբ: Լեռան լայնակի ուղղությամբ ձգվող 2 կմ-ոց կատարային մասում են տեղակայված ոչ պարզորեն նշմարվող երկու գագաթ՝ Քանգպիու Քանգ Արևմտյան և Քանգպիու Քանգ I: Հիմնական կատարից 3 կմ հարավ-արևելք գտնվում է Քանգպիու Քանգ II (6 945 մ), իսկ դեպի հարավ-արևմուտք 5 կմ հեռավորությամբ՝ Ջեջե Քանգպիու Քանգը (6 965 մ): Կան շատ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 204 մ, հարաբերականը՝ 1 204 մ:
Հայտնի է նաև Շիմոքանգրի անվամբ:

ՔԱՆԳՔԱՐ ՓՈՒՆՍՈՒՄ - ձոնգկիա གངས་དཀར་གསུང་ཕུན་ Քանգքար Փունսում. լեռնագագաթ Բուտանի և Չինաստանի սահմանագլխին: Բուտանի ամենա-

բարձր գագաթը: Ձեմու Քանգից 228,14 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 570 մ, հարաբերականը՝ 2 995 մ:
Քանգքար Փունսում անվանումը թարգմանաբար նշանակում է *Երեք հոգևոր եղբայրների սպիտակ պիկ*:

ՔԻՆՋՀԱՐ - սինդհի ڪرڪهنجهينجهه / ڪلڙي جهينجهه Քլրի h / Քինջիը h, ուրդու ڪيرهنجهه / ڪلر جهيل Քալրի ջիիլ / Քաինջիեր ջիիլ անգլերեն Keenjhar Lake. արհեստական լիճ Պակիստանում: Կազմավորվել է 1930 թվականին երկու՝ Քինջհար և Սոնեհրի լճերի միացումից: Մակերեսը՝ 134,68 կմ^2: Երկարությունը՝ 31 կմ, լայնությունը՝ 9 կմ: Ծավալը՝ 0,66 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 1 804 կմ^2: Լճափի երկարությունը՝ 192 կմ: Միջին խորությունը՝ 4,9 մ, առավելագույնը՝ 8,7 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 15 մ:
Հավանաբար անվան հիմքում ընկած է միջնադարում այս վայրերի տեր ու տիրակալ ոմն Քինջհարի անունը: Ըստ ավանդույթի Քինջհար և Սոնեհրի լճերի անվան անվանումները կապված են միջնադարում այս վայրերի տեր ու տիրակալ Քինջհարի և նրա տիկնոջ Սոնեհրիի անունների հետ:

ՔՆՋՈՒԹ ՍԱՐ - ուրդու ڪنجوٿ سر. երկգագաթանի լեռնազանգված **Կարակորումում**, Հիսպար Մուզտաղ լեռների արևելյան մասում՝ Հիսպար սառցադաշտից հյուսիս և Շիմշալ հովտից հարավ, Պակիստանում: **Կունիանգ Կիիշից** 18,9 կմ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Քնջութ I-ինը 7 760 մ և Քնջութ II-րդը 6831 մ: Կան բազմաթիվ սառցադաշտեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 7 760 մ, հարաբերականը՝ 1 660 մ:
Լեռան անվանումը վախաներենից թարգմանաբար նշանակում է *Քնջութի* (համեմունք) *Գլուխ:*

ՔՈՒԼԱ ՔԱՆԳՐԻ - տիբեթերեն ཀུ་ལ་ཁང་རི Կհուլակհարի, չինարեն 库拉岗日峰 Քու լա գանգ րի ֆընն. վեց գագաթանի լեռնազանգված **Հիմալայների** կենտրոնական մասում, Տիբեթի Լոժանգ շրջանում, Չինաստանի և Բուտանի սահմանագլխին: Քանգքար Փունսումից 25,41 մ հեռավորությամբ: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Քուլա Քանգրի Գլխավոր (Քուլա Քանգրի I) 7 538 մ (մեկ այլ չափման արդյունքում 7 554 մ), Քուլա Քանգրի Կենտրոնական (Քուլա Քանգրի II) 7 418 մ, Քուլա Քանգրի Արևելյան (Քուլա Քանգրի III) 7 381, Քարջիանգ Հարավային (Քարջիանգ I) 7 221 մ, Քարջիանգ Հյուսիսային 7 196 մ և Քարջիանգ II 7 216 մ: Հարաբերական բարձրությունը՝ 1 654 մ (1 670 մ):
Քուլա Քանգրի անվանումը տիբեթերենից թարգմանաբար նշանակում է *Կայսրի սառցապիկ*:

Օ

ՕԲ - ռուսերեն Обь, նենեցերեն Саля-ям, սելկուպերեն Квай / Еме / Куай, ալթայերեն Умарды, խանտերեն Ас, մանսիերեն Ас. գետ Արևմտյան Սիբիրում, Ռուսաս-

տանի Դաշնությունում: Սկիզբ է առնում Բիյա և Կատուն գետերի միացումից և հոսելով մերթ ընդ մերթ հյուսիսային կամ արևմտյան ուղղություններով կտրում անցնում Ալթայի երկրամասը, Նովոսիբիրսկի և Տոմսկի մարզերը, վերջինում իր մեջ ընդունելով Տոմ ու Չուլիմ գետերը, որից հետո թեքվում արմ. և Կոլպաշևո քաղաքի մոտ իր մեջ ընդունում Կետ գետը: Խանտի-Մանսիական ինքնավար շրջանում իր մեջ է ընդունում **Իրտիշը** և թեքվելով դեպի հյուսիս ու հոսելով շուրջ 700 կմ թափվում **Կարայի** ծովի **Օբի** խորշը: Վտակներն են ձախից՝ **Իրտիշ**, Պեսչանայա, Անույ, Չարիշ, Ալեյ, Բառնաուլկա, Կասմալա, Շեգարկա, Չայա, Պարաբել, Վասյուգան, Մեծ Յուգան, Հյուսիսային Սոսվա, Շչուչյա, Սիննայա և այլն, աջից՝ Չումիշ, Բերդ, Ինյա, Տոմ, Չուլիմ, Կետ, Տիմ, Կիևսկի Յոգան, Վախ, Տրոմյեգան, Պիմ, Լյամին, Կազիմ, Պոլույ և այլն: Երկարությունը՝ 3 650 կմ: Ավազանը՝ 2 990 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 12 492 մ^3/վրկ (գետաբերանից 287 կմ հեռու): Ջրի թեքությունը՝ 0,04 մ/կմ: Ակունքի բարձրությունը՝ 160 մ:
Գետն ունի բազմաթիվ անուններ՝ Саля-ям (հրվանդանի գետ), Квай / Еме / Куай (խոշոր գետ), Умарды (հյուսիսային), Ас (Մեծ գետ) և այլն:
Մեծ հավանականությամբ գետի անունն ունի իրանական ծագում և առաջացել է اب աբ *ջուր* բառից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվան հիմքում ընկած է կոմի լեզվի об *ձյուն*, *ձնակույտ* բառը:

ՕԲԻ ԽՈՐՇ - ռուսերեն Обская губа. **Կարայի** ծովի ծոց, **Գիդանի** և **Յամալ** թերակղզիների միջև: **Օբ** գետի էստուարն է: Ափերն ունեն մեղմ կտրտվածություն, որով էլ բացատրվում է միայն երկու խորշերի առկայությունը, Դրովյանոյ հրվանդանի մոտ՝ Պրեոբրաժենյան և Յամասոլ հրվանդանի մոտ՝ Նախոդկան: Կղզիները հանդիպում են միայն խորշը թափվող գետերի և գետակների գետաբերանների շրջաններում՝ Խալյանգո, Զապադնի, Պալկուրմարե, Վունշինգ, Նարեչի, Երմակ և այլն: Ծոցն են թափվում Օբ, Տազ, Պուր, Նադիմ, Նիդա, Յադա, Օյա, Իվոչա, Զելյոնայա, Սյոյախա և այլ գետեր: Մակերեսը՝ 98 325 կմ^2: Երկարությունը՝ 800 կմ, լայնությունը՝ 30-90 կմ: Ծավալը՝ 1 081,575 կմ^3: Միջին խորությունը՝ 11 մ, առավելագույնը՝ 25 մ (հյուսիսային մասում):
Անվանումը ստացել է *Օբ* գետից:

ՕԼԵՆՅՈ - ռուսերեն Оленёк, յակուտերեն Өлөөн. գետ Ռուսաստանի Դաշնությունում: Սկիզբ է առնում Վիլյույի սարավանդի հյուսիսային եզրամասից, Բուկոչան բլրաշարի Յանկան լեռան (725 մ) հարավարևելյան ստորոտում գտնվող փոքր լճակից, հոսում **Միջին Սիբիրական** սարահարթի հյուսիսային մասով ու Հյուսիսսիբիրական ցածրավայրով և ձևավորելով 475 կմ^2 մակերեսով դելտա, թափվում **Լապտևների ծովի**՝ Օլենյոկի ծոցը: Գետի վրա կան բազմաթիվ կղզիներ՝ Շախտալախ-Արի, Ջանգիլախ, Ուլախան-Արի, Քուղուն-Արիթա: Վտակներն են ձախից՝ Արգա Սալա, Բուր, Ուկուկիտ, Բիրեկտե, Կուոյկա, Բեյենչիմե, Բուոլկալախ, աջից՝ Սիլիգիր, Ալակիտ և այլն: Երկարությունը՝ 2 279 կմ: Ավազանը՝ 219 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 1210 մ^3/վրկ:

Մեծ հավանականությամբ, անվան հիմքում ընկած է գետի ճահճոտ ափերին աճող սեզի ցեղին պատկանող կերակրախոտի յակուտերեն Өлөөн անունը:

ՕԽՈՏԻ ԾՈՎ - ռուսերեն Охотское море, ճապոներեն オホーツク海 Ohngուկու կայի. Խաղաղ օվկիանոսի կիսափակ ծով Ասիայի հյուսիսարևելյան ափերի մոտ: Ողողում է Ռուսաստանի Դաշնության և Ճապոնիայի ափերը: Օվկիանոսից անջատված է **Կամչատկա** թերակղզով, **Կուրիլյան** կղզիներով և **Հոկայդո** կղզով: **Նևելսկոյի** և **Լա Պերուզի** նեղուցներով հաղորդակցվում է **Ճապոնական** ծովի, Կուրիլյան նեղուցներով՝ Խաղաղ օվկիանոսի հետ: Ափերը խիստ մասնատված են: Խոշոր կղզիներն են՝ Շանտարյան, Զավյալովի, Մատիկիլ և այլն: Խոշոր ծոցերն են՝ **Շելիխովի**, Եյրինեյան խորշ, Շելտինգի, Զաբիյակա, Բաբուշկինի, Կեկուռնի և այլն: Ծովն են թափվում **Ամուր**, Օխոտա, Կուխտույ և այլ գետեր: Մակերեսը՝ 1603 000 կմ^2: Երկարությունը՝ 2 463 կմ, լայնությունը՝ 1 500 կմ, ծավալը՝ 1 316 063 կմ^3: Ծովափի երկարությունը՝ 10 460 կմ: Միջին խորությունը՝ 821 մ, առավելագույնը՝ 3 521 մ (Կուրիլյան փողրակ):
Անվանումը ստացել է *Օխոտա* գետից:

ՕԿԻՆԱՎԱ - ճապոներեն 沖縄 Օկինավա, օկինավերեն/ կունիգամի うちな Ուծինա / ふちな Ֆծինա. **Ռյուկյու** կղզեխմբի ամենախոշոր կղզին, **Կյուսյու** և **Թայվան** կղզիների միջև: Արևմուտքից ողողվում է **Արևելաչինական** ծովով, արևելքից՝ Խաղաղ օվկիանոսով: Ափերը խիստ մասնատված են: Մակերեսը բլրոտ է՝ առավելապես հյուսիսային մասը: Խոշոր թերակղզին է՝ Մոտոբու: Խոշոր ծոցերն են՝ Տաիրա, Արումե, Օուրու, Նագո, Կին, Նակագուսուկու և այլն: Խոշոր գետերն են՝ Տենգան, Գյոհան, Ֆուկուշին, Ահան, Ֆուկուն: Մակերեսը՝ 1206,98 կմ^2: Երկարությունը՝ 106,6 կմ, լայնությունը՝ 31,2 կմ: Ափի երկարությունը՝ 476 կմ: Բարձր կետը՝ Յոնահա բլուր (503 մ):
Անվանումն առաջացել է հին ճապոներեն 沖 օկի *ծով, ծովային* և 縄 նավա *պարան, թոկ* բառերի միացումից:

ՕՄԱՆԻ ԾՈՑ - արաբերեն خليج عُمان Խալիջ Օմմեն, պարսկերեն دریای عمان Դարյա է Օմեն, ուրդու خلیج عمان խալիժոն կը Ամմեն. **Հորմուզի** նեղուցով **Պարսից** ծոցն ու **Արաբական** ծովը միացնող ծոց: Ողողում է Իրանի, Պակիստանի, Օմանի և ԱՄԷ-ի ափերը: Ծոցն են թափվում Ջագրն, Գեբրոք, Սադրջ, Կալար և այլ գետեր: Մակերեսը՝ 181 000 կմ^2: Երկարությունը՝ մոտ 560 կմ, լայնությունը՝ մինչև 405,5 կմ: Ծավալը՝ 249 970 կմ^3: Միջին խորությունը՝ 1 370 մ, առավելագույնը՝ 3 694 մ (արևելյան մասում):
Իրանը վիճարկում է ծոցի այժմյան անվանումը և ցանկանում է, որ այն անվանվի Պարսից ծով:
Անվանումը ստացել է Օման երկրից:

Ֆ

ՖԱՆՍԻՊԱՆ - վիետնամերեն Phan Xi Păng / Hủa Xi Pan. լեռնագագաթ **Հնդկաչի-նում**, Հոնգ և Դա գետերի ջրբաժան հանդիսացող՝ Հոանգ Լիեն Սոն լեռներում, Վիետնամում: Լանջերը ծածկված են խիտ անտառներով, բարձրադիր մասերում՝ մարգագետիններով: Բարձրությունը ծովի մակարդակից 3143 մ:
Լեռան տեղական բարբառային Հուա Սի Պան անունը թարգմանաբար նշանակում է *Երերուն*, *Հսկա քար*:

ՖԵԴՉԵՆԿՈՅԻ ՍԱՌՑԱԴԱՇՏ - տաջիկերեն Пиряхи Федченко. բևեռային շրջանների սահմաններից դուրս գտնվող խոշորագույն լեռնահովտային սառցադաշտը, **Պամիրում**, Տաջիկստանում: Իրենից ներկայացնում է շուրջ 45 սառցադաշտերից կազմված համակարգ՝ Բարձր Տանիմաս, Կաշալայակ, Վիտկովսկու և այլն: Սկիզբ է առնում Յազգուլեմի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 6 280 մ բարձրությունից և ձգվում մինչև 2 900 մ բարձրությունը: Այստեղից է սկիզբ առնում Սելդարա գետը, որը միախառնվելով Սաուքսայի հետ կազմավորում է Մուկսու գետը: Սառցադաշտը պատկանում է **Ամուդարյայի** ավազանին: Սառցահավաք մակերեսը՝ մոտ 700 կմ^2: Երկարությունը՝ 77 կմ, լայնությունը՝ 2,6 կմ: Ծավալը՝ 144 կմ^3: Սառցի հաստությունը՝ 700 մ (միջին մասում՝ 1000 մ):
Սառցադաշտը 1878 թ-ին հայտնագործել է ռուս միջատաբան և ճանապարհորդ Վ.Ֆ. Օշանինը և անվանել 1873 թ Ալպերում զոհված, Պամիրի հետազոտող ու բնախույզ *Ա.Պ. Ֆեդչենկոյի* պատվին:

ՖԻԼԻՊԻՆՅԱՆ ԾՈՎ - տագալերեն Dagat Pilipinas, կենտրոնական բիկոլերեն Dagat Filipinas, սեբուանո Philippine Sea, չաբականո Mar de las Filipinas, իլոկաներեն Baybay Filipinas, կապամպանգաներեն Dayat Malat ning Filipinas, անգլերեն Philippine Sea, վարայերեն Dagat Pilipinas, ինդոնեզերեն Laut Filipina, ճապոներեն フィリピン海 Ֆիլիպին կայի, չինարեն 菲律宾海 / 菲律賓海 Ֆեյլուբին հայ. Խաղաղ օկիանոսի միջկղզային ծով, **Ֆիլիպինյան** կղզեխմբի մոտ: Լուսոն, Բալինտանգ և Բաբույան նեղուցներով միացված է **Հարավչինական**, Սան Բեռնարդինո նեղուցով՝ **Սամար** ծովերին: Օվկիանոսից անջատված է Ճապոնական (**Հոնսյու**, **Կյուսյու** և **Ռյուկյու**) կղզիներով, արևմուտքում՝ **Թայվան** կղզով և **Ֆիլիպինյան** կղզիներով, արևելքում՝ Իձու, Օգասավարա (Բոնին), Կազան և Մարիանյան, հարավ-արևելքում՝ Յապ և Պալաու կղզիներով: Խոշոր ծոցերն են՝ Լամոն, Լագոնոյ, Լեյտե և այլն: Մակերեսը՝ 5 726 000 կմ^2: Երկարությունը՝ 3 580 կմ, լայնությունը՝ 2 100 կմ: Ծավալը՝ 23 522 408 կմ^3: Միջին խորությունը՝ 4 108 մ, առավելագույնը՝ 10 540 մ (Ֆիլիպինյան փողրակի Գալատեա խորքում):
Անվանումը ստացել է *Ֆիլիպինյան* կղզիներից:

ՖԻԼԻՊԻՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - տագալերեն Kapuluan ng Pilipinas. կղզեխումբ Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում: Կազմում են **Մալայան** կղզեխմբի մասը: Կղզիները շուրջ 2 000 կմ երկարությամբ և 900 կմ լայնությամբ ձգվում են հյուսիս-հարավ ուղղությամբ: Ընդգրկում են 7 641 կղզիներ՝ **Լուսոն**, **Մինդանաո**, **Սամար**, **Պանայ**, **Պալավան**, **Նեգրոս**, **Մինդորո**, **Լեյտե**, **Բոհոլ**, **Սեբու**, Բաբույան, Բատան և

այլն: Խոշոր գետերն են՝ Կագայան, Ագուսան, Մինդանաո, Տառլակ և այլն: Լճերն են՝ Բայ, Պինատուգո, Լանաո, Տաալ: Մակերեսը՝ 299 764 կմ^2: Ծովափի երկարությունը՝ 36 289 կմ: Կղզեխմբի բարձր կետն է համարվում Ապո լեռը 2 954 մ (Մինդանաո կղզում):
Անվանումը ստացել է *Ֆիլիպիններ* երկրից:

ՖԼՈՐԵՍ - ինդոնեզերեն Flores. կղզի Ինդոնեզիայում, Փոքր Զոնդյան կղզիների կազմում: Հյուսիսից ողողվում է **Ֆլորես**, հարավից՝ **Սավու** ծովերով: Արևմուտքում Սապե նեղուցով անջատվում է **Սումբավա**, հարավում Սումբա նեղուցով՝ Սումբա կղզիներից: Կղզում կան հանգած և գործող հրաբուխներ՝ Կելիմուտու, Ինեիրե, Ամբոլոմբո, Լևոտոբի, Ռանակահ և այլն: Խոշոր գետերն են՝ Սոա, Այ Սիսի, Պետի, Ռեա և այլն: Խոշոր լիճն է՝ Սանո Նգոանգ: Բարձր կետը՝ Պոկո Մանդասավու հրաբուխ (2 382 մ):Մակերեսը՝ 13 540 կմ^2: Երկարությունը՝ 354 կմ: Լայնությունը՝ 66 կմ:
Ի սկզբանե կղզին կրում էր Nipa Օձ անունը: Այժմյան անվանումը ստացել է XVI դ. նրա արևելյան մասում (նախկինում՝ Կոքպոնդայ) հաստատված պորտուգալացիների կողմից, նկատի ունենալով այստեղ ծաղկած Delonix regia տեսակի ծառերը:

ՖԼՈՐԵՍ - ինդոնեզերեն Laut Flores. Խաղաղ օվկիանոսի միջկղզային ծով, հյուսիսում՝ **Սուլավեսի** կղզու հարավային ծայրամասի, իսկ հարավում՝ Կաբիա, **Սումբավա** և **Ֆլորես** կղզիների միջև: Այստեղ են գտնվում Սալայար և Կաբայենա կղզիները, ինչպես նաև Բոներատո ու Սաբալանա կղզեխմբերը: Մակերեսը՝ 125 000 կմ^2: Երկարությունը՝ 640 կմ, լայնությունը՝ 180 կմ: Ծավալը՝ 190 250 կմ^3: Միջին խորությունը՝ 1 522 մ, առավելագույնը՝ 5 123 մ (կենտրոնական մասի հարավ-արևելքում): Անվանումը ստացել է *Ֆլորես* կղզուց:

ՖՈՒՋԻ - ճապոներեն 富士山 Ֆուձիսան, այներեն フーティ Ֆուտի. գործող ստրատոհրաբուխ Ճապոնիայում, **Հունսյու** կղզում՝ Տոկյոյից 90 կմ հարավ-արևմուտք: Ունենալով գրեթե կատարյալ ուրվագիծ, լեռը դարեր ի վեր տեղացիների համար համարվում է սրբազան, ինչպես նաև իր ուրույն տեղն է զբաղեցնում ճապոնական արվեստում, դառնալով նրա սիրված օբյեկտը: 781 թվականից սկսած տեղի են ունեցել 12 ժայթքում, վերջինը 1707-1708 թթ-ին: Ֆուձին իր 200 702,1 հեկտար մակերեսով հանդիսանում է սինտոիստական Հոնգու Սենգեն Մեծ տաճարի սեփականությունը: Բարձրությունը ծովի մակարդակից 3 776,24 մ: Խառնարանի տրամագիծը՝ 700 մ, խորությունը՝ 100 մ:
Համարվում է, որ անվանումն առաջացել է 不死 Ֆուձի *անմահություն* բառից, կամ 富 Ֆու *հարստություն*, *լիություն* ու 士 սի *վեհանձն մարդ* բառերի միացումից:
Համաձայն ժողովրդական ստուգաբանության՝ 不二 Ֆուդի անունն առաջացել է 不 *ոչ* և 二 *երկու* բառերից՝ *չկրկնվող*, իրեն *հավասարը չունեցող*:
Հայտնի են նաև անվան ստուգաբանության բազմաթիվ այլ վարկածներ:

Նշումների համար

Ասիայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան

Տեղեկատու-բառարանը կազմվել է
Հայաստանի Հանրապետության
Կադաստրի կոմիտեի
Գեոմատիկայի կենտրոնի կողմից

Գլխավոր խմբագիր՝ Յու. Վարյան
Խմբագիր՝ Վ. Թովմասյան